



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**«ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ»**

*միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու
Երևան, 13-14 մայիսի 2014 թ.*

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 811.19:06.053

ԳՄԴ 81.2Հ

Հ 301

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Խմբագրական խորհուրդ՝ **Աննա Աբաջյան**
Ռուբեն Սաքապետոյան
Նորայր Պողոսյան

Հ 301 «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Եր., ԵՊՀ հրատ., 2015, 230 էջ:

«Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի զեկուցումները ինչպես արդի հայերենին, այնպես էլ գրաբարին վերաբերող նորագույն հետազոտություններ են, որոնք ունեն գիտական որոշակի կարևորություն և օգտակար կլինեն հայագետների, արևելագետների, ընդհանուր և համեմատական լեզվաբանության մասնագետների և առհասարակ ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 811.19:06.053

ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8084-1957-5

© ԵՊՀ հրատ., 2015

© Հեղ. խումբ, 2015

Բովանդակություն

Աբաջյան Աննա (ԵՊՀ)

Տեղաշարժեր արդի հայերենի բայի և խոնարհման
համակարգում5

Գալստյան Աշոտ (Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ)

Գեղարվեստական վավերագրության` իբրև ինքնուրույն
ժանրատեսակի լեզվաոճական առանձնահատկությունները..... 18

Գյուլգալստյան Դավիթ (ՎՊՀ)

Նշանոլորտի սահմանը և բաղկացությունը.
լեզվիմաստասիրական հայեցակերպ27

Գևորգյան Շուշանիկ (ԵՊՀ)

Ժամանակի քերականական կարգի ըմբռնումը.....40

Գրիգորյան Սուսաննա (ԵՊՀ)

Նորակազմությունները Կոստան Ջարյանի չափածոյում48

Դիլբարյան Նարինե (ԵՊՀ)

Նորակազմ բառերը Առաքել Սյունեցու
«Աղամզրբում»65

Եղիազարյան Վարդան (ԵՊՀ)

Հովհաննես Երզնկացու ստեղծագործության
լեզվաոճական առանձնահատկությունները74

Խաչատրյան Ալվարդ (ԵՊՀ)

Պահլավերենից և նոր պարսկերենից փոխառված
հայոց անձնանուններ.....80

Կարապետյան Սիրարփի (Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ)

Գոյականական հիմքերով բաղադրությունները
հայերենում և անգլերենում90

Հանանյան Գաղթունի (ԵՊՀ)

Հին հայերենի բայական զարտուղությունների
հետագա դրսևորումները99

Հովհաննիսյան Լուսինե (ԵՊՀ)

Մեռական հոլովով գոյականական բառակապակցությունները
Պ. Սևակի պոեզիայում 117

Մեսրոպյան Անուշավան

(Ուկրաինայի գրողների միության անդամ)

«Ճյուղն ձիթենու»-ց մինչև «Խնկի ծառեր»
(Լևոն Խեչոյանի երկերի թարգմանության իմ փորձից) 132

Միքայելյան Կարինե (ԵՊՀ)

Հայերենում բառային ներքին տեղաշարժերը և արտաքին
փոխառությունները ըստ ժամանակագրության 144

Յուզբաշյան Անահիտ (ԵՊՀ)

Դասական գրաբարի ձևաբանական նորմերը և նրանց
պատմական զարգացումը (հոլովական համակարգ)..... 161

Պարոնյան Նաիրա (ԵՊՀ)

Փոխառությունները XV դարի անանուն հեղինակի
թվաբանության դասագրքում 174

Պետրոսյան Լիլիթ (ՎՊՀ), Ավագիմյան Արինե (ՎՊՀ)

Ասեղ բայի ենթակառական կապակցելիությունը և
արտահայտությունը «Աւետարան` ըստ Մատթեոսի» երկում..... 182

Պողոսյան Նորայր (ԵՊՀ)

Եվրոպական փոխառյալ բառեր վաղաշխարհաբարյան
աղբյուրներում 194

Սարապետոյան Ռուբեն (ԵՊՀ)

Լեզվական նորմը և լեզվի ներքին տեղաշարժերը 212

Փընար Քարաբըլչըք
(Փարիզ Սորպոն - Իսթանպուլ համալսարան)

Հայատառ թուրքերեն գրականությունը 218

ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԻ ԵՎ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

*Արաշյան Աննա
(ԵՊՀ)*

Հայտնի է, որ լեզվական համակարգը ենթադրում է լեզվական միավորների բազմազան տարբերակների գոյություն, որոնցից լեզվական նորմով ընդունվում և հաստատվում են միայն որոշակի ձևեր: Արդյունքը լինում է այն, որ լեզվական համակարգի և լեզվական նորմի միջև ծագում են ինչ-ինչ հակասություններ:

Արևելահայ գրական և խոսակցական տարբերակները հայտնի պատճառներով զգալի տարբերություններ են դրսևորում: Լեզվական փոփոխությունները շատ հաճախ սկիզբ են առնում հենց խոսակցական լեզվից: Գրական գրավոր լեզուն վերջինիս համեմատ շատ ավելի պահպանողական է, ավանդապահ, որում գիտակցաբար պահպանվում և գործածվում են ընդունելի համարվող նորմատիվ ձևերը:

Խոսակցական լեզուն իր մեջ ներառում է բարբառային տարրեր, օտար լեզուների ազդեցությամբ առաջացած իրողություններ, որոնք փորձում են աստիճանաբար ներթափանցել գրական լեզու: Թերևս չի կարելի չընդունել նաև անհատների կողմից կատարված փոփոխությունները:

«Բայց այս ամենը շատ չնչին է լեզվի այն դանդաղ, ակամա և անգիտակից փոփոխության դիմաց, որին շարունակ ենթակա են լեզվի բոլոր իրակությունները,- գրում է ականավոր լեզվաբան Մ. Աբեղյանը,- ... Այստեղ չկա որևէ դիտավորված ներգործություն լեզվի վրա, որևէ ուրիշ նպատակ, բացի վայրկյանի կարիքից, որ է՝ ցանկություններն ու մտքերը հասկանալի դարձնել ուրիշին: Լեզվի այս սովորական կիրառության, սովորական կենդանի խոսվածքի ժամանակ ահա ծագում են լեզվական նոր ձևեր, և ինչպես օրգանական բնության զարգացման մեջ, նույնպես և լեզվի զարգացման մեջ ծագած նոր լեզվական իրակությունների ավելի կամ պակաս նպատակահարմարությամբ որոշվում է նրանց պահպանությունը լեզվի մեջ կամ կորուստը»¹:

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 13:

Լեզվի տվյալ փուլի համար կենսունակ, միասնական բնույթ ունեցող համակարգին հակադրվող լեզվական միավորների ամբողջությունը անվանելով հակահամակարգ՝ Էդ. Ադայանը նշում է. «Լեզվի պատմության յուրաքանչյուր փուլում էլ նրա ամբողջական համակարգի մեջ միասնաբար գործառում ու գոյակցում են համակարգերն ու հակահամակարգերը: Ի դեպ, հակահամակարգերի առկայությունը տվյալ ամբողջ համակարգի ներսում պայմանավորում է լեզվի մեջ հնի ու նորի, իր դարն ապրածի ու ծնվողի, զարգացողի պայքարը, որը լեզվի զարգացման ներքին բովանդակությունն է կազմում»²:

Լեզվի կառուցվածքային բաղադրիչներից ամենից շատ փոփոխվողն ու կատարելագործվողը բառապաշարն է: Քերականական համակարգը, մասնավորապես ձևաբանականը անհամեմատ կայուն է, որի պատճառն այն է, որ քերականական կարգերը, նրանց քերականական իմաստներն ու ձևերը ժամանակի հոլովությամբ դանդաղորեն են փոփոխության ենթարկվում:

Այնուհանդերձ որոշակի տեղաշարժեր գրանցվել են նաև այս մարզում:

Նշենք, որ Հ. Բարսեղյանի՝ «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատության հրատարակումից անցել է շուրջ 60 տարի, և բայական համակարգում ի հայտ են եկել թե՛ որակական, թե՛ քանակական փոփոխություններ:

Նախ՝ քանակական փոփոխությունների մասին:

Ըստ Հ. Բարսեղյանի կազմած բառացանկի տվյալների՝ արդի հայերենի բայերի թիվը մոտավորապես 6000 է: Անշուշտ, այդ բայերի մի մասը այսօր դուրս է եկել գործածությունից, բայց միևնույն ժամանակ առաջացել են նոր բայեր, նոր կազմություններ: Բացատրական նորագույն բառարանի բացակայության պայմաններում մենք ստիպված բայերի թվի հաշվարկը կատարել ենք՝ հենվելով ժամանակակից հայոց լեզվի բացատրական քառահատոր բառարանի³ ընձեռած նյութի վրա (նշենք, որ բառացանկը բացատրական 2 բառարաններում՝ նշվածում և

² Էդ. Ադայան, Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, 2003, էջ 193:

³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԼԲԲ), 1-4 հատորներ, Երևան, 1969-1980:

էղ. Աղայանի բառարանում⁴, չի տարբերվում. նախընտրել ենք առաջինը, քանի որ նրանում շատ դեպքերում տրված են կատարյալի հիմքն ու վերջավորությունները, որոնք անհրաժեշտ էին մեզ ուսումնասիրության համար):

Քարտագրել ենք մոտավորապես 15700 բայեր, որոնցից, անտարակույս, պետք է առանձնացվեն բարբառային տարբերակները, հնացած ձևերը, արևմտահայերենին բնորոշ բայերը (կան նաև **ի** լծորդության որոշ բայեր), ինչպես նաև սխալ կազմությունները: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, թե որքան բայեր էլ կազմվել են 80-ականներից սկսած, ապա կարող ենք ասել, որ ներկայումս գրական արևելահայերենի բայերի թիվը ամենայն հավանականությամբ եռապատկվել է (մամբամասն քննությունը կտանք բային և խոնարհման տեսությանը մվիրված մեր հրատարակվելիք աշխատության մեջ):

Այժմ անցնենք որակական փոփոխություն-տեղաշարժերին, որոնք հիմնականում վերաբերում են 1) **չ** սուկածանցավոր բայերի քանակին և նրանց անցյալ կատարյալի կազմությանը, 2) **ե** խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականի կազմությանը, 3) **ա** խոնարհման պարզ բայերի հոգնակի արգելականի և սուկածանցավոր ու պատճառական բայերի արգելականի հրամայականի կազմությանը և այլն:

1) Ածանցավոր բայերի շարքում թվով ամենաքիչը *չ սուկածանց* ունեցող բայերն են:

Հ. Բարսեղյանի վերոնշյալ գրքում դրանք 13-ն են՝ *բլչել, դիպչել, թագչել, թռչել, խրթչել, կորչել, կպչել, հանգչել, սառչել, ուռչել, փախչել, փակչել, փլչել*: Չարմանալի է, որ *կպչել, դիպչել* բայերի ոչ ընդունելի, բայց խոսակցական լեզվում տարածված *կպնել, դիպնել* տարբերակները լեզվաբանը գետեղել է **ն** սուկածանցավորների մեջ⁵: Ինչպես՞ս քաստրել սա, մույն բայը կա՞ 2 ձևով՝ ըստ հեղինակի, թե՞ սխալմունք է. հավանաբար վերջինը:

Հայչել բայը այս ցուցակից դուրս է մնացել: Նշված բառացանկը մույնությամբ կամ մասնակի փոփոխություններով ներկայանում է հետագա աշխատություններում:

⁴ Էղ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, 1-2հ., Երևան, 1976:

⁵ Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 383:

Ա. Աբրահամյանը նշված ցուցակից հանում է *բլշեկ* և *խրթչեկ* բայերը, բայց ավելացնում *հալչեկ*-ը (նշենք, որ *բլշեկ*-ը Աղայանի բառարանում տրված է որպես *փլշեկ*-ի ոչ ընդունելի ձև (1-ին հ., էջ 192), իսկ *խրթչեկ*-ը՝ *խրթրչեկ* տարբերակով, համարվում է նույնը *խրթոնեկ* -ի հետ (1-ին հ., էջ 618):

Թաքչեկ // *թաքնվեկ*, *հալչեկ*// *հալվեկ*, *փլշեկ* // *փլվեկ* գույգ ձևերի մեջ հաղթող են դարձել վերջինները, իսկ *փակչեկ* բայի փոխարեն գործածվում է *կպչեկ* –ը (նկատենք, որ *փակչեկ*-ի պատճառակաճը լայնորեն կիրառվում է՝ *փակցնեկ*):

Մ. Ասատրյանը չ սուկածանցավոր է համարում 8 բայեր՝ *ղիպչեկ*, *թռչեկ*, *կորչեկ*, *կպչեկ*, *հանգչեկ*, *սառչեկ*, *ուռչեկ*, *փախչեկ*⁶:

Ռ. Սաքապետոյանը այս բայերին նվիրված հոդվածում նշված բառացանկից հանում է *ուռչեկ* բայը՝ այսպիսով դրանց թիվը հասցնելով 7-ի⁷:

Ըստ Ալ. Մարգարյանի՝ չ սուկածանցով բայերն են՝ *ղիպչեկ*, *թաքչեկ* (հնց.), *թռչեկ*, *կորչեկ*, *կպչեկ*, *հանգչեկ*, *սառչեկ*, *ուռչեկ*, *փախչեկ*, *փակչեկ*, *փլշեկ* (11 բայ, որից մեկը՝ հնացած)⁸:

Յու. Ավետիսյանը «Տեղաշարժեր արդի գրական հայերենում» գրքում Մ. Ասատրյանի նման ընդունում է չ- սուկածանցավոր 8 բայեր⁹:

Ինչպես տեսնում ենք, այս բայերի թվի, նրանց խոնարհման որոշակի ձևերի կազմության հետ կապված՝ կան նկատելի տարածայնություններ: Մասնագիտական գրականության մեջ և դպրոցական դասագրքերում հաճախ խուսանավում են ճշգրիտ թիվ ներկայացնելուց, խոնարհման հարացույցում բերում են միայն տիպական անվիճելի օրինակներ:

Հայտնի է, որ **ն**, չ սուկածանցավոր բայերի անցյալ կատարյալը կազմվում է կատարյալի արմատական հիմքից կրավորակերպ վերջավորություններով՝ *ա*, *ար*, *ալ*, *անք*, *աք*, *ան*: Այսինքն՝ *սառչեկ* և *ուռչեկ* բայերի կատարյալի կանոնավոր ձևերը պիտի լինեն (և այդպես էլ ընդունված է) *սառա*, *սառար*, *սառալ*..., *ուռա*, *ուռար*, *ուռալ*...:

⁶ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2002, էջ 198:
⁷ Ռ. Սաքապետոյան, «Չ» սուկածանցավոր բայերը հայերենի զարգացման արդի փուլում, «Բանբեր», N2, 1989թ.:
⁸ Ալ. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն, Երևան, 2004, էջ 365:
⁹ Յու. Ավետիսյան, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Երևան, 2011, էջ 61-66:

Չ. Աղաջանյանի «Չևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր» գրքում *ուռա*, *սառա* ձևերը համարվում են օրինաչափ, *ուռեցի*, *սառեցի* ձևերը՝ նորակազմություններ:¹⁰

Վատահ կարող ենք արձանագրել, որ այս բայերի կատարյալի կազմության մեջ կատարվել է փոփոխություն (տեղի սղության պատճառով չենք ներկայացնում մամուլից և տարբեր տարիքի ու կրթության անձանցից կատարված հարցման վիճակագրությունը), և սրանք կատարյալը կազմում են **ե** խոնարհման պարզ բայերի օրինաչափություններով՝ ցոյական հիմք գումարած *ի*, *իր*, -, *ինք*, *իք*, *ին* (*սառեցի*, *ուռեցի*): *Սառա*, *ուռա* ձևերը ընկալվում են որպես շեղումներ, ոչ գրական ձևեր: Նշանակում է՝ այս բայերը ձեռք են բերել պարզ բայերին յուրահատուկ հատկանիշներ:

Ինչպես իրավացիորեն նշում է Ռ. Սաքապետոյանը, *ուռչել* բայի *ուռել* տարբերակի առաջացումը իբրև ելակետային ձև այսօր կասկած չի հարուցում¹¹:

Մենք այս բայի կողքին դնում ենք նաև *սառել*–ը:

Էդ. Աղայանի բառարանում *սառել* և *սառչել* ձևերը համարվում են նույնը (2-րդ հատոր, էջ 1278):

ԺՀԼԲԲ-ում (հտ. 4-րդ, էջ 273) *սառել* բայի դիմաց գրված է՝ տե՛ս *սառչել*, իսկ կատարյալը՝ *սառեցի* (ոչ թե *սառա*): Ցավոք, Էդ. Աղայանի բառարանում բայից հետո կատարյալը չի տրվում:

Մի փաստարկ ևս *սառել*, *ուռել* բայերը ելակետային ձևեր համարելու օգտին: Սրանցից կազմվող պատճառականները, ըստ լեզվական նորմի, պիտի լինեին *սառցնել*, *ուռցնել*, ինչպես ունենք *փախցնել*, *կպցնել*, *թոցնել*, *կորցնել*, մինչդեռ տարածված են *սառեցնել*, *ուռեցնել* ձևերը:

Էդ. Աղայանը բերում է *սառեցնել*//*սառցնել* (էջ 1281), *ուռեցնել*//*ուռցնել* (էջեր 1496-1497) զուգաձևությունները, այնինչ ԺՀԼԲԲ-ում *սառցնել*–ը տրված է *րես*-ով (էջ 275), *ուռեցնել*//*ուռցնել*–ը համարվում են զուգահեռ ձևեր (էջ 606): Չ. Աղաջանյանը այլ բան է գրում՝ *սառցնել*//*սառեցնել*, *ուռցնել*//*ուռեցնել*, *հալցնել*//*հալեցնել* զուգաձևություններում առաջին-

¹⁰ Չ. Աղաջանյան, Չևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007, էջ 285:

¹¹ Ռ. Սաքապետոյան, նշված հոդվածը, էջ 176:

ները համարելով գրական, նորմով սահմանված¹²: Սակայն ակնհայտ է, որ դրանք այժմ դիտվում են որպես խոսակցական տարբերակներ:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ չ սուկածանցավորների թիվը այսօր ընդամենը վեցն է, որից էլ *փախչել*, *թռչել*, *կպչել* բայերը առօրյա խոսքում համատարած փոխարինվել են *փախնել*, *թռնել*, *կպնել* ոչ ընդունելի (առայժմ) ձևերով:

Սուկածանցավորների մասին խոսելիս կուզեինք անդրադառնալ նրանց հետ կապված մեկ այլ հարցի:

Ընդունված է, որ **ան** և **են** սուկածանց ունեցողները արդի գրական հայերենում պարտադիր **ա** լծորդության են պատկանում, իսկ **ն**, **չ** ունեցողները՝ **ե** (*անալ*, *ենալ*, *նել*, *չել*):

Հ. Բարսեղյանի գրքում (էջեր 382 - 383) առանձնացված են նաև ն+ալ, ան+ել կառույցով բայեր: *Նալ*-ով բայերի մեծ մասը այսօր մեր գրականում ընդունելի չէ (գինովնալ, գիտնալ, դյուրիննալ, ջրկնալ, սևնալ, պողոզնալ... անալ >նալ), մի երկուսն էլ անկանոն բայեր են՝ *դառնալ*, *բառնալ*, *համբառնալ* և այլն:

Լեզվաբանը նշում է **ան** սուկածանց ունեցող 4 բայ՝ բեկանել, եղծանել, ընկողմանել, ուսանել: *Եղծանել*-ը տրված է բացատրականում՝ տե՛ս *եղծել* (Աղայան, նշվ. բառ., էջ 324), հնաբանություն է, իսկ *բեկանել*, *ընկողմանել*, *ուսանել* բայերը, իրոք, պետք է ընդունել որպես **ե** լծորդության **ան** սուկածանցավոր բայեր: *Ուսանել*-ը և *ընկողմանել*-ը չունեն առանց **ան**-ի տարբերակներ *ուսել*, *ընկողմնել*, իսկ *բեկանել* բային գուցահետ լեզվում առկա է *բեկել* բայը՝ այլ իմաստով (*բեկանել* - 1) չեղյալ հայտարարել, 2) դատավճիռը բեկման ենթարկել, 3) ընտրությունը անվավեր համարել, 4) հնց. կոտրել. *բեկել* -1)ճկելով կոտրել, 2) թեքել..., 5) փխք. կոտրել: Առաջինը վերացական բայ է, երկրորդը՝ թանձրացական):

Ուստի և պետք է ընդունենք, որ **ան** ածանց ունեն նաև **ե** խոնարհման հիշյալ բայերը(ավելացնենք նաև *սերմանել*-ը):

2) Հայերենի քերականության շատ ուսումնասիրություններում նշվում է, որ **ե** խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականը կազմ-

¹² Զ. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 265:

վում է գրաբարի նման՝ անցյալ կատարյալի հիմքի վրա **եք** վերջավորությունն ավելացնելով. օրինակ՝ *նսրեք- նսրեցե՛ք, լսեք-լսեցե՛ք*¹³:

«Ժամանակակից հայոց լեզվի» ակադեմիական հրատարակության հեղինակներ Ս. Աբրահամյանը, Ն. Պառնասյանը և Հ. Օհանյանը, **ե** խոնարհման պարզ բայերի անցյալի հիմքից կազմված հրամայականի հոգնակիի ձևերը համարելով կանոնիկ ձևեր, նշում են, որ մեծ տարածում են գտել նաև ներկայի հիմքից կազմությունները (գրե՛ք, վագե՛ք), որոնք սխալ համարել չի կարելի¹⁴:

Մ. Ասատրյանը ևս հրամայականի հարացույցում բերում է *գրեցե՛ք, սիրեցե՛ք*՝ անցյալի հիմքից տարբերակները, սակայն դրանից հետո անմիջապես նշում. «**Ե** խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականը ժողովրդախոսակցական լեզվում կազմվում է նաև անկատարի հիմքից, և, այսպիսով, ստացվում են *գրեք, սիրեք, կատարեք, խոսեք* և այլ ձևեր, որոնք խոսակցական լեզվի ազդեցությամբ ավելի ու ավելի են տարածվում»¹⁵:

Ըստ Ալ. Մարգարյանի՝ **ե** խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականը կազմվում է արմատական հիմքից **եք/եցեք** մասնիկներով՝ *սիրե՛ք// սիրեցե՛ք, նսրե՛ք//նսրեցե՛ք*: Առաջին տարբերակները հեղինակի համոզմամբ ավելի մեղմական հրամայականի իմաստ են արտահայտում¹⁶:

Էդ. Աղայանի և Հ. Բարսեղյանի հեղինակած դպրոցական դասագրքում¹⁷ անցյալյան կազմությունները դիտվում են որպես քիչ գործածություն ունեցող զուգաձևություններ:

1998թ. հրատարակված՝ 6-րդ դասարանի դասագրքում (հեղ.՝ Հ. Բարսեղյան) նշվում է, որ հրամայականի հոգնակին կազմվում է՝ **ե** խոնարհման բայերի արմատին -*եցեք* վերջավորությունն ավելացնելու միջոցով: Ինչպես նաև՝«Երբեմն **ե** խոնարհման պարզ բայերի համար հոգ-

¹³ Տե՛ս, օրինակ, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 208:

¹⁴ Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հ. լեզու, հ.2, Եր., 1974, էջ 416:

¹⁵ Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 311:

¹⁶ Տես Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 453:

¹⁷ Էդ. Աղայան, Հ. Բարսեղյան, Հ. լեզու, դասագիրք 5-7-րդ դաս. համար, Եր., 1989, էջ 210:

նակի հրամայականում գործածում են բայարմատով և **եք** վերջավորությամբ կազմված ձևեր՝ *կանգնե՛ք, լռե՛ք, գրե՛ք*, փոխանակ *կանգնեցե՛ք, լռեցե՛ք, գրեցե՛ք* ճիշտ ձևերի»։ 6-րդ դասարանի՝ Ֆ. Խլղաթյանի հեղինակած դասագրքում (1999թ., էջ 61) ներկայի հիմքից կազմությունները խրախուսելի չեն համարվում։

7-րդ դասարանի՝ 2011թ. լույս տեսած դպրոցական դասագրքում (հեղինակներ՝ Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան) նշվում է նույնը, այն է՝ **ե** խոնարհման բայերի դեպքում բայարմատին ավելանում է *-եցեք* վերջավորությունը (էջ 126), ինչպես նաև «**ե** խոնարհման պարզ բայերի համար հոգնակի հրամայականը կազմվում է նաև բայարմատով և *եք* վերջավորությամբ» (էջ 127)։

2. Աղաջանյանը *գրեցեք//գրեք, նսրեցեք//նսրեք* զուգաձևություններում առաջին ձևերն է նորմատիվ համարում, «քանի որ երկրորդները թեև տարածված են, կարճ են, բայց դեռևս օրինաչափության չեն վերածվել»¹⁸։

Մեր համոզմամբ ճիշտ հակառակն է. անհերքելի է այս փաստը, որ լեզվում հաղթել են գործածության մեծ հաճախականություն ունեցող անցյալական կարճ ձևերը, իսկ *-եցեք*-ով կազմությունները մեր օրերում դարձել են կեղծ ու բռնազբոսիկ։

Հետաքրքիր է մի երևույթ. անցյալի հիմքից կազմությունը պարտադիր է *նեղեցե՛ք, համեցե՛ք* բայաձևերի դեպքում (չենք ասում՝ *նեղե՛ք*, ճանապարհ կտա՞ք), որոնք վերաբերականի արժեք են ստացել։ Նկատենք, որ *համեցեք*-ն առաջացել է *հրամայեցեք* բայաձևից։

3) Գրական լեզվի զարգացման վերջին ժամանակահատվածում լուրջ տեղաշարժեր են գրանցվել՝ կապված **ա** լծորդության պարզ բայերի հոգնակի և սուկածանցավոր ու պատճառական բայերի արգելական հրամայականների (եզակի և հոգնակի) կազմության հետ։

Վերոնշյալ բայերը, ըստ ավանդական քերականության, հոգնակին կազմում են կա՛ն *մի՛ արգելական + անորոշի չհասփոխված փարբերակ* կաղապարով (մի՛ գտնիր, մի՛ հիշեցնի, մի՛ խաղաք), կա՛ն *մի՛ արգելական + հասարակական հրամայական* կաղապարով (մի՛ գտիր, մի՛ հիշեցրու, մի՛ կարդացեք)։

¹⁸ 2. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 298։

Հ. Բարսեղյանը «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատության մեջ ներկայացնում է առաջին կադապարը՝ որպես նորմատիվ ձև, իսկ երկրորդին առհասարակ չի անդրադառնում¹⁹: Դեռևս Մ. Աբեղյանը գրել է. «Մի նոր երևույթ է դրական հրամայականի վրա «մի՛» դնելով կազմել արգելականը, օրինակ՝ կարդացե՛ք- մի՛ կարդացեք...: Այս փոփոխությունը, սակայն, գրական լեզվի մեջ ընդունված չէ»²⁰:

Էդ. Աղայանը «Ժամանակակից հայերենի հորվումը և խոնարհումը» գրքում նշում է արգելական հրամայականի կազմության 2 ձև. «1) *մի՛* արգելական մասնիկով, որ դրվում է հրամայականի դրական ձևերի վրա և նախադաս է. *մի՛ կարդա, մի՛ գրիր, մի՛ սովորեցրու...* և այլն, 2) ժխտական դերբայի ու նախադաս արգելական մասնիկի հարադրությամբ, որ հոգնակիի համար ստանում է երկրորդ դեմքի **ք** վերջավորությունը. *մի՛ կարդա, մի՛ գրի, մի՛ մոռանա, մի՛ սովորեցնի, մի՛ տեսնի, մի՛ք գրի, մի՛ք մոռանա...* և այլն: Այս երկրորդ ձևն ավելի ժողովրդախոսակցական բնույթ ունի, բայց թափանցել է գրական լեզվի մեջ և հետզհետե տարածվում է՝ ընդհանրանալու ձգտումով»²¹:

Հ. Բարսեղյանը և Էդ. Աղայանը, հավատարիմ մնալով իրենց տեսակետին, ավանդույթը չխախտելով, նույնը ներկայացնում են նաև իրենց կազմած դպրոցական դասագրքում, թեպետ վերջինիս նախորդած քերականական աշխատություններում այլ բան էր ասվում:

Ս. Աբրահամյանը, Ն. Պառնասյանը և Հ. Օհանյանը հստակ գրում են. «Արգելական հրամայականի եզակին կազմվում է հրամայականի դրական բայաձևերի վրա ավելացնելով *մի՛* ժխտական կամ արգելական մասնիկը: Օրինակ՝ վազիր- մի՛ վազիր, վերցրու- մի՛ վերցրու, ...փախիր- մի՛ փախիր»²²:

Ան, են, ցն ամանց ունեցող բայերի արգելականի համար ընդունում են նաև ներկայի հիմքից կազմությունը (մի՛ հեռանա, մի՛ մոռանա)՝ նշելով, որ առաջին 2 ամանցներն ունեցող բայերը երբեմն կարող են ստանալ **ր** (մի՛ վախենար, մի՛ հեռանար):

¹⁹ Նշված տեղում, էջ 318:

²⁰ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 330:

²¹ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 368:

²² Տե՛ս նշվ. աշխ., էջ 416:

Հեղինակները առանձին չեն նշում **ն, չ** սուկաձանցավոր բայերի մասին, բայց բերված օրինակներից (մի՛ փախիր) երևում է, որ ընդունում են դրանց՝ դրական ձևից կազմության տիպը:

Արգելական հրամայականի հոգնակին, ըստ նրանց, կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով **եք** (**ե** խոնարհման դեպքում) և **աք** (**ա** խոնարհման դեպքում) մասնիկները. այսպես՝ *մի՛ գրեք, ... մի՛ կարդաք...* և այլն²³, և տարածվել է նաև հոգնակի արգելական հրամայականի կազմությունը դրականից՝ *մի՛ կարդացեք, մի՛ մոռեցեք* և այլն: Մյուս կողմից էլ հեղինակները նշում են նաև *մի՛ք գրի, մի՛ք կարդա* բայաձևերի տարածված լինելը ժողովրդախոսակցական լեզվում և դրանց թափանցելը գրականություն: Ակնհայտ են հակասությունները:

Մեկ տարի անց՝ 1975թ. լույս տեսած «Լեզվաբանական բառարանում» արգելական հրամայական բառահոդվածի տակ կարդում ենք. «...Կազմվում է *մի՛* արգելականով ու համապատասխան դերբայական կամ խոնարհման ձևերով... (մի՛ շարժիր, մի՛ շարժեք, մի՛ աղա, մի՛ աղաք, մի՛ մոտենա, մի՛ մոտենաք»²⁴: Ամեն ինչ պարզ է. ընդունված է հին ավանդականը:

Մ. Ասատրյանը, անդրադարձնալով այս հարցին և հաշվի առնելով գրական լեզվի արդի վիճակը, նշում է. «Քանի որ պարզ բայերի դեպքում հրամայականի դրական և արգելական ձևերը մույնանում են, ինչպես՝ *գրիր, մի գրիր...*, ուստի և դրանց նմանակությամբ մյուս բայերի արգելական ձևերը ևս կազմվում են դրական ձևերից...: Մխալված չենք լինի, եթե ասենք, որ արդի հայերենում արգելական հրամայականի ձևերը կազմվում են դրական հրամայականից»²⁵ (ընդգծումը Մ. Ասատրյանինն է - Ա. Ա.):

Հավելենք, որ այս մասին գրել է Գ. Ջահուկյանը դեռևս 1969թ. «Խոնարհման համակարգում շատ ուժեղ է համաբանության (անարդիայի) ազդեցությունը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ հարացույցի բովանդակության պլանում հանդես եկող գուգորդումների ազդեցությունը արտահայտու-

²³ Նշվ. տեղում, էջ 417:

²⁴ **Հ. Պետրոսյան, Մ. Գալստյան, Թ. Վարազդույան**, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 34:

²⁵ **Մ. Ասատրյան**, նշվ. աշխ., էջ 329:

թյան պլանի վրա՝ այստեղ առաջացվող համապատասխան փոփոխություններով: Բովանդակության և արտահայտության պլանների փոխազդեցությունը առաջացնում է տատանվող զուգաձևեր, որոնցից մեկը վերջին հաշվով դուրս է մղում մյուսին և դառնում տիրապետող: Այսպես, *զնա՝ - զնացե՛ք* ձևերի անալոգիայով (*մի՛*) *զնա* - (*մի՛*) *զնաք* ձևերից երկրորդը փոխարինվում է (*մի՛*) *զնացեք* ձևով»²⁶:

7-րդ դասարանի՝ 2006թ. լույս տեսած դպրոցական դասագրքում (հեղինակներ՝ Ֆ. Խլղաթյան, Լ. Խաչատրյան) հարցը մասնակիորեն լուծում է ստանում. **ա** խոնարհման պարզ բայերի արգելական հրամայականի կանոնական ձևը համարվում է դրականից կազմվողը (մի՛ խաղացեք), իսկ սոսկածանցավոր և պատճառական բայերինը՝ հին ավանդականը (էջեր 100-101):

5 տարի անց՝ 2011թ. լույս տեսած «Տեղաշարժեր արդի գրական հայերենում» գրքում Յու. Ավետիսյանը, անդրադառնալով խնդրո առարկա հարցին, հստակ ձևակերպում է տալիս. «Ժամանակակից հայերենում արգելական հրամայականի ձևերը կազմվում են դրական հրամայականից. մնացած զուգահեռ կազմությունները հնաբանություններ են» (էջ 36):

Նույնը կարդում ենք դարձյալ 2011թ. հրատարակված 7-րդ դասարանի դպրոցական դասագրքում (հեղինակներ՝ Հ. Բարսեղյան, Փ. Մեյթի-խանյան). «Արգելական հրամայականի եզակի և հոգնակի թվերը բոլոր բայերի դեպքում կազմվում են հրամայականի դրական ձևերից՝ *մի՛* մասնիկով: ... *Մի՛ մեծանա- մի՛ մեծանար...* ձևերն արդեն հնացած են, ունեն սահմանափակ գործածություն, ուստի դրանցից պետք է խուսափել» (էջեր 127-128):

Այսպիսով, տեղաշարժը այս բայերում փաստացի իրողություն է և մնում է հստակ ու կոշտ ձևակերպմամբ (ոչ թե «խուսափել այդ ձևերից», այլ որ դրանք հնաբանություններ են, լեզվի արդի վիճակի համար սխալ ձևեր) ամրագրել նորմատիվ քերականության մեջ: Ուզում ենք նշել նաև հրամայական եղանակի՝ խոսակցական լեզվում իշխող ոչ նորմատիվ *խոսի՛, գրի՛, վախեցի՛, մոռացի՛* ձևերի մասին, որոնք համընդհանուր տարածում են գտել:

²⁶ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 207:

Նշենք մեկ այլ իրողություն: Լեզվի արդի փուլի համար մերժելի, հնաբանություն դարձած ձևեր պետք է համարել ըղձական ապստմի եզակի երրորդ դեմքի **ե**-ով տարբերակները **ե** խոնարհման բայերի համար (*կանչե, գրե, պահպանե*), ինչպես նաև գրաբարյան ներկայի ձև ունեցող պակասավորների համար (*գիրե, արժե*): Նկատենք, որ Հ. Բարսեղյանի տեսության մեջ այս ձևը տրված է որպես ընդունելի՝ փակագծերում՝ *գրի (գրե)* (էջ 217):

Այսպիսով, ամփոփելով վերոբերյալը՝ հանգում ենք այն եզրակացության, որ արևելահայերենի բայական համակարգը քանակական և որակական նկատելի տեղաշարժերի է ենթարկվել վերջին ժամանակահատվածում: Բայացանկի՝ նոր բայերով համալրվելուն զուգընթաց շատ բայեր դարձել են հնաբանություններ (*կենալ, բառնալ, բանալ, գիրենալ... և այլն*), փոխվել է որոշ բայերի ձևակազմությունը, առկա են լծորդական փոխանցումներ: Տեղաշարժ-տեղափոխություններ են կատարվել՝ կապված ա) չ սուկածանցավոր բայերի քանակի և նրանց անցյալ կատարյալի կազմության հետ, բ) **ե** խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականի կազմության հետ, 3) **ա** խոնարհման պարզ բայերի հոգնակի արգելականի, սուկածանցավոր ու պատճառական բայերի արգելականի հրամայականի կազմության հետ և այլն:

Քանալի բառեր - *Բայ, խոնարհում, ածանց, դեմք, վերջավորություն, եղանակ, անցյալ կարարյալ, հրամայական, դերբայ, ներկա ժամանակ:*

А. Абаджян - Переходы в глаголах и спряжении современного армянского языка. - Глагольная система восточно-армянского языка в последнее время потерпела заметные изменения как количественные, так и качественные.

Глагольный список пополнился новыми глаголами, параллельно многие глаголы стали архаизмами /կենալ-остоваться, բառնալ-подняться, բանալ-открыть, գիրենալ-знать и т.д./, изменилось формирование глаголов, есть переходы от одного типа спряжения к другому.

Изменения-переходы в основном сходятся к следующему: а/ к числу глаголов с суффиксом „չ“, и изменению формирования их перфекта, б/ изменению формирования императива простых глаголов спряжения „ի“, в/ изменения императива множественного числа простых глаголов спряжения „ւ“, также формированию запретительного императива казуативных и деривативных глаголов.

Ключевые слова: *глагол, спряжение, аффикс, лицо, окончание, наклонение, прошедшее совершенное, императив, причастие, настоящее время.*

A. Abajyan - Changes in conjugation and verb system in Modern Armenian. The verb system of Eastern Armenian has undergone noticeable quantitative and qualitative changes lately. Due to the replenishment of new verbs in the verb system many other verbs have become archaic, the morphological formation of some verbs has changed and some alternant transferences came into existence. In reference to the following cases displacement has taken place: 1. the quantity of verbs comprising suffix չ “j” and their formation of the Past Indefinite has undergone changes, 2. changes in the formation of the Imperative plural of the simple verbs belonging to ի “e” conjugation 3. changes in the composition of the plural imperative negative forms of the simple verbs belonging to ու “a” conjugation, as well as in the formation of prohibitive, imperative frames of the suffixed and causative verbs are noticeable.

Keywords: *verb, conjugation, affix, person, ending, mood, Past Simple, imperative, participle, Present tense.*

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԻԲԲԵՎ
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԺԱՆՐԱՏԵՍԱԿԻ, ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Գալստրյան Աշոտր
(Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ)*

Գիտական գրականության մեջ գեղարվեստական վավերագրությունը հաճախ անվանում են մեմոարային գրականություն, որի մեջ մտնում են հուշագրությունը, ուղեգրությունը, փաստագրությունը, օրագրությունը և էսսեն: Գեղարվեստական վավերագրությունը ինքնուրույն և առանձին ժանրատեսակ է, որի լեզվաբանական հետազոտությունը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն ժանրի «քենա-կառուցվածք-ոճ» եռանկյան լեզվական հիմքերի, այլև հեղինակների խոսքի մշակույթի և ժամանակագրական սկզբունքի պահպանման առումով:

Կարևոր է փաստել, որ եթե գեղարվեստական ստեղծագործության մեջ հեղինակը դեպքերի ընթացքը ինքն է ձևավորում՝ նախապես ուրվագծված դիպաշարով, ապա մեմոարիստը եղած հուշափաստերից է խոսք կառուցում: Գլխավորը, որին ձգտում է հեղինակը, անցյալի իրականության, դեպքերի ու դեմքերի և նրանց ունեցած փոխհարաբերությունների ճշմարտացի վերարտադրությունն է, որը կարող է ներկայացվել նաև գեղարվեստական հանդերձավորմամբ:

Թեև հեղինակը գեղարվեստական իմաստով կերպար չի ստեղծում, բայց կերտում է դիմանկարներ, որոնք տարբեր երևույթների, իրողությունների կենդանի կրողներ են: Բայց եթե գրող-գեղագետը ազատ է կերպարների ընտրության մեջ, այսինքն՝ նա կարող է անհրաժեշտության դեպքում իր ստեղծագործության մեջ գծագրել հերոսներ՝ ստեղծելով իրականության ամբողջական պատկերներ, ապա գեղարվեստական վավերագրության հեղինակը ազատ չէ այդ ընտրության մեջ: Նա հնարավորություն ունի կերպարագծելու միայն իր անձնական կյանքի հետ առնչված մարդկանց դիմանկարները: Այս դեպքում հեղինակը «ոչ թե մտահոգացած կերպարների հետ գործ ունի, այլ իր ծանոթ մարդկանց ու դեմքերի հետ, որոնց շրջապատում նա ապրել է և անցկացրել իր կյանքի օրերը»[6, 108]:

Մեծնարիստը երևույթներին նայում է անձնական կյանքի պատուհանից: Նա չի կարող բնագրում ընդգրկել իրադարձությունների և երևույթների բազմահանգույց շղթաներ: Այստեղ կարևոր է, թե հեղինակը իրականության ո՞ր կողմն է նկատում, ինչպե՞ս է մշակում եղած փաստերը և ինչպե՞ս է գնահատում արժեքների բազմակերպությունը:

Ժամանակակից լեզվաբանության ուղղությունների մեջ առաջնային նշանակություն ունի գեղարվեստական վավերագրության հիմքերի ուսումնասիրումը, որովհետև հետազոտության առարկայի կենտրոնում մարդ-անհատականության լեզվական իրացումն է: Լեզվաբանական գրականության մեջ առաջադիր խնդրի որոշ տեսակների (հուշագրական և ինքնակենսագրական արձակ) երբեմն անվանում են լեզվաբանական անձնաբանություն «лингвистическая персоналогия» (Վ. Ներոզնակ, 1996): Այստեղ հեղինակը դիտվում է սոցիալական և անհատական գծերի համադրությամբ մի կերպար, որը կարող է երևալ սեփական մախաձեռնությամբ ստեղծված երկում:

Ղազարոս Աղայանը «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության մեջ ընդգծում է, որ հիշողությունները չեն մոռացվում միայն նրա համար, որ կրկնվում են շարունակ: «Արտաքին տպավորությունները, մեր գագաթի մեջ ծովանալով, շարունակ շարժման մեջ են...: Բարձր ոգևորությունը այդ ծովում փոթորիկ բարձրացնելն է» [1, 424]:

Հուշերը լայն իմաստով ականատեսի կամ մասնակցի գրառումներ են անցյալի իրադարձությունների և մարդկանց մասին: Դրանց են պատկանում ինքնակենսագրությունը, օրագրերը, ճամփորդական նոթերը և այլն: Բազմաթիվ փաստերից հուշագիրը ընտրում և վերաշարադրում է այնպիսիները, որոնք էական են և բնութագրում են տվյալ ժամանակաշրջանը:

Ուղեգրությունը ճանապարհորդության, հանդիպումների ու տպավորությունների մասին պատմող գրական երկ է, իսկ օրագիրը՝ անհատի կյանքի դեպքերի, ապրում-խոհերի ամենօրյա գրառում:

Հիշողության մեջ ամրապնդված նյութը հեղինակը որոշակի որակական փոփոխությունների է ենթարկում՝ աներկբա ներառելով իր հեղինակային ես-ը:

Հատկանշական է Սիլվա Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» երկի հետևյալ հատվածը. «Թող ների ինձ ընթերցողը, եթե գր-

քում հաճախ հանդիպի անձնական դերանվան առաջին դեմքի հոլովումներին՝ ես, ինձ, ինձնից, ինձնով և այլն: Գիտեմ, որ ինչքան էլ ջանամ խուսափել դրանցից ու եղածի աննշան մասը նկարագրեմ, դարձյալ պատմելիքիս այս կամ այն կտորը կստանա ինքնագովության շեշտեր... Այսպես կլինի, որովհետև հանգամանքների բերումով դեպքերն ու հանդիպումները զարգացել են իմ՝ հայրենիքից եկած հրավիրյալիս շուրջը» [12, 12]:

«Հուշեր գրելը մի սայթաքուն ուղի է,-խոստովանել է Ավետիք Իսահակյանը,-որ սկսվում է համեստությամբ ու վերջանում ինքնագովությամբ»:

Սևակ Արզումանյանի «Ցամաքող աղբյուրներ» հուշ-վիպակում երևում է հեղինակի մեմոթյունը: «Ուրիշների նման ես էլ մենակ մնացի, մնացի ինքս ինձ հետ: Այս անգամ էլ սատանայի պես խոհերն էին ինձ հալածում, հողմի բերանն ընկած փետուրի թեթևությամբ զարկում դես ու դեն: Քո ահեղ եսից ո՞ւր փախչես» [5, 3-4]:

Առաջին դեմքի դերանունների գործածության նախ նկատում ենք գեղարվեստական վավերագրության տարբեր վերնագրերում, այսպես՝ Ղազարոս Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրությունը, Գևորգ Էմինի «Դրվագներ իմ հուշերից» հուշային դիմանկարը, Հովհաննես Շիրազի «Մի փետուր իմ արծիվ կյանքից» վավերական պատմությունը, Սիլվա Կապուտիկյանի «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» ուղեգրությունը և այլն:

Հուշերում, օրագրերում, ճամփորդական նոթերում հեղինակն է հանդիպում բնորոյին և մյուս հերոսներին, գրուցում նրանց հետ, դատողություններ անում, որով էլ պայմանավորվում է առաջին դեմքի դերանունների գործածության հաճախականությունը. «Ես եղա ականատեսը և մասնակիցը այդ մեծ ծառացումի» [11, 238]: «Այդ օրը նշանավորվեց մաս ծանոթությամբ այն անձնավորության հետ, որը հետագայում պետք է դառնար Ամենայն Հայոց Կաթողիկոսը, *մեք* Կաթողիկոսը» [11, 222]:

Դժվար չէ նկատել, որ գեղարվեստական վավերագրության կառուցվածքային տիրույթում մենք գործ ունենք լեզվական անհատի հետ, որը գոյություն ունի լեզվական տարածություններում: Լեզվական անհատը՝ որպես բազմաչափ կառուցվածք, մեզ հետաքրքրում է նախ լեզվաբանության տեսանկյունից:

Շատ կարևոր է, թե ում է ներկայացնում հուշագրության հեղինակը: Հուշային, օրագրային դիմանկարներում գծագրվում են բնորոյի արտաքինը, բնավորության գծերը, խոսելաձևը, այլ խոսքով՝ ուշադրություն է դարձվում այնպիսի մանրամասներին, որոնք կենդանացնում են «հերոսին»:

Գեղարվեստական-վավերագրական խոսքի բազմազան շերտերից մեկը դիմանկարն է, որ հուշագիրը կերտում է նուրբ դիտողականությամբ և յուրահատուկ մեթոդով: Հեղինակները նախ գծագրում են հերոսների արտաքինը. «Առաջին մեքենայից դուրս նետվեց ինքը՝ Սարոյանը՝ հաղթանդամ, վիթխարի բեղերով ու հոմերական քրքիջով» [7, 175]: Պատումի շղթային ձուլվում են նաև հերոսների ներքին հատկանիշները, բնավորության՝ աչք զարնող գծերը. «Ներկայանալու հենց առաջին օրը փեր Հակոբն իր վրա վերցրեց Արևմտյան Գերմանիայի մայրաքաղաք Բոննի փանելու պարտականությունը: Մեքենան վարելու մեջ հնույր, խոսք ու գիր բանեցնելու մեջ վարժ, դիմացինի հետ լեզու գրմնելու մեջ փորշված, Հայաստանի, Արցախի իրադարձություններին լավարեղյակ, աչքաբաց ու սրտաբաց անջնավորություն է Հակոբ քահանա Գյոզջյանը» [12, 38]: Հեղինակներիի կենդանացրած մարդիկ դրոշմվում են իրենց վարքագծի ու ճակատագրի մեկ-երկու ցայտուն կողմով, նույնիսկ խոսքով ու պատմելաձևով:

Ընդհանրապես իրականության և հուշերը շարադրելու միջև տարածաժամանակային զգալի ընդգրկում է անհրաժեշտ: Նախօրեին կատարվածը հաջորդ իսկ օրը չի կարող հայտնվել հուշագրության տիրույթում: Տարածաժամանակային որոշակի կտրվածքից հետո է հուշափաստը դառնում վավերագրության պատումային հոսքերից: Հարկ է հիշատակել Հայկ Խաչատրյանի «Քերթողահայրը» պատմավեպի դրույթներից մեկը, որը պատմավիպասանը քաղել է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»: Պատվիրատու Սահակ Բագրատունու հորդորին՝ «Պատմության» սահմանները հասցնել մինչև իրենց օրերը, քերթողահայրը պատասխանել է. «Ես չեմ կարող վարվել այնպես, ինչպես հուշում ես դու: Անկարելի է մեր ժամանակի կյանքը դրվագել որպես պարմություն: Յուրաքանչյուր իրադարձություն պիտի նայել առնվազն քառասուն փարվա հեռավորությունից... Պիտի սպասել այնքան ժամանակ, մինչև հասարակության կյանքի որևէ փուլ բանչրանա և դառնա հուշ»: [9, 294]:

Այսպես, Պերճ Պռոշյանը «Հուշիկները» գրել և տպագրության է պատրաստել մոտավորապես 43-48 տարեկանում: Այստեղ դեպքերը ներկայացվում են մինչև նրա 23-24 տարեկան հասակը: Այսինքն՝ 20-30 և ավելի տարիների բարձունքից է շարադրված հեղինակի հիշատակա-րանը:

Հենց այս տեսանկյունից էլ հուշ-դիմանկարներում արդարացվում է *հիշում եմ, վերհիշում եմ* բայաձևերի հաճախադեպ գործածությունը: «*Հիշում եմ: Մի անգամ, երբ մեր ծննդավայրում էինք, Վարպետրն ասաց՝ ջրադացի եմ կարողել, արի երթանք: Ծամփա ընկանք*» [4, 57]:

Երբեմն հուշագրողը թերթում է հիշողության մատյանը՝ *եթե հիշողու-թյունս չի դավաճանում* կամ *հիշողությանս մեջ մնացել է* նախադասու-թյուններով. «*Այդ դեպքից անցել է 40 տարի. եթե հիշողությունս չի դա-վաճանում, հունիսի կեսերին էր, որ Մասաչուսեթս նահանգում գրնվող Հարվարդի համալսարանի ղեկավարության խնդրանքով Հայոց Հայ-րապետը համաչայնություն Կրկեց այցելելու համալսարան*» [3, 68]: «*Հիշողությանս մեջ մնացել է Բակունցի էլույթը*» [8, 63]:

Ընդհանրապես բառաքննական դիտարկումների ժամանակ կարևոր տեղ է տրվում բառապաշարի իմաստային-ոճական տարբեր խմբերի դասակարգմանը:

Սովորաբար հուշային դիմանկարներում աչքի են զարնում տվյալ ոլորտը և այդտեղ գործող անհատին ներկայացնող բառաշերտեր, որոնք ըստ էության հարատացնում են հուշագրության լեզուն: Օրինակ՝ եկեղեցական առաջնորդներին ներկայացնող հուշերում մեծապես գոր-ծածվում են՝

ա. վանքերի, եկեղեցիների, տաճարների անուններ՝ Ս. Գեղարդ վանք, Խոր Վիրապի վանք, Մեյդանի Ս. Գևորգ եկեղեցի, Անթիլիասի մայրավանք, Հաճկատարի վանք, Սուրբ Շողակաթ եկեղեցի և այլն:

բ. Եկեղեցական զգեստների անուններ՝ թասակ, վեղար, կնգուղ, հայ-րապետական քող, սքեմ, պարեգոտ (կապա), սև գլխարկ (թասակ), փա-րաջա:

գ. Նվիրական առարկաների անուններ. որպես պատվո նշան քահա-նայական կարգ ունեցողներին շնորհված իրեր՝ լանջախաչ, եպիսկոպո-սական մատանի, պանակե, ձեռաց խաչ:

գ. Կրոնական գրքերի անվանումներ՝ Սուրբ Գիրք, Աստվածաշունչ, Ավետարան, Յայնատուրք, «Վեհաձօր Անետարան», Ճաշու գիրք կամ «Ճաշոց»:

դ. Կրոնապետերի կացարան-նստավայրերի՝ տեղի իմաստ արտահայտող -արան վերջածանցով անվանումները՝ կաթողիկոսարան, վեհարան, պատրիարքարան, առաջնորդարան:

Ընդհանրապես 19-րդ դարի արևելահայ ինքնակենսագրական արձակում զգալի տեղ են գրավում կրոնական ըմբռնումները: Այդ կարգի բառամիավորների հանդիպել ենք ինչպես Պերճ Պռոշյանի «Հուշիկներում», այնպես էլ Ղազարոս Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության մեջ: Այս իրողությունը չենք կարող վերագրել 20-րդ դարի հուշագրական արձակին:

Հայաստանի Հանրապետության ազգային հերոս Մինթե Մելքոնյանին նվիրված հուշերում ռազմական ոլորտի բառամիավորներ են գործածվում՝ արկ, ավիառումբ, փամփշտատուփ (մագազին), ինքնաձիգ, հրետանի, հրասայլ, հրանոթ, գնդացի, նռնականետ, խրամատ, գրահամբեմա, գրահաբաճկոն, գորագունդ, գորամիավորում, դիպուկահար, նշանառու, գնդակոծել, ականապատել, գրահահար և այլն:

Գեղարվեստական վավերագրության լեզվական տիրույթն ամբողջացնում են նաև շրջասական արտահայտությունները: Մինթե Մելքոնյանը բնութագրվում է Արցախի արծիվ [10, 311], նոր Նժդեհ [10, 310] շրջատություններով: Հուշագրության լեզվում հանդիպել է երեք անձանց բնութագրող շրջատության օրինակներ՝ Վիլյամ Սարոյան, Վիկտոր Համբարձումյան, Վազգեն Առաջին-20-րդ դարի երեք մեծ հասակակիցներ, Մարտիրոս Սարյան, Հարություն Կալենց, Մինաս-Ասրվածներ գոյների: Վազգեն Առաջին կաթողիկոսը բնութագրվում է *մրքերի հսկա* շրջատությամբ, Սիրանույշ Պալճյանը՝ անմոռանալի Տիրամայր [3]:

Բնութագրվում է նաև հայ ժողովուրդը, այսպես՝ *հայ ժողովուրդ-անչափ արևապաշտ, անչափ ռոմանտիկ, բայցև անչափ տառապած, հայեր-երգի և գույնի ժողովուրդ*, այսքան գրքասեր ու թարգմանիչ ժողովուրդ, *Ֆրանսիա-իրավունքների և ազատության երկիր, Հայաստան-Փոքր Ասիայի Շվեյցարիա, ծիծեռնակի երկիր* [7]:

Հուշագրական արձակի տեխնիկական զարգացնելու մղումով հեղինակները երբեմն գործածում են ժողովրդից ծնված իմաստախոսություններ.

«Ժողովուրդն ասում է. «Դուշմանդ էլ դուռդ գա՝ պետք է ընդունես»:»
«Ինչպես ժողովուրդն է ասում՝ առողջությունը երեսից կաթում էր»: «Հը-
նուց ասված խոսք է, որ գրող ծնվում են, գիտնական՝ դառնում» [4,51]:

«Հին խոսք է, որ դաբաղը (կաշեգործը) սիրած կաշին շատ է գետնե-
գետին տալիս»: «Երբեք չեմ մոռանա հորս պատգամը. «Թուրքի հետ
ընկերություն անելիս հրացանը ձեռքիցդ չզցես»: «Գրական թերթ»,
հմ.13, 2014:

Գեղարվեստական-վավերագրական արձակում ըստ անհրաժեշտու-
թյան հիշատակագրվում են այլ ժողովուրդների թևավոր արտահայտու-
թյուններ ևս. «Թախիծով բաժանվեցինք, բանաստեղծը երևի հիշեց հին
արևելյան խոսքը. «Հրաժեշտի թախիծը սիրո նշան է»: «Ցավակրե միշտ
ու մի՛ ցավացնե ոչ մեկին» (Օմար Խայամ): «Հին խոսքեր կան, որ նվի-
րականացած են. «Հարգի՛ր նախևառաջ ինքդ քեզ» (անգլիական)[4]:

Գեղարվեստական վավերագրության պատումներում հեղինակները
հաճախ են մեկնում այս կամ այն բառը, տալիս բառիմաստի հավելյալ
բացատրություններ. «Մաղ գյուղը չրաղվան էր արել (չրաղվան, այ-
սինքն՝ բոլոր տներում վառել էին նավթի լամպերը, բոլոր մոմերը)»
[13,81]:

Այս երևույթը գեղարվեստական վավերագրության էական հատկա-
նիշներից է: Կարելի է ընդգծել՝ առաջադիր ժանրը ձեռք է բերում բառա-
բանային գործարանական արժեք:

Հրաչյա Աճառյանի «Կյանքիս հուշերից» երկում թուրքերեն մի շարք
անունների դիմաց տրվում են հայերեն բացատրություններ. «Քաղաքի
թաքիրդադ թուրքերեն անունն առաջացել է հայոց Սուրբ Թագավոր
եկեղեցու անունից» [2, 9]: Կամ՝ չիչակչի-«վաղահաս ընտիր մրգեր ծա-
խող պտղավաճառ», խոնախ-«ապարանք, մեծ տուն», դաչկա-«երկա-
նիվ սայլ», մուխթար-«թաղապետ», խովուշ-«մեծ սրահ» և այլն:

Միվա Կապուտիկյանը ուղեգրության մեջ լեզվաբանի խոր իմացու-
թյամբ մեկնում է այս կամ այն բառը, տալիս ճշգրիտ բացատրություն-
ներ. «Արևմտահայ լեզուն ունի «տիպար» բառի մի առանձնահատուկ
գործադրություն: Ասում են՝ տիպար վարժարան, տիպար մանկապար-
տեզ, որը նշանակում է օրինակելի, ցուցադրական...: Մի այդպիսի տի-
պար ուսուցչուհու երևույթը ուներ իր վրա տիկին Ալիս Պասմաճյանը,
Հալեայի կաթողիկե «Թեր-Մենթ-Ռ-ամ» վարժարանի աղջիկների բաժնի
տնօրինուհին» [12, 206]:

Այստեղ *տրիպար* բառի բացատրությունը ինքնանպատակ չէ. տիկին Ալիսին ներկայացնելու համար հեղինակը պատումը հյուսում է այս եղանակով, որը յուրահատուկ ոճավորում է ստեղծում:

Արևելահայ ուղեգրության ենթապատումներում ցայտուն երևում են արևմտահայերենի դիպուկ և ճշգրիտ ներթափանցումներ: Հյութեղ ու վարժ արևմտահայերենը չի զիջում հատկապես երկխոսություններում, որոնք արևելահայերենի և արևմտահայերենի վայելուչ փոխընդգրկում են: Կարծում ենք՝ ժամանակակից հեղինակներից Սիլվա Կապուտիկյանն է, որ վարպետորեն օգտվել է արևմտահայ լեզվի հնարավորություններից, իհարկե, Վահրամ Փափազյանից հետո:

Վերջին ժամանակներում լեզվաբան-ոճագետները գեղարվեստական հուշագրության մեջ տեսնում են բնագրերի ներժանրային դրսևորումներ: Մի քանի ընդհանուր կառուցվածքային սկզբունքներ երևում են առնչակից ժանրերում: Հայտնի է, որ հուշագրությունը, ունենալով բարդ կառուցվածք, իր մեջ ներառում է ինքնակենսագրական երկի, գրական դիմանկարի և այլ ստեղծագործությունների տարրեր: Ընդամին 20-րդ դարի մեծագույններում ցայտուն դրսևորվում են էսսեի ժանրի հատկանիշներ՝ ազատ կառուցվածք, անսյուժե շարադրանք, վերլուծումներ և խոհեր:

Գեղարվեստական վավերագրությունը ժամանակի հրամայականն է: 21-րդ դարը նոր մտածողություն և նոր կառուցվածք է առաջադրում առաջադիր ժանրին: Մասնովն իր էջերում հաճախ է գետեղում հուշեր, ուղեգրություններ, էսսեներ: Դրանք կառուցվածքային-ոճական առումով բավականաչափ հարուստ են, բազմերանգ ու բազմաոճ: Ժամանակակից գեղարվեստական վավերագրական արձակն արտահայտում է սոցիալական, հասարակական, փիլիսոփայական և հոգեբանական հիմքի վրա ձևավորված ժամանակակից մտածողություն:

Ինչպես նշել է գեղարվեստական վավերագրության հեղինակներից Վարդգես Պետրոսյանը, համաշխարհային արդի գրականության «ամենակենսական երակներից մեկը վավերական ուղղությունն է, և թող ոչ ոք չկարծի, թե սա երկրորդ կարգի գրականություն է» [13, 412]:

Քանալի բառեր - *Գեղարվեստական վավերագրություն, ժանրարեսակ, հեղինակ, լեզվական անհայր, հուշափաստեր, դիմանկարներ, երկխոսություն, բառաշերտեր, շրջասություն, թևավոր խոսքեր:*

Ашот Галстян - Стилистические особенности художественного документализма как самостоятельного жанрового типа. В научной литературе художественный документализм часто называют мемуарной литературой, в которую входят мемуары, заметки, фактография, дневники и эссе.

Если в художественном произведении автор течение события формирует сам, заранее изложенными резервами, то мемуарист представляет истинную картину прошедшей реальности художественным снаряжением.

Художественный документализм - независимый и отдельный вид жанра, который в стилистическом смысле выявляет уникальные и интересные реалии.

Ключевые слова: *художественная документалистика, жанровый вид, автор, языковая личность, мемуарные факты, портретные зарисовки, диалог, словарные пласты, перифраза, крылатые слова.*

Ashot Galstyan - Linguistic-stylistic peculiarities of fiction documentary as an independent genre. Fiction documentary, often referred to as memoir literature in the scientific literature, includes memoirs, notes, documentary writings, diaries and essays. If the author is the person forming the process of events in fiction works according to previously outlined plot, his or her memoirs represent the true picture of past reality with artistic looks. Fiction documentary is an independent and separate type of genre which reveals unique and interesting facts in the light of linguistic and stylistic considerations.

Keywords: *fiction documentary, genre, author, linguistic identity, memory facts, portraits, dialogue, word-layers, idioms, words of wisdom.*

**ՆՇԱՆՈՒՈՐՏԻ ՍԱՀՄԱՆԸ ԵՎ ԲԱՂԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ.
ԼԵԶՎԻՄԱՏԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊ**

*Գյուլգայրյան Դավիթ
(ՎՊՀ)*

Ա) Չնայած մինչև ստոիկները ձգվող պատմական խոր արմատներին՝ նշանագիտությունը՝ իբրև գիտական համակարգի ինքնուրույն ոլորտ, իր վերջնական հաստատումը գտավ 20-րդ դարի կեսերին միայն՝ շնորհիվ Չառլզ Մորիսի «Նշանների տեսության հիմունքներ»¹ երկի: Նշանագիտության՝ որպես համընդգրկուն գիտության կազմավորման պատմականորեն մերձագո նախադրյալները եղան Չառլզ Փիրսի, Ֆերդինանդ դը Սոսյուրի, Կարլ Բյուլերի հայտնի ուսումնասիրությունները²: Լեզվաբանական և իմաստասիրական բեկմամբ՝ հետագայում նշանագիտական խնդիրների լուրջ արծարծումներ եղան Շառլ Բալլիի, Ռոման Յակոբսոնի, Ալեքսեյ Լոսկի, Յուրի Լոտմանի, Լևոն Աբրահամյանի, Սերգեյ Վարդագարյանի, Էդմոնդ Ավետյանի, Էդուարդ Աթայանի, Աշոտ Ս. Աբրահամյանի և այլոց ուսումնասիրություններում: 60-ականների կեսերից սկսվող և մինչև մեր օրերը ձգվող հայ հեղինակների առատությունն այս ոլորտում բնավ կամայական մոտեցման կամ հայրենասիրական նկրտման արտահայտություն չէ: Բերված անվանակիրներից յուրաքանչյուրն էական քայլ է կատարել նշանի մեկնության հարցում, և հակառակ այն բանի, որ նշված հեղինակներն իրենց հետազոտություններով նշանագիտության հայկական դպրոց չեն ձևավորել (թերևս վերապահությամբ Է. Աթայանի, որի ուսմունքն ունի ստեղծագործաբար առաջ տանող հետևորդներ), այնուամենայնիվ ընդհանուր նշանագիտությունը զարգացման իր ճանապարհին չի կարող անտես առնել թվարկված հայագգի մասնագետների ներկայացրած՝ ոչ միայն այլագգիներից, այլև իրարից զգալաչափ տարբեր հայեցակետերը:

¹ Տե՛ս **Ch. Morris**, Foundations of the Theory of Signs // International Encyclopedia of Unified Sciences. Vol. 1, part 2, Chicago, 1968:

² Տե՛ս, **Ֆ. դը Սոսյուր**, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Երևան, 2008, էջք 31 – 34, 39 – 43, 184 – 187: **K. Bühler**, Sprachtheorie, Jena, 1934:

Բ) Նշանոլորտը³ նշանի և սրան հարաբերվող տարրերի տրամաբանական տարածությունն է: Հասկանալի է, որ այդ ոլորտում կամ տարածության մեջ կենտրոնատեղին զբաղեցնողը նշանն է, որովհետև ամեն մի նշան այդպիսին է հենց տվյալ ոլորտում, որը կարող է դադարել նշան լինելուց մեկ այլ տարածության մեջ կամ էլ կատարել բոլորովին այլ նշանային գործառույթ: Նշանը, սակայն, լինելով նշանոլորտի կենտրոնում, հակադրական հարաբերության մեջ է ոչ միայն նշանոլորտի ոչ նշանային տարրերի, այլև ի՛ր իսկ՝ նշանակերտ ներքին բաղադրիչների հետ: Սա նշանակում է, որ սահմանային ճշգրտման առումով ընդլայնման կարիք ունի նշանոլորտի գաղափարը: Նշանոլորտը, փաստորեն, պարունակն է նշանի բովանդակության ու արտահայտության կազմիչների, դրանցով բաղադրված նշանի և վերջինիս նկատմամբ այն արտաքին ազդակների, որոնց հարաբերությամբ էլ նա նշան է ընկալվում: Նշանը, այսպիսով, կազմավորվում է նշանոլորտում. առանց նշանային միջավայրի հաշվառման ստիպված կլինենք հանգել աննշանայնության մտքին, որը հղի է վտանգով, ըստ որի. «Գիտակցությունը կդառնար պատուհաններից գուրկ մենույթի... նմանակ»⁴: Այստեղ հետաքրքիր է նշանասերման (սեմիոզիս) և նշանոլորտի հարաբերությունը: Սրանք փոխընդգրկուն հարաբերություն ունեն իրար նկատմամբ: Նշանասերումը նշանի գոյավորման ընթացքն է, հենց այդ գոյավորումը՝ սկսած նշանային ենթատարրերի համակցությունից մինչև նշանային միջավայրի՝ նշանոլորտի ապահովում:

Մյուս կողմից, սակայն, միջավայր է պետք՝ մի գոյարան, որտեղ իրացվի նշանի գոյավորումը՝ նշանասերումը: Սա նշանային տիրույթին բնուստ տրված ներհակություն է, նշանայնություն-աննշանայնություն գուգանդամությամբ պայմանավորված մշտագո կացություն՝ ճիշտ նույն ներհակությամբ, ինչ որ առկա է լեզվական հորինվածքի զարգացումը լարուն վիճակում պահող լեզու-խոսք բևեռների հարաբերության մեջ:

Գ) Արդ՝ փորձենք պարզել նշանոլորտից ներս եղած նշանային բաղադրիչների իսկությունն ու դրանց հարաբերությունները՝ միաժամանակ

³ «Սեմիոսֆերա» (նշանոլորտ) տերմինն առաջարկել է Յ. Լոտմանը: *Sh'u* Ю. М. Лотман, Семиосфера, СПб., Искусство – СПб, 2004, էջ 250 – 268:

⁴ Է. Աթայան, Նշան և նշանայնություն // Հոգի և ազատություն, Երևան, ՍԱՐԳԻՍ ԽԱՉԵՆՑ, 2005 թ., էջ 303:

շեշտելով նշանոլորտի՝ նշանային տեսակետից այն դատարկ բազմության անհրաժեշտությունը, որի հարաբերությամբ է նշանը տոգորվում տեղակալման իր հիմնական հատկությամբ:

Նշանը, ուրեմն, տեղակալումն է մի բանի: Ի մի բերելով Չ. Փիրսի և Կ. Բյուլերի առանձնացրած նշանային տիպերը՝ կարող ենք ասել, որ նշանը տեղակալելիս դրսևորվում է կամ որպես ցուցում, կամ որպես պատկեր (ըստ Փիրսի), կամ որպես հայտ, կամ որպես ազդ (ըստ Բյուլերի) և կամ որպես խորհուրդ (ըստ Փիրսի և Բյուլերի): Կարևոր է նկատել, որ, բացի այս նշանագետների տարբերակած նշանային տիպերի սահմանային որոշ համընկնումներից, դրանք՝ այդ տիպերը, հաճախ միևնույն նշանի մեջ համատեղում են նո՛ւյն իսկ նշանագետի բացահայտած նշանատիպերը՝ որպես արտահայտություն տեղակալումների ներդաշնակության՝ ըստ նրանց ներանցման հնարավորության: Այս տիպերի ամբողջությունը նշանոլորտի ենթաբազմություններից մեկն է՝ ՆՇԱՆ անմիջական բազմության կազմում:

Նշանը բնույթով երկոլորտ է. այն այդպիսին է բովանդակության և արտահայտության հակադիր համատեղմամբ, ուստի նշանոլորտի ենթաբազմություններ են այդ ոլորտներն առանձնաբար: Հարկ է նկատել, որ թե՛ բովանդակության, թե՛ արտահայտության՝ աստ ներկայացվող տեսակետը հարազատ է հայ լեզվանշանագիտության այն ըմբռնումներին, որոնց համաձայն՝ բովանդակության ոլորտը չի սպառվում իմաստով, ոչ էլ արտահայտության ոլորտը՝ միայն հնչյունական կողմով: Նշանի արտահայտության ոլորտը, հնչականից բացի, երևութանում է նաև կառուցվածքային արտահայտությամբ, բովանդակության ոլորտը, իմաստից բացի, հագեցնում է նաև՝ իմաստագործի նշանակությամբ: Պարզ է, որ խոսքն այստեղ լեզվական նշանի մասին է: Սակայն լեզվական նշանը, հայտնի է, հարաբերիցն ու մմանակն է արտալեզվական նշանի: Վերջինիս դեպքում նշանագիտության մեջ ընդունված է խոսել ոչ թե բովանդակության և արտահայտության, այլ էության և երևոյթի մասին: Լեզվի և արտալեզվական իրականությունները հարաբերակցորեն քննողները, որպես կանոն, լեզվական իրականությունները քննելիս առաջնորդվում են նաև բնության հատկությունները վեր հանող՝ բնագիտական մեթոդներով: Վերջին ժամանակներում նկատվում է նաև հակառակ մոտեցումը (հիշենք, մասնավորապես, Է. Աթայանի դիտարկումները

րը): Մեր ուսումնասիրության այս հատվածում վերջին մոտեցումն ենք որդեգրում: Արտալեզվական նշանն էլ երկկողմ կազմավորում է, և դրա մեջ իմաստի մասին խոսք լինել չի կարող: Մնացած առումներով այդ նշանի երկու կողմն էլ հար և նման է լեզվական նշանին, քանի որ այն ինչ-որ բան է *նշում* տեղակալելով այդ բանը, *նշանակելով* նրա գոյությունը (հիշենք ծխի և կրակի ծեծված օրինակը): Հետևաբար տվյալ բնական նշանի (ասենք՝ ծխի) բովանդակությունը նրա նշանակությունն է (ազդանշում-ցուցանշում է կրակի գոյություն), արտահայտությունը նյութական դրսևորվածությունն է (մեր օրինակում՝ ծխի *գծային* բնույթը):

Վերադառնալով լեզվական նշանին՝ պարտ է նկատել, որ իմաստագուրկ նշանակությունը բնավ ենթադրել չպիտի տա նաև նշանակ(ու-թեն)ագուրկ իմաստի գոյության հնարավորություն. իմաստակիր նշանի դեպքում իմաստը միշտ նշանակալից է, սերտաճած է նշանակությանը, մինչդեռ նշանակությունը կարող է լինել կամ իմաստալից, որ նաև իմաստակազմություն է ենթադրում, կամ միայն իմաստակազմիչ (ի դեպ, նաև իմաստազատիչ). այս դեպքում գործ ունենք իմաստագուրկ նշանակու-թյան, ուստի և այդպիսի՝ նշանի հետ, քանի որ, ինչպես ասվեց, լեզվա-կան նշանի բովանդակության մեջ ոչ միշտ է պարտադիր իմաստային կողմի առկայությունը: Ասվածը հուշում է, որ լեզվական ու արտալեզվա-կան նշաններն ընդհանրաձևում են բովանդակային բևեռի *նշանակու-թյան* եզրով և տարբերվում են նույն բևեռի *իմաստային* եզրով: Իմաս-տային եզրը, այսպիսով, այս երկու նշանների *տարբերակիչ հատկա-նիշն* է: Ասվեց, և ինքնին հասկանալի է, որ արտալեզվական (բնական) նշանների մեջ բացառված է իմաստի գոյությունը, մինչդեռ արտալեզ-վական նշանի բովանդակության միակ եզրի՝ նշանակության նմանակի գոյությունն անխուսափելի է լեզվական նշանի մեջ: Քանի որ նշանակու-թյունը լեզվական և արտալեզվական նշանների *ընդհանրական հատ-կանիշն* է, ուստի պարտավոր ենք վեր հանել լեզվական նշանում *բնա-կանություն* պահը, այլ կերպ՝ պարզել լեզվի մեջ պայմանական և բնա-կան նշանների հարաբերակցությունը և փաստել դրանց՝ իբրև նշա-նային ենթաբազմությունների գոյությունը նշանոլորտում:

Դ) Հնչույթներն ինքնին նշան չեն. ոչ միայն իմաստագուրկ են, այլև չունեն նշանակություն: *Նշանավորվում* են, սակայն, այլ հընչույթների հետ մասնակից դառնալով իմաստակազմությանը և, հարկ եղած դեպ-

քում, իմաստագատմանը: Այդ մասնակցությամբ *նշանավորումն* ապահովում է նրանց՝ իբրև նշանների բնականությունը, որովհետև համապատասխան գործընթացում հանդես են գալիս գործառական *նշանակությունը*, կազմում են իմաստ՝ չիմաստավորվելով կամ *նշանակալից* դառնալով չիմաստավորված (առանց իմաստային բեռնվածություն ստանձնելու): Հետևաբար համապատասխան հնչակազմում *հնչույթը նշան* է, որի նշանակիչն ինքն է (ինքնանշանակ նշան է), նշանակյալը՝ այլ հնչույթների համակցությամբ իմաստ կազմավորելու գործառական նշանակությունը: Գործառական առումով հնչույթների հետ նույնաբնույթ են ձևույթները: Բառակազմից և բառի ձևակազմից դուրս շարքային լեզվակիրը չի կարող ասել, թե ինչ միավորներ են, ասենք, արդի հայերենի *ի-ն, իր-ը, ան-ը* և այլն: Ի դեպ, հազիվ թե լեզվաբանն էլ դրա սպառիչ պատասխանը տա (օրինակ՝ *ի-ն* հոլովի՞չ է, հոլովակե՞րտ է, անցյալի ժամանակային ցուցի՞չ է (հմմտ. *զնայի*), ապառնո՞ւ ցուցիչ է (հմմտ. *գրնի*), վերջածա՞նց է, թե՞ նախդիր է: Այդպես և՛ մյուս ձևույթները: Սակայն բավական է՝ հանդիպեն համապատասխան բառակազմում կամ բառաձևում, իսկույն պարզ կդառնա, որ դրանք նշաններ են: Այս առումով, ուրեմն, սրանք իսկապես նույնական են հնչույթներին, բայց դրանցից տարբերվում են նրանով, որ միանալով համապատասխան հիմքին, արմատին կամ բառին՝ ոչ միայն այդ նշանային միավորներն են վերանշանավորում-վերիմաստավորում, այլև իրենք էլ իմաստակիր են դառնում (իմաստային բեռնվածություն են ստանձնում): Ասվածից հետևում է, որ իրենց նշանակությամբ ձևույթները բնական նշաններ են, իմաստով՝ պայմանական նշաններ: Ձևույթները բառերից անկախ գոյություն չունեն մեր գիտակցության մեջ, այլ «ննջած են» ենթագիտակցական շերտերում և «արթնանում են» միայն ըստ հարկի՝ տվյալ շարակցության մեջ այս կամ այն բառին *բնականորեն* սերտաճելով: Լեզվական «հուշադարանում», ուստիև մեր գիտակցության մեջ միակ ինքնակա իմաստակիր նշանը բառույթն է:

Ե) Լեզվական նշանի բնականություն / պայմանականություն խնդրի լուծման ճանապարհին հիմք ենք ընդունում աթայանական հայտնի դրույթը, թե լեզուն արտաքին աշխարհի բեկումն է մեր գիտակցության մեջ, և որ այդ աշխարհը ճանաչում ենք լեզվականորեն: Պատահական չէ, որ արտաքին իրականությանը հակադրելիս է. Աթայանը *լեզվական*

աշխարհ է անվանում լեզուն: Մյուս կողմից, սակայն, այդ աշխարհի վերանդրադարձումն է հուշում, որ բնության մեջ էլ՝ բնականորեն բնական համարված նշանում, պայմանականության տարրեր կան պահ տված, և բնութենական բնական նշանն այդպիսին է բնավ ո՛չ նրա համար, որ միայն բնական է, այլ նրա, որ նաև՝ բնական է: Ամեն մի նշան այս կամ այն իրադրության մեջ է դրսևորում տեղակալման իր առաջնային գործառույթն ու սրանով որոշվող իր նշանակությունը, իսկ նշանոլորտում իրադրությունն այն պայմանն է կամ պայմանների ամբողջությունը, որով կամ որում իրացվում է նշանը: Նշանոլորտը միշտ է իրադրային, պարզապես արտալեզվական նշանների դեպքում այն ասես նույնանում է հե՛նց իրադրության հետ, իսկ լեզվական նշանների դեպքում իրադրությունը նշանոլորտի բաղկացուցիչներից մեկն է միայն: «Ծովսը կրակի բնական նշանն է» օրինակը որքան՝ ստույգ, նույնքան էլ ստուգապես հեղիեղուկ ձևակերպում է. այդ նշանը պայմանական էլ է, որ *պայմանավորված է* հե՛նց կրակի գոյությամբ: Խոսքն այստեղ, իհարկե, բնական պայմանի մասին է՝ բնուստ տրված փոխադարձ «դաշինքի՛»:

Լեզվական նշանները ևս պայմանական են ոչ միայն այն պատճառաբանությամբ, որ արտաքին աշխարհի պայմանական հարաբերակիցներն են մեր գիտակցության մեջ, այլև նրա՛, որ պայմանավորում են դրանց իրացումը խոսքում: Սակայն համակարգում այդ նշանները պահպանված, շարակարգում անցումային փուլն ապահոված և գծակարգում արդյունացած են լինում *բնականորեն* (այլապես հաղորդակցում տեղի չի ունենա. հմմտ. չեզոք խոսքում գործածվող «բնական լեզու» արտահայտությունը):

Չ) Լեզվական նշանը դիտարկելի է նաև համալեզվական ընդգրկմամբ ու շերտավորմամբ: Նշանը՝ որպես լեզվական աշխարհ, մի կողմից՝ նշան է արտալեզվական աշխարհի գոյության. գոյաբանական առումով՝ որպես գոյության ստուգություն, բնանշան է, իմացաբանական առումով՝ որպես այդ գոյության հասարակական հիմնավորում ու իմաստավորում, պայմանական նշան է: Այս դեպքում նշանի նշանակյալը տիեզերական բովանդակությունն է, նշանակիչը՝ որպես արտահայտություն, լեզվական բովանդակությունը: Նշանոլորտն այստեղ գերտիեզերական վերացարկված բաղկացությունն է՝ տիեզերական աշխարհից լեզվական աշխարհին անցման իրադրային պայմանավորվածությամբ:

Մյուս կողմից՝ ներլեզվական առումով համակարգային նշան է՝ իբրև հնարավորություն շարակարգային իրադրավորման և գծակարգային նյութական արտահայտվածության ու շարադասվածության, և այս դեպքում նշանորոտը ողջ լեզվական հորինվածքն է: Թե՛ տիեզերական ընդգրկման, թե՛ գուտ լեզվական աշխարհի տիրույթի ներսում, այնուամենայնիվ, կան բազմաթիվ ոչ նշանային, նշանայնության տեսակետից դատարկ բազմություններ, որոնց հարաբերությամբ են արդյունանում նշանները՝ որպես այդպիսիք:

Լեզվական աշխարհի տեսանկյունից նշանային շերտավորումները կարելի է կատարել կամայական գոյամակարդակից: Բենեռայինդիքից (բենեռային՝ համակարգի նկատմամբ)՝ խոսքային գծակարգից զննելու դեպքում պարզում ենք, որ մինչև իսկ գծային արտահայտվածությունն ինքնին նշան է համակարգային բովանդակության ու կառուցվածքի, և այդ «ինքնին նշանի» տրվածության հնարավորությունը պայմանավորողը խոսքային բովանդակությունն է՝ որպես արդե՛ն կայացած լեզվական փաստ, որ իրացվել է երբեմնի իրադրությամբ: Հետաքրքիրն այն է, որ հաղորդակցության պահին լեզվից խոսք անցումն անպայման հոգեկան իրադրության փուլով է միջնորդավորվում հաղորդողի դիրքից, մինչդեռ հաղորդմամբ՝ խոսքով արտահայտված լեզվական փաստարկումը հաղորդողի դիրքից համակարգի սեփականություն է դառնում միանգամից, իսկ ընկալողի դիրքից լրացուցիչ իրադրավորում է ստեղծում, անգամ եթե վերջինս իր խոսքով չի հակազդում հաղորդված նյութի բովանդակությանը: Ինչ վերաբերում է շարակարգին, ապա սրա՝ բենեռների միջակայքում լինելը նշան է հենց այդ իրացնելի և իրենով իրացվող բենեռների գոյության:

Բերված տրամաբանությամբ համակարգային, շարակարգային և գծակարգային նշաններից յուրաքանչյուրը բնույթով բնական է, որ փաստում է մյուս երկու գոյամակարդակների՝ լեզվական հորինվածքի *բնութենական* պարտադիր գոյակերպը (լայն առումով, ոչ թե մորիսյան չափումների իմաստով): Սակայն սրանցից յուրաքանչյուրն *անպայմանորեն* (= *բնականորեն*) *պայմանական* նշան էլ է, և դա երևում է մինչև իսկ լեզվական հորինվածքի գոյամակարդակների՝ Է. Աթայանի տված հաջորդականությունից: Համակարգային նշանը բնական է իր հանրային գիտակցության պարտադրականությամբ, տվյալ լեզվակիր հան-

րության հենց լեզվական ընդհանրությամբ, պայմանական է անհատական դրսևորելիության փաստով: Համակարգայինի հարաբերությամբ պայմանական է շարակարգային նշանը՝ իրադրության ազատ ընտրության ստեղծագործականությամբ, և բնական է թեկուզև ազատորեն ու ստեղծագործաբար, բայց խոսքին կայծակնորեն տալիք շարադասական պարտադրականությամբ: Գծակարգային նշանը պայմանական է հնչյունավորման երանգային ու եղանակային դրսևորվածությամբ, բնական է նախորդ գոյամակարդակների պարտադրանքին ենթարկվելու «դատապարտվածությամբ» և, որպես լեզվական հորնվածքի հարազատ դրսևորման հետևանք, համակարգային հուշադարանում որպես փաստ ամփոփվելու մտապահվածությամբ⁵: Սրանով վերահաստատվում է Է. Աթայանի այն դրույթը, թե նշանակությունն անցումն է արտալեզվական իրականությունից դեպի լեզվականը, իսկ իմաստը՝ անցումը լեզվականից դեպի արտալեզվական աշխարհ⁶:

Է) Լեզվական նշանները քննելի են նաև Չ. Մորիսի *նշանային չափումներով*, որոնք Է. Աթայանն անվանում է *նշանային գոյակերպեր*: Չ. Մորիսի գոյակերպերում ևս համապատասխան տեղայնացում ունեն լեզվական նշանները, որոնք ծավալային առումով մոտավորապես նույնական են աթայանական գոյամակարդակներին: Գոյակերպերից իմաստայնությունն ու գործայնությունը (սեմանտիկա և պրագմատիկա) նույն հնարավորության և դրսևորման հարաբերության մեջ են, ինչ որ համակարգն ու գծակարգը, և շարայնությունը (սինտակտիկա) նշանական նույն անցումային փուլն է ապահովում, ինչ որ շարակարգը: Անցումայնության առումով շարայնությունն առավել «հարմար» գոյարան է մասնավորապես նշանային հարաբերությունների համար: Շարահյուսական հարաբերությունները, օրինակ, առաջնայնորեն տեղայնացված են այս գոյակերպային շերտում: Մի կողմից՝ գոյակերպային նշաններն իրենց անմիջական հարաբերակիցներն ունեն լեզվական գոյամակար-

⁵ *Բնական և պայմանական նշանների փոխհարաբերությունների մասին մեր շարադրանքը հմնդ. Է. Աթայան*, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981, էջք 252 – 257: **Ա. Ս. Աբրահամյան**, Նշանակյալի և նշանակիչի կրկնակի ներդաշնակումը լեզվում // Նշան, համակարգ, հաղորդակցում, Երևան, 2011, էջք 20 – 26:

⁶ *Shu Э. Атаян*, Болезнь здоровых. Ер, 1997, էջ 98:

դակներում, և յուրաքանչյուր գոյամակարդակի նշանը նշանային չափումների առումով աստիճանական նույն տեղայնացումն ունի գոյակերպերի մեջ: Այսպես՝ առաջնայնորեն համակարգային նշանը հե՛նց իմաստայնության նշան է, շարակարգային նշանը՝ շարայնության նշան, գծակարգային նշանը՝ գործայնության նշան: Սակայն նշանային գոյակերպերն առավել դյուրաշարժ են և ներանցելի: Յուրաքանչյուր գոյակերպի առաջնային նշանը երկրորդային բովանդակավորման զետեղարան է նաև մյուս երկու գոյակերպերի նշանների:

Ը) Առհասարակ պետք է նկատել, որ թե՛ լեզվական գոյամակարդակների, թե՛ նշանային գոյակերպերի համար հիմք են ծառայում գոյավիճակային ոլորտները, որոնց լեզվական ու նշանային բեկումներն են հիշյալ գոյամակարդակներն ու գոյակերպերը: Կայական (ստատիկ) ոլորտը հնարավորության տիրույթն է, որը ներունակության և ներգործության ենթաշերտերից է բաղկացած: Ներունակության կայական շերտում նընջած է լեզվական նշանը (*ներունակ նշան*): Ներգործությունը հնարավորության պրկված ներունակությունն է, ուստի լեզվական նշանն այստեղ պատրաստ է ներքին ուժակալման (*ներգոր նշան*): Սա այն է, ինչ է. Ադայանն անվանում է լեզվական գործունեություն, որը, ըստ լեզվաբանի, հասարակության հաղորդակցական գործունեությունն է⁷: Գործունեությունը, սակայն, հասարակայնորեն չիսպառվում: Չորրօրենական (դինամիկ) տիրույթում հաղորդակցական գործունեությանը հաջորդում են խոսքային և խոսողական գործունեությունները, որոնցից առաջինը «իր հիմքով, մյութականորեն գոյություն ունեցող համակարգով հասարակական» է⁸, «իբրև հոգեբնախոսական գոծողությունների միասնական շրթա... անհատական է»⁹: Խոսողական գործունեությունը լեզվականի իրացումն է՝ ըստ է. Ադայանի, ներքին խոսքի իրացումը: Այն անհատականէ՝ որպես հոգեբնախոսական գործունեություն, և հասարակական է՝ որպես խոսքի օբյեկտիվացում¹⁰: Այս երեք շերտն էլ համընկնում են է. Աթայանի գոյամակարդակներից շարակարգայինին: Ուստի շարակարգային նշաններն այդ համակարգում ներկայանում են որպես

⁷ **Է. Ադայան**, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 43:

⁸ Անդ:

⁹ Անդ:

¹⁰ Անդ:

գործունեութեան և նշաններ՝ հաղորդակցական նշան, խոսքային նշան և խոսողական նշան: Վերջապես, գոյավիճակային ոլորտներից ընթացայինը շարժական տիրույթն է, որում տեղայնացված նշանը հենց այդպես էլ կանվանենք՝ *շարժան նշան* կամ *գործուն նշան:*

Թ) 1. Նշանոլորտի սահմանն առաձիգ է: Թե՛ լեզվում, թե՛ արտաքին աշխարհում այն սկսվում է նշանային իրադրության նվազագույն տիրույթից և միտում անասհմանության:

2. Նշանոլորտի կազմը, բնավ սպառված չլինելով այստեղ ներկայացված նշանային բաղադրիչներով ու տիպերով, ներքուստ և բնուստ հարաշարժ բաղկացություն է, ըստ որում՝ նաև՝ նշանային միավորների ներանցվածությամբ ու փոխատեղեկությամբ:

3. Թե՛ լեզվական, թե՛ արտալեզվական նշանոլորտը նշանասերման գոյարան է՝ որպես տարողունակ հանրաբազմություն, և բովանդակում է նշանային մեծաթիվ ու տարաբնույթ ենթաբազմություններ: Նշանոլորտ-հանրաբազմության կենտրոնում նշանն է, որը միշտ ինքնանշանակ բնական նշանն է հե՛նց տվյալ նշանոլորտի: Նշանի շուքբոլորը՝ նշանի և նշանոլորտի միջև, ոչ նշանային ենթաբազմությունն է, որն էլ նշանոլորտում իր հերթին բնական նշանի դեր է ստանձնում՝ ի տես նշանոլորտում առաջնային նշանի գոյության: Սա նշանակում է, որ նշանոլորտն էլ յուրօրինակ բնական նշան է՝ ի հաստումն {նշան} + {ոչ նշան} ենթաբազմությունների իսկության: Այս երեք կողմերը, պայմանավորված միմյանց պայմանավորելու իրողությամբ, նաև՝ պայմանական նշաններ են, տրամախոսական ներհակության գորությամբ՝ բնականորեն տրված պայմանական նշաններ:

4. Նշանոլորտի կազմում իրոք էական նշանակություն ունի բնական ու պայմանական նշանների հարաչափերի բացահայտումը: Ե՛վ լեզվական, և՛ արտալեզվական նշանները այս կամ այն չափով համատեղում են բնականության ու պայմանականության պահեր: Սիևնույն նշանի՝ այդ հատկություններից մեկի առաջնային դրսևորվածությունը թվացյալ կարող է լինել նրան այլ հայեցակետով մոտենալիս: Այսպես՝ մենոլորտ հնչական նշանները բնական նշաններ են, որովհետև բովանդակության ոլորտում ունեն միայն նշանակության բևեռ: Սակայն ակնհայտ է դառնում այդ նույն նշանների պայմանականությունը տվյալ լեզվահամակարգից դուրս: Նշանակում է՝ մենոլորտ հնչական նշանները բնական են

միայն տվյալ լեզվական համակարգում. լեզուների բազմության մեջ դրանք ոչ միայն բնական չեն, այլև ընդհանրապես նշան չեն այլ լեզվակիրների համար, ուստի այդ լեզուների համեմատական գոյությունը ներհամակարգային հիշյալ նշանները պայմանական են:

Կան, իհարկե, լեզուներում *բացարձակ հանրույթների* միտող բնական նշաններ: Դրանցից են, օրինակ, շարահյուսական հարաբերությունները՝ որպես նշանային գոյակերպերի շարայնության գետեղարանի միավորներ, որովհետև ընդհանրական են թե՛ թեքական, թե՛ կցական, թե՛ անջատական կառուցվածքային տիպի լեզուներում: Սակայն բավական է մտաբերել ներմարմնավորյալ կառուցվածքային տիպն ունեցող լեզուների գոյությունը, և այս հանրույթի բացարձակությունն էլ տեղը կզիջի հարաբերականությանը:

5. Նշանոլորտում նշանի կենտրոնատեղին նշանն է, որ է բովանդակության և արտահայտության բևեռների ներանցված գոյություն: Թերևս այդ ներանցվածությամբ էլ պայմանավորված է դրանց հակադրման հարաբերականությունը լեզվում, որի՝ տրամախոսական խորքով քննախույզ բացահայտման առաջնությունը պատկանում է արդի հայ լեզվաբանությանը¹¹:

Բանալի բառեր - *Նշանոլորտ, նշան, նշանային միջավայր, նշում, նշանակում, նշանակություն, ներունակ նշան, ներգոր նշան, իմաստային փարբերակիչ, հանրաբազմություն, ենթաբազմություն, հաղորդակցական նշան, խոսքային նշան, խոսողական նշան, նշանային շարունակներ, նշանային գոյակերպեր:*

Давид Гюльзатян (ВГУ)- Граница и состав семиосферы лингвосомиотическая концепция. - Семиосфера¹² является логическим пространством знака и соотносящихся с ним элементов. Понятно, что в этой сфере или пространстве центральное место занимает знак, потому что

¹¹ *Տիս Ա. Ս. Աբրահամյան*, Բովանդակության և արտահայտության հակադրման հարաբերականությունը լեզվում // ԲԵՂ, Երևան, 1988, հմ 1: Է. Աբայան, Լեզվական աշխարհիներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, էջը 236 – 242:

¹² Термин «семиосфера» предложил Ю. Лотман. См.: Лотман Ю. М. Семиосфера. СПб.: Искусство, 2004. с. 250-268.

каждый знак является таковым именно в данной области: он может перестать быть знаком в каком-либо другом пространстве или выполнять совершенно иную знаковую функцию. Знак, однако, будучи в центре семиосферы, противопоставлен не только незнаковым элементам семиосферы, но и своим знакообразующим внутренним компонентам. Фактически, семиосфера – это вместилище содержаний знака и составных частей выражения, скомпонованного из них знака и теми внешними сигналами, в результате соотношения которых они воспринимаются как знаки. Здесь интересными являются отношения между семиозисом и семиосферой. Семиозис – процесс формирования знака вплоть до обеспечения знаковой среды семиосферы. С другой стороны, однако, нужна некая среда, база, где реализовалось бы формирование знака – семиозис. Эта изначально заданная противопоставленность знаковых пределов имеет в точности такой же характер, как отношение полюсов «язык-речь».

Сферы содержания и выражения являются также большим множеством, чем знак, а именно: подмножествами семиосферы. Сфера содержания не завершается смыслом, равно как и сфера выражения – только звуковой стороной. Сфера выражения знака, кроме фоники, проявляется также в структурном выражении; сфера содержания, помимо смысла, насыщается также обесмысленными значениями.

Ключевые слова: *Семиосфера, знак, логическое пространство, знаковая функция, незнаковые элементы семиосферы, знакообразующие компоненты, внешние сигналы, семиозис, сферы содержания и выражения, подмножество семиосферы.*

Davit Gyulzatyan, Vanadzor State University - The realm and composition of the semiosphere. A linguophilosophical perspective. Semiosphere is the logical space of the sign and its related elements. Understandably, it is the sign that occupies the focal point within this sphere because a sign is such in a given sphere and it can cease to be one in another sphere or it may perform another semiotic function altogether. The sign is in a contradictory relation not only with the non-semiotic elements within the semiosphere, but also with its internal, formative components. This means that the semiosphere incorporates the elements that form the content and expression

of the sign; furthermore, the semiosphere includes the sign with its contents and means of expression as well as the external stimuli, in whose interactions the sign is perceived as such. The sign is formed in the semiosphere; without accounting for the semiosphere, we'd have to arrive at the idea of non-semioticity, which may breed danger, whereby "the consciousness would become an entity devoid of windows, an imitation"¹³. There's an interesting relation between semiosis (the genesis of the sema, the sign) and the semiosphere. They have a mutually embracing relation. Semiosis is the formative process of the sign beginning with the combination of semiotic subelements and up to the configuration of the semiosphere. On the other hand, however, there needs to be a domain wherein semiosis may be effected. This is an ever-evolving realm conditioned by the binary factors of semioticity and non-semioticity, having the same inherent contradiction that exists in the relation of the language and discourse poles, which keeps the development of the linguistic composition in a constantly tense state.

Keywords: *Semiosphere, sign, semiotic function, non-semiotic elements, semiosis, sema, relation, combination, configuration, discourse .*

¹³ Է. Աթայան, Նշան և նշանայնություն // Հոգի և ազատություն, Երևան, ՍԱՐԳԻՍ ԽԱՉԵՆՑ, 2005 թ., էջ 303 (622 էջ):

ԺԱՄԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Գևորգյան Շուշանիկ

(ԵՊՀ)

Հրաշյա Աճառյանը նկարագրում է ներկա, անցյալ, ապառնի քերականությունները, որոնց համար որպես հաշվարկման կետ ընդունվում է խոսքի պահը՝ ավելացնելով, որ որևէ գործողություն կարող է կապակցվել ոչ միայն խոսված լուրջի հետ, այլև մի ուրիշ գործողության կատարված կամ կատարվելիք ժամանակի հետ: Նա խոսքի պահին հարաբերող քերականական ժամանակները համարում է գլխավոր (բացարձակ), իսկ մեկ ուրիշ գործողությանը հարաբերող ժամանակները՝ երկրորդական (հարաբերական): Աճառյանը անցյալ և ապառնի ոլորտներում ընդունում է հաշվարկման մեկական կետեր, որով և ստացվում են վեց երկրորդական ժամանակներ, որոնք էլ կարող են ունենալ իրենց երկրորդական ներկա, անցյալ և ապառնի ժամանակները (երրորդական ժամանակներ): Ժամանակների երկրորդական և երրորդական դրությունը հասնում է այնպիսի բարդության, որ այլևս մարդկային միտքը դադար է տալիս¹: Փաստորեն Աճառյանը հիմք է ընդունում եղանակաժամանակային ձևերի՝ լեզվական և արտալեզվական տարբեր պատճառներով պայմանավորված կիրառությունները: Չեն բացահայտվում ժամանակաձևերի ժամանակային հակադրությունները: Առնելով բայն իբրև նախադասության առանցք և նույնիսկ ամբողջ լեզվի առանցք՝ Մանուկ Աբեղյանին հաջողվում է ստեղծել մի կուռ համակարգ, մի շենք, որի բոլոր աղյուսները իրենց տեղում են, և որից չի կարելի դուրս քաշել որևէ աղյուս: Այդ համակարգի մեջ բայը կենտրոնական տեղում է. նրանից կախյալ վիճակի մեջ են կամ նրան ստորադասված են նախադասության մեջ զանազան պաշտոններ ունեցող բառերը՝ ենթակա, ստորոգյալ, խնդիր, պարագա²: Աբեղյանն ընդունում է իրական և քերականա-

¹ **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Բ, Երևան, 1961, էջ 34-35:

² Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Աբեղյանի քերականագիտական ժառանգությունը, Երևան, 1946, էջ 150-151:

կան ժամանակների համապատասխանությունը: «Բայի ժամանակ ասելով՝ հասկանում ենք, թե երբ է տեղի ունեցել եղելությունը՝ խոսելու վայրկյանի՞ն (ներկա ժամանակ), խոսելու վայրկյանից առաջ (անցյալ), թե՞ խոսելու վայրկյանից հետո ընկած ժամանակամիջոցում (ապառնի)»³: Արեղյանը սահմանական եղանակի ձևերը ներկայացնում է ներկա, անցյալ, ապառնի և կատարվող, կատարված, կատարելի կերպերի հակադրամիասնության մեջ: «Բայերի ցույց տված ամեն մի եղելություն կարող է երեք ժամանակների նկատմամբ ևս, այսինքն՝ թե՛ խոսողի ներկայի, թե՛ մի անցյալ ապառնի ժամանակակետի նկատմամբ լինել չորս կերպ՝ կատարվող, կատարված, կատարելի և պարզ»⁴:

Ըստ Արարատ Ղարիբջանի՝ ժամանակը երկակի է. մի ձևն արտահայտում է կամ կատարվող, կամ կատարված, կամ կատարվելիք գործողությունները՝ ներկայի համեմատությամբ: «Վերլուծական ժամանակաձևերում այդ երկակիությունը արտահայտվում է օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերի, իսկ պարզ ժամանակաձևերում՝ բայական վերջավորությունների հակադրությամբ»⁵:

Ըստ Գուրգեն Սևակի՝ «միայն հաստատական խոնարհման մեջ բայն ունի հիսունուր ժամանակ»⁶: Ըստ Սևակի՝ բայաժամանակների բազմազանությունը մեր ժամանակակից լեզվի բացառիկ ճկունության և հարստության վկայությունն է: Մեր կարծիքով՝ ճիշտ չէ գործածված ժամանակ տերմինը, և խոնարհման հարացույցը շփոթվում է ժամանակի կարգի հետ: Բայաձևերը միայն ժամանակի կարգով անվանելը թյուրիմացության մեջ է գցում և պարզ պատկերացում չի տալիս ձևերի բովանդակության մասին: Բայական ամեն մի ձևի մեջ արտահայտված է մի քանի քերականական կարգ: Եվ երբ մի ձևը անվանում ենք միայն մի կարգի անունով, մյուս կարգերը նույնացվում են գերադաս կարգի հետ: Հայերենում նպատակահարմար է գործածել *եղանակաժամանակային չև* տերմինը, որպեսզի հստակ տարբերակվեն իրական և քերականական ժամանակները:

³ Արեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 299:

⁴ Նույն տեղում:

⁵ Ղարիբջան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954, էջ 306:

⁶ Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 317 :

Ի. Շիլակաձենն քննադատում է Սևակի ըմբռնումը. «Ժամանակի կարգի այսպիսի սահմանումը պայմանավորված է նրանով, որ անցյալի վաղակատար և նման տերմիններով կոչված բայաձևերի խմբերը ընդունում են առանձին ժամանակների ձևերով: Ժամանակի կարգի այսպիսի ըմբռնմամբ կատարվի ժամանակների գամմա: Այս բայաձևերի միջև ժամանակային տարբերություններ չկան: Դրանք միմյանցից տարբերվում են զանազան (կերպի, ակտի, հաջորդականության, ստատուսի) քերականական կարգերով: Քերականության մեջ գործողության ժամանակը որոշելիս այդ գործողությունը կարելի է վերցնել միայն խոսքի պահի համեմատությամբ»⁷:

Է. Աղայանը հետևում է Մ. Աբեղյանին: Սակայն նա կերպերի համակարգից հանում է անցյալ կատարյալը՝ ընդունելով երեք կերպեր միայն (շարունակական, կատարելի, կատարյալ): Աղայանը հարակատարով կազմված բաղադրյալ ձևերը դուրս է բերում սահմանական եղանակի խոնարհման հարացույցից, որովհետև հարակատար դերբայը կերպային իմաստ չունի. գործողության ավարտվածություն ցույց չի տալիս: Այն արտահայտում է առարկայի վիճակ՝ իբրև «հարատևող մնայուն հատկանիշ»: *Եւ-*ի միացությունը ձեռք է բերել գերազանցապես բաղադրյալ ստորոգյալի արժեք, որին հատուկ է ներկա ժամանակը⁸: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ կրավորական սեռի և չեզոք սեռի որոշ բայերի հարակատար դերբայի ու *ևւ-*ի հարադրությունը դեռևս պահպանում է իր ժամանակային իմաստը:

Ա. Շանիձենն քննադատում է տրամաբանական անցյալ և ապագա ժամանակային ոլորտներում քերականական մեկից ավելի ժամանակների ընդունելու դրույթը: Նա հակադրվում է Մ. Աբեղյանի և Ա. Ղարիբյանի այդ տեսակետին, սակայն տրամաբանական անցյալ և ապագա ոլորտներում ժամանակի քերականական կարգը տարբերում է մեկից ավելի եղանակաժամանակային ձևեր, և այդ եղանակաժամանակային ձևերը միմյանց նկատմամբ կարող են ունենալ նաև ժամանակային հակադրություններ: Իրական ներկա պահի (խոսքի պահի) նկատմամբ

⁷ **Շիլակաձեն Ի.**, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, Լեզվի և ոճի հարցեր, Երևան, 1985, էջ 193:

⁸ Տե՛ս **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 346-354:

նրանք կա՛ն անցյալ են, կա՛ն ապագա, իսկ անցյալ կամ ապագա որևէ ոլորտում կարող են նշել անցյալի կամ ապառնու տարբեր ժամանակակետեր: Անցյալ կամ ապառնի ժամանակային ոլորտներում ժամանակի քերականական կարգի առանձին քերականությունների միջև ժամանակային հակադրությունները կարող են դրսևորվել և՛ նշելով իրական ժամանակի որոշակի հատվածներ, և՛ անորոշ կերպով արտահայտելով պարզապես *ժամանակային հաջորդականություն*:

Ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ շատ հաճախ է գործածվում *հաջորդականության քերականական կարգ* տերմինը: Շիլկածեն հաջորդականությունն առանձնացնում է որպես առանձին քերականական կարգ: «Հաջորդականության քերականական կարգը արտահայտված է համաժամանակության, նախորդման և հաջորդման ենթակարգերով, որոնցից միայն նախորդումն ունի իր սեփական ձևը: Մյուսների գոյությունը պայմանավորված է միայն նրա գոյությամբ»⁹: *Գրել էր* խմբի բայաձևերը տարբերվում են մյուսներից նրանով, որ այս ձևերով հայոց լեզվի մեջ արտահայտվում է հաջորդականության կարգը: Այս ձևը ցույց է տալիս նախընթաց (նախորդ) գործողությունը, այսինքն՝ այն գործողությունը, որը ուրիշ գործողությունից առաջ է կատարվել, բայց սա ինքնըստինքյան նշանակում է, որ մյուս գործողությունը կատարվել է նախընթաց գործողությունից հետո: Այսպիսով ստացվում է իսկական «հաջորդականություն»¹⁰: Ի՞նչ պետք է հասկանալ՝ հաջորդականություն ասելով: Խոսքը ժամանակային հաջորդականության մասին է: Ժամանակի քերականական կարգում ժամանակային հակադրություններ հնարավոր են ոչ միայն քերականական ժամանակային տարբեր ոլորտներին վերաբերող եղանակաժամանակային ձևերին, այլև ժամանակային միևնույն ոլորտին վերաբերող եղանակաժամանակային ձևերի միջև: Իրական ժամանակը հաջորդականությունների մի ամբողջական շղթա է: Շարժումը ժամանակի հիմնական հատկանիշն է, որը ենթադրում է հաջորդում և նախորդում, որոնք իմաստավորվում են հաշվարկման պայմանական կետի հարաբերությամբ: «Անցյալը նախորդում է ներկային, ապագան՝ հաջորդում: Իսկ ներկա ժամանակը անոր-

⁹ Շիլկածեն Ի., նշվ. աշխ., էջ 189:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 177:

սալիորեն հոսուն այժմ-ն է»¹¹: Ջահուկյանը տարբերակում է իրադրական և ոչ իրադրական ժամանակները. «Իրադրական ժամանակի դեպքում նշվում է հաղորդողի ընտրած որևէ պահ. իրադրական ժամանակի եզրերը տարբերվում են այնպես, որ ներկան ցույց է տալիս հաղորդվող եղելության համընկնումը խոսելու պահին, անցյալը՝ անցյալի որևէ պահի, ապառնին՝ ապագայի որևէ պահի հետ», իսկ «ոչ իրադրական ժամանակը ցույց է տալիս պարզապես ժամանակային հաջորդականությունը՝ անկախ հաղորդողից. ոչ իրադրական ժամանակը կարելի է կոչել հաջորդականություն»։ Գ. Ջահուկյանը ոչ իրադրական ժամանակի արտահայտությունը հայերենի բաղադրյալ ժամանակաձևերում ներկայացնում է *ուս, ե՛, ի/ս* մասնիկներով կազմվող վերլուծական բայափոքերի հակադրություններով¹²:

Համեմատելով Ջահուկյանի մոտեցումը կերպի տեսության հետ՝ կարող ենք գտնել որոշակի համապատասխանություններ: Գործողության անկատար կերպը ենթադրում է հաշվարկման կետին համընթացություն, կատարյալ ու կատարելի կերպերն էլ՝ նախորդում և հաջորդում: Ջահուկյանն ընդունում է, որ «անկատար» դերբայը «իրոք անկատար կերպի արտահայտիչ է», միաժամանակ նշում է, որ վաղակատար դերբայի դեպքում «կերպային տարբերությունները դադարում են իմաստային արժեք ունենալուց»¹³: Եթե ըստ Աբեղյանի՝ պարզ կերպի արտահայտիչը անցյալ կատարյալն է, ըստ Ջահուկյանի՝ այն կատարյալ կերպի արտահայտիչ է և անկատար/կատարյալ կերպային հակադրության մեջ է հայերենի համադրական ձևերի հետ, որը «արտահայտության պլանում բնութագրվում է առաջին հերթին *ան, սց, եց, ն, չ, ր* հիմքակազմ վերջամասնիկներով, իսկ երկրորդաբար՝ կը նախամասնիկով»¹⁴: Սահմանական եղանակի ապառնին անկատար և վաղակատար դերբայներով կազմված ժամանակաձևերի հետ ունի ոչ թե կերպային, այլ ժամանակային հակադրություն: Ապառնի ժամանակը ենթադրում է գործողության «կատարելի» կերպ, որը քերականական ապառնի ժամանակի

¹¹ Չաղաջան Ջ., Զերականական ժամանակ, Երևան, 1989, էջ 61-62:

¹² Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 283:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 282:

¹⁴ Նույն տեղում, էջ 249:

Ժամանակային իմաստի առանձնահատկությունն է: Անցյալի ապառնի ժամանակաձևերն էլ անցյալի ոլորտի եղանակաժամանակային ձևերի հետ գտնվում են ժամանակային հաջորդականության մի շրջայում և արտահայտում են անցյալում վերցված հաշվարկման կետին հաջորդող գործողություն: Ըստ Ս. Աբրահամյանի՝ սահմանական եղանակի դիմային ձևերի մեջ չկա կերպի համակարգ, քանի որ կերպային հակադրությունը ենթադրում է ոչ թե ժամանակային հաջորդականություն, այլ միևնույն ժամանակահատվածում կատարվող գործողության տարբեր բնույթներ, իսկ սահմանական եղանակի համապատասխան եռանդամ համակարգերի միջև հակադրությունը ժամանակային է (դիմային ձևերը գործողության հաջորդականություն են արտահայտում): Ս. Աբրահամյանը, ժամանակային հակադրություն ասելով, հասկանում է ժամանակային հաջորդականություն իրար հակադրված ժամանակային ձևերի մեջ: Տարբեր բնույթի ընդհանուր ժամանակային վիճակ արտահայտող դերբայները, զուգորդվելով խոսելու պահը նշող *եւ* օժանդակ բայի հետ, արտահայտում են ժամանակային տարբեր իմաստներ՝ ներկա ժամանակակետի համեմատությամբ. *գնում եւ, գնալու եւ, գնացել եւ*¹⁵: Փաստորեն Ս. Աբրահամյանը քննադատում է հաջորդականության կարգի (ավելի ճիշտ՝ ենթակարգի) մասին վարկածը՝ դրա արտահայտությունը համարելով զուտ ժամանակային: Մեր կարծիքով՝ հենց *հաջորդականություն* հասկացությունը ժամանակային հասկացություն է, և *նախորդ, հաջորդ* հասկացությունները սերտորեն առնչվում են *Ժամանակ* հասկացության հետ: Ավելին՝ ժամանակ կոչվող հասկացությունը տրոհվում է հենց այդ հասկացությունների միջոցով (պետք է նկատի ունենալ, որ տրոհվածն էլ է տրոհելի):

Քերականական ներկա ժամանակ նշող ժամանակաձևը անկատար կերպ է արտահայտում: Հանդգիչ է Ջահուկյանի՝ իրադրական և ոչ իրադրական ժամանակների ըմբռնումը: Իրադրական ժամանակը արտահայտվում է օժանդակ բայի և հիմքակազմ արժեք ստացած դերբայական մասի միասնությամբ: Անկատար և վաղակատար ժամանակաձևերում անկատար և վաղակատար դերբայներով արտահայտվում է

¹⁵ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, Ժամանակակից հայերենի դերբայների և ժամանակների մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 10 (317), Երևան, 1969, էջ 24-27:

անկատար/կատարյալ կերպային հակադրություն: Նրանց միջև նկատվում է նաև ժամանակային հակադրություն: Դրանք տարբերակվում են ըստ անցյալում վերցված հաշվարկման կետին համընթացության և նախորդման: Այս բաղադրյալ ձևերի և երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի միջև Ձահուկյանը տեսնում է միակատար և բազմակատար կերպային հակադրություն, սակայն միակատար/բազմակատար իմաստային հակադրությունը գործողության բնույթ հասկացության արտահայտությունն է ժամանակակից հայերենում. բաղադրյալ և երկրորդական բաղադրյալ ձևերը տարբերակվում են ըստ գործողության կատարման միակատար/բազմակատար բնույթի¹⁶: Վերլուծական ժամանակաձևերում առկա է միայն անկատար-կատարյալ կերպային հակադրություն, որն անցյալի ռորտում արտահայտվում է *ում/ել* հակադրությամբ: *Հաջորդականություն* տերմինի փոխարեն նպատակահարմար է գործածել *իրադրական ժամանակ* տերմինը: Ոչ իրադրական ժամանակը լեզվում ժամանակային հարաբերությունների դրսևորման ձևերից մեկն է, որն էապես տարբերվում է իրադրական ժամանակից, նաև լեզվում ժամանակի արտահայտության բառային միջոցներից (ժամը հինգին, երեկ): Ոչ իրադրական ժամանակի արտահայտությունը համարվում է ժամանակի քերականական կարգի ենթակարգ:

Մեր կարծիքով՝ հայ լեզվաբանների տեսակետների տարբերությունները տարբեր մոտեցումների արդյունք են: Արեղյանը փորձել է ամենայն մանրամասնությամբ կադապարել, մասնատել հայերենի բայական համակարգը՝ *կերպ* տերմինը բոլորովին այլ նշանակությամբ գործածելով, լեզվաբանության մեջ ընդունված *կերպ* հասկացությանը հակառակ, որը գործողության բնույթն է ցույց տալիս: Շիլակաձեն մույնպես բայական համակարգը ներկայացնում է մասնատված՝ մեր քերականությունը համապատասխանեցնելով ուրիշ լեզուներին: Նա աշխատում է ներկայացնել հայերենի բայական համակարգը ընդհանուր լեզվաբանության մեջ ընդունված հասկացությունների համապատասխանությամբ՝ յուրաքանչյուր երևույթի համար առանձնացնելով ենթահամակարգեր ու մասնակադապարներ: Ձահուկյանն ավելի համակողմանի ու զիտական պատասխան է տալիս նախորդ բոլոր լեզվաբանների

¹⁶ Տե՛ս Գ. Ձահուկյան, նշվ. աշխ., էջ 253:

արտահայտած տեսակետներին՝ տրամաբանորեն գնահատելով յուրաքանչյուր երևույթ: Ռ. Իշխանյանն ու Ս. Աբրահամյանը փորձում են երևույթները արհեստականորեն չմասնատել, քանի որ որոշ երևույթների վերլուծության ժամանակ, իրոք, տրամաբանական շեղում է տեղի ունենում: Կան ամբողջական երևույթների բաղադրիչներ, որոնք ձուլված, սերտաճած են, և դրանց արհեստական բաժանումը միայն խեղաթյուրում է պատկերը:

Քանալի բառեր - *հարացույց, քերականական ժամանակ, քալ, խոնարհում, ներկա ժամանակ, անցյալ ժամանակ, ապառնի ժամանակ, համակարգ, գործողություն:*

Шушаник Геворкян-Понимание грамматического класса времени. Армянские грамматики имеют разные точки зрения о грамматической класса времени, которые являются результаты различных подходов. Логически оценивая каждое явление Г. Джаукян дает всесторонний и научный ответ на взгляды, высказанных в предыдущих лингвистов.

Ключевые слова: *парадигма, грамматическая время, глагол, сопряжение, настоящее время, прошедшее время, будущее время, система.*

Shushanik Gevorkyan-The understanding of grammatical class of time.

Armenian grammarians have different viewpoints about Grammatical class of time, which are the results of different approaches. Logically evaluating each phenomenon G. Jahukyan gives a comprehensive and scientific response to the viewpoints expressed by the previous linguists.

Keywords: *paradigm, grammatical tense, verb, conjugation, category, present tense, past tense, future tense, system, action..*

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Գրիգորյան Սուսաննա
(ԵՊՀ)

*...Զարեան մի վայրի անկառ է մթին ու թաուր. այստեղ բնութիւնը
տենդորէն դուրս է շորթել երկրի ծոցից եւ շարտել արեւին՝ ինչ որ կարո-
ղացել է, վայրագ ու խառնակ ներդաշնակութեան մէջ...*

(Ա. Ահարոնյան)

Կ. Զարյանի գրական հարուստ ժառանգությունը մեր գրականության լավագույն էջերից է: Նրա և՛ չափածոն, և՛ արձակը աչքի են ընկնում հեղինակի հզոր երևակայությամբ, պատկերավոր, անհատական մտածողությամբ, երևույթները վերլուծելու խորաթափանց մտքով, խոր ու խոհական դատողություններով, որ արտահայտվում է «կյանքի շարունակական լիցքերի ներգործությամբ, մարդկային ճակատագրի ու հոգեղեն արժեքների անդրադարձումներով, բանաստեղծական պատկերների գաղափարական հագեցվածությամբ և իրերի ու երևույթների ոգեղեն ընկալումների հայտնատեսությամբ»¹: Իր ստեղծագործություններում նա դրսևորում է տաղանդավոր արվեստագետի, գեղարվեստական խոսքի մեծ վարպետի անառարկելի կարողություններ՝ իր տեղը հաստատելով հայ դասական գրողների ընտանիքում:

Թեև գրողը ավելի ուշ է յուրացրել գրական հայերենը, սակայն կարողացել է վարպետորեն համադրել և գործածել մեր լեզվի տարբեր շրջանների բառազանձը՝ բարբառային ու ժողովրդախոսակցական շերտի բառերը, փոխառությունները, օտարաբանությունները, ինչպես նաև ըստ անհրաժեշտության դիմելով ժամանակակից հայերենի բառակազմական գործող օրինաչափություններին, օգտագործելով մայրենի լեզվի նրբերանգային բազմաթիվ հնարավորություններն ու իմաստային բազմազանությունը՝ ստեղծել է նոր բառեր ու արտահայտություններ՝ դրա-

¹ Ա. Ավագյան, Կոստան Զարյան, կյանքը և գործը, Եր., 1998, էջ 98:

նով իսկ հարստացնելով ոչ միայն իր ստեղծագործությունների, այլև մեր գրական լեզվի բառային կազմը:

Չարյանի չափածոյի բառապաշարն ուսումնասիրելիս փորձել ենք քննել ու ներկայացնել հեղինակային նորակազմությունները: Նպաստելով խոսքի հուզարտահայտչական հնարավորությունների ընդլայնմանը՝ նորակազմ բառերը բանաստեղծին հնարավորություն են ընձեռում խուսափելու լեզվի մեջ անընդհատ շրջանառվող բառերի ու կապակցությունների հաճախակի գործածությունից. դրանք խոսքը դարձնում են առավել կենդանի, հյութեղ ու պատկերավոր և համահունչ են բանաստեղծական բառապաշարին ու զարյանական խոսքին:

Իհարկե, չպետք է մոռանալ, որ քանի դեռ հրապարակի վրա չկան բոլոր գրողների ու բանաստեղծների բառարանները, հեղինակային նորաբանությունների ստույգ որոշման խնդիրը հղի է սխալներով ու թյուրիմացություններով², և դժվար է ճշգրտորեն որոշել որևէ գրողի հեղինակային նորակազմությունները. դրանց հեղինակային պատկանելության մասին կարելի է խոսել միայն որոշակի վերապահումով: Այս առումով Կ. Չարյանի չափածոյից քաղված նորակազմությունների վերաբերյալ մեր մոտեցումը սահմանափակվում է հայերենի բացատրական բառարաններում ընդգրկված բառերի շրջանակով: Ուստի հեղինակային նորակազմություն ենք համարել բոլոր այն բառերը, որոնք չկան «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»/ՆՀԲ/, Ստ. Մալխասյանցի /ՀԲԲ/, Էդ. Աղայանի /ԱՀԲԲ/, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում /ԺՀԲԲ/, Ռ. Սաքապետոյանի «Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարանում»/ԱԱՆԲ/:

Սույն ուսումնասիրության համար որպես հիմք վերցրել ենք Կ. Չարյանի «Գիրք դիցազներգութեանց»/Երուսաղեմ, 1978 /, «Տատրագոմի հարսը»/Լոս Անճելըս, 1986/, «Երկեր» /Երևան, 1985/ գրքերը, «Բառերի ոսկին»/Երևան, 2009/ բանաստեղծությունների ժողովածուն:

Հեղինակի կերտած նորակազմությունները և՛ իրենց բովանդակությամբ, և՛ արտահայտությամբ հասկանալի և ընդունելի են այն պարզ պատճառով, որ կազմվել են լեզվում արդեն հայտնի, կենսունակ և գործող բաղադրիչների զանազան գուգորդումներով:

² Տե՛ս **Ս. Էրոյան**, Ժամանակակից հայերենի բառային ոճագիտություն, Եր., 1989, էջ 224:

Ինչպես հայ դասական գրողներից շատերի, այնպես էլ Կ. Չարյանի պոեզիայի լեզուն իր խոր արմատներով կապված է մեր լեզվական մշակույթի դարավոր ակունքների, մեր գեղարվեստական խոսքի լավագույն արտահայտությունների հետ և հայ բանաստեղծության լեզվական ավանդույթների շարունակությունն ու հետագա զարգացումն է: Կ. Չարյանն օգտագործում է ընձեռվածը՝ օգտվելով լեզվական տարբեր շերտերից և լեզվի երկփեղկվածության արդյունքում՝ բառապաշարում առաջացած տարբերություններից ու զուգաձևություններից: Սակայն գրական երկի հաջողության համար կարևոր է ոչ միայն բառապաշարի շերտերից օգտվելը, այլև դրանց չափավոր գործածումը: Ինչպես նշում է Ա. Ավագյանը. «Պոետին հաճախ բառերը աղքատ ու տկար են թվում՝ կերտելու համար հմայքը հին երկրի: Գրեթե բոլոր ասքերը գրված են Չարյանի մտածողությանը բնորոշ ոչ սովորական պատկերներով, խորհրդանշական ու մտապատրանքային բազում հնարանքների օգտագործումներով»³:

Կ. Չարյանի պոեմներում և բանաստեղծություններում տեղ են գտել երեք հարյուրից ավելի անհատական նորակազմություններ, որոնք արտացոլված չեն որևէ բառարանում: Կ. Չարյանի չափածոյում դրանք դառնում են բառապաշարը բարձրաշունչ բառերով հարստացնելու հիմնական միջոց երբեմն կանոնավոր, երբեմն խախտված չափերով, նույնիսկ բանաստեղծական արձակի հնարքներով շաղախված նրա պոեմների ու բանաստեղծությունների հետաքրքիր պատկերային համակարգի ստեղծման համար՝ իր բանաստեղծական շքեղ ու ինքնատիպ մտածողությամբ հագեցած: Նրա չափածոյում նորակազմությունների ոճական գործածության ոլորտը խիստ բազմազան է, և սխալված չենք լինի, եթե ասենք, որ այն սպառում է այդ ոլորտի գրեթե բոլոր գործնական հնարավորությունները: Նրա ստեղծած նորակազմությունների ոճական հատկանիշն է խոսքին թարմություն, նորություն, անսովոր երանգ հաղորդելը: Այս տեսակետից Չարյանի չափածոյում առավել գործուն են դիպվածային բառերը, որոնք, իրենց ինքնատիպ կազմությամբ ընդգծելով հեղինակային խոսքի անհատականությունը, նոր ու թարմ շունչ են

³ Ա. Ավագյան, Կոստան Չարյանի դյուցազներգությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 1995, 2, էջ 117:

հաղորդում բնագրին: Ճիշտ է նկատել Ս. Մելքոնյանը, որ նորակազմությունների գնահատման հիմնական չափանիշը որոշվում է համապատասխան խոսքային միջավայրում դրանց ունեցած արտահայտչական արժեքով: «Եթե կոնկրետ կիրառության մեջ նոր բառը հանդես է գալիս ոճական- արտահայտչական որոշակի արժեքով, նշանակում է միանգամայն արդարացվում է դրա ստեղծումը անկախ այն բանից, թե դա հետագայում ընդհանրանալու միտումներ կցուցաբերի, թե ոչ: Նոր բառի ստեղծման ժամանակ գրողի նպատակը ոչ թե գրական լեզուն հարստացնելն է, այլ զգացմունքը, միտքը անհրաժեշտ նրբերանգներով, ոճական պատշաճ որակով արտահայտելը»⁴:

Չարյանի լեզվի մասին՝ արևելահայերենի և արևմտահայերենի մի փոքր ավել կամ պակաս դրսևորումներով, խոսել են շատերը, բայց Ա. Ահարոնյանի բնորոշումն այնքան դիպուկ է և միաժամանակ ամբողջական, որ մեր ուսումնասիրության սահմաններում կարիք չկա որևէ բան ավելացնելու. «... Եւ իր բնութիւնը միշտ վայրենի է, որպէս իր լեզուն, իր հայերէնը, որ նա սովորել է քսանհինգ տարեկան դառնալուց յետոյ միայն, շատ հեռու է կատարելութիւնից... Նա գրում է աւելի բնագրով, քան սովորած օրէնքներով, երբ հրամայական պէտք ունի իր ներքին, բուն զգացողութիւնն ու մտածումը արտահայտելու: Նա շատ չի վարանի բառերի ընտրութեան առջեւ եւ կասի իր խօսքը բրտօրէն կամ նորը կը կերտի, հոգ չէ թէ նրա վրայ կոշտ կերպով աչքի զարնեն կռած ու կոփուած կէտերը, եւ թարմ տաշուածքները: Նա ժամանակ չունի լեզուի նրբութիւնների վրայ յամենալու. երբ ինքն անգօր է, բնութիւնը կը խօսի իր փոխարէն վայրագօրէն հմայիչ, եւ միշտ լեզուական օրէնքները տրորում է ու անցնում, ինչպէս աշնան տերեւները խառնող կատաղի հողմ: Նա չի կարողանում գոհանալ չափուած, ձեւուած ու յոկուած լեզուական օրէնքներով, ձեւերով: Կոկած ու հարթած կրկէսից դուրս նետուած մի նժոյգ, որ սիրում է սանձարձակ սլանալ լայնածիր դաշտերով: Նա դասական ըմբռնումով լեզու չունի, բայց դրա փոխարէն անմնան ոճաբան է»⁵:

Ոճական այլևայլ նպատակներով են ստեղծված Կ. Չարյանի բազմաթիվ նորակազմությունները, որոնք, որքան էլ պայմանավորված են

⁴ Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 174:

⁵ «Հայրենիք», Բոստոն, 1930թ., հ. 9, էջ 61:

հեղինակի անհատականությամբ և ոճական առանձնահատկություններով, այնուամենայնիվ դրանք պատճառաբանված են տվյալ խոսքային իրավիճակում և հնարավորություն են ստեղծում տվյալ գեղարվեստական պատկերի ավելի տեսանելի և արտահայտիչ ընկալման: Կ. Ջարյանի պոեմներում ու բանաստեղծություններում բառերը կարծես չեն հասցնում արտահայտել նրա մտքի փայլատակումները. «Նա հեռի հեռի է պահում ընթերցողին եւ նույնիսկ չարչարում, իսկ պատկերները կոխկռտում, ծվատում են իրար որպէս շարժանկարի ճակատամարտ, ուր բախումներն, անկումներն ու թռիչքները յաջորդում են իրար ու անցնում սրընթաց, կիսատ, անկատար թողնելով, որ երևակայութիւնը ինքը լրացնի ամբողջութիւնը»⁶: Ահա այդ երևակայության պակասն է «չարչարում» ումանց, որ չեն կարողանում հասկանալ Ջարյանի մեծությունը: Վերջիններիս թվում է Վ. Շուշանյանը: Նա Ջարյանին համարում է մեր ցավի ընդարձակ տարածության դեմ կանգնած մի օտար, որն ապավինում է իր բառերին, որպեսզի խաբի բոլորին և խնդրում է, որ նա «զգուշանայ հինցնելէ, մաշեցնելէ, իր պարունակութենէն պարպելէ հայոց լեզուին արեւահամ բառերը»⁷: Մինչդեռ Ա. Չոպանյանը նշում էր, որ ամեն մի գործից հետո նրա լեզուն աստիճանաբար «կ'երեւար աւելի հարազատ, յկուած, ճոխ ու ճկուն, քան նախորդ գործերուն մէջ»⁸:

Նորակազմ բառերի ստեղծման բառակազմական եղանակները նույնն են՝ բառաբարդում և ածանցում՝ իրենց բազմազան արտահայտություններով: Նույնն են նաև գործառական ավելի մեծ հաճախականություն դրսևորող բաղադրյալ բառերի տեսակները, որոնք են ածանցավոր բառերն ու հոդակապով բարդությունները:

Հայերենին բնորոշ են բարդության ամենատարբեր ենթատեսակներ, ինչն էլ հնարավորություն է տալիս գրողին ընտրություն կատարելու և նախապատվությունը տալու բարդության այս կամ այն կադապարին՝ հաշվի առնելով սեփական ոճի առանձնահատկություններն ու պահանջները: Բոլոր դեպքերում կարևորն այն է, որ նորակերտ բառը խորք տպավորություն չթողնի, հատկապես չափածոյում, որը չի սիրում բռնազբոսիկություն ու արհեստականություն:

⁶ Նույն տեղում, էջ 60-61:

⁷ «Մենք», Փարիզ, 1931, հ. Ա, էջ 49-50:

⁸ «Անահիտ», Փարիզ, 1930, Բ տարի, հ. 4, էջ 108:

Այս տեսակետից ինքնանպատակ չեն Կ. Ջարյանի չափածոյի նորաստեղծ բարդությունները, որոնք ստեղծվում են ինքնաբուխ կերպով և անմիջապես մերվում բառային միջավայրին:

Իհարկե, կան նաև անհաջող կազմություններ, որոնք կիրառված են տաղաչափական նպատակով, տողի ռիթմական չափը ապահովելու և բանաստեղծական հանգերի կարգավորման համար, երբեմն կապակցության մեջ չունեն բովանդակային ծանրաբեռնվածություն և արտահայտչականություն, երբեմն անհարկի վերամբարձ են կամ ունեն իմաստային անորոշություն, ինչպես՝ *եռանդադող/24/*, *եղեռնաշամք/114/*, *ցրտաշունչուն/129/*, *սովածփուն/123/*, *հողմադեղև/122/*, *փայլակնայոյս/103/*, *համայնալրրոփ/110/*, *փեղրաշրշուն/57/* և այլն: Բնականաբար, միշտ չէ, որ հնարավոր է լինում բառաստեղծման ընթացքում պահպանել բառի գեղագիտական կազմությունը: Յու. Ավետիսյանը գրում է որ « թեև նոր բառերի ստեղծումը, տաղանդի ու ձիրքի պայմանականությամբ դրանց համար գեղարվեստական գործառույթի ապահովումը ժամանակի լեզվական առաջընթացի կարևորագույն հատկանիշներից են, սակայն ոչ միշտ է, որ գրողի համար պարզ ու ընկալելի են անհանգստությունն ու բորբոքը, խռով ու գերլարված մտքի հաժումները, և ոչ միշտ է, որ զգացումը, տրամադրությունն ու գաղափարը հեշտությամբ են տրվում անհրաժեշտ բառի որոնումներին»⁹:

Լեզվի բանաստեղծականացման և հեղինակային խոսքի հակիրճության համար կարևորագույն հատկանիշ է բառային բազմանդամ կապակցությունների փոխարինումը նորակազմ բառերով՝ դրանց բաղադրիչ մասերի ուղղակի կամ զեղչված գուգորությամբ, ինչպես՝ *աւերաքանդ*-ավերված ու քանդված, *չորսլեզուանի*-չորս լեզու ունեցող, *ոսկեսալող*- ոսկե աստղի նման, *աղանաթիռ*- աղավնու նման թռչող, *փառապայծառ*-փառահեղ և պայծառ, *մանրուրիկ*- փոքրիկ ոտքեր ունեցող և այլն: Խոսքի երկարաբանությունից ու տարտամությունից խուսափելու դեր են կատարում նաև բարդության բաղադրիչների միջև հողակապի սղումով կազմությունները, ինչպես՝ *արիւնքափ/135/*, *արևքաղ/227/*, *բազմյարկանի/598/*, *քիրմուն /146/*, *միջգիսլ/34/*:

⁹ Յու. Ավետիսյան, «Արևմտահայ բանաստեղծության լեզուն», Եր., 2002, էջ 262:

Հեղինակի խոսքին առանձին երանգ են հաղորդում ինքնաբուխ կերպով կերտված այն նորակազմությունները, որոնք ստեղծված են այլ բարդությունների նմանությամբ, ունեն ոճական արժեք և նպաստում են խոսքի պատկերավորությանը: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի բացատրական բառարաններում կուտակված համապատասխան հարստության յուրացման ուղղությամբ կատարված աշխատանքը: Բառերի կերտման առումով գեղարվեստական խոսքի մշակին չէր կարող չհետաքրքրել բառարանների նյութը՝ որպես շինանյութ և ստեղծագործ աշխատանքի մղող խթանիչ գործոն: Այսպես՝ *լուսակարկառ*, *երկնակարկառ* և այլ բառերի համաբանությամբ «Արա Աստուած» պոեմում հեղինակն ստեղծել է *գեղակարկառ* բարդությունը, «Հայկ Դիցագն»-ում *ասորդահմա* բառի նմանությամբ կերտել է *մահահմա* բառը, իսկ «Առաջաերգ»-ում՝ *դիցագնակայրառ* նորակազմությունը, *ասորդ, արև, հուր, ոսկի* սկզբնաբաղադրիչներով հանդիպող բարդությունների նմանությամբ Կ. Ջարյանը կերտել է բազմաթիվ նոր բառեր՝ *ասորդադաշտ/74/*, *ասորդաթափ/141/*, *ասորդահան/15/*, *ասորդաշխարհ/93/*, *արեւազանգուր/98/*, *արեւաթոր/122/*, *արեւահաւաք/7/*, *արեւայեղ/123/*, *արեւարար/78/*, *արեւաքաղ/12/*, *արեւաքանդ/16/*, *արեւնազէն/184/*, *հրաթով/73/*, *հրակոհակ/26/*, *հրամիր/230/*, *հրանիզակ/186/*, *հրաշէջ/80/*, *հրաշուրթ/59/*, *հրասասան/203/*, *հրարար/74/*, *հրարեղ/334/*, *հրափառ/81/*, *ոսկեաքանդ /350/*, *ոսկեասորդ/187/*, *ոսկեարիւն/246/*, *ոսկեխարշափ/162/*, *ոսկելաց/186/*, *ոսկիալոյս/186/*, *ոսկեկարար/46/*, *ոսկեհեքիաթ/48/*, *ոսկենանգաղ/73/*, *ոսկեշարժ/69/*, *ոսկեշահ/90/*, *ոսկեփողփող/159/*, *ոսկերգ/51/*, *ոսկիաթոր/410/*, *ոսկիալոյս/186/*, *ոսկիածով/403/*, *ոսկիացան/ 430/* և այլն: Ըստ նորակազմ բարդությունների խոսքիմասային արտահայտության՝ նորակազմ բարդ բառերի կառուցվածքային կաղապարներում գործող ընդհանուր օրինաչափությունն այն է, որ առաջին հերթին ակտիվություն է դրսևորում գոյականը: Բաղադրյալ բառերի մեծ մասը կազմվում է կենսունակ բառակազմական կաղապարներով, և, ինչպես նշվեց, հաճախված են հողակապով բարդությունները՝ ա/ գոյական+գոյական՝ *ադամանդածայր/25/*, *արեւաթագ/26/*, *բոցակրրակ/73/*, *գարնանաբորդրոջ/27/*, *կրակնաքաշ/184/*, *կոյսապար/124/*, *հրակոհակ/26/*, *հրանիզակ/186/*, *մանանջամարմին/24/*, *մայրալէր/74/*, *որոտամարմին/7/*, *ասրափնակաթ/16/*, *վարդակրակ/122/*

բ/ ածական + գոյական՝ *բարձրաիրան/187/*, *ծանրաերկաթ/79/*, *կոպրասիրտ/26/*, *մթնաճակատ/85/*, *մեծահրաման/25/*, *նորագարուն/214/*, *հեզակոյս/186/*

գ/ թվական + գոյական՝ *եօթնակրակ/348/*, *երեքաբերան/25/*, *հազարափաթիլ/146/*, *եօթնասուրակ/13/*

դ/ բայարմատ + գոյական՝ *լալաթրթիռ/ 45/*

ե/գոյական + ածական՝ *աղանապերճ/42/*, *արեւագանգուր/140/*, *դիցազնակայրառ/48/*, *մեղեղնազեղ/41/*, *մոզավառ/14/*

զ/ ածական + ածական՝ *խոյաջերմ/354/*, *ծանրակորով/80/*, *մթնախաար/190/*, *մեծահսկայ/192/*, *սիզախրոխար/207/*, *սքանչախանդ/64/*, *քաջախիզախ/191/*

է/ գոյական + բայարմատ՝ *աղանաթիռ/234/*, *ասրդահան/15/*, *արեգնաւարարձ/51/*, *արեւահաւաք/28/*, *բոյրասփիռ/41/*, *ձիւնակոյի/280/*, *մարգարիտնակերպ/25/*, *սիրագրաւ/194/*, *փերթաքափ/127/*

ը/ ածական + բայարմատ՝ *գեղակարկառ/78/*, *գաղպնակերպ/7/*, *դառնաւեր/194/*, *թուլավազ/289/*, *համայնարրով/110/*, *պինդակոյի/14/*, *վիթխարակոյի/184/*

թ/ թվական + բայարմատ՝ *միսարրով/135/*

ժ/ բայարմատ + բայարմատ՝ *աւերաքանդ/103/*

Կ. Չարյանի ստեղծած նորակազմ բարդությունների մեջ առանձնանում են կաղապարներ, որոնք ընդհանուր առմամբ տարածված չեն, ինչպես՝ *բոցաբոյր/93/*, *ծովաբոյր/93/*, *հեռանուագ/95/*, *շանթասարագ/194/*, *վարդաբոյր/77/*, *մեղմադող/65/*, ինչպես նաև կան մի քանի եռաբաղադրիչ բարդություններ՝ *դալարագեղզեղ/16/*, *դողողալար/15/*, *թևողողող/23/*, *խնկարուրվառ/125/*, *ծովահրավառ/120/*, *շողշողափայլ/254/*, *ոսկեփողփող/159/*:

Ինչպես նշվեց, Կ. Չարյանի նորակազմություններում գործածության որոշ հաճախականությամբ առանձնանում են նաև անհոդակապ բարդությունները, ինչպես *արեւքաղ/247/*, *արիւնթափ/135/*, *երկուսեռ/47/*, *եօթնակոյս/56/*, *թագեղբայր/198/*, *թաւերէզ/81/*, *թէլվարդ/57/*, *կայլակնօրոր/15/*, *հազարքնար /423/*, *հուռութուլունք/50/*, *մեռելերգ/36/*, *միջգիւր/34/*, *ոսկերգ/51/*, *շրջերգեհոն/481/*:

Բառաբարդման մեկ այլ խումբ են կազմում կրկնավորները, որոնք ևս գալիս են շատ հին ժամանակներից. «Այն առավել չափով գործուն է ժո-

ղովրդական խոսակցական լեզվում և, մասնավորապես, բարբառներում: Այդ եղանակով ամեն օր ու ամեն ժամ մարդ ուզածի չափ կարող է կազմել նորանոր բառաձևեր, որոնք հաջող ու տեղին լինելու դեպքում կմտնեն շրջանառության մեջ կամ հակառակը, մեկ անգամ գործածվելով, այդպես էլ կմոռացվեն, առանց արժանանալու քաղաքացիական իրավունքի»¹⁰: Հանդիպում են կրկնավորների ամենաբազմազան ձևեր: Կիրառությունները նույնպես բազմազան են՝ որոշչային, պարագայական և այլն, կան անփոփոխ և հնչյունավորված կրկնավորներ և կցական բարդություններ կրկնավորներից՝ *բոյր-բոյր/123/, դիին-դիին/124/, զանգ-զանգ/110/, զարդիզարդ/33/, քափ-քափ/122/, կահկահ/124/, հուլա-հուլա/224/, սոդսոդ/17/, սկիզբասկիզբ/35/, սուրասուր/397/, փայլ-փայլ/108/* և այլն: Բարդության այս տեսակի գործածությամբ, որ առավելապես հատուկ է խոսակցական լեզվին, հեղինակն արտահայտում է հատկանշի կամ որևէ գործողության սաստկություն, երբեմն ամբողջականություն: Բերենք բնագրային մի քանի վկայություն.

Աղջիկները *քափ-քափ, շիք-շիք, հեւ- հեւ*, թիթեռաթև...հնայք են անում կախարդաբեր շափիւղայ/122/:

Ասես թէ լինէր մի *հուլա-հուլա*//Պարուած ուշ ժամին կախարդ գիշերուայ/224/:

Ոսկի կանչեր, *կահկահ*, ծիծղուն, թեթեւ, սահուն/124/:

Դիին- դիին, դիին-դիին, ձայներ ելլան անծայրածին/124/:

Երեկոյի պատմուճանի հետ թրթռեց, *սոդսոդ* այրեց դաշտը լուսեղ/18/:

Ժողովրդական զանազան երանգների արտահայտման համար միջոց են ծառայում նաև մի քանի նորակերտ հարադրությունները, ինչպես՝ *արիւն-պղինձ/214/, լափիւէգ-քեհեգ/94/, նագ-երագ/70/, ռեհան-կանայ/282/*: Ահա օրինակներ.

Հեռում, արտի կողին փռած գիւլի վրայից//Վայր է թափում շողքերի գետ *արիւն-պղինձ/214/*:

Ու արեւը՝ ծաղկածլուն հրաշապարտէզ//Հորիզոնում բոցեր թորեց *լափիւէգ-քեհեգ/94/*:

Քո աչքերիդ մէջը բացւած *ռեհան-կանայ*// Հուր է քայլում եւ ձեռքերիդ վրայից կարկաչ լոյս է թափում/282/:

¹⁰ Ա. Պապոյան, Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Եր., 1970, էջ 31:

Բանաստեղծական խոսքում ածական+ գոյական, գոյական + ածական, գոյական+բայահիմք, ածական+ածական, մակբայ+ բայահիմք կադապարներով նորակերտ բարդությունները հեղինակի խոսքում առավելապես մակդրային կիրառություն ունեցող ածականներ են և որպես այդպիսիք՝ աչքի են ընկնում ինքնատիպությամբ և հուզական, զգացական վերաբերմունքի անհատական արտահայտման կարողությամբ.

Եվ իր վարսերը *արևագանգուր* //Բոցկլտում էին ուսերի վրա /98/:

Երբ հորիզոնի *սարսռարարան*, //Թռչնած վարդերը կամաց վայր ընկան.../101/:

Սրգահրոխար, գեղամարմին, վեհ և հրակեզ//Մի Հերակլեա/207/:

Տիեզերային աստուածականչ կոփիւնի գարկն ենք մնչող// Տարածութեան լուսեան մէջ *մեղմադող*/65/:

Կոփեց գետին կճղակները *ծանրակերկաթ* // Եւ՝ *շանթաշարժ*, քառասանբակ՝ վազեց արագ/79/:

Նրա *գեղակարկառ*, // Մոսու պես ճկուն, սլացիկ մարմինը// Սարսրումն ոստումի ալիք էր դառնում/ 72/:

Իսկ Չարյանի կերտած գոյական – նորաբանությունները բանաստեղծական խոսքում հանդիպում են գոյական+գոյական կադապարով: Ահա օրինակներ.

Բարև տանք հրավառ *սարդադաշտերը* //Հերկող սայլերին/74/:

Ահա տեսէք, //*Սարդաշարհի* աջ սահմանում, վեր է ցցուել աղեղնաձև մի մեծ կամուրջ/93/:

Ասին, Հայի շանթով շինուած *հրանիզակը*//...Մխրճում է կրծքերի մէջ հսկաների ամենագօր/186/:

Ինչպես նշվեց, Կ. Չարյանն իր պոեմներում և բանաստեղծություններում օգտվել է և՛ արևելահայերենին, և՛ արևմտահայերենին բնորոշ բառապաշարից: Երբեմն արտասանության երկվությունը Չարյանին քելադրել է նաև գրության երկվություն: Պոեմներում և բանաստեղծություններում Չարյանը գործածել է նորակազմ բառերի հնչյունափոխական տարբերակները, որոնցից մեկը բնորոշ է արևելահայերենին, մյուսը՝ արևմտահայերենին, ինչպես՝ *անդունդաշէլ*/18/ -*անդնդասարուեր*/20/, *հուրհուրան*/234/- *հրանիզակ*/186/, *պղինձ*է/122/-*պղնձագոռ*/208/, *սարսուռիչ*/193/-*սարսռան*/192/, *սուզերգուն*/28/- *սգասարուեր*/129/ և այլն:

Այս ձևերը Չարյանի չափաժողում նպատակ ունեն ստեղծելու խոսքի բազմազանություն, սակայն երբեմն հեղինակը դիմել է հնչյունափոխական գուգաձևությունների՝ ավելի շատ ելնելով տաղաչափական պարտադրանքից՝ հանգերի քանակի համաչափությունն ապահովելու նպատակով, քանի որ սրանք առավել մեծ դեր են կատարում տաղաչափության մեջ, ոճական-արտահայտչական նպատակներով և ծառայում են համապատասխան լեզվամիջավայրի ստեղծմանը: Հանդիպում են նաև տարբեր բառերի անհնչյունափոխ հիմքերով կազմված ձևեր, որոնք բնորոշ են միայն արևմտահայերենին. ինչպես՝ *անուրջաթիռ/42/*, *բոյրաթոր/59/*, *խորհուրդածին/20/*, *կոյսապար/24/*, *մարմինիկ/24/*, *շունչաբեր/49/*, *պինդակոփ/14/*, *սուրասուր/397/* և այլն, նաև հնչյունափոխ հիմքերով նորակազմ բառեր, որոնք էլ առավել բնորոշ են արևելահայերենին, ինչպես *ջղակորով/336/*, *կսկծացալ/28/*, *նրբասարսուռ/70/*, *յակնբաշող/329/*, *սրնգախումբ/19/* և այլն:

Տաղաչափական նպատակներին է ծառայում նաև միևնույն նորակազմ բարդության հոդակապով կամ անհոդակապ կիրառությունը, ինչպես՝

Եւ մենք քեզ հետ նոյն հուր հոգու// Պայծառ թափքն ենք *արեւաքաղ*,
արևատու/160/:

Եւ կը հասկանան աչքերը քո *արեւքաղ*// Խոր եւ ներուժ պարզութիւն է
Հայաստան/247/:

Նորակերտ ածանցավոր բառերը ևս հիմնականում ընդունելի ձևեր են, համապատասխանում են հայերենի ածանցման օրենքներին ու օրինաչափություններին, ուստի և ոչ միայն ոճավորում են հեղինակի խոսքը, այլև համարում են մեր լեզվի բառապաշարը: Կ. Չարյանը գործառության մեջ է մտցնում ինչպես նախաձանցներ, այնպես էլ վերջաձանցներ, որոնցով կազմված նորաբանությունները ոճական մեծ լիցքով են հատկանշվում, և այս կազմություններում մեծանում է ածանցի հատկանշային իմաստը: Քանակով խիստ զիջում են նախաձանցավոր նորակազմությունները, որոնք ընդամենը մի քանիսն են՝ *-անդր/* անդրամահ/422/, *-ենթ/* ենթամարդ/297/, *-գեր/* գերազարթ/399/, *-համ/* համատրով/147/, *-նախ/* /նախատեալ/333/, *-վեր/* վերկոչել/412/։ Բացառիկ դեր ունեն *-ան* նախաձանցի միջոցով ստեղծված նորակերտ բառերը, որոնք, անցնելով լեզվին, հարստացնում են բառապաշարը բանաստեղ-

ծական հոմանիշներով և նպաստում խոսքի բազմազանությանն ու գեղարվեստականությանը՝ *անհելևէջ/13/*, *անհեծկլտանք/407/*, *անպարուսնք/162/*, *անփեթակ/422/*:

Վերջածանցավոր նորակազմ բառերի մեջ մեծ արդյունավետություն են դրսևորում հետևյալ ածանցները.

*-ական/*գոհաբերական/129/, *-ակի/*արշաւակի/193/, *-ան/*արևասան/312/, բոյրածորան/66/, գորգորան/372/, ծլան/122/, ելլան/123/, հեքիաթասան/177/, հազարտան/329/, հորհուրան/159/, սարսռան/192/, ցնծան/121/, *-անի/* բազմյարկանի/557/, չորսլեզուանի/186/, *-անք /*գուլգուլանք/47/, շողշողանք/226/, պսպղանք/84/, սարսռանք/26/, *-ալեկր/ -ալեկր -* ճյուղաւետ/276/, *-ալոր/ -աւոր/* ակունքաւոր/242/, խճուճաւոր/203/, փանդիռաւոր/250/, *-ե/-է /*քիւրմնէ/146/, *-եղ/* զովեղ/269/, *-ելի/* անառելի/186/, անծակելի/186/, *-իկ /*հայրենիկ/225/, մարմինիկ/24/, *-իլ /*ձիւնատեսիլ/22/, ծովատեսիլ/247/, *-իչ/* կերտիչ/73/, սարսուռիչ/193/, *-յուն/ -իւն/* հեռալալիւն/125/, *- որեն/ -օրէն/* վառօրէն/347/, *-ոյց/* հանրակառոյց /88/, տեսլակառոյց/ 15/, *-ոց/* կծկլտոց/25/, *-ություն/ -ութիւն /*109/ մայրատիրութիւն/49/, մեկութիւն/109/, ողբասութիւն/272/, *-ում/* սագերգում/28/, *-ուն/ -ելևէջուն/*61/, երգասփում/199/, խրպում/ 106/, կռում/102/, ծաղկածըլում/120/, յեղազեղում/122/, ոսկեթափում/47/, ջահում/42/, սովածըլում/123/, տաղահարում/64/, տարփում/106/, տաղում/17/, տևում/193/:

Նկատելի է փոքրացուցիչ-փաղաքշական մասնիկներով գոյականներից բաղադրություններ կազմելու հակումը: Հայտնի է, որ այս վերջածանցները խոսքին տալիս են առավել ընդգծված փաղաքշական նշանակություն, ինչն այն մոտեցնում է խոսակցականին, հաճախ էլ ընդլայնում է բառիմաստը: Մեր ընտրանքում ոճատեղծ մեծ արժեք ունեն նորակազմ *մարմինիկ* և *հայրենիկ* բառերը՝ վկայված հետևյալ բնագրային օրինակներով.

...նա գարնում էր ձիւնը սաւանացած, որպեսզի տաք լինի թեիւն, // որպեսզի տաք լինի *մարմինիկիւն*/24/:

...եւ թիթղէ իր ձեռքերով, // Մերկ դաշտերում փնտռում յասմիկ// Եւ բառերի ծայրին թառած մի *հայրենիկ*. //Մի *հայրենիկ* // Անգիր սերտած, մաշւած մի գիրք/225/:

Ոճական մեծ լիցքով են հատկանշվում և արտահայտչական նրբերանգներ ունեն որոշ ածանցների գործածությունները, ինչպես՝ *օրէն*,

-*ակի*: Հույզը կամ տրամադրությունը հաճախ այդպիսի կազմություններով խոսքին հաղորդում է տևականության երանգ: Բերենք բնագրային օրինակներ.

Նայիր ինձ, աշխարհ ես բիրեղ, //Հաց ես *վառորեն* համեղ/347/:

Իսկ երրորդը՝ մի վիթխարի վիշապ սանձած՝// *Արշաուակի*, յարձակում էր մեր պետութեան վրայ սիրուած/193/:

Ոճական- արտահայտչական նրբերանգներ են հաղորդում խոսքին նաև մի քանի այլ ածանցներով բաղադրված այն բառերը, որոնցում ակտիվանում է ածանցի հատկանշային իմաստը, ինչպես՝ *գովեղ*/269/, *անծակելի*/186/, *փանդիրապոր*/250/, *երգասփռուն*/199/ և այլն: Բերենք օրինակներ.

Թող խեր լինի, ի՞նչ պատահեց, որ, ընկճուած և *սարսռան*,//Կուչ ես եկել այդպես անխօսք, անխօսք, անբան/192/:

Ասին, Հայր՝ լերան գլխի ձիւնի նման արեւնաշող// Վահան ունի *անծակելի*

Որ դարձնում է նրա մարմինը *անառելի*՝ *անյաղթելի*/186/:

Անվանողական դերով գեղարվեստական միջավայր հայտնված առանձին նորակազմություններ են –*ուրյուն* , -*անք* ածանցներով կազմությունները՝

Ոսկով մանուած զգեստների// *Շողողանքում* հրավառուած աստուածուտի.../226/

Չկա երեքը, չկա հագարը, //Այլ կա միաձույլ *Մեկուրթին* մի վառ /109/:

Կ. Չարյանի ստեղծած նորակազմությունների բառակազմական հիմնական եղանակներից մեկը, որ նկատելի է դեռևս Գր. Նարեկացու ստեղծագործության մեջ, գոյականներից բայեր կազմելն է, որը, ինչպես նշում է Լ. Եզեկյանը, «կատարվում է լեզվական նմանողության/անաղ-գիայի/ սկզբունքով. դրանք ինչ-որ տեղ նպաստում են նաև խոսքի սեղմությանը ...»¹¹: Հանդիպում են նաև «անալ» բայակերտ ածանցով կազմված նորակերտ բառեր: Լինելով գեղարվեստական մտածողության և ոճական կառույցի միջոց՝ այս երևույթը կարելի է համարել նաև բայ խոսքի մասի բառակազմական ակտիվության արտահայտություն: Ա. Արբահամյանը գրում է, որ, «գոյական և ածական անունների բայա-

¹¹ Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 139:

ցումը հայոց լեզվի համար շատ արդյունավետ և օրինաչափ երևույթ է, իսկ որոշ բառերում հանդես եկող *–ի/* ածանցը ոչ թե քերականական ձևույթ է, այլ հանդես է գալիս բառակազմական- բաղադրական դերով»¹²:

Դրանք ոչ միայն այն բառերն են, որոնք հաճախ գործ են ածվում հարադիր բարդությունների և մի քանի բառակապակցությունների փոխարեն, այլև բազմաթիվ այլ բառեր, որոնք տվյալ խոսքաշարում արդարացված են և սեղմ ու ամփոփ արտահայտում են տվյալ հասկացությունների իմաստը: Ինչպես նշում է Յու. Ավետիսյանը. «լեզվական տեսակետից սովորական չէ *-ել* բայական մասնիկի գործածությունը գոյական սկզբնաձևերի հետ կամ գոյականների բայականացումը. ձևույթային այս անհամապատասխանությունը ուշադրություն է գրավում՝ արտահայտչականության հիմք ստեղծելով, և դրա շնորհիվ խտանում է բառի իմաստային տարողությունը՝ միաժամանակ ստեղծելով գործողության ընթացականության տպավորություն»¹³: Ահա թե ինչու Կ. Չառյանը իր պոեմներում և բանաստեղծություններում հաճախ է դիմում այսօրինակ կազմությունների, ինչպես՝ *աբրուշումել/156/*, *ակնապարուրել/40/*, *արծաթանալ/89/*, *բռնակել/272/*, *գուսանել/30/*, *դիցազնավիպել/75/*, *գարդիգարդել/80/*, *թմբկել/227/*, *թաթանել/237/*, *ժապարհանալ/30/*, *խորապեղել/438/*, *խորհրդանալ/598/*, *կանթեղանալ/84/*, *հովերգել/131/*, *հրագրել/296/*, *հրդեհանալ/108/*, *մրճագարկել/438/*, *մրրկահուզել/17/*, *պղինձանալ/122/*, *ջութակել/13/*, *ռազմանալ/558/*, *սազերգել/562/*, *սառանանալ/72/*, *սուրականալ/24/*, *վարդեջրել/563/* ևն: Ահա մեկ-երկու բնագրային կիրառություն.

Կանթեղացած աղօթքներով ցնորահալած՝ դու սպասում ես դավանալով.../84/:

Քաղիք որթան ողկոյզների հեքը սարսառած//Եւ *գուսանիք* քեզ այցելող աշխարհներին/290/:

Ու ձայները , վերջալոյսի ոսկիներով *ջութակացած*, հոգուս խորքում աչք են բացում զնայլացած/13/:

¹² Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 656:

¹³ Յու. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 359:

Այսպիսով, հեղինակային նորակազմությունները զարյանական խոսքը ոճավորող կարևորագույն միջոցներ են, որոնք նպաստում են դրա սեղմությանը, բազմազանությանը, ինքնատիպությանն ու քարմնությանը, բանաստեղծական խոսքի հանգավորմանն ու բարեհնչությանը: Ինչպես բնորոշում է Ե. Խաչատրյանը՝ « Կ. Չարյանի պոեզիան իր հարստությամբ, իր բովանդակությամբ ու խորքով մաքրում է մեր նորագույն պոեզիայի պատկերը արհեստական ոգեշնչվածությունից, ուշացած ռոմանտիզմից, կեղծ ազգայինից, երգային սենտիմենտալիզմից, սովետահայ պոեզիային բնորոշ նորդասականային գրքայնությունից և պոեզիայի դիմապատկերը խաթարող ու աղարտող այլ գծերից ու տարրերից»¹⁴:

Բանալի բառեր - *Հեղինակային նորակազմություններ, համադրական բարդություն, լեզվի երկփեղկվածություն, չափածո, կադաշտ, բադաշտյալ բառ, անհասկանալի ոճ, փոխառություններ, փաղաշափություն, կրկնավոր բարդություն:*

Сусанна Григорян - Неологизмы в поэзии Костана Заряна. Богат и разнообразен лексикон поэзии К. Заряна. Писатель мастерски использовал весь богатый лексический состав нашего языка: диалектизмы, разговорный язык, заимствованная, иноязычную лексику, а также, по мере необходимости, словообразовательные возможности армянского языка, создавая новые слова и выражения, обогащая самым не только язык собственный произведений, но и состав литературного языка. В поэзии К. Заряна нашли свое место более трехсот авторских неологизмов, которые не отражены ни в одном из словарей армянского азыка.

Дополнительные оттенки значения придают авторскому слову те стихийно образованные неологизмы, которые создаются по принципу существующего комплекса шаблонов, имеют стилистическую ценность и способствуют большей образности речи. Можно выделить стилистические группы в зависимости от того, какая часть речи является составной частью

¹⁴ Ե. Տեր-Խաչատրյան, /Կ. Չարյան, «Բառերի ոսկին» գրքի վերջաբանից, էջ 667:

сложного слова. Создание К. Заряном сложные слова составляются самыми различными словами.

В поэзии К. Заряна очень немногочисленны неологизмы, созданные префиксальным способом. Они имеют большое стилистическое наполнение и обогащают повышению художественности речи и разнообразят ее путем передачи понятий разными способами. Прификсально – суффиксальные неологизмы, в основном, благозвучны и образованы соответственно законам и закономерностям словообразовательной традиции армянского языка.

К. Зарян создает новые слова также посредством слияния существительного и прилагательного и образования из них глаголов. Это беспрецедентное явление находит широкое применение и реализуется по принципу аналогии: на основании сходства с существующими в современном языке словами создаются новые формы слов.

Ключевые слова: авторские неологизмы, синтетическое сложение, раздвоенность языка, поэзия, модель, составное слово, индивидуальный стиль, заимствования, метрика, аналитический редубликат.

Susanna Grigoryan - The Neologisms in Kostan Zaryan's verse. The vocabulary of Kostan Zaryan's in verse is rich and varied. The writer masterly used the whole vocabulary of our language i.e. the dialectical and colloquial words, the loan words and barbarisms; he also made use of Armenian word-formation regularities creating new words and word-combinations and in such a way enriched not only the language of his creations but also our literary language. There are more than three hundred author neologisms in K. Zaryan's verse. These aren't reflected in any of Armenian dictionaries. Those spontaneously formed neologisms which are created from the already existing patterns of compositions in the Armenian lexicon, have stylistic value and contribute to the expressiveness of speech, give special shades to the author's words. *Depending on what part of speech the components of the compound word belong, various formal patterns are differentiated. The compounds created by Kostan Zaryan are composed of different words.*

Although a few in number, neologisms composed by means of derivation have great stylistic filling. They enrich the vocabulary with poetic synonyms and contribute to the variety and expressiveness of speech. The newly formed

derivative words are also in general easily understood and acceptable forms and they correspond to the rules and regularities of Armenian derivation. Zaryan also creates new words by means of forming verbs from nouns and adjectives. This phenomenon has an unparalleled usage and is realized by means of analogy; new words are formed in the resemblance of the words already existing in the literary language.

Keywords: *author neologisms, synthetic compound, linguistic twofoldness, verse, pattern, compound word, individual style, borrowings, metrics, reduplicative compound.*

**ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԸ ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑՈՒ
«ԱԳԱՄԳՐՔՈՒՄ»**

*Դիլբարյան Նարինե
(ԵՊՀ)*

Առաքել Սյունեցին 14-րդ դարավերջի եւ 15-րդ դարսկզբի հայոց մշակույթի և գիտության մեծահամբավ գործիչներից է, ով թողել է ազդեցիկ գրական և գիտական ժառանգություն: Նրա կենսագրության մանրամասները դեռևս բանասիրական բանավեճերի տեղիք են տալիս, ըստ այդմ՝ նա պետք ծնված լիներ 1350 թ. և վախճանված 1425 թ., թեև Ա. Մաղոյանը վիճարկում է այս տարեթիվը, քանի որ գտել է ձեռագիր մի հիշատակություն, որտեղ նշում կա, թե 1431 թ. Սյունեցին եղել է Նորավանքում: Հետևաբար նրա մահվան թվականը պետք է տեղափոխել 1431 թվականից հետո: Ա. Սյունեցու «Աղամգրքի» քննական բնագրերը կազմած և հրատարակած Ա. Մաղոյանն ընդգծում է, որ աշխարհով մեկ սփռված Սյունեցու ձեռագրերի նյութը դեռևս ամբողջությամբ հրատարակված և ի հայտ բերված չէ, և նրա թողած մեծ ժառանգությունը հանգամանալի մեկնաբանության ու վերլուծությունների կարոտ է ¹:

Սյունեցին իր ժամանակի ամենակրթված այրերից է եղել, ուսանել է Տաթևի համալսարանում՝ իր քեռու՝ Գրիգոր Տաթևացու մահվանից հետո դառնալով ուսուցչապետ: Նա բանաստեղծ էր, փիլիսոփա, աստվածաբան, քերական, մանկավարժ և երգահան:

Սյունեցու ստեղծագործությունների մեջ մենք առանձնացրել ենք նրա «Աղամգրք» դյուցազներգական պոեմի բառապաշարը, քերթվածն իր բովանդակությամբ և ձևով հույժ առանձնաճանաչում է Սյունեցու գրական ժառանգության մեջ: Այստեղ ամենից ավելի է երևում մարդկային հոգեբանության խորքերը թափանցելու հեղինակի կարողությունը, կյանքի փիլիսոփայական ընկալման ոգին. գոյի սկզբնակետը, Սյունեցու համոզմամբ, երջանկությունն է, որը խաթարվում է զանցանքի պատճառով, զանցանքին հետևում են օրինաչափ պատիժը, ապա՝ տառապանք, բայց վախճանակետը վերստին երջանկությունն է, եթե պատժին հետևել

¹ Տե՛ս **Սյունեցի Ա.**, Աղամգրք, Աշխատասիրությամբ Ա. Մաղոյանի, Եր., 1989, էջ 3-4:

է գոջումը: Կյանքի էքզիստենցիալ շղթան Սունեցու ընկալմամբ ողբերգական չէ, այլ՝ բարին հաստատող: Այս կենսական շղթան անընդմեջ մտահոգել է Սյունեցուն, որը 1407 թ. Սյունիքի արքեպիսկոպոսն էր և ստիպված էր պայքարել մարտնչող անհավատության կամ թերահավատության դեմ, որը բավական տարածված էր լեռնային տարածքների բնակիչների շրջանում: Սյունեցին իր գրական երկերով և քարոզներով ճգնում էր համոզել դժվարին կյանքով ապրող իր թեմին, որ կանխակա երջանկության կորուստը և դրան հաջորդած տառապանքը հավերժական չեն, այլ անցողիկ: Անկեղծ գոջման և առաքինի կյանքի վերջում մարդը միշտ պարգևատրվում է առավել բարձր մակարդակի նոր երջանկությամբ: Երջանկությունը տրվում է հենց այս աշխարհում և ոչ միայն հանդերձյալ կյանքում: Բացի «Ադամգրք»-ից Սյունեցին հեղինակել է նաև «Դրախտագիրք»-ը՝ այսպիսով ավարտելով դրախտից մինչև երկիր, ապա ետ դեպի դրախտ տանող գաղափարական շղթանը. դրախտ, որը երկրի վրա է և երկնքում միաժամանակ:

«Ադամգիրք»-ը գրված է Հռմերոսի «Ողիսականի» ոգով, հելլենիզմի և քրիստոնեական մշակույթի բարձրագույն արժեքների յուրօրինակ համադրմամբ: Հիմք ունենալով Հին կտակարանի Ծննդոց գրքի ավանդազրույցը մարդկային առաջին գույգի և առաջին մեղքի վերաբերյալ՝ Սյունեցին յուրովի հյուսել է Ադամի և Եվայի պատմությունը, նրանց արարումը, ըմբոստացումը Աստուծո պատվիրանի դեմ եւ վերահաս ողբերգության հանգուցալուծումը: Այս գիրքը, որը հայտնի է իր երեք խմբագրություններով (պայմանականորեն՝ Ա, Բ, Գ), իրականում Սյունեցու «Երգ երգոցն» է, որի շատ հատվածներ երգվել են: «Ադամգիրք»-ը Առաքել Սյունեցու գեղարվեստական մտքի կիզակետն է, որտեղ հետևելով Գրիգոր Նարեկացու բառաստեղծական ավանդույթին՝ Սյունեցին կազմել է վեց տասնյակից ավելի նորակազմ բայեր, գոյականներ, ածականներ և մակբայներ, բացի այդ՝ առաջին անգամ գործածել իր ժամանակի համար նոր փոխառություններ:

Բնորոշ է, որ Սյունեցին իր ստեղծագործության մեջ գործածել է ամենատարբեր բառաշերտերին պատկանող բառեր՝ բարձր գրաբարյանից մինչև միջինհայերենյան, բարբառային, նաև վաղաշխարհաբարյան բնիկ բառերին միահյուսել է ժողովրդական նոր փոխառություններ: Այս-

կերպ Սյունեցին ձգտել էիր խոսքն առավել հասցեական դարձնել, ժողովրդին ընկալելի, գուգահեռաբար ակնհայտ է առօրեականի բանաստեղծականցման միտումը: Հոգևորական գրողի համոզմամբ, ամեն ինչ, ամեն բառ կարող է դառնալ քնարերգության նյութ, եթե կիրառողն ունի համապատասխան շնորհ: Չորօրինակ՝ *հրաշագին, հրաշափայլել, չքնադացեղ, պայծառամիր, պայծառասքանչ, լուսահոսուն, լուսաբափանց, գվարթագեղ* և նման այլ բարձրատն նորակազմությունների կողքին Սյունեցին իր պոեմում օգտագործում է *լօլոսել (լոլոզել)*-ի տարբերակն է, որ նշանակում է *խաբխբել, ուղեղը լվանալ*, իսկ ուղղակի իմաստով՝ *տրորել, ձևը փոխել, փափկեցնել*), *բալ* (վրացական փոխառություն է՝ *կին, աղջիկ*), *մել* (սա շատ հետաքրքիր բառ է, Առաքել Սյունեցու առաջին հետազոտողներից Մ. Պոտուրյանն² այն բացատրում է որպես *պարճառ, առիթ, չ.* Աճառյանն իր «Գավառական բառարանում»՝ *հույս*, բայց ավելի ուշ նա այս բառը բխեցնում է ռուսերեն *милость* բառից՝ համարելով ռուսերենից կատարված վաղաշխարհաբարյան փոխառություն, Ա. Մադրյանը ևս այս տարբերակին է հակվում՝ նշելով, որ մել բառը հանդիպում է նաև Արցախի մելիքների ու ռուսաց արքունիքի գրագրություններում, որպես աղբյուր նշվում է Սանկտ Պետերբուրգում 1898 թ. հրատարակված փաստաթղթերի ժողովածուն՝ Դ. Ա. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, էջ 402, 403): Հետաքրքիր օրինակ է նաև *խալբալենալ*-ը (թուրքական փոխառյալ *խալբալ* հիմքից ստեղծված բայ է), *խալբալ* նշանակում է *աղեղ, փորձանք*, նորակազմ բայն ունի *փչացնել, աղեղի մայրնել* իմաստները, ՄՀԲ-ում վկայված է *խալբալել* պարզ բայը, Սյունեցին փոխառյալ բայահիմքին հավելել է *են* սոսկածանցը՝ ստեղծելով անկատար կերպի նոր բայ: Ժողովրդախոսակցական բառաշերտից են *մեղմեխ*-ը. Ս.Մալխասյանի բառարանում այս բառը տրվում է մեռած նշումով՝ *եննգավոր, կեղծավոր, շողորորթ* նշանակությամբ: Նմանատիպ փոխառություններ են վաշա-ն (նշանակում է *փառք, օրհնություն*), *չէչ*-ը, որը միջինհայերենյան բառ է, այն Ս. Մալխասյանն իր բառարանում բարբառային նշումով է բերում՝ *մրգի կամ այլևի մնացուկ, տակիչք* իմաստներով, *նալաթ*

² Տե՛ս Մ. Պոտուրեան «Աղամգիրք Առաքել Սյունեցույ» , Վենետիկ, 1907, Մ. Պոտուրեան «Առաքել Սյունեցի և իր քերթվածները», Վենետիկ, 1914 :

ը, սա միջինհայերենյան փոխառություն է արաբերենից՝ *նզուլք*, *բանադրանք* իմաստներով:

Յուրօրինակ է նաև 4 թվի սրբացման Սյունեցու միտումը. ավանդաբար, հեթանոսական ժամանակներից սկսյալ, սուրբ են համարվել՝ 1, 3, 7, 9, 12, 40 թվերը, իսկ քրիստոնեության ջատագով հեղինակը, ելնելով քառաթև խաչի սրբությունից, որը նաև աշխարհի արարման 4 հիմնային տարրերի խորհրդանիշն է, պոեմում *չորեք* և *քառ* բաղադրիչներով բազմաթիվ բառեր է կիրառում՝ *չորեքտարրեայ*, *չորեքկուսան*, *չորեքնիթեայ* (Առնել Ադամ չորեքնիթեայ), *չորեքօրեայ* (Յարոյց գԼազար չորեքօրեայ), *չորեքկերպեան* (Աթոռ ահեղ չորեքկերպեան, յորում յանգչեր երկնից արքան), *քառաթևեան* (*Քառաթևեան իսաչն կանգնած*), *քառանիթեայ* (Ստեղծողն բնութեանս քառանիթեայ):

Առաքել Սյունեցու նորակազմությունները քննենք ըստ խոսքիմասային պատկանելության: Նշյալ պոեմում մենք գտել ենք 10 նորակազմ գոյական, վերլուծենք դրանք՝ ըստ իմաստների.

Աղանգիրք-առաջին մարդու կյանքի պատմությունը, ողիսականը,
Աթենակոյս-աստվածուհի, Աթենասը,
աղծութիւն-դևերին բնորոշ համ, ըստ ամենայնի՝ դառնաղի,
դասասաց-խորհրդատու, վարդապետ,
ելուն-դուրս եկած մաս,
հարցաբանում-հարցապնդում, հարցաքննում,
մարանապան-մառանի պատասխանատու, մառանապետ,
պարակցում-միավորում, համատեղում,
տանջանարան-տառապանքների վայր, դժոխք,
վերջաբանութիւն-հանգուցալուծում:

13 բայ՝

1. Այլեւայլել - ՆՀԲ-ում առկա է միայն *այլ եւ այլ* ածականը «զանազան, պէսպէս, տարբեր» իմաստներով, Սունեցին ածականից ստեղծում է բայ և նրա ենթակայական դերբայը՝ *այլեւայլող*, ունի *փոփոխվել*, *փոխակերպվել* իմաստները:

2. Երեւեճալ - բառարաններում վկայված է *երևել/իմ*, *երևանալ* բայը, Սյունեցին կազում է *են* սոսկածանցով նույնիմաստ բայ՝ «*հայրնվել, նկատվել*» նշանակությամբ, բայց ավելի բարեհունչ՝ *ե* ձայնավորների առձայնությով:

3. Եօթնապատկել - ՄՀԲ-ում վկայված է *յօթնապատկիկ* մակբայը, իսկ բայական տարբերակը նորակազմություն է՝ «յոթ անգամ ավելացնել յօթնապատիկ դարձնել» նշանակություններով:

4. Խալբալենալ - աղետի ենթարկել, փորձանքի մատնել:

5. Խալտագրել - խալտանքով, բերկրությամբ նկարագրել:

6. Լօլոսել - խաբխբել, մոլորեցնել:

7. Կիսատել - ՆՀԲ-ում հանդիպում է *կիսալ* ածականը՝ «*կիսահալ, կրճատեալ, անկալարալ*» իմաստներով: Այս ածականից կազմված բայն ունի «*կիսալ, քերի դարձնել, կտրել*» նշանակությունները:

8. Հրաշափայլել/իմ - ՆՀԲ-ում առկա են *հրաշափայլ* ածականը և *հրաշափայլություն* գոյականը («*հրաշալի փայլումն, զերապայծառութիւն*»), իսկ բայը նորակազմ է՝ *զերափայլել, ճառագել* իմաստներով:

9. Մաղձաժայթքել - ՄՀԲ-ում առկա է միայն *մաղձաժայթքող* ենթակայական դերբայը՝ *թունահեղ* նշանակությամբ, Սյունեցու կիրառած բայն ունի *թույն քափել* նշանակությունը:

10. Մատնահարել/իմ - ՆՀԲ-ում ունենք *մալրնահար/մալրնեհար/ մալրանահար* գոյականը, որն ունի «*մալրանի, որ հարկանէ, դրոշմէ զկնիք, կնիք մալրանոյ*» իմաստները: Սյունեցու կազմած բայն ունի «*դրոշմել, կնքել*» նշանակությունները:

11. Պատուտել/իմ - ՄՀԲ-ում Ա.Սյունեցու վկայակոչմամբ բերված այս բայը նշանակում է «*պարուրել*»

12. Վերաբուրել - ինքնատիպ նորակազմություն է «*վերաբրին, կրկին բուրել*» նշանակությամբ:

13. Քակտակել - ՆՀԲ-ում տրված են *քակտիւմ* բայը («քակելով քակել, քանդել, լուծանել, խախտել, ստերել, եղծանել»), քակտական/քակտելի ածականները («որ կամ ունի քակտիլ, լուծանելի, բաժանելի՝ որպէս զբաղադրեալն»): Ըստ երևույթին *քակտիւմ* բայի այս հոմանիշ ձևը կազմել է *ակ* ածանցի հավելմամբ, որը գործողությանը բազմապատկական, սաստկական երանգ է հաղորդում:

Հեղինակային նորակազմությունների հիմնական մասը սովորաբար ածականներ են, Սյունեցու այս պոեմում գտել ենք 31 ածանցավոր և բարդ ածական՝

Անգոց- անպարփակ, անըդգրկելի:

Անճառակերպ - ՆՀԲ-ում վկայված է միայն *անճառ* ածականը, որի հոմանիշն է *անճառակերպ* գեղեցիկ նորակազմությունը՝ «*անճառելի, անկայարմելի, աննկարագրելի*» իմաստներով:

Անուշալի - ՆՀԲ-ում տրված են *անոյշ* և *անուշ* ածականները՝ «*քաղցր, համեղ անուշահոտ, չունօղ կծուութիւն կամ դառնութիւն, լայնաբար՝ լաւ, հաճոյական, ախորժ, ազնիւ*» իմաստներով: *Անուշալի*-ն ՆՀԲ-ում նշվածների հետ հոմանշային շարք է կազմում:

Անուշիմ - անգիտակ, անուշաղիբ: ՆՀԲ-ում առկա է միայն այս ածականի հականիշը՝ *ուշիմ*:

Արտասուեղ - արտասվալի, արցունքաբեր: *Եղ* ածանցը հայերենում միշտ արտահայտել է «ինչ-որ բանով լի, լեցուն իմաստը: Նորակազմությունը ստեղծվել է հանգավորման համար՝ որպէս *հանճարեղ, համեղ, անմեղ* բառերի հանգակից:

Գեհենակուր - ՆՀԲ-ում տրված են *գեհեն* («դժոխք») և *կուր* («կերակուր գազանագո») առանձին արմատները, որոնց միացումով էլ Սյունեցին ստեղծել է *գեհենակուր* ածականը «դժոխքի բաժին դարձած» նշանակությամբ:

Դառնագին - հոմանիշն է ՆՀԲ-ում վկայված *դառնալի* ածականի, ունի «հույժ, չափազանց դառն» իմաստը:

Դառնամբուր - *դառն* և *մբուր* բառերով կազմված այս նորակազմ ածականն ունի «*դառը նսրվածք ունեցող, դառնաթանձրուկ*» նշանակությունը:

Դժնային - ՆՀԲ-ում առկա է *դժնի* ածականը, որի հոմանիշն է *դժնային* նորակազմ այս ձևը՝ «չարաչար, դժնդակ» իմաստներով:

Դժպահակ - Ինքնատիպ ածանցավոր կազմություն է անընկալելի, անիմանալի նշանակությամբ:

Դիրահաճ - Բարդ այս ածականը նշանակում է *հեշտությամբ դուր եկող, գրավող, դյութող*:

Ջուարթագեղ - զվարթ գեղեցկությամբ օժտված, պայծառագեղ:

Ժանգանման - ժանգի տեսք ունեցող, քայքայիչ:

Ժանգալի - ժանգապատ, քայքայված:

Լուսափայլուն - ՆՀԲ-ում տրված են լուսափայլ և լուսափայլեան հոմանիշ ածականները՝ «*լուսով կամ որպէս լոյս փայլեալ, լուսապայծառ,*

շողշողեալ, պայծառ, մաքուր, հարակ, պարզ» նշանակություններով: Սյունեցին հարստացնում է հոմանշային այս ճոխ շարքը՝ ստեղծելով *լուսափայլուն* տարբերակը:

Լուսաբափանց - նորաբան այս ածականը իմաստով մոտ է վերոնշյալ կազմությանը՝ «*լույսի պես քափանցիկ, եփերային*» իմաստով:

Լուսահոսան - լույսի պես հորդացող, պայծառացնող, լուսավորող:

Խեռային - ՄՀԲ-ում առկա է *խեռական* տարբերակը՝ «*անսանձ, քմբուր*» նշանակություններով: Հեղինակը կազել է վերջինիս հոմանիշը *ային* ածանցով:

Հառաչալիս - հառաչանքներով լի, տառապագին:

Հրճուածայն - գվարթածայն, ցնծալի: Սյունեցու երկում հրեշտակներին՝ գվարթուններին, տրվող բազմաթիվ որոշիչներից է:

Չանձրախորհուրդ - տաղտկամիտ, ծանրամիտ, *անուշիմ* նորակազության հոմանիշն է՝ նույն տողում գործածված: Ունի նաև *չանձրամիտ* հոմանիշը՝ բաղադրիչի փոփոխությամբ՝ *խորհուրդ՝ միտ*:

Յուսացուցիչ - ՆՀԲ-ում հիշատակված է միայն *յուսացուցանել* բայը՝ «*տալ յուսալ, վարսահացուցանել*» իմաստներով: Նորակազմ ածականն ունի «*վարսահեցնող, հուսադրող*» նշանակությունը:

Ողորագին - ՆՀԲ-ում առկա են *ողոր* և *ողորական*, ածականները՝ «*աղերսական, փաղաքշական, համոզական*» նշանակությամբ: *Ողորագին* կազմությունը համալրում է հոմանշային այս շարքը:

Չարութարի - այս ածականն իր մեջ համտեղում է «*և՛ չարը, և՛ բարին կրող*» իմաստները:

Չքնաղացել - գեղեցիկ, բացառիկ տեսակի: Ադամին գայթակղած մեղքի պտղին տրվող հոմանիշներից է, որ մատուցեց Եվան:

Պղնձահոտ - պղնձի հոտ ունեցող: *Ժանգալման* ածականի հետ է գործածված՝ որպես մեղքին տրվող բացասական մակդիր:

Պայծառաքանց - հիասքանչ, սքանչելի: Այս ածականը վկայված է ՄՀԲ-ում՝ Սյունեցու վկայակոչմամբ:

Պայծառամիտ - հանճարեղ բառի նորակազմ հոմանիշն է՝ Աստծոն տրված մակդիրներից:

Օձատիպ - օձանման, օձաբարո, անհաստ:

Օրհներգաբան - օրհներգ երգող, փառաբանող. հրեշտակ-զվարթուններին տրվող մակդիր է:

Գտել ենք 2 մակբայ՝

Չարչարք - նորակազմ այս մակբայն ունի «*հույժ չարք*» իմաստը, որտեղ *ք*-ն արդեն ածանց է, ոչ թե հոգնակերտ՝ «*չարչարք նիւթեաց*»:

Ոտանավորաբար-բանաստեղծորեն, չափածո:

Ընդհանուր առմամբ 57 նորակազմություն, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում, Միջին հայերենի բառարանում (ՄՀԲ), դրանցից 5-ը ՄՀԲ-ում բերված են, բայց միայն Առաքել Սյունեցու վկայակոչմամբ, այսինքն՝ անտարակոյս այս հեղինակի նորակազմություններն են:

Կառուցվածքային տեսանկյունից Սյունեցին գործուն կիրառել է և՛ ածանցումը, և՛ բառաբարդումը: Նախածանցներից նախապատվություն տվել է *ան*, *դժ*, *վեր*, *պար* ածանցներին, իսկ վերջածանցներից՝ *արան*, *ային*, *ալի*, *բար*, *գին*, *իչ*, *ուրիւն*, *ուն*, *ուն*: Բայական ածանցներից Սյունեցին 2 անգամ կիրառել է *են* ստակածանցը՝ ստեղծելով բառարաններում վկայված բայերից տարբերվող կազմություններ՝ *խալբալենալ* (ՄՀԲ-ում կա *խալբալի*), *երեւենալ* (գրաբարում կային *երեւանալ* և *երեւել/իւ* ձևերը), մի անգամ *ակ* ածանցը բազմապատկական նշանակությամբ՝ *քակրակիւն*: Բարդությունները հիմնականում հողակապավոր են, եզակի օրինակներով՝ կրկնավորներ, կան նաև բաղիյուսական բարդություններ:

Ա.Սյունեցու նշյալ նորակազմությունների ուղիղ կեսն այսօր էլ արդի հայերենում կիրառելի է հատկապես բանաստեղծական բարձր ոճերում, մի իրողություն, որն ապացուցում է նրա բառաստեղծ տաղանդի վերժամանակյա ուժը:

Բանալի բառեր - *Առաքել Սյունեցի, XIV-XV դարեր, «Ադամգիրք», բառապաշար, բառակերպում, հումանիշներ, նորակազմություններ, փոխառություններ, ածանցում, բարդություններ:*

Нарине Дилбарян - Новообразованные слова в «Книге Адамовой» («Адамгирк») Аракела Сюнеци. Аракел Сюнеци был известным армянским религиозным деятелем, поэтом, грамматиком, музыкантом, философом и теологом XIV-XV веков. В данной статье мы анализировали новообразованные слова в поэме Аракела Сюнеци «Книга Адамова». Эти слова не упоминаются в словарях габара (древнеармянского) и среднеармянского языков. «Книга Адамова» - это поэма об изгнании Адама и Евы из рая, о первородном грехе и последующем покаянии. Сюнеци создал 57 слов на основе армянских и заимствованных корней, из которых 11 существительных, 13 глаголов, 31 прилагательное и 2 наречия. Большинство этих новообразованных слов и сейчас употребляются в лексике современного армянского языка, что является свидетельством яркого словотворческого таланта А. Сюнеци.

Ключевые слова: *Аракел Сюнеци, XIV-XV вв., "Адамова книга", лексика, словообразование, синонимы, неологизмы, заимствования, деривация, составные слова.*

Narine Dilbaryan - Newly formed words in the Arakel Syunetsy's "Adam's book" ("Adamgirq"). Arakel Syunetsi was an Armenian religious famous figure, a poet, a grammarian, a musician, a philosopher and a theologian of XIV-XV century. In this article we analyzed the neologisms in the poem "Adam's book", which are not in the dictionaries of the Old and Middle Armenian languages. This poem is about the exile of Adam and Eva from Paradise, the first sin and Repentance. Syunetsi created 57 newly formed words. He created these words on the basis of Armenian and borrowed roots: 11 nouns, 13 verbs, 31 adjectives and 2 adverbs. Most of these words are used in the vocabulary of modern Armenian, being an evidence of the brilliant talent of Arakel Syunetsi.

Keywords: *Arakel Syunetsi, XIV-XV centuries. "Books of Adam", vocabulary, word formation, synonyms, neologisms, borrowing, derivation, compound words.*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՅՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Եղիազարյան Վարդան
(ԵՊՀ)*

Հայկական վերածնունդն իր առավել խոր արտահայտությունն ստացել է 13-16-րդ դարերի հայ քնարերգության մեջ: Քնարական բանաստեղծությունն այս շրջանում ձեռք բերեց գեղարվեստական այնպիսի նվաճումներ, որոնք, ըստ հայ պոեզիայի գիտակ Վալերի Բրուսյովի, յուրաքանչյուր կրթված մարդու համար պարտադիր է իմանալ, ինչպես Հոմերոսին, Դանթեին և համաշխարհային պոեզիայի մյուս մեծերին¹: Նշված դարերում հայ բանաստեղծությունը հասնում է թեմատիկ լայն ընդգրկումների և գեղարվեստական բացառիկ արտահայտչականության: Հանդես են գալիս հարյուրավոր բանաստեղծներ, որոնց ընդունված է անվանել տաղերգուներ կամ տաղասացներ: Հոգևոր թեմաների հետ արձարժվում են մանավանդ աշխարհիկ թեմաներ՝ սերն ու բնությունը, կյանքն ու մահը, անհատի դրաման, պանդխտությունը և այլն:

Այս շրջանի հայ բանաստեղծության լեզուն գերազանցապես միջին հայերենն է, որը ունեցել է իր տարբերակները՝ միմյանցից ինչ-որ չափով տարբերվող, օրինակ՝ Կիլիկիայի սահմաններում գործածական գրական միջին հայերենը տարբերվում է Բարձր Հայքի և Արևելյան Հայաստանի տարածքներում կիրառված միջին հայերենից. նրանից ինչ-ինչ տարբերություններ ունի դրինահայոց և լեհահայոց միջին հայերենը՝ չնայած բոլորի քերականական կառուցվածքը միասնական է: Գրաբարը ևս գործածվում է քնարերգության մեջ, բայց անչափ պարզեցված ու մտաչելի դարձած: Բնիկ հայ բառապաշարի շրջանակներ են մուտք գործում նաև օտար բառեր՝ մեծ մասամբ պարսկերենից ու արաբերենից ինչ-որ չափով նաև թուրքերենից: Այդ բառերը արհեստականորեն չեն մուծվում, այլ նախ և առաջ գործածական են դարձել բուն ժողովրդական խոսվածքում:

¹ Վալերի Բրուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Եր., 1967, էջ 39:

Նարեկացուց ու Շնորհալուց հետո բանաստեղծությունն առաջաքայլ է կատարում նաև տաղաչափության ու հանգավորման ասպարեզում՝ երևան բերելով ձևերի հարստություն և բազմազանություն: Այս առումով շատ բնորոշ է Հովհաննես Երզնկացու ստեղծագործությունը: Հովհաննես Երզնկացին, որ կոչվել է նաև Պլուզ մականունով, ապրել և ստեղծագործել է 13-րդ դարում և եղել է Բարձր Հայքի Երզնկա քաղաքից: Ծննդյան թիվն անհայտ է, բայց եթե հաշվի առնենք, որ 1268 թ.-ին նա արդեն վարդապետական աստիճան ուներ, մի կոչում, որ տրվում է միայն երեսուն տարին բոլորելուց հետո, ուրեմն նա ծնված պետք է լինի մոտավորապես 1238 թ. կամ մի փոքր առաջ: Նրա ուսուցիչներից մեկը և գլխավորը եղել է գիտնական ու պատմիչ Վարդան Արևելցին:

Երզնկացու կյանքը անհանգիստ և թափառումներով է անցել, մերթ մա Երզնկայի մոտ գտնվող Սեպուհ լեռան վանքերում է, մերթ Կիլիկիայում, որտեղ Հեթում թագավորի ու Հայոց կաթողիկոսի խնդրանքով գրում է տարբեր աշխատություններ, ի թիվս որոնց և Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» հայերեն ընդարձակ մեկնությունը, մերթ էլ Տփղիսում կամ Արևելյան Հայաստանի վանքերում: Հիշարժան է 1280 թ., երբ նա գրում է Երզնկայի վաճառականների և արհեստավորների մասնակցությամբ կազմված «Եղբարց միության» սահմանն ու կանոնադրությունը:

Արհեստավոր և առևտրական խավի մարդիկ, առավելապես երիտասարդները այդ թվականին ստեղծել էին մի ընկերություն, որի նպատակն էր վտանգի դեպքում ապահովել քաղաքի պաշտպանությունը, օգնել ներդրյալ մեջ գտնվողներին, համախմբվել եկեղեցու շուրջը և հետամուտ լինել բարոյական բարձր պարտականությունների: Կազմակերպությունը յուրահատուկ կառույց ուներ: Ներքին բաժանումներով կային այսպիսի կոչումներ՝ տասին գլուխն, քառասունին մեծն, գլխավորը եղբարցն, և ամենամեծ պաշտոնյան, որը կոչվում էր գլուխ եղբայրության: Կազմակերպության մեջ մտնող բոլոր մարդիկ կոչվում էին եղբայրներ: Երզնկացու «Սահման և կանոնքը» հայտնաբերվելուց հետո միայն պարզ դարձավ, թե ովքեր են այն եղբայրները, որոնք մի այլ բանաստեղծից՝ Կոստանդին Երզնկացուց խնդրել են գրել «սիրո բաներ»²: Ուրեմն դրանք վանական եղբայրներ չէին, այլ աշխարհիկ եղբայրներ:

² Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Եր., 1962, էջ 67:

Քիչ անց՝ 1284 թ.-ին Երզնկացին հայտնվում է Տփղիսում, որտեղ Ումեկ իշխանի կառուցած հայկական Կաթողիկե եկեղեցում փայլուն տիեզերագիտական ճառ է արտասանում Ումեկի որդի Վախթանգի խնդրանքով: Այդ ճառը արձակ շարադրանքով գրառվել և մեզ է հասել: Բայց Երզնկացին Ալլոցի իշխանի բուռն ցանկությամբ շարադրել է մաս դրա հոյակապ չափածոն, որը լայն պատկերացումներ է տալիս տիեզերքի կառուցվածքի, երկնային լուսատուների մասին: Այդ գործը կոչվում է «Յաղագս երկնային զարդուց»:

Հովհ. Երզնկացին ժամանակակիցների մեջ բացառիկ հեղինակություն է վայելել: Ըստ երևույթին կարճ հասակ է ունեցել, դրա համար էլ նրան տվել են Պլուզ մականունը, որը ոչ միայն կարճահասակ է նշանակում, այլև կապուտաչվի:

Երզնկացին թողել է բազմաբնույթ և հարուստ ժառանգություն. մա գրել է մեկնություններ, կանոնախրատական աշխատություններ, ճառեր, ներբողներ, քնարական բանաստեղծության տարբեր տեսակներ, շարականներ, տաղեր, գանձեր, իմաստասիրական հայրեններ և այլն: Իբրև ստեղծագործող՝ մա անդրադարձել է ժամանակի հայ հանրությանը հուզող զանազան խնդիրների: Լեզուն գրաբարի և միջին հայերենի խառնուրդն է, անցման շրջանի լեզու: Նա հեռու է խրթնաբանություններից, ձգտում է արտահայտվելու այնպես, որ բոլորի համար իր գրածը մատչելի լինի: Հովհ. Երզնկացին իր քնարական ստեղծագործությամբ ընդառաջ է գնացել և արհեստավոր ու առևտրական եղբայրների գրական պատվերներն է կատարել: Սիրում է խրատել. հիշարժան է նրա մի բանաստեղծությունը, որը գրված է Հակոբ անունով մանկտավագի պատվերով: Երզնկացին կոչ է անում.

Աշխարհս ծով է անհիուն,

Է՞ր կու լինիս անհոգ ի քուն,

Մեղայ ասա և կաց արթուն.

Յակոբ, զարթի՛ր ի քնոյ մեղաց³:

Երզնկացին շատ է սիրել երեխաներին, սովորող մանուկներին, մտածել, որ նոր-նոր գիտակցության եկող երեխայի նկատմամբ պետք է հոգատար լինել: Երեխաների միտքը, ասում է մա, մոմի նման կակուղ է լի-

³ Հովհաննես Երզնկացի, Բանք չափաւ, Եր., 1986, էջ 50:

նում, պետք է այն կնքել ուսումով, որ հետագայում աստիճան ամ աստիճան ամրապնդվի ու զորանա բանականությամբ:

Երզնկացուն մշտապես զբաղեցրել է հայ մարդու կերպարի խնդիրը: Նա Հովհաննես Սարկավազի նման ունի բնության խոր զգացողություն և մարդուն կապում է ոչ միայն քրիստոնեական վարդապետությանը, այլև առնչում է բնությանն ու կենդանի իրականությանը: Բոլոր դեպքերում նա հետամուտ է մարդու համակողմանի զարգացմանը: Ըստ նրա՝ հայ մարդը, բնությունից չկտրվելով հանդերձ, պետք է սրբությամբ պահպանի նաև քրիստոնյայի պարտականությունները, Ասում են, որ մարդու մարմինը կարծես պարսպապատված մի քաղաք է և ունի հինգ դուռ, դրանք հինգ զգայարաններն են՝ աչքը, ականջը, քիթը, բերանը և ձեռքը, որոնցով ընկալում և հարաբերությունների մեջ է մտնում արտաքին աշխարհի հետ: Բոլոր չարն ու բարին մտնում ու ելնում են այդ դռներով: Քաղաքի բնակիչը հոգին է: Մարդը օժտված է մտքով, որի շնորհիվ հսկում է չար ու բարի արարքները: Մարդու բարի գործը գանձ է, միտքը այդ գանձի պահնորդն է: Չարկան դևերը ուզում են գրավել քաղաքը և նվաճել գանձը, ուրեմն մարդը պիտի կարողանա չարն ու բարին իրարից զատել՝ դիմելով իր մտքի զորությանը: Կարելի է ապրել միայն բարի ընթացքով. չարն անխուսափելի չէ, բայց վայ նրան, ով անիմաստություն և կամքի թուլություն է հանդես բերում՝ տարիների ընթացքում ծանրացնելով մեղքերի իր բեռը: Իր իմաստասիրական հայերեն-բանբերից մեկում նա ասում է.

Ելայ ժողովեցի զիմ մեղքն ու դրրի առջևս ու լացի,
Յանդէնըն քարւան կերթար, շակեցի՝ ւ ի հետ զընացի,
Հրեշտակն այլ ի դէմս ելաւ, թ' Ո՞ւր կերթասս ողորմ ու լալի,
Այդ շալիկդ որ դու ունիս՝ անդէնին քեզ տեղ չի ընկնի⁴:

Սա դրախտը երագող մարդու ողբերգությունն է, որի կատարած մեղքերը փակել են փրկության ճամփան: Նա խորհում է մարդու բախտի մասին. մեկին ճակատագիրը բարձրացնում է, մյուսին՝ զցում, հետո փոխվում է ամեն ինչ, ներքևինը բարձրանում, վերևինը խորտակվում է և այդպես փոխնիփոխ, շարունակ: Ո՞րն է փրկությունը. մարդու ողորմա-

⁴ Հովհ. Երզնկացի, Բանք չափաւ, էջ 37:

ծությունը, գրասարտությունը, որոնք միայն ապահովում են մարդու անմահ հոգու փրկությունը:

Հովհաննես Պլուզ Երզնկացու գրած խոհական, խրատական հարյուրավոր հայերեններ առանց լուրջ հիմքի վերագրվել են Նահապետ Քուչակին, բայց ձեռագրերը վկայում են ճիշտ հակառակը: Հովհ. Երզնկացին XIII դարի հայ աշխարհիկ քնարերգության առաջին արտահայտիչը եղավ:

Բանալի բառեր - *հայ քնարերգություն, միջնադար, Հովհաննես Երզնկացի, միջին հայերեն, ժողովրդախոսակցական լեզու, քերականական կառուցվածք, տառադասություն, հանգամանակ, բառապաշար, օրհար բառեր, արեղծագրություն:*

Вардан Егиазарян - Лингво-стилистические особенности и творчестве Ованеса Ерзнкаци.- Языком армянской лирики XIII-XVI вв. был преимущественно среднеармянский, который имел свои разновидности. Так, литературный язык, употребляемый в Киликии, несколько отличался от среднеармянского языка Высокой Армении и Восточной Армении. Некоторые особенности характерны для среднеармянского языка крымских армян, а также польских армян. При этом все эти разновидности имеют единую грамматическую основу.

В лирике XIII-XVI вв. использовался и древнеармянский литературный язык -грабар, однако в чрезвычайно простых и доступных формах. Исконно армянская лексика пополняется в этот период и иностранными словами, в основном – персидскими и арабскими, отчасти – турецкими. Слова эти отнюдь не носят искусственного характера: они широко употреблялись в народной речи.

После Нарекаци и Шнорали армянская поэзия делает шаг вперед в области использования стихосложения и рифмы, демонстрируя богатство и разнообразие форм. В этом плане особенно характерно творчество Ованеса Ерзнкаци.

Ключевые слова: *Армянская лирика, средневековье, среднеармянский язык, народноразговорная речь, грамматическая структура, лексика, иностранные слова, стихосложение, рифма, творчество, Ованес Ерзнкаци:*

Vardan Eghiazaryan - Language and stilistical peruliarities of Hovhannes Yerznkatsi's poetry.

The language of the Armenian poetry of the 13-16th centuries was chiefly Middle Armenian, which had its versions which differed from each other to some extent. For instance, literary Middle Armenian, spoken in Cilicia, differed greatly from the Armenian used in High Hayk and Eastern Armenia. However, there are still noticed some differences from the Middle Armenian spoken by Armenians in Crimea and Poland, though the grammatical structure of all these was the same.

Grabar is also used in the lyric poetry, but in a more simplified and accessible way. Foreign words also penetrated Armenian native vocabulary mostly from Persian, Arabic and even from Turkish. These words did not penetrate artificially, they first of all came into use in folk dialect.

After Narekatsi and Shnorhali poetry made progress in the sphere of prosody and rhyming as well. Moreover, it brought with it richness and diversity. From this point of view Hovhannes Erznkatsi's works *are* typical.

Keywords: *Armenian lyric poetry, the Middle Ages, Middle Armenian spocen language, grammatical structure, lexicon, foraign words, versification, rhyme, creative work, Hovhannes Yerznkatsi.*

ՊԱՀԼԱՎԵՐԵՆԻՑ ԵՎ ՆՈՐ ՊԱՐՍԿԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՎԱԾ ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

*Խաչատրյան Ալվարդ
(ԵՊՀ)*

Յուրաքանչյուր ազգ ունի անձնանունների իր համակարգը, որն արտացոլում է տվյալ ժողովրդի մշակույթի պատմության, մարդկանց հոգեբանության, նրանց սովորույթների ու հասարակական կյանքի յուրօրինակ բնութագծերը: Դրանք ոչ միայն անվանակոչում են անհատներին, այլև յուրօրինակ բանալիներ են բացահայտելու ժողովուրդների պատմական ճակատագրի, նրանց գաղթերի ու տեղաշարժերի նկարագիրը: Հաճախ ստույգ տարեթվերի բացակայության պարագայում օգնության են հասնում պատմական անձնանունները:

Անվանադրման գործընթացը հարափոփոխ է: Ուստի հայկական անունների հիմնակադասարանների տարբերակումն ու դասակարգումը, անձնանվանահիմքերի, անձնանվանակերտ ածանցների և քերականական ձևայինների քննությունն ունեն գիտական լուրջ նշանակություն: Այս զեկուցման նպատակն է՝ իմաստաբանական և կառուցվածքային վերլուծության ենթարկել պարսկերենից փոխառված այն անունները, որոնք ակտիվ գործածություն են ունեցել պատմական Հայաստանում և իրենց կենսունակության շնորհիվ համագործածական են հայերենի զարգացման գրեթե բոլոր փուլերում, փորձել ենք պարզել դրանց կիրառական հաճախականությունը, ժամանակագրական տարբեր շերտերի պատկանող անունների յուրօրինակ կառուցատիպերի զարգացման միտումները:

Իրանական փոխառյալ անձնանունների ժամանակագրական հաջորդականությունն ավելի հստակ պատկերացնելու համար անդրադառնանք պարսկերենի պատմական զարգացմանը:

Լ. Հովհաննիսյանն իր «Հայերենի իրանական փոխառությունները» աշխատության մեջ ներկայացրել է իրանական լեզուների շրջանաբաժանման փուլերը՝ հին, միջին և նոր: Հին իրանական փուլն ընդգրկում է մ. թ. ա. II հազարամյակից մինչև IV-III դդ, միջինը՝ մ. թ. ա. IV-III - մ. թ. VIII-X դդ, իսկ նորը՝ մ. թ. 8-9-րդ դարերից մինչև մեր օրերը: Լ. Հովհան-

նիսյանի պնդմամբ, իրանական փոխառությունների սկզբնաղբյուրները տարբեր են: Դրանց մեծ մասը փոխառված են միջին իրանական լեզուներից՝ պայմանավորված լեզվական և արտալեզվական գործոններով¹:

Հայերն իրանական ցեղերի հարևանությամբ ապրել են 1600 տարուց ավելի: Հայ ժողովուրդը դարեր շարունակ համակրել է պարթևներին, որոնց թագավորությունը տևել է 476 տարի: Ազդեցիկ ուժ է ունեցել պարթևական քաղաքակրթությունն ու կրոնը: Հայաստանի և հարակից երկրների կրոնական ուղղվածությունը թեև նոր հարաբերությունների, դավանաբանական նոր գաղափարների ծնունդ տվեց, սակայն մեզանում արմատացած հեթանոսական անունները շարունակվեցին կիրառվել նույն հաճախականությամբ:

Ի տարբերություն հասարակ անունների՝ հատուկ անունների փոխառության ժամանակը որոշվում է հայ հին մատենագրության մեջ հիշատակված անվանակիրների ապրած ժամանակով: Ժամանակագրական և կիրառական տեսակետից ժառանգվել և այսօր էլ կենսունակ են հատկապես պարթևների ժամանակաշրջանից /մ. թ. ա. 250-մ. թ. 224 թթ./ ավանդված պահլավական անձնանունները: Պարսկական մշակույթի և պետական գերիշխանության այսպիսի պայմաններում փոխառված հայոց անձնանունների բառակազմական և ձևախմբային կաղապարատիպերը բնականոն ճանապարհով առաջացած, դարերի ընթացքում հղկված և սոցիալական, իրավական, պատմական օրինաչափություններով կանոնակարգված լեզվական միավորներ են: Սասանյան և պարթևական ժամանակաշրջանից ավանդված իրանական ծագման անունները /շուրջ 130/, որ քաղել ենք Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանից»², իրենց յուրօրինակ կառուցվածքով ու բովանդակային գեղեցկությամբ առանձին շերտ են կազմում հայկական անվանացանկում: Այդ անուններից 28-ը իզական են՝ կազմված հիմնականում *-անոյշ*, *-դուխար*, *-ուհի* ածանցակերպերով՝ *Արշանոյշ*, *Վարդանոյշ*, *Խոսրովանոյշ*, *Գորիդուխար*, *Սանդուխար*, *Վարազդուխար*, *Վարդանդուխար*, *Չարմանդուխար*, *Չրուանդուխար*, *Խոսրովիդուխար*, *Խոսրո-*

¹ Տե՛ս, Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990 թ., էջ 48-63:

² Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1962 թ., հ Ա-Ե:

վուհի, Համազասպուհի: Մրանք Արշակ, Չրուան, Խոսրով և այլ անուններից բաղադրված կազմություններ են, որոնք իրականում ոչ թե անձնանուն, այլ ինքնատիպ դիմելաձևեր են եղել: Անցյալում ազգային սովորության համաձայն՝ «կնոջ կամ աղջկա անունը տալն ամոթ է համարվել»³, որի պատճառով կանանց դիմել են հայրանուններով, ինչպես՝ **Արշակի աղջիկ, Չրուանի աղջիկ, Խոսրովի աղջիկ** և այլն:

Պարթևական դարաշրջանում փոխառված արական անուններն առավելապես կազմությամբ միահիմք՝ **Արշաիր Բակուր, Երուանդ, Խոսրով, Վաղարշ, Վարդան** /291 հիշ./, և **-ակ, -իկ, -ուկ, -էն** փոքրացուցիչ-փաղաքշական, մասամբ նաև **-ան, -էս** (հունաձև) վերջածանցներով բաղադիր կառույցներ են՝ **Արշակ, Վաղարշակ, Վասակ, Բաբիկ, Բաբկէն=Բաբիկ+էն, Արպաշէս, Ներսէս<Ներսէհ, Խորէն, Սուրէն, Տիգրան, Տիրան, Տիրուկ** և այլն:

Սասանյանների օրոք պարսից և հայոց սերտ հարաբերություններն սկսում են թուլանալ: Հայերն օտարվում են պարսիկներից հակադիր կրոնների դավանելու պատճառով: Սկսում են տարածվել քրիստոնեական անունները և ընդհակառակը՝ աստիճանաբար իշխող կրոնական գաղափարախոսության պատճառով էապես նեղանում է պարսից անունների փոխառության ոլորտը:

Սասանյան անունների հնչյունական-արտասանական հատկանիշները տարբեր են պարթևականներից: Գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանը, քննելով հայերենի պարսկական հնագույն փոխառությունները, փորձել է որոշել դրանց փոխառման ժամանակաշրջանը հնչյունական առանձնահատկությունների վերհանմամբ: Սակայն, ինչպես ինքն է խոստովանում, հրաժարվել է դրանից «քանի որ շատ դեպքերում տարբերակումն անհնարին է լինում»: Ըստ Հյուբշմանի՝ նախ պարթևների, ապա սասանյան ժամանակաշրջանում նույն բառի փոխառումը կարող է ի հայտ բերել համապատասխան ժամանակաշրջանին բնորոշ արտահայտման ձևեր: Նա նշում է հասարակ և հատուկ անունների մի քանի օրինակներ, որոնք փոխառվել են երկու անգամ՝ ներկայացնելով սասանական հնչյունային ձևերը հին պարսկերենի և պարթևերենի կամ պահլավերենի համեմատությամբ: Այսպես, **Արամազդ** անվան հին

³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1940 թ., I մաս, էջ 308:

թյան արգասիք են նաև **Միիր-ի** զանազան փոփոխակները, դրանով կազմված տոհմանուններն ու տեղանունները՝ **Միիրան, Չար-Միիր, Մեհեր, Միեր, Առյուծաչև Մեհեր** կամ **Մեծ Մեհեր, Մեհերիկ, Միրի, Մեհերի րոհմ, Մեհրունիք** /նախարարական րոհմ/, **Մեհերյաններ**, Աղվանից երկրի իշխող տոհմերից՝ **Միիրական** կամ **Միիրեան, Միրհավան** /Աղվանից աշխարհում/, **Մեհերի բերդ, Մեհերի րապան**, /Սասունում/, **Մեհերի դուռ** /Վասպուրականում/ և այլն: Նրա անունով է կոչվում 7-րդ ամիսը՝ **Մեհեկան, Մեհեկին**: Յուրաքանչյուր ամսվա 8-րդ օրը կոչվում էր **Միր**:

Հեթանոսական հավատքի ծնունդ են նաև **Անահիպ, Արամազդ, Ռրմիզդ** աստվածանուններից առաջացած տեղանունները՝ **Անահրասարոռ, Անահրա գավառ, Անահրական, Անահրաչոր, Գյուլ Անահիպ, Ռրմզդական դից մեհյան, Ռրմզդական գավառ** կամ **Ռրմզդպերոժ, Տուն Արամազդա, Արամազդի մեհյան, Արամազդի լեռնանցք** և **Արամազդի լեռնագագաթ**:

Պարսկերենի ազդեցությունը, սկսած մ. թ. 11-րդ դարից, շարունակվում է, սակայն, ոչ թե ուղղակի, այլ անուղղակի ճանապարհով:

12-15-րդ դդ. փոխառված իրանական անճանաչունների կաղապարատիպերը կառուցվածքային և իմաստային տեսակետից խիստ տարբերվում են նախորդ փուլի կազմություններից: Հայկական անունների համակարգի այս կարգի փոփոխությունը և՛ լեզվական, և՛ արտալեզվական գործոնների արդյունք է: Հայ և պարսիկ ժողովուրդները նախ ընկնում են արաբական տիրապետության ներքո: Ապա հայերը ենթարկվում են թուրք-սելջուկների և թուրքերի տևական քաղաքական ճնշմանը: Սակայն պարսկերենի ազդեցությունը չի դադարում, այլ հակառակը՝ այն ուժեղանում է արդեն արաբերենի և թուրքերենի միջնորդությամբ: Հայերեն մուտք գործած այդ անունները կազմությամբ հիմնականում երկբաղադրիչ են, որոնք բաժանվում են երկու տիպի՝ գուտ պարսկական հիմքերով կազմված և խառնածին կամ հիբրիդ անուններ: Խառնածին տիպի անունների մի եզրը պարսկերեն է, մյուսը՝ թուրքերեն կամ արաբերեն: Երկիմբ այս անուններում կենսունակ են **գուլ** «վարդ», **շահ** «բագավոր», **խոնդ**, **խոսանդ** «տեր», **ջան** «հոգի», **ջիհան** «աշխարհ» եզրույթներով կազմությունները, օրինակ՝ **Բաղչազուլ** «այգու վարդ», **Գուլգադա** «վարդածին» **Գուլնար** «նուան ծաղիկ», **Գուլվարդ** «վարդագույն

վարդ», **Խոնդրար** «գործի տեր» **Մերանգույ** «իշխանների վարդ» **Ջան-խոշ** «քաղցր հոգի», **Ջիհանբաշի** «նա, որին Աստված պարզև է տվել աշխարհին», **Խոդաբաշի** «աստվածամկեր» և այլն:

Հիբրիդային կազմության անունները բաղադրված են հիմնականում՝ ա) բուրբերեն **դասարա՝ Գուլդասարա** «վարդափունջ», **բեզի՝ Գուլբեզի** «վարդիշխան», **բուդադ՝ Գուլբուդադ** «վարդի ճյուղ», **խանում՝ Գուլխանում** «վարդտիկին», **վերդի՝ Շահվերդի** «արքայատուր», **Խոդավերդի** «աստվածատուր» և բ) արաբերեն **նազար՝ Գուլնազար** «վարդահայացք», **դարիբ՝ Ղարիբջան** և այլն արմատներով:

Կան նաև միահիմք, ինչպես նաև բուրբական -սո ածանցակերպով բաղադրված սակավադեպ անուններ՝ **Գիլբար** «սրտագրավ, գեղեցիկ», **Բարիսուդար** «բախտավոր», **Թամրազ** «կատարյալ», **Թարխան** «պալատական աստիճանավոր», **Խուրշիդ** «արեգակ», **Փիրում** - փիր «ծերունի, սուրբ» + թրք. -ում ստացական հոդ՝ «իմ սուրբը, իմ ծերունին» և այլն:

Իբրև ինքնակա, անկախ լեզվական միավորներ վերոնշյալ միահիմք և երկհիմք անունները գրեթե կիրառական չեն, կենսունակ են, սակայն, հայկական ազգանուններում՝ **Բարիսուդարյան, Գուլգադյան, Գյուլնազարյան, Գանջումյան, Գիլբարյան, Թամրազյան, Խոջամիրյան, Խոդավերդյան, Խոնդիարյան, Խոդաբաիշյան, Խուրշուդյան, Մեհրաբյան, Մերանգույյան, Շահվերդյան, Շահնազարյան, Փիրումյան** և այլն:

Հայկական ազգանունների ծնունդ են տվել նաև մի շարք պահլավական անուններ՝ **Արշակյան, Բագրատյան, Խոսրովյան, Սուրենյան, Տիգրանյան** և այլն:

Պարսկերենից փոխառված անունների պատմական քննությունը հանգեցնում է հետևյալին՝

1. Այս անունները բաժանվում են չորս խմբի՝

ա) պարզ հասարակ անունների փոխանցումով առաջացած անձնանուններ՝ **Աշխէն** «թուխ, կապտագույն կամ կանաչավուն», **Նուարդ** «ընձա, պարզև», **Բախշի** «մկեր, պարզև», **Բլբուլ** «սոխակ»....

բ) օտար քերականական –սո, -ան ձևությամբ բաղադրված հասարակ և հատուկ անուններից առաջացած անձնանուններ՝ **Գանջում**

«գանձ», **Միրում** «իշխան», **Շահում** «թագավոր», **Գուլան** «վարդեր», **Մարդան** «մարդ, տղամարդ»+an հոգնակերտ, **Միրան** «իշխաններ»...

զ) երկհիմք հասարակ անուններից առաջացած խառնածին անձնանուններ՝ **Խորդիկին** «արևտիկին», **Խորիջան** «գեղեցիկ հոգի», **Գուլակի** «ոսկեվարդ»...

դ) այնպիսի անձնանուններ, որոնք իբրև հատուկ անուն կիրառական են եղել պարսկերենում՝ **Անոյշ** «անմահ, քաղցր», **Արքաշէս** «արդարությամբ իշխող», **Արշաիր** «տղամարդ», **Արքաազո** «որի արդարությունը հաստատուն է», **Գուրգէն** «գայլի պես քաջ», **Խոսրով** «բարեհամբավ», **Սուրէն** «ուժեղ, գորավոր», **Հրահայր** /այսօր էլ գործածական է պարսիկների մեջ/. **Բարխուդար**, **Գուլնազար**, **Թամրազ**, **Թարխան**, **Նարինան** «քաջասիրտ» /տարածված անուն պարսկերենում/, **Նիազ** «աղաչանք», **Շահոյ** /ժ դ./...

2. Անձնանունների փոխառության պատճառներից մեկը արտալեզվական գործոնն է: Այն քաղաքական, կրոնական և մշակութային ազդեցությունների արդյունք է:

3. Յուրաքանչյուր փոխառված օտար անուն ենթարկվում է տվյալ լեզվի հնչյունական և ձևաբանական օրենքներին՝ ստանալով համապատասխան հնչյունական պատկեր՝ **Աշխէն** < Ախշէն, **Բախշի** < **Բախշիշ**, **Խոդաբախշ** < **Խոդաբաշխ**, **Հրահայր** < **Ֆրահայր**, **Մանուշար** < **Մանանհիր**, **Մեկր** < **Միկր**, **Շիրազ** < **Շիրազադ** (հնչյունների ամփոփում), **Ներսէս** < **Ներսէհ** և այլն:

4. Բառակազմական ձևույթներն իմաստափոխվում են՝ վերածվելով զուտ անձնանվանակերտների: Օրինակ, փոքրացուցիչ-փաղաքշական -**ակ**, -**իկ**, -**ուկ**, և -**էն** իրանական ծագման վերջածանցները նվազական իմաստով այլևս չեն գիտակցվում՝ **Արսէն**, **Բարկէն**, **Գուրգէն**, **Խորէն**, **Սուրէն**, **Խոնդիկ**, **Խոջիկ**, **Խոսրովիկ**, **Բարիկ**, **Բազրապուկ**:

Անձնական վերաբերմունքի գնահատողական ածանցներից անդրադառնալով՝ Գ. Ջահուկյանը գտնում է, որ իրանական -ակ, -իկ, -ուկ ածանցները, որոնք ակտիվ անձնանվանակերտներ և տեղանվանակերտներ են, տարածվել են հին հայերենում՝ իրենց նախատիպը ներկայացնող հնդեվրոպական -ko- /հայերենում՝ -ք/ ածանցի՝ այդ շրջանում

այլևս գործածական չլինելու հետևանքով: Ուստի ծագումնաբանորեն այս ածանցները հնդեվրոպական են՝ իրանական փոխանցումով⁶:

Վերաբերմունքային քերականական իմաստ արտահայտող ածանցակերպեր են նաև **-անոյշ** և **-ջան** բաղադրող հիմքերը, որոնք իրենց նյութական բառային իմաստներին զուգահեռ արտահայտում են նաև վերաբերական իմաստ՝ **Մորիջան, Օհանջան, Արշանոյշ, Վարդանոյշ**:

5. Ուսումնասիրվող անձնանվանահիմքերի իմաստաբանական դաշտը հիմնականում ընդգրկում է՝

ա) բուսական աշխարհի անուններ՝ **Ասին** /յասմիկ/, **Քաղամ** «նուշ» **Գուլ** «վարդ»...

բ) կենդանաբանություններ՝ **Արշակ** «արջուկ», **Բլբուլ, Շահէն** «բազե», **Շահիկ, Շաւարշ** «արու ձի» **Շիրսազ** «առյուծածախն», **Վազգէն** «գորտ», **Վարսազ**...

գ) բնություն, բնության երևույթների անվանումներ՝ **Խորէն** «արևիկ», **Խորշիդ** «արեգակ», **Մեհրաբ** «արևափայլ»...

դ) դիցանուններ կամ աստվածանուններ՝ **Քազարապ/Քազրապ** «աստծու տվածը», **Տրդապ** «Տիր աստծու տվածը», **Քակուր** «աստվածորդի», **Խուդարախշ** «աստվածանվեր», **Մեեր, Մերուծան, Վռամ/Վահագն**-ից/...

ե) մարդ, մարդկային հատկանիշներ նշանակող անուններ՝ **Սուրէն/Սուրիկ** «ուժ», **Քահաղուր** «քաջ», **Քաբ, Քաբիկ** «հայրիկ», **Խոջա** «տեր», **Խոսրով** «բարեհամբավ», **Միրան** «իշխաններ»:

6. Գրավոր աղբյուրներով մեզ հասած բազմաթիվ անուններ պատկանել են հատկապես թագավորների, թագուհիների, իշխանական կամ նախարարական տների սերունդների, որոնց անուններով և տեղանվանակերտ ձևույթներով ստեղծվել են **Վաղարշապատ, Արշակուան, Երուանդաշատ, Տիգրանակերպ** հնագույն քաղաքանունները՝ ի պատիվ այդ անունները կրող հայ թագավորների:

7. Անունների լեզվական տեղեկատվությունը չի սահմանափակվում միայն նրա լեզվական պատկանելությամբ, այն կարող է միաժամանակ տեղեկություն հաղորդել նրա աշխարհագրական տարածվածության վե-

⁶ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987 թ., էջ 232:

րաբերյալ: Օրինակ, **Գուլիսպան**-ը տարածված էր Արցախում /նաև տեղանուն, **Գուլիսպանի Ս. Ամենափրկիչ** վանք/, **Գուլիկ**, **Գուլբեսեր**, **Գուլիզար** անունները տաճկահայերի մոտ և այլն: Տավուշում անցյալ դարում գործածական էին **Գյուլխանում**, **Գյուլվարդ**, **Թարխան**, **Նարինան**, **Շահնար**, **Բահշի**, Շիրակում՝ **Գուլնար** անունները:

8. Եթե վաղնջական ժամանակներում փոխառված անունները գերազանցապես միափոխ են, ապա 12-15-րդ դարերում փոխառվածներն առավելապես երկփոխ են՝ պահպանված գրեթե միայն ազգանուններում: Իրենց հաճախակաճությունը կենսունակ և հարակա են, այսպես կոչված, պահլավական անունները, շեշտված ազգային գունավորմամբ. դրանք հայոց թագավորների և թագուհիների, կամ նշանավոր այլ անձանց անուններն են, որոնք հայկական են թվում: Ինչպես արձանագրում է Հր. Աճառյանը, պարսիկներն, ընդունելով մահմեդականությունը, ջնջեցին սեփական գիրն ու որդեգրեցին արաբական այբուբենը: Հրաժարվեցին իրենց այս անուններից՝ վերցնելով արաբական անձնանուններ: Արդյունքում՝ պարսիկները կրում են արաբական, հայերը՝ պարսկական անուններ: Դրանով իսկ վաղ շրջանի իրանական անունների հայկականացման գործընթացը հասնում է իր ավարտին, իսկ այդ անունները դառնում են հայերի սեփականությունը:

Բանալի բառեր - *հայկական անձնանուն, անձնանվանահիմք, անձնանվանակերպ անձանցներ, փոխառյալ կազմություններ, իստոնաժին անուններ, պահլավական անձնանուններ:*

ХАЧАТРЯН А. - **Займствованные персидские антропони́мы в армянском языке.** В армянских именах преобладают заимствованные персидские имена, что обусловлено этнической, культурной и политической близостью армян и древних персов. Эти имена были заимствованы в глубокой древности – в пахлавийские и сасанидские времена (IV – VII д. н. э.). Однако основная часть антропонимов была заимствована в пахлавийский период. Весьма малочисленны имена из эпохи сасанидов (III – VII н. э.), поскольку взаимоотношение армян и персов ослабевают именно в это время.

Третья волна заимствований началась с VII века и длилась до XVI века. Из всех персидских антропонимов в настоящее время продуктивными оказались только пахлавийские имена, остальные были вытеснены и сохранились как антропонимы в диалектах. Однако многие из них сохранились в армянских фамилиях, которые более консервативны.

Ключевые слова: *армянский антропоним, антропонимические основы, антропоним образующие суффиксы, заимствования, гибридные образования, пахлавийские антропонимы.*

Khachatryan A. - Borrowed persian anthroponyms in the armenian language. In the Armenian names prevail borrowed Persian name, which is due to the ethnic, cultural and political proximity to the ancient Persians and Armenians. These names were borrowed in ancient times - in pahlavy and Sassanian era (IV - VII d. N. E.). However, the bulk of borrowings in anthroponyms was pahlavy period. Quite few names from the Sassanid era (III - VII BC. E.)

The third wave began borrowing from the VII century and lasted until the XVI century. Of all the Persian anthroponyms in the present time, there were only productive pahlavy names others remained in dialects. However, many of them are preserved in Armenian surnames, which are more conservative.

Keywords: *Armenian anthroponym, anthroponymic bases, anthroponym forming suffixes, borrowing, hybrid stucturs, pahlavy anthroponyms.*

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

*Կարասպեղյան Սիրարսիի
(Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ)*

Լեզուների զուգադրական քննությունը միշտ եղել և մնում է լեզվաբանական ուսումնասիրությունների կարևոր բնագավառներից մեկը: Ինչպես այլ լեզուների, այնպես էլ անգլերենի ու հայերենի զուգադրական քննությունը հնարավորություն է տալիս առավել խորությամբ ուսումնասիրելու երկու լեզուների ընդհանրություններն ու տարբերությունները, որն ունի շատ կարևոր տեսական ու գործնական նշանակություն լեզուների ուսումնասիրության ու դասավանդման հարցում: Անգլերենն ու հայերենը մերձավոր ցեղակցություն չունեն, սակայն պատմական զարգացման տեսակետից նման են, քանի որ համադրական կառույցները վերափոխվել են վերլուծականների, հայերենը ձեռք է բերել կցականության և անջատականության տարրեր, իսկ անգլերենը հիմնականում անցել է անջատականության՝ թեքականության որոշ դրսևորումներով:

Ինչպես բոլոր լեզուները, այնպես էլ հայերենն ու անգլերենը ունեն բառեր կազմելու իրենց եղանակները: «Փաստերը ցույց են տվել, որ հայոց լեզուն իր գոյության ողջ ընթացքում չի բավարարվել պարզ կամ արմատական բառերի գործածությամբ, այլ անհրաժեշտաբար նրանց հետ մեկտեղ և նրանց հիմքի վրա ստեղծել ու շարունակում է ստեղծել բազմաթիվ ու բազամաքանակ բաղադրյալ բառեր»:¹ Նոր բառեր կազմելու ամենատարածված եղանակը հայերենում բառաբարդումն է: Հայ լեզվաբանության մեջ *բառաբարդում* հասկացությունը, ինչպես և բառակազմական այլ եզրույթներ ստացել են տարբեր մեկնաբանություններ՝ սկսած Մ. Աբեղյանից մինչև օրս: Այս հոդվածի մեջ մենք մանրամասնորեն չենք անդրադառնա դրանց քննությանը. նշենք միայն, որ բառա-

¹ Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1990, էջ 45:

բարդման բնորոշման մեջ առաջնորդվել ենք Է. Աղայանի² և Լ. Հովսեփյանի³ սկզբունքներով:

Ի տարբերություն նախորդ հետազոտողների՝ Է. Աղայանը առաջին անգամ գործածել է *տիպ* անվանումը, բայց դրան տերմինային արժեք չտալով՝ այն կիրառել է բառերի կազմության զանազանությունները տարբերակելու համար: «Հիմնվելով ամենարճիհանուր բառակազմական հատկանիշների վրա՝ ժամանակակից հայերենի բոլոր բաղադրությունները կարելի է բաժանել երեք տիպի՝ վերլուծական, համադրական և հապավական»:⁴ Է. Աղայանը բարդություն է համարում միայն համադրական բարդ բառերը՝ դրանց մեջ տարբերակելով բուն կամ իսկական բարդությունները և կցական բարդությունները, իսկ մեկ բառի արժեք ունեցող մնացած բոլոր կարգի կապակցությունները, մանավանդ վերլուծականները, անվանում է բաղադրություններ⁵:

Այս տեսակետն է առաջադրել նաև Լ. Հովսեփյանը. ըստ նրա՝ վերլուծական կառույցներն առհասարակ չպետք է մտցնել բարդությունների մեջ, քանի որ դրանք առաջանում են «բառակազմական բոլորովին այլ, անկախ եղանակի՝ հարադրման հետևանքով, որի արդյունքում ստացվող բարդությունները պետք է կոչել հարադրություններ (ի տարբերություն բարդությունների և ածանցյալների), իսկ բաղադրիչները՝ հարադիրներ»⁶: Հարադրությունների բաղադրիչները պահպանում են իրենց ինքնուրույն քերականական իմաստը, ունեն անջատ գրություն, տեղափոխելի են և այլն:

Ըստ բառակազմական եզրույթներիի՝ Լ. Հովսեփյանի առաջարկած դասակարգման՝ *տիպ* եզրույթով նկատի է առնվում «բառերի կազմության ամենաէական կառուցվածքային հատկանիշը՝ բաղադրիչների կցման սկզբունքը...»⁷: *Եղանակ* տերմինը, ըստ նրա, բնութագրում է այն գործընթացը, որի արդյունքն են բաղադրյալ բառերը:

² Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 266:

³ Լ. Հովսեփյան, Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ (Ջահուկյանական ընթերցումներ, 4), Եր., 2009, էջ 107:

⁴ Էդ. Ք. Աղայան, նշվ. աշխ., էջ 220-221:

⁵ Տե՛ս Գ. Վարդանյան, Ժամանակակից հայերենի անվանական վերլուծական բառակազմությունը, Եր., 2010, էջ 12:

⁶ Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., Եր., 2009, էջ 107:

⁷ Տե՛ս Լ. Ս. Հովսեփյան, նշվ. աշխ., Եր, 2009, էջ 105:

Այսպիսով, հայերենի զարգացման բոլոր փուլերում բառակազմության համակարգում գործել են երկու՝ համադրական և վերլուծական տիպերը. բառակազմության համադրական տիպին են պատկանում երկու հիմնական եղանակները՝ բառաբարդումն ու ածանցումը, երբ արդյունքում ստացվում են միաձույլ բառեր՝ հիմնական ու երկրորդական ձևույթների տարբեր գուգորություններով, իսկ բառակազմության վերլուծական տիպին հատուկ են հարադրումն ու կրկնումը⁸:

Ժամանակակից անգլերենը, ինչպես և հայերենը, հարուստ է բառակազմական միջոցներով, այդ թվում՝ բառածանցումը (affixation), բառաբարդումը (compounding, composition), փոխակարգությունը (conversion), հապավումը (abbreviation): Անգլերենում կան նաև երկրորդական բառակազմական միջոցներ, ինչպիսիք են հնչյունափոխությունը (sound interchange), շեշտափոխությունը (stress interchange), մնանաձայնությունը (sound imitation), ձուլույթը/բառ-ձուլույթը (blending), հետադարձ բառածանցումը (backformation):

Անգլերենի զարգացման ողջ պատմության ընթացքում բառածանցումը կամ մասնիկավորումը եղել է բառակազմական ամենատարդյունավետ միջոցներից մեկը: Ինչպես հայտնի է, «բառածանցումը ամենատարբեր հիմքերին բառակազմական ածանցների ավելացմամբ նոր բառեր ստանալու միջոց է»⁹: Անգլերենում բառածանցումը բաժանվում է երկու տեսակի՝ նախածանցում (prefixation) և վերջածանցում (suffixation): Կան գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և այլ խոսքի մասեր կերտող վերջածանցներ, օրինակ՝ -er, -ism, -ity, -sion, -ation, -ence, -ance, -ure, -cal վերջածանցների օգնությամբ կարելի է տարբեր խոսքի մասերից կերտել գոյականներ, ինչպես work-worker, criticize-criticism, creative-creativity, collide-collision, accuse-accusation, consequent-consequence, appear-appearance, psychology- psychological կամ -ous, -able, -less, -ful, -al, -ic, -ical, -ish, -like, -y, -ly, -ary վերջածանցներով կարող ենք կերտել ածականներ, ինչպես՝ nerve-nervous, breath-breathable, use-useless, skill-skillful, accident-accidental, photograph-photographic,

⁸ Տե՛ս **L. U. Հովսեփյան**, նշվ. աշխ., Եր, 2009, էջ 106-107:

⁹ Տե՛ս **R. S. Ginzburg, S. S. Khidekel, G.Y. Knyazeva, A. A. Sankin**, A Course In Modern English Lexicology, Moscow, 1979, p. 114.

practice-practical, fool-foolish, child-childlike, rain-rainy, friend-friendly, custom-customary: Կան նաև մի շարք բայակերտ, մակբայակերտ, թվականակերտ վերջածանցներ, ինչպես՝ *ize-modernize* (արդիականացնել, այժմեացնել), *-ly-perfectly* (կատարելապես), *teen-sixteen* (տասնվեց) և այլն:

Բառածանցման մյուս տեսակը՝ նախածանցումը, անգլերենում հիմնականում բառի բառային, այլ ոչ թե խոսքիմասային իմաստը փոխող միջոց է, օրինակ՝ *like* բառին *-dis* ժխտական նախածանցն ավելացնելով՝ ստանում ենք *dislike*՝ «չսիրել, չհավանել» բայը, ինչպես տեսնում ենք, այն չի վերածվում այլ խոսքի մասի, պարզապես փոխվում է դրա բառային իմաստը:

Բառաբարդումն անգլերենի երկրորդ ամենատարածված բառակազմական միջոցն է: Բառաբարդումը կարելի է պատկերել հետևյալ ընդհանուր բանաձևով՝ «բառահիմք +բառահիմք¹, քանի որ բարդ բառի երկու կամ ավելի բաղադրիչները սերող հիմքեր են, որոնք կամ պարզ արմատներ են (*foot + ball, arm + chair, boy + friend*) կամ ամանցավոր (*pen + holder, watch + maker*)¹⁰:

Ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում կան և՛ համադրական, և՛ վերլուծական տիպի կառույցներ:

Անգլերենում, ըստ բարդության բաղադրիչների կապվածության աստիճանի, ձևի և կազմության, առանձնացվում են բարդության հետևյալ տեսակները¹¹.

1. Բարդություններ, որոնք կազմվում են պարզ արմատների՝ անածանց հիմքերի միացմամբ¹², որոնք գրվում են կամ գծիկով, կամ առանձին, կամ միասին, ինչպես, օրինակ՝ *windowshop, postman, ball-point, baggage hall, mother tongue*.

¹⁰ Գ. Ս. Գիրունյան, Անգլերենի բառագիտության հիմունքներ, Եր., 2009, էջ 124:

¹¹ Անգլերենի բառակազմությունը սույն հոդվածում ներկայացվում է անգլերենի լեզվական կառուցվածքի նկարագրության մեջ ավանդաբար ընդունված դասակարգումների և տերմինների համաձայն, որոնք, բնականաբար, տվյալ դեպքում չեն համընկնում հայերենի բառակազմության վերը նշված մեր սկզբունքներին և դասակարգմանը:

¹² Տե՛ս Գ. Ս. Գիրունյան, նշվ. աշխ, Եր., 2009, էջ 124

2. Բարդածանցավոր բառեր (derivational compounds)¹³, որոնց բաղադրիչներից մեկն անցանցավոր բառ է, իսկ մյուսը՝ պարզ, ինչպես՝ soft-hearted, old-timer, bow-legged, war-minded, teenager և այլն: Այսպիսի բարդությունների երկրորդ բաղադրիչը չի կարող հանդես գալ որպես ինքնուրույն բառ, արտահայտել ինքնուրույն իմաստ: Այսինքն՝ *legged, hearted, timer, minded, ager* բառեր առանձին գոյություն չունեն (սրանք առաջացել են բառակազմական մեկ քայլի ընթացքում՝ բառահիմքերի և անցանցների միաժամանակյա կցումով (համակցական եղանակ) կա նաև հայերենում՝ *միտրանի, հինգգլխանի, համաժամանակյա* և այլն), բայց, օրինակ, այսպես կոչված *հալորակ* («*իսկական*») բարդություններում (*compound words proper*), թեև կրկին մի բաղադրիչն անցանցավոր բառ է, սակայն այն կարող է հանդես գալ իբրև առանձին բառ, օրինակ՝ *word processor*. այս բարդությունում *processor* բառը չի կորցրել իր ինքնուրույնությունը:
3. Այսպես կոչված բաղադրական ձևայնությամբ (ձայնավորով կամ բաղաձայնով)¹⁴ բարդություններ՝ morphological compounds with a vowel or a consonant as a linking element, որոնց կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերն իրար են միացած կամ *o, i* ձայնավորով, կամ *s/z* բաղաձայնով, ինչպես, օրինակ, *speedometer, handicraft, tragicomic, bridesmade, saleswoman, sportsman* բառերում¹⁵: Օ հրնչյունի օգնությամբ կապակցված բարդությունները հիմնականում գիտական եզրույթներ են, ինչպես՝ *filmography, sociolinguistics, technophobia, videophone*¹⁶: Սրանք նման են հայերենի հոդակապավոր բարդություններին. այսպիսի կառույցները թեև բնորոշ են ազերենին, սակայն խորքային իմաստ

¹³ Տե՛ս Գ. Ս. Գիրունյան, նշվ. աշխ, Եր., 2009, էջ 126:

¹⁴ И. В. Арнольд, Лексикология современного английского языка, Москва, 1986, стр. 123.

¹⁵ Տե՛ս R. S. Ginzburg, S. S. Khidekel, G.Y. Knyazeva, A. A. Sankin, A Course In Modern English Lexicology, Moscow, 1979, էջ 149:

¹⁶ Սրանց բաղադրիչները փոխառված են դասական լեզուներից. լինելով մնացուկային տարրեր՝ սրանք արտացոլում են լեզվի զարգացման ավելի հին վիճակը:

տով անգլերենի բառակազմական գործընթացներին չեն մասնակցում, այլ ավելի դիպվածային բնույթ են կրում:

4. Շարահյուսական բարդություններ՝ syntactic compounds, որոնց բաղադրիչները իրար են կապված շարահյուսական կանոնների համաձայն: Այսպիսի բարդություններն առանձին, պատրաստի արտահայտություններ են, որոնք կազմված են հողերից, նախադիրներից, մակբայներից, օրինակ՝ *here-and-now*, *free-for-all*, *do-or-die*.
5. Կրկնավոր բարդ բառեր (reduplicative compounds), ինչպես օրինակ՝ *fifty-fifty* «հավասար, կես-կես», *hush-hush* «գաղտնի, ծածուկ», *hurdy-burdy* «իրարանցում, շփոթ», *hanky-panky* «անգարարություն», *artsy-fartsy* «հավակնոտ» և այլն: Կան նաև հընչյունափոխված կրկնավոր բարդ բառեր, ինչպես՝ *shilly-shally* «անվճռականություն», *sing-song* «միօրինակ, միալար», *tip-top* «հիանալի, առաջնակարգ»: Ակնհայտ զուգահեռներ կարելի է անցկացնել սրանց և հայերենի կրկնավորների միջև, որոնք նույնպես լինում են անհնչյունափոխ, օրինակ՝ *գույգ-գույգ*, *մեծ-մեծ*, *հինգ-հինգ*, *ջոկ-ջոկ*, և հնչյունափոխված, օրինակ՝ *չեկ-չուն*, *հայ-հույ*, *առոք-փառոք* և այլն: Հայերենում կան նաև նախդրավոր կրկնավորներ, որոնց բաղադրիչներն իրար հետ կապվում են գրաբարյան *առ*, *ընդ*, *ի* նախդիրներով¹⁷: Այդպիսի բարդություններից են, օրինակ՝ *րոպե առ րոպե*, *շար ի շար*, *մեջ ընդ մեջ* և այլն: Անգլերենում նույնպես կան նախդիրներով կազմված կրկնավորներ, օրինակ՝ *to* նախդրով՝ *heart-to-heart* «մտերմիկ, անկեղծ», *day-to-day* «ամենօրյա», *in* նախդիրով՝ *arm-in-arm* «թև թևի», *on* նախդրով՝ *chest-on-chest* (*ամրկ.*) «բարձր կոնոդ՝ արկղերով/դարակներով պահարան», *by* նախդրով՝ *step-by-step* «քայլ առ քայլ» և այլն:
6. Բարդություններ, որոնց բաղադրիչներից մեկը հանդես է գալիս կրճատ ձևով (compounds with a shortened/clipped base)¹⁸, ինչպես *T-shirt*, *TV-show*, *DVD-player*, *V-day* (*Victory day*) և այլն:

¹⁷ Տե՛ս Ա. Ս. Մարգարյան, նշվ. աշխ., Եր., 1990, էջ 64:

¹⁸ Տե՛ս Գ. Ս. Գիրունյան, նշվ. աշխ., Եր., 2009, էջ 124:

Հայերենն աչքի է ընկնում բառակազմական հարուստ կադապարներով: Կան գոյականական, ածականական, մակբայական, թվականական, դերանվանական հիմքերից ածանցված կադապարներ: Գոյականական հիմքերից ածանցված կադապարները նշանակալից տեղ են գրավում և՛ անգլերենում, և՛ հայերենում. հետևաբար սա երկու լեզուների համար կարող է լինել տիպաբանական հատկանիշ: Ինչպես հայերենի, այնպես էլ անգլերենի բառակազմական համակարգում բարդ բառերի իմաստային վերլուծությունը ցույց է տալիս, որ բարդության մեջ եղած բաղադրիչների փոխհարաբերությունները կարող են լինել համադասական (coordinative or copulative, additive) և ստորադասական (subordinative or determinative)¹⁹: Համադասական բաղադրիչներով բարդություններում բառի բաղադրիչները իմաստային տեսանկյունից միմյանց համարժեք են կամ պատկանում են միևնույն խոսքի մասին²⁰, իսկ ստորադասական բաղադրիչներով բարդություններում բաղադրիչներից առաջինը լրացնում է երկրորդի իմաստը: Հայերենում ստորադասական բաղադրիչներով բարդություններում գերադաս բաղադրիչը անվանական է, կամ բայական: Անվանական գերադաս բաղադրիչներով բարդությունների շարքում մեծ տեղ են գրավում որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի շարահյուսական կապակցությամբ բարդ բառերը: Ստորադաս բաղադրիչներով այս բարդություններում իմաստային միջուկը երկրորդ անդամն է. որոշիչ-որոշյալ կապակցությամբ բարդությունների դեպքում՝ որոշյալը, իսկ հատկացուցիչ-հատկացյալ կապակցությամբ բարդությունների դեպքում՝ հատկացյալը. երկուսն էլ սովորաբար արտահայտվում են գոյականով: Որոշիչ-որոշյալ կապակցությամբ բարդությունների օրինակներ են հայերենում՝ *ածխանկար, գվարթաշայն, խոսրովանահայր, հարյուրաբերան, յուրակերպ* և այլն, իսկ անգլերենում ունենք *armchair, bluebird, everything, hundredfold, passport* և այլն: Հատկացուցիչ-հատկացյալ կադապարով բարդ բառեր են հայերենում, օրինակ՝ *ծառաբուն, նարնջահյութ, վարդաբերք*: Անգլերենում՝

¹⁹ Տե՛ս **R. S. Ginzburg, S. S. Khidekel, G.Y. Knyazeva, A. A. Sankin**, A Course In Modern English Lexicology, Moscow, 1979, p. 146:

²⁰ Տե՛ս **Ռ. Խ. Մկրտչյան**, Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», Եր., 1977, էջ 118:

apple pie, orange juice և այլն: Անգլերենում, ի տարբերություն հայերենի, դժվար է տարբերակել բառը բառակապակցությունից. անգլերենում կան այնպիսի կառույցներ, միավորներ, որոնք բառի ու բառակապակցության անցումային շրջանում գտնվող միավորներ են:

Այս և նման այլ հարցերի զուգադրական քննությունը երկու լեզուների համար ունի ոչ միայն կառուցվածքային, այլև տիպաբանական ընդհանրությունների որոշման նշանակություն:

Քանալի բառեր - *Բառակազմություն, զուգադրական քննություն, քարդություններ, գոյականական հիմքերով բաղադրություններ, եղանակ, տիպ, կաղապար, բառաքարդում, բառածանցում, նախածանց, վերջածանց:*

Сирарпи Карапетян - Сложения с субстантивными основами в армянском и английском языках. Модели словосложений с субстантивными основами занимают значительное место в словообразовательных системах как английского, так и армянского языков, следовательно, это является типологически значимой особенностью для этих языков. В статье рассматриваются общие и различительные черты словообразования армянского и английского языков, представляется классификация типов сложений в английском языке, приводятся соответствующие параллели в словосложении армянского языка. Рассматриваются также основные словообразовательные средства исследуемых языков. Синтетические и аналитические конструкции в словообразовании обоих языков исследуются также с точки зрения синтаксической связи между их компонентами.

Ключевые слова: *Словообразование, сопоставительный анализ, сложные слова, сложения с субстантивными основами, способ, тип, модель, словосложение, аффиксация, префикс, суффикс.*

Sirarpi Karapetyan - Compounds with Noun Bases in the Armenian and English Languages. The models composed of noun bases are numerous in the Armenian and English word formation systems, that is why it's an important typological feature for both languages. The article deals with the common and

distinctive features of English and Armenian word-building; a classification of English compounds is given and at the same time parallels are drawn between them and Armenian compounds. The main means of word-formation in both languages are also examined. The synthetic and analytical compositions in both languages are analyzed also from the point of view of the syntactic connection between their components.

Keywords: *Word formation, contrastive analysis, compound words, compounds with noun bases, means, type, pattern, compounding, affixation, prefix, suffix.*

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՉԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԳՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ¹

Հանանյան Գաղթուհի
(ԵՊՀ)

Հայտնի է, որ զարտուղությունները համակարգային միավորների հարացուցային ձևերի մեջ չմտնող իրողություններ են, գոյություն ունեն լեզվի բոլոր դրսևորումներում, «...մեծ խմբերի մեջ չեն մտնում, այլ ձևերի համաբանությամբ չեն կազմվում, և խոսողը դրանք կարող է կազմել միայն ուրիշներից սովորելով...»²:

Բայական զարտուղությունները հայերենում հիմքակազմության, խոնարհման տիպերի, դրական ու ժխտական ձևերի, հիմքերի ու դիմաթվանիշ վերջավորությունների զուգորդումների՝ տվյալ տարածքում կամ պատմական զարգացման տվյալ շրջանում հարաբերականորեն ամրակայված ձևերից շեղումներն են:

Հին հայերենի անկանոն կամ զարտուղի բայերն էին՝ *գալ, երթալ, ըմպել, լինել, ունել, ուրել, առնել, դնել, երդնուլ, լսել, ւրալ, ճանաչել, մեղանչել, յանցանել, յառնել, ասել, բերել, հանել, հեղուսել, նարել(ի), բանալ, բառնալ, դառնալ, քանալ, զգենուլ, ընթեռնուլ, ընկենուլ, լնուլ, խնուլ, յենուլ, ասել, գիրել, կարել, մարթել, մերկել, գբալ, խիթալ, յուսալ, փութալ, գոռալ, գրգալ, դլալ, դողալ, եռալ, գեռալ, խանդալ, խեթալ, խոկալ, հոգալ, շողալ, ողբալ, ոռնալ, որսալ, պիրալ, ջանալ, սգալ, սիգալ, ցնծալ*³: Այս բոլոր բայերի անկանոնությունները հիմնականում դրսևորվում են կատարյալի հիմքում և նրանից կազմվող ձևերում: Սրանցից որոշ բայեր շեղվում են հիմքակազմության՝ գրաբարում կանոնակարգված օրինաչափություններից (ցոյականի փոխարեն արմատական կամ արմատականի փոխարեն ցոյական հիմքեր), որոշ բայեր՝ խոնարհման օրինաչափ տիպերից (ներգործակերպի փոխարեն կրավորակերպ

¹ Չեկուցումը ներկայացվել է «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» 2012 թ. գիտաժողովում:

² Մ. Ասատրյան, Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր, հատ. Գ., Ե., 1977, էջ 94:

³ Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Ե., 1976, էջ 332-338:

խոնարհվում կամ՝ հակառակը), որոշ բայեր էլ միաժամանակ և՛ հիմքակազմության, և՛ խոնարհման տիպերի գործող օրինաչափություններից (յանցանել, յառնել, մեղանչել): Հիմքակազմության յուրահատուկ շեղումներ են տարարմատ անկանոնությունները, որոնք Հր. Աճառյանը դիտում է իբրև հոմանիշային ձևերի նախընտրելիության արտահայտություն՝ «...նշանակության այսինչ կամ այնինչ նրբությունը տալու նպատակով»⁴: Սակայն արդի հայերենի բարբառների համանման իրողությունների մեր դիտարկումները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ դրանք տարածքային տարբերակների ներթափանցումների կամ փոխազդեցությունների, ինչպես նաև հին ձևերի և գործող օրինաչափությունների հանդիպողման արդյունք են:

Համակարգային օրինաչափ ձևերից առավել շեղվողները հիմնականում բուն հրամայականը և սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի եզակի III դեմքն են:

Հին անկանոն բայերից շատերը հայերենի գրական տարբերակների և բարբառների հետագա դրսևորումներում գործառությունից դուրս են եկել, որոշ բայեր համաբանությամբ կանոնակարգել են իրենց հարացույցները, տարահիմք առանձին բայերի ներկայի և կատարյալի հիմքատարբերակները ենթարկվել են մասնակի իմաստափոխման և գիտակցվել իբրև առանձին բառատարբերակներ, մի մասը փոխել է իր ձևաբանական կառուցվածքը, ըստ այդմ էլ՝ խոնարհման առանձնահատկությունները, իսկ բայերի մի որոշակի խմբի մեջ էլ դեռևս շարունակվում են հին զարտուղությունները:

Բայական համակարգերի տեղաշարժերի հետագա գործընթացները պայմանավորված են նաև անկանոն ձևերի կանոնակարգման միտումով: Նախկին ստորադասականի իսպառ վերացումը, սպա կրավորականի ձևաբանական ցուցիչ՝ *վ* ածանցի երևան գալը առավել նպաստեցին այդ գործընթացներին: Կատարվեց խոնարհման տիպերի միօրինականացում. վերացվեցին ներգործակերպ և կրավորակերպ խոնարհումները, վերջավորությունների համապատասխան խմբերը վերաբաշխվեցին ըստ ներկայի հիմքատարբերակների. ներգործակերպ *ի, եր>իր, թ(գրո), աք>ինք, էք>իք, ին-ը* հատկացվեցին պարզ, իսկ կրավորակերպ

⁴ Հր. Աճառյան, ԼՔՀԼ, , հաս. IV Ա, Ե., 1959, էջ 367:

այ> ա, աք, աւ> ավ, աք> անք, այք> աք, ան-ը՝ անանցավոր բայերի (*խօսել(ի)-խոսեցի, սիրել-սիրեցի, գրանել/գրանալ-գրա/ կարդալ-կարդացի, հեղուլ> հեղել-հեղեցի, թռչել(ի)-թռա, զարմանալ-զարմացա, ազանել(ի)> հազանել> հազա* և այլն:

Բավական զգալի դեր կատարեց նաև բայերի միավանկության չեզոքացման միտումը:

Բայական համակարգերի այս տեղաշարժերի ընթացքում էլ, երբեմն նաև սրանց հետևանքով, երևան եկան հիմքերի և վերջավորությունների գուգորդման նոր անհամապատասխանություններ և դարձյալ առաջացան նոր զարտուղություններ, որոնք այլ քննարկման նյութ են:

Չարտուղությունների հիմքերն ու տեղաշարժերի ուղղվածությունը առավել որոշակի են դրսևորվում հատկապես *զալ, լալ, րալ, առնել, դնել, յառնել, լսել, երթալ, ունել, երդնուլ, բանալ, բառնալ, դառնալ* բայերի խոնարհման հարացույցների պատմական և տարածքային դրսևորումներում, ուստի ստորև կանոդրադառնանք հենց այս բայերի ձևակազմությունների հետագա դրսևորումներին:

Անկանոն բայերի հետագա տեղաշարժերը կատարվել են առավելապես միավանկ հիմքերում, քանի որ բայական միավանկությունը, ինչպես վերը նշվեց, խորթ է հայերենի ոգուն ⁵:

Հին հայերենում միավանկ էին կատարյալի արմատական հիմք ունեցող բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևերի եզակի III դեմքը և բուն հրամայականը: Միավանկ էր նաև մի քանի բայերի անորոշը՝ *զալ, լալ, րալ*: Միավանկության չեզոքացումը հայերենում արտահայտվում է նախահար ձայնավորով, որն ընդունված է անվանել աճական: Կատարյալի և նրանից կազմվող ձևերի աճականը հին հայերենում *ե/է-*ն էր: Որոշ բարբառներում նման ձևերում դեռևս շարունակվում է *ե/է-*ի գործառությունը, որոշ բարբառներ էլ (հիմնականում արևմտյան տարածքների) նոր աճականի՝ *ու, ի, շի*, հավելումով վերացրել են նաև *զալ, լալ, տալ* բայերի անորոշի միավանկությունը (Արամո, Սվեդիա, Քեսաբ՝ *ու-ուկիլ, ուլիլ, ուդիլ/դվիլ*: Տիգրանակերտ, Մուշ՝ *ի/շի-իքիլ/շիքալ, իլիլ/շիլալ, իդիլ/իդալ*. Չեյթուն՝ *ի-միայն՝ իկոլ*): Համշենի

⁵ Հր.Աճառյան, ԼՔՀԼ, հատ. IV Ա, Ե., 1959, էջ 277, 308, 405

Յ. Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2003, էջ 303:

բարբառը այս բայերի միավանկությունը չեզոքացրել է յուրահատուկ ձևով. անորոշը կազմել է կատարյալի *եկ> էզ* հիմքից՝ *-ռշ* վերջավորությամբ (գալ՝*էգուշ*, լալ՝*լացուշ*, տալ՝*դրվուշ*. տու>*դու-/դը- . *դուուշ>դը-վուշ):

Վերոնշյալ բայերը հին հայերենի կատարյալում և բուն հրամայականում ունեին հետևյալ արտահայտությունները⁶.

Անցյալ կատարյալ

Բուն հրամայական

եզ.	հոգն.	եզ.	հոգն.
Գալ.	եկն	- եկին	ե՛կ - ելա՛յք
Լալ.	լաց/ելաց	- լացին	լա՛ց - լացե՛ք
Տալ.	ետ	- ետուն	տու՛ր - տու՛ք
Առնել.	արար	- արարին	արա՛ր - արարե՛ք
Դնել.	եդ	- եդին	դի՛ր - դի՛ք
Յառնել. յարեալ		- յարեան	արի՛ր - արի՛ք
Երդնուլ. երդուալ		- երդուան	երդուի՛ր - երդուա՛յք (-արու՛ք)
Լսել.	լուալ	- լուան	լու՛ր - լուա՛յք (-արու՛ք)
Ունել.	կալալ	- կալան	կա՛լ - կալայք (-արու՛ք)
Երթալ.	չոգալ	- չոգան	ե՛րթ - երթայք (-արուք)

Այս բայերից լսել-ը միջին հայերենում և նոր բարբառներում ամբողջապես կանոնակարգված է և ենթարկվում է նոր հայերենի և լծորդության պարզ բայերի խոնարհման օրինաչափություններին:

Երթալ-ը միջին դարերից սկսած վերածվել էր պակասավոր բայի. **չոգ** (-այ, -ար, -ալ....) արմատատարբերակով լրացվող ձևերը վերացել էին: Արևմտահայ գրական լեզվում և բարբառներում դեռևս գործառում են այս բայի նեկայից կազմվող ձևերը, իսկ կատարյալը և նրանից կազմվող ձևերը փոխարինվել են **զնալ** բայի *զաց->կաց-* հիմքից կազմվող ձևերով: Արևելահայ նոր գրականում և բարբառներում այն բոլորովին

⁶ Նշվում են միայն անցյալ կատարյալի III դեմքերը:

վերացել է. **կրթ** հիմքը պահպանված է միայն բաղադրությունների մեջ (*կրթենեկ, չվերթ, շքերթ և այլն*):

Առնել բայը միջին դարերում դարձել էր **այնել**: Հիմքի հնագույն ձևն էր *այրնել*, «...որ ԺԲ դարում ունի դեռ Մխիթար Հերացին: Այս հեղինակի մոտ ունենք նաև *այրնես, այրնե, այրնեն*, նաև *արնես, արնե*, իսկ վաստակոց գրքի մեջ էլ *արնելոյ՝ առնելոյ*»⁷: Նոր հայերենում այն հանդես է գալիս *անել/ընել* ձևերով: Միջին դարերում, հատկապես կիլիկյան տարածքներում, բառերի նաև սկզբնավանկային շեշտի անկայությունը հանգեցրել էր միջնավանկերի ձայնավորների անկմանը, որի պատճառով էլ հին հայերենի կատարյալի **արար** հիմքի երկրորդ **ա**-ն աղվել է, հանդիպադրվող երկու **ր**-երից (*արրի) մեկը տարմանությամբ վերածվել է նախ միջնալեզվային ձայնորդի, ապա ընդհանրապես ընկել⁸: **Առնել** բայի գրաբարյան կրկնարմատ կատարյալը միջին հայերենում հանդես է գալիս *այրի, այրիր, արար, այրաք, այրիք, այրին* հարացույցով: Եզակի երրորդ դեմքը պահպանել է *արար* հիմքը՝ երկվանկ լինելու պատճառով: Նոր հայերենն արդեն, ըստ հիմքակազմության իր օրինաչափությունների, վերացրել է այս բայի հին անկանոնությունը՝ կատարյալի կրկնարմատ հիմքը, այն վերածել *ար*-ի, որից էլ կազմվել է *արեցի/արի/ըրի, արեցի/արիր/ըրիր, արեց/արավ/ըրավ, արեցին/արին/ըրին* հարացուցային ձևերը:

Սիվրի-Հիսարի բարբառում **առնել** բայի կանոնակարգումը կատարվել է ներկայի և կատարյալի բայահիմքերի միասնականացմամբ. այստեղ բոլոր ձևերում գործառում է ներկայի հիմքը, որն իբրև պարզ բայ է գիտակցվում. կատարյալում ու նրանից կազմվող որոշ ձևերում խոնարհվում է նաև ցոյական հիմքով: Այսպես օրինակ. «*Մախսուս էնած էն (արած են), քի հայերը էլլեն էթան*»⁹ (267), «... *ֆեները առվակ պրոնեցէ՛ք, ար քարաֆը լիս էնեցէ՛ք (արեք) ...*»(272), «... *փեշման էդած էնածին (արածին), պիքալն կծիկերը կը քաշէ մանդային մէջը ...* » (275), «-*Հա՞յ ես՝ ինչ է չանախին մէջը փիսլէնմիշ էնիր (արիր) ...* » (275),

⁷ Հր. Աճառյան, ԼՔՀԼ, հտ. IV, Ե., 1959, էջ 382:

⁸ Յ. Կարսո, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 297:

⁹ Այս և հաջորդ բոլոր օրինակները բերված են Ն. Սլյուշյան, Անատոլիայի նորահայտ բարբառները և բանահյուսությունը գրքից, Երևան, 2006, էջ 267-292. Փակագծերում նշված են համապատասխան էջերը:

«Է, ի՞նչ **ԷՆԷՄ** էյան» (276), «Իշտ է հաժժընակ ա **ԷՆԷՅԻՆ (արեցի՛ն)**» (276), «-Ինձի իզի՛ն րորսած չեն, էս չրկանամ **ԷՆԷՄ**» (277), «-Չիրիւմ, կանասս նա՛ րուն **ԷՆԷ՛ (արսա՛)**» (277), «-Ըպըք, հավլօր, սար ի՞նչ **ԷՆԻՐ (արի՛ր)**, խասրէցա՞ր մը, ճուրի՛ն պօռուն իըցկէցիր» (277), «... էղածի՛ն կիպի օղօրքը նսիրլ էրավ (արեց)» (278), «... ա՛ֆ **ԷՆԷՅԻՆ (արի՛ն)** ... », «Ամնա խանութն ա թուրքերը **հէչ Էնած Էին**» (282), «Տօպի՛նիք **ԷՆԷՅԱՆ (արեցի՛ն)** ... », «... հաշնիք **ԷՆԷՅԱՆ (արեցի՛ն)** ... » (283), «Մէգի րէվէք **ԷՆԷՄ Էս (անեյու ես)** ... » (284) և այլն:

Ունիւմ բայը միջին հայերենում փոխել է լծողությունը, գործառում է – *ենա*– ածանցավոր հիմքատարբերակով՝ *ունենաւ*, որից էլ, միջնավանկի սղումով, *ուննաւ*, *ունաւ*: Կատարյալը դարձյալ տարարմատ էր. խոնարհվում էր *կայուլ/էլ* համանիշ բայի *կալ*– հիմքով: Կալ–ը իբրև ունիւմ բայի կատարյալի հիմք միջին հայերենում արդեն սահմանափակել էր իր գործառությունը, վկայված են միայն հրամայականի *կալ*, անցյալ կատարյալի *կայաւ* և դերբայական *կայել* ձևերը¹⁰:

Նոր հայերենում այն հանդես է գալիս *ունիւմ/ունենաւ* տարբերակով. ունիւմ–ը իբրև պակասավոր բայ, *ունենաւ*–ը կանոնակարգված ամբողջական ձևերով: *Կայուլ/կայել/կայնուլ* տարբերակը իր ամբողջական հարացույցներով պահպանված է արևմտահայ որոշ բարբառներում: Այն, Արաբկիրի բարբառներում գործառում է *ունենալ, չենք բերել* իմաստով (*յորի՞ զաւակ չես կայլար* – Արաբկիր)¹¹, Հաջընում՝ *վերցնել, րսնել*, Սվեդիայի բարբառի խոսվածքներում՝ *փակել, խցել (գլխի. Թինրէն բըլէյգ գլխի՛նու – թունրի պլեզը. «օղանցըր, մանրակնը, սկնիկը» փակի՛ր/խցի՛ր)*:

Յառնել բայը ավանդված չէ ո՛չ միջին, ո՛չ նոր հայերենում: Պահպանվել է այս բայի գրաբարյան եզակի հրամայականը՝ իբրև *զալ* բայի եզակի հրամայական (*արի՛*): Այս նոր իմաստով այն գործառում է հայերենի գրեթե բոլոր բարբառներում: Ուրմիայի և Ղարաբաղի բարբառներում Յառնել–ի հրամայականը, դարձյալ *արի՛*, *ե՛կ* իմաստով, ավանդված է *յա՛ր-յա՛րէ՛ք* ձևով: Հրամայականի այս ձևում պահպանվում է

¹⁰ Յ. Կարսո, Կիլիկյան հայերենի պատմական բերականություն, Ե., 2002, էջ 296:

Հր.Աճառյան, ԼՔՀԼ, հտ. IV Ա, Ե., 1959, էջ 384:

¹¹ Հր.Աճառյան, ՀԱԲ, հտ. II, Ե., 1973, էջ 484:

արմատի հնագույն՝ ար արմատը, որը ըստ Անտուան Մեյեի «... ծագում է հնիս. 𐎠 արմատից, որը ստորին ձայնդարձն է er, or արմատի ...»¹²:

Տարաբնույթ փոփոխությունների են ենթարկվել հատկապես այն բայերը, որոնք գրաբարի համակարգում գործառույն էին դեռևս հնդեվրոպական նախահիմքերից եկող տարածություններով: Այս իմաստով առանձնանում էին *գալ* (*գա-/եկ-*), *տալ* (*տա-/տու-/ տուր*), *դնել* (*դի-/դիր*), *երդնուլ* (*երդն-/երդու-/երդնն-/*երդունն>*երդն-*), *լսել* (*լս>*լիս-/լու-/լուր*) բայերը:

Սրանցից **երդնուլ**-ը միջին հայերենում հանդես էր գալիս *երդվնալ*, *երդվնել* ձևերով: Աճառյանը նշում է, որ ավանդվել են միայն հրամայական՝ *երդվիր*, դերբայական՝ *երդուել*, *երդված* ձևերը¹³: Միջին հայերենի բառարանում վկայված են այս բայի հետևյալ դրսևորումները. «Սուր **երդվնաս** ղու հիլայով (ՀՄ 83)», «Ու ես ասի նմա, թէ թող նա երդվնա, որպես զհնքն ծեծել եմ, ուստի նա խայլի եղա **երդվնայու** և **չերդվնեց** (Կամ. Արձ. 275)»¹⁴: **Չերդվնեց** միջին հայերենյան կատարյալի ձևը ենթադրել է տալիս, որ դեռևս միջին հայերենում այն գիտակցվել է իբրև և լծորդության պարզ բայ՝ **երդվնել*: Հետաքրքիր է, որ նույն բայը նույն նախադասության մեջ վկայված է երկու տարբեր՝ *ա* և *հ* լծորդություններով:

Այս բայի գրաբարի պատճառական **երդվնեցուցանել** ձևը ենթադրել է տալիս հնում նաև **երդվնել-*, **երդվնեց-* ձևերի առկայություն՝ ներգործակերպ խոնարհմամբ: Պատճառականի ձևերում գործածվող կատարյալի **երդվնեց-* հիմքի առկայությունը վկայում է, որ գրաբարում էլ է **երդվնել-*ը գիտակցվել իբրև և լծորդության պարզ բայ:

Երդնուլ-ի գրաբարյան անցյալ կատարյալի և նրանից կազմվող ձևերի անկանոնությունը, այս դեպքում՝ հիմքերի տարածությունը, պայմանավորված է նույն բայի հարացույցներում գործառող հնդեվրոպական ստուգաբանական պարզ՝ **ertu-* արմատի և հնագույն **men*, **ven*>*ստ հոմանիշ ածանցներով բաղադրված հիմքերի առկայությամբ, որը, կար-

¹² Նույնի՝ հտ. III, Ե., 1977, էջ 384:

¹³ Հր.Աճառյան, ԼՔՀԼ, հտ. IV, Ե., 1959, էջ 385:

¹⁴ Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հտ. Ա, Ե., 1987, էջ 196:

ծում ենք, բարբառային հանագույն, թերևս հնդեվրոպական միասնության շրջանից եկող բարբառային տարբերակվածության արտահայտություն է¹⁵:

Հայերենի արդի բարբառներում, ինչպես և գրական երկու տարբերակներում վկայված են **երդնուլ** բայի այս տարբեր հիմքատարբերակներով կազմված ձևեր՝ արդեն կանոնակարգված հարացույցներով: Որոշ տարածքներում պահպանվել են **/men>մն (Խրբ. երթումնայ, Ախց. էրթրմնայ)*, այլ տարածքներում՝ **ven>*տն>*ւն (Ոզմ. հէրթվանայ, Հմշ. էշթվրննայ, Չք. օյդ⁶ վօնօր, Սվ. ուֆորրննիլ ...)* ածանցներով բաղադրված, մի քանի տարածքներում և գրական տարբերակներում էլ՝ ստուգաբանական պարզ արմատատարբերակով (Սլմ. էօրթիվե, արևելահայերեն *երդվե*, արևմտահայերեն *երդուիլ*) բայաձևեր: Արևմտահայերենում այն անցել է **ի** լծորդության և, իբրև այդ լծորդության պարզ բայ, կատարյալում հանդես է գալիս ցոյական հիմքով, խոնարհվում է կրավորակերպ (*երդուեցայ, -ար, -աւ ...*), իսկ արևելահայերենում գործառում է ե լծորդության պարզ բայերի օրինաչափություններով և խոնարհվում է այդ բայերի կանոնական հարացույցներով (*ցոյական հիմք, ներգործակերպ խոնարհում. երդվեցի, -իր, -՞ ...*):

Նոր հայերենը իր բոլոր դրսևորումներով կանոնակարգել է **երդնուլ** բայի խոնարհման հարացույցները՝ ամրակայելով ստուգաբանական հիմքերի այս կամ այն տարբերակը:

Գրաբարի երդնուլ բայի տարբեր բայաձևերում և բարբառային տարբեր տարածքներում գործառող –մն և -ւն անվանակերտ ածանցները առկա են *նան *պաշչրան/*պաշչրանն, *մահուն/*մահունն/մահ, *անուն>անուն, միջին/միջինն* բառերում: Այս բառերի գուգահեռ ձևերն էլ պայմանավորում են նաև անվանական հարացույցների որոշ անկանոնություններ: Սրանց մանրամասն քննությունը հետաքրքիր փաստեր կարող է ընձեռել հայերենի հնագույն բարբառների տարածքային բաշխումների բացահայտմանը:

¹⁵ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Է. Բ. Աղայեան, ՀԻՆ հայերենի –իւն (-եան, ուն)-ուան հոլովումը, «Հանդես ամսօրեայ», 1987 դ տարի, էջ 623-627: Գ. Հ. Հանանյան, Գրաբարի խոնարհման մի անկանոնության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 2007, N 3, էջ 104-107:

Խոնարհման կանոնակարգման գործընթացները յուրահատուկ տեղաշարժեր են առաջացրել *գալ, փալ, դնել* բայերի հարացույցներում: Միջին հայերենում այս բայերը թեև դեռ պահպանել էին գրաբարյան հարացուցային որոշ ձևեր, բայց արդեն գործում էին նոր օրինաչափություններ, որոնք նախանշում էին տեղաշարժերի պայմանավորվածությունն ու ուղղությունը:

Միջին հայերենում *գալ, փալ, դնել* բայերի եզակի երրորդ դեմքերը գրաբարի *եկն, ետր, եդ* ձևերի փոխարեն հանդես են գալիս *երեկ, երետր, երեդ* ձևերով:

Քանի որ հայերենում պահպանվել էին այս բայերի ստուգաբանական նախահիմքերի միայն բաղաձայն տարրերը (*եդ*<**dhē*, *ե-տր*<**dō*, *ե-կն*<**g²em*. *ե-կի*, *ե-կիր* ձևերը ծագում են **g²a* արմատից, «որի շայնավորի հետքը պահում է դեռ հրամայական եկայք»¹⁶), ուստի հետագայում գրաբարի ածականը դիտվել է իբրև հիմքի ձայնավոր և անհրաժեշտություն է առաջացել միավանկությունը չեզոքացնելու միջոց ստեղծել:

Քանի որ կանոնավոր կազմություններում բայերի գրաբարյան բուն հրամայականի եզակին և արմատական հիքմով կատարյալի եզակի III դեմքը համանուն ձևեր են, ուստի այդ օրինաչափության համաբանությունը էլ միջին հայերենում կատարվել է *փալ, դնել* բայերի տեղաշարժը. հրամայականի եզակիի *դի'ր* հիմքը անցել է կատարյալին և առաջացրել **դիրի*>*դիր*, **դիրիր*>*դիրիր*, *եդիր* ձևերը: Ըստ այսմ ենթադրելի էր նաև **տուրի*>**տիր*, **տուրիր*>**տիրիր*, *ետուր* կազմություն: Այս ենթադրությունը հիմնավորվում է Սիվրի-Հիսարի բարբառի տվյալներով: Այս բարբառում տուր հիմքը ընդհանրացել է անցյալ կատարյալում և նրանից կազմված ձևերում: Այսպես օրինակ. «Մէյին Աւլած պահար փուրած չըլլա նա, պաշխա պան օրուր չէնէլ» (276), «Ար հաւր ինծի փուրէք, էս ծէգի մէքար օսկի կուրան» (278), «Անօնք ա փուրին» (278), «Ճուլուխը համով էր մը, չէնէ կինէ չրկէրաք, փրրածիյէրուդ փուրէցաք» (278)*: Կատարյալի հիմքից կազմված բայաձևերի ժխտականը ևս կազմվում է տուր հիմքից. օրինակ՝ «... ինծի իզին փուրած չէն» (277), «... պապրս մայրս ադբարէցին, չրփուրին ինծի» (283)¹⁷:

¹⁶ Հր. Աճառյան, ԼԶՀԼ, հտ. IV Ա, Ե., 1959, էջ 369:

¹⁷ Ն. Մկրտչյան, Անատոլիայի նորահայտ բարբառները և բանահյուսությունը, Ե., 2006, էջ 273-294:

Այս *լրուր* հիմքը միջին հայերենում անցել է կատարյալի եզակի երրորդ դեմքին՝ **ե** աճականով (*ելրուր*):

Իսկ ինչպե՞ս է առաջացել և ի՞նչ բացատրություններ է ստացել **եքեք**, **եքեկ**, **եքեպ** ձևերի *եք-* հավելյալ սկզբնավանկը: Յուզեֆ Կարստը «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» աշխատության մեջ գրում է, որ *եդ-*, *եկ-*, *եպ-* ձևերի *ե-*ն, ըստ միջին հայերենի հնչյունական օրինաչափության, վերածվել էր երկհնչյունի: «Որպես բաղաձայնով սկսվող միավանկ բայաձևեր, նրանք արդեն կարող էին նախահավելված ընդունել. այլևս չընկալվելով որպես նախահավելվածով հին ձևեր՝ միավանկությունից խուսափելու համար, նրանք երկրորդ անգամ են ընդունել նախահավելվածը. Այդպիսով առաջացել են **e-yeg*, **e-yed*, **e-yet*, որոնք (*եյ* կապակցության անհնարին լինելով) ձևափոխվել են դեպի *e-reg*, *e-red*, *e-ref*, **e-yeg*, **e-yed*, **e-yet* միջանկյալ ձևերի միջնորդությամբ. *ըստ երևույթի՝ եքեկ՝ հրամայականի ազդեցությամբ* (ընդգծումը իմն է – Գ. Հ.)»¹⁸:

Միջինհայերենյան կատարյալի այս ձևերին գրեթե մնան բացատրություն է տալիս Լիանա Հովսեփյանը. *եդ*, *եկ*, *եպ-*ը գիտակցվելով իբրև արմատական ձևեր, ստացել են երկրորդ աճականը, որից հետո երկու *ե-*երի միջև *յ-*ի միջնորդությամբ ավելացել է *ք-*ն՝ հորանջից խուսափելու համար¹⁹:

Այս երկու բացատրություններն էլ ընդունելի են այն առումով, որ այս դեպքում, անշուշտ, նոր բաղադրիչի հավելումը պիտի բացատրել **ե-**ի, իբրև աճականի, գիտակցման հետագա մթազնումով և այն իբրև *եդ*, *եկ*, *եպ* ձևերի արմատական բաղադրիչ դիտելու իրողությամբ:

Սակայն արդի որոշ բարբառներ հիմք են տալիս մեզ **եք-**ի առաջացման այլ բացատրություն առաջարկել:

Կարստը իր հիշյալ աշխատության 305-րդ էջի տողատակի ծանոթության մեջ գրում է. «Ապա Ջուղան ունի անցյալ կատարյալ եզակի 3-րդ դեմքի *արեկ*, *արեպ* հնացած ձևեր՝ *երեկ* և *երեպ* ձևերի փոխարեն. քանի որ Ջուղայի բարբառում դաս. և կիլ. **ե-**ին կանոնավոր ձևով համապա-

¹⁸ Յ. Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 305:

¹⁹ Լիանա Հովսեփյան, ԺԳ տարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Ե., 1997, էջ 68-69:

տասխանում է *ս եկաւ, փուաւ և փուեց* ավելի նոր ձևերի կողքին (Патк. Диал. 83)»²⁰:

Հայտնի է, որ նոր հայերենի գրեթե բոլոր բարբառներում և գրական տարբերակներում *գալ* բայի բուն հրամայականի եզակիում կայունացել է *արի՛-ն* (յառնել բայի եզակի հրամայականը)՝ *ե՛կ* իմաստով, իսկ Ուրմիայի (Խոյի) և Ղարաբաղի բարբառները պահել են հնագույն՝ *յալ- <ար, յարելք (<արի՛ք) >* ձևը, որը, ըստ Մեյեյի, գալիս է հնդեվրոպական **er, *or* արմատի ստորին ձայնդարձից՝ **r*: Այս էլ գալիս է հիմնավորելու այն ենթադրությունը, որ բուն հրամայականի ձևերը ավելի հին են, իսկ երբեմն դրանք հանգում են ստուգաբանական նախասիմքերին, ինչպես այս դեպքում: Սա մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ *լսել, դնել, փալ* բայերի բուն հրամայականի ձևերում հենդես եկող *ր-ն* չի նույնացում խոնարհման համակարգում հանդես եկող մյուս *ր-երի* հետ. դրանք (*լու՛ր, դի՛ր, փու՛ր*) անվանական բաղադրյալ հնագույն հիմքերից եկող կազմություններ են: Գ. Ջահուկյանը *դի՛ր, լուր, լուռ, փար* հիմքերի *ր/ռ-ն* դիտում է իբրև հնդեվրոպական ածականակերտ **(e)ro, *(e)ra*՝ ածանցի արտահայտություն հին հայերենում: Այս մասին նա գրում է. «Վ. —Հ. —**(e)ro, *(e)ra*՝ [Հ. —հ. —**(e)ro-, *(e)ra*] > Հ.Հ. —*r, usn. —nj* և —*ug*. այս ածանցը հնդեվրոպական լեզվում կազմում էր ածականներ, որոնք մասամբ գոյականացել են. վաղնջահայերենում այն հնդեվրոպականից եկող բառերի մեջ զգալի չափով կորցրած է եղել իր բառակազմական արժեքը: Հնդեվրոպականից եկող և հին հայերենում իբրև բաղադրյալ չգիտակցվող կամ թույլ գիտակցվող բառերի մեջ բուն ածականները սակավաթիվ են՝ *բիւր, -սց, իւր, -ոյ, լուռ, -սց, նոր, -ոյ, չոր (ոյ-ոյ, -ից), սուր, -ոյ (և գոյական)*: Համեմատաբար շատ են գոյականները՝ պահպանված *-ո-* կամ *-ա-* հիմքակազմ տարրով՝ *ալեւր (ալիւր), -ոյ, անեւր, -ոյ, անուր, -ոյ, դիւր, -ոյ, (և -ից. հմմտ. դնեւ՝ *դի-ն-եւ)* , *լուր, -ոյ (հմմտ. լու, աոր. լուայ)...., փուր, -ոյ (հմմտ. ե-փու)*»²¹:

Բայական համակարգում ստուգաբանական նախասիմքերը պարզ կամ արմատական ձևով առավելապես պահպանված են բուն հրամայականի հոգնակի ձևերում. հմմտ. *դի՛ր- դի՛-ք, փու՛ր-փու՛ք, լու՛ր- լու-*

²⁰ Կարստ, Հիշյալ աշխատությունը, էջ 305:

²¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան, Ե., 1987, էջ 234-235:

այք (լու-արուք): Այս ձևերի *ր*-ն հին հայերենում արդեն բոլորովին մթազնել էր իր նախկին՝ ածանցական արժեքը և գիտակցվել իբրև արմատական տարր: Արդեն արմատական գիտակցվող *ղիր*, *տուր*, *լուր* ձևերից էլ բաղադրվել են նոր բառաձևեր, ինչպես՝ *ղիր-ից՝ գեղեցկաղիր*, *խաարաղիր*, *ունկնղիր*, *չեռնաղրել*, *պարարաղիր*, *բաղաղրիչ ...*, *լիր-ից՝ լրիւ*²², *ծայրարիլ*, *լրանալ*, *բռնալիր ...*, *լուր-ից՝ լրաբեր*, *լրաբու*, *տուր-ից ...*, *տուրևառ*, *տուրևառիկ*, *տրիտուր* (*տուր-ի տուրը*, *տուրի տարը*), *վանապուր*, *բացապրել*, *տաք-ից՝ տարուբեր*, *ղիրապար*, *համբերապար*, *պաշտօնապար*, *տարտարել* «ցրոել» (ԱԲ. Էջ 368, IV հ.) և այլն:

Վերը նշվեց, որ *յառնել* բայը արդեն միջին դարերից կորցրել էր իր կենսունակությունը. պահպանվել էր միայն հրամայականի *արի՛* ձևը՝ իբրև *գալ* բայի եզակի հրամայական: *Արի՛* հրամայականի *ր*-ն չի կարելի նույնացնել *ղիր*, *տուր*, *լուր*, *լիր* բառերի *ր*-ի հետ, քանի որ վերջիններս գալիս են հնդեվրոպական ածանցից, իսկ *ար*-ի-ն՝ հնդեվրոպական արմատական հիմքից է բխեցվում:

Արի՛ հրամայականը իմաստով հարաբերակից է *վեր* բառին (*բարչրանալ*, *ելնել*): *Վեր*-ը բարբառներում և արևելահայ խոսակցական լեզվում հաճախ է հանդես գալիս հարադրությունների մեջ, ինչպես՝ *վեր ունել*, *վե՛կալ*, *վե՛ր կաջ* և այլն: Այս ձևով է կազմվել *վերցնել* բայը, որը չի ավանդված ո՛չ Հայկազյան, ո՛չ արմատական բառարաններում. վկայված է միայն Մալխասյանի բառարանում՝ իր իմաստային զանազան առումներով (*վեր բարչրացնել*, *առնել*, *կրել*, *արանջնել* և այլն):

Վե՛ր եկ - *ե՛լ արի*-ի նախատիպը հենց Ջուղայի բարբառի *արեկ* ձևն է, որն անցել է նաև կատարյալի եզակի III դեմքին, և *եկի*, *եկիր*-ի *ե*-ի համաբանությամբ էլ գոյացել է *արեկ*>*երեկ* ձևը: **Գալ** բայի բուն հրամայականի հոգնակին Ջուղայի բարբառում կազմված է *ար- արի՛*-ից (*արիցե՛ք*):

Հրամայականի *արի՛* ձևի անցումը կատարյալի եզակի III դեմքին առանձնակի չի մնում: Նման մի կազմություն առկա է և Համշենի բարբառում, որ նշում է Աճառյանը այդ բարբառի քննության մեջ: Համշենի բարբառում իբրև գալ բայի կատարյալի եզակի III դեմք վկայված է նաև

²² Լրիւ ձևը հենց ցույց է տալիս, որ այն հին հայերենում գիտակցվել է իբրև անկախ բառ և հոլովվել է ի հոլովիչով (տրիտուր>տուրիտուր (ը):

էրի-ն (եկավ)՝ **էգաւ**-ի կողքին: Աճառչանը բերում է «Բիւրակն»-ի վկայութիւնը՝ էրի²³: Սա, անշուշտ, հրամայականի *արի*'-ն է, որի նախածայն *ա*-ն *էգաւ*, *էգար*... ձևերի համաբանութեամբ դարձել է է: Իսկ **էրի էգ*-ի 2-րդ բաղադրիչն արդեն ջնջվել է: Սա հրամայականից կատարյալի անցման ավելի առաջացած ձև է:

Արի' և *ե'կ* հրամայականների հարադրմամբ մի ձև էլ պահպանվել է Սվեդիայի բարբառում: Այստեղ գալ բայի հրամայականի եզակին *արի*' է, իսկ հոգնակին՝ *արգրկ*, որը կազմված է *արի* և *եկե'ք* (<*եկայք*) ձևերի ձուլումից: Քանի որ այս բարբառում եզակի հին *եկն* ձևին փոխարինել է *արի*-ն, իսկ հոգնակիի *եկայք*> *եկեք* ձևին՝ *արի*+*եկեք*> *արգրկ(ք)*, հին հոգնակին անցել է կատարյալին՝ իբրև եզակի III դեմք՝ *իգրկ(ք)* (<*եկայք*) սպասելի **արգ* կամ **իրգ* ձևերի փոխարեն: Այս դեպքում էլ թերևս ուժեղ է եղել *իգաւ*, *իգիր* ձևերի համաբանութեան գործոնը:

Բայական համակարգում հոգնակի ձևերի անցումը եզակի ձևերին խորթ չէ հայերենի բարբառներին: Օրինակ Արեշի բարբառում իբրև *յրայ* բայի եզակի հրամայական կայունացել է գրաբարի *յրու'ք* հոգնակին՝ *յրու'*, *յրու'ր* ձևերի կողքին, իսկ հոգնակիի համար կազմվել են *յրուվէ'ք/յրուվէցէ'ք* նոր ձևերը²⁴:

Իսկ ինչու՞ *գալ* բայի հրամայականի և կատարյալի ձևերի նմանութեամբ կազմվեցին նաև *ղնկ* և *յրայ* բայերի համապատասխան ձևերը: Ինչպես արդեն նշվել է, արմատական հիմք ունեցող բայերի գրաբարյան բուն հրամայականի եզակի և կատարյալի եզակի III դեմքերը գրաբարում նույն ձևն ունեին (միավանկության վերացումը հրամայականում արտահայտվում է համապատասխան հնչերանգով): *Գալ* բայի եզակի հրամայականն ու կատարյալի եզակի III դեմքը տարբեր ձևեր են՝ *հրաւ. ե'կ, կար. եկն*: Այս բայի ներկայի հիմքը գալիս է հնխ. **wa*-ից, իսկ կատարյալինը՝ հնխ. **g²em*: «Հնխ. *g²em*- արմատը ուներ նաև երկրորդ *g²a*- ձևը ... : Հայերեն ձևերից առաջինը (*եկ*) գալիս է *g²a*- ձևից, իսկ երկրորդը (*եկն*)՝ առաջին ռնգայնավոր *g²em*- ձևից. հրամ. *եկայք* ձևի մեջ դեռ պահված է արմատի *au* ձայնը»²⁵: Եթե *ղնկ*<**dh²*- (*յրայ*)

²³ Հր. Աճառչան, Քննություն Համչենի բարբառի, Ե., 1947, էջ 135:

²⁴ Ա. Ղ. Լուսենց, Արեշի բարբառը, Ե., 1982, էջ 123:

²⁵ Հր. Աչառյան, ՀԱԲ, հտ. II, Ե., 1973, էջ 11-12:

*յրու(ր) < *dō-* բայերում դեռ հանդես է գալիս ստուգաբանական հիմքի ձայնավորը, սպա *եկն* < *g²em ձևի մեջ այն բողբոլվին չի երևում, *և*-ն դիմաթվանիշ չէ. եզակի հրամայականը, որը պիտի նույնական լիներ կատարյալի եզակի III դեմքին, չունի այդ *և*-ն: Լեզուն պիտի վերացներ նախ այդ անկանոնությունը (հիմքի նախնական ձայնավորի վերացում եզակի հրամայականում, կատարյալի եզակի III դեմքի և բուն հրամայականի եզակիի անհամապատասխանություն): Ուստի հիշյալ միավանկ հիմքերով բայերի կանոնակարգման գործընթացն էլ սկսվել է հենց այս բայից: *Արհ*՝ հրամայականը հանդես գալուց հետո այն դրվել է նախապես հենց այս բայի կատարյալի եզակի III դեմքի վրա (արդեն հրամայականից անցած *եկ* ձևի վրա): Այս համաբանությամբ կամ գուցե *արհ* և *վեր* բառերի իմաստային մերձավորության շնորհիվ անցել է նաև *յրալ* և *դնևլ* (*վե՛ր, արհ՛ր, րու՛ր, վե՛ր, արհ դհ՛ր, վե՛ր, արհ՛ եկ*) բայերին:

Արեկ > *երեկ*, *արեդ* > *երեդ*, *արեպ* > *երեպ* ձևերի *ա* > *ե* անցումը I և II դեմքերի *ե*-ի համաբանության հետևանք է:

Այսպիսով. անկանոն կազմությունների կանոնակարգումը, հարացուցային նոր ձևերի առաջացումը սկսվում են կատարյալի և հրամայականի ձևերից, ուր առավել հաճախ են հանդիպադրվում նոր օրինաչափությունների սաղմերն ու հին ձևերը: Հնագույն ձևերը հանդես են գալիս հիմնականում բուն հրամայականի ձևերում, որոնք էլ պայմանավորում են շեղումները գործող հարացույցներում:

Այս բայերի հիմքերի և վերջավորությունների *նոր գուգորդումները* պայմանավորված են բայական հիմքակազմության և վերջավորությունների բաշխման նոր օրինաչափություններով, որոնք արևմտյան և արևելյան տարածքներում դրսևորում են կարծես տարամետ զարգացումներ:

Լսել բայը նոր հայերենում անցել է կանոնավոր պարզ բայերի շարքը և ենթարկվում է այդ բայերի օրինաչափություններին: Գրաբարի անկանոնությունը պայմանավորված է դարձյալ հնդեվրոպական տարբեր նախահիմքերից սերելու փաստով: *Լուս/լիս*-ը ծագում է *k¹lus, լու-ն՝ *k¹leu, իսկ լուր-ը՝ *k¹lur-ից. այս վերջին ձևի մեջ ր-ն նույն արժեքն ունի, ինչ *դհ՛ր, րու՛ր, րար, լիր* հիմքերի ր-ն: Արգելական հրամայականի *մի՛ ածեր, մի՛ քերեր, մի՛ լնուր* և այլ ձևերը բաղադրված են բայահիմքերից և *re վերջավորությունից (*mē bhere-re, mē ag¹e-re, mē plēnu-re*): Արգելականի կազմության մեջ հանդես եկող այս ր-ն և *դիր, րար, րուր, լիր*,

լուր հիմքերի թ-երը, քանի որ ստուգաբանական տարբեր նախահիմքերից են գալիս, նույնարժեք չեն. վերջին ձևերին կազմությամբ հարաբերակից են *է՛ջ, մնու՛ր, ա՛ծ, բե՛ր, լի՛ց* հիմքերը:

Գրաբարի տարահիմք *ունել/կալ-, լինել/եղ-, երթալ/չոգ-* բայերի տարարմատությունը, կարծում ենք, պայմանավորված է տարածքային տարբերակների փոխներթափանցումներով, որոնցից պահպանվել են նույնանիշ բառերի հարացուցային այս կամ այն ձևերը: Իբրև հիմնավորում կարելի է բերել Կարևո բարբառում լինել բայի խոնարհումը բոլոր ձևերում *եղ->էղ-* հիմքատարբերակով (*կէղնի, էղալ, էղի՛, էղէ՛ք*), ունել բայի կալ>գալցրնիէլ հիմքի գործառելը Հաջրնի բարբառի բայական բոլոր հարացույցներում. *գը գալցրնիէմ, բի գալցրնիէմ, գալցուցի – (վերցնում եմ, վերցնելու եմ, վերցրի)*: Արեշի բարբառում ունել բայի պատճառականը վկայված է «ունցել» (*բռնել տալ, կալուցանել*) ձևով²⁶. սա վկայում է, որ **ունել** հիմքը գործառել է նաև կատարյալում, կամ էլ այն նորագոյացություն է՝ ներկայի հիմքի գործառության ծավալում նաև պատճառականի ձևերի կազմության մեջ:

Ամփոփելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել.

ա. Բայական համակարգում խոնարհման զարտությունները պայմանավորված են հնագույն ձևերի և գործող նոր օրինաչավորությունների, ինչպես նաև սամնավորվող իրողությունների՝ նույն հարացույցներում հանդիպադրումներով: Այդպիսի հանդիպադրումները բնորոշ են կատարյալի եզակի III և բուն հրամայականի եզակի, երբեմն էլ՝ հոգնակի ձևերին:

բ. Խոնարհման համակարգի զարտությունները դրսևորվում են հիմնականում կատարյալի հիմքում և նրանից կազմվող ձևերում: Կանոնակարգման գործընթացներն էլ սկսվում են հենց այս ձևերից՝ համաբանության ներգործությամբ:

գ. Հնատիպ իրողությունները առավել կայուն են բուն կամ դրական հրամայականի ձևերում:

դ. Կատարյալից կազմվող ձևերի տարարմատությունը պայմանավորված է հիմնականում տարածքային ձևերի փոխներթափանցումներով:

²⁶ Ա. Ղ. Լուսենց, Արեշի բարբառը, Ե., 1982, էջ 156:

ե. Կանոնավոր-օրինաչափ համակարգերից շեղումներով բնութագրվում են հատկապես առօրյա կենսագործունեությանն առնչվող բառերը, որոնք հաղորդակցական բարձր հաճախականություն և տեսակարար մեծ կշիռ ունեն:

զ. Լեզվական տեղաշարժերի գործընթացները միտված են ներլեզվական հակասությունների, տարաձևությունների, բազմիմաստությունների վերացմանը, համահարթմանը, հարացույցների միօրինականացմանը, պարզեցմանը: Սակայն այդ ընթացքում առաջանում են նոր գուգաձևություններ, նոր անմիօրինակություններ, նոր շեղումներ:

Հայերենի գրական և բարբառային բոլոր զարտությունների քննությունը փաստական հարուստ նյութ կարող է ընձեռել լեզվական տեղաշարժերի ուղղությունների ու միտումների բացահայտմանը:

Քանալի բառեր - *բայական զարկուղություններ, գալ, երթալ, ուրել, յառնել...*, գրաբար, բարբառներ, կանոնակարգման միություններ, կապարյալ հիմք, հրամայական, համաբանություն:

Гагхун Ананян - Неправильные глаголы в армянском языке.
Отклонения от регламентированных(канонических) систем присущи всем уровням языковой структуры и обусловлены различными факторами. Эти факторы могут быть и лингвистические, и экстралингвистические. В нашем докладе рассматривается, какие в дальнейшем проявления имеют формы древнеармянских неправильных глаголов в литературном средне- и новоармянском и в диалектах.

1. Отклонения глагольной системы в армянском языке проявляются в основном в глагольных формах, образованных от основы прошедшего времени, а иногда и от основы настоящего времени.

2. Спряжение всех типов глаголов в литературном армянском и некоторых типов в диалектах осуществляют две (սաւ-սուի, լու-լիս), иногда и более (երդն-, երդու-,երդմն-) основы, которые являются или продолжениями древних форм, или новообразованиями.

3. Глагольные отклонения – это и незакономерное распределение относительно устоявшихся языковых типов спряжения, личных форм.

4. Противопоставление внутриязыковых действующих закономерностей и устоявшихся канонических форм в данной системе приводит к созданию параллельных форм, стабилизация одной из которых обусловливается частотностью употребления или внутренними тенденциями развития данной системы.

5. Неправильные разнокорневые глаголы некоторыми лингвистами рассматриваются в качестве предпочтительного проявления синонимических форм «с целью придания того или иного смыслового оттенка» (Ачарян Р.). Мы считаем, что неправильные глаголы такого порядка – это следствие проникновения или взаимодействия диалектных(областных) вариантов, а также противопоставления прежних фактов действующим закономерностям.

6. Во всех своих проявлениях в процессе развития язык стремится к нивелированию неправильностей, однако именно в этом процессе могут образоваться новые отклонения и создаваться новые формы неправильных глаголов.

7. Отклонениями от закономерно-канонических систем характеризуются наиболее употребительные и распространенные слова, относящиеся к повседневной действительности, и глаголы, имеющие подобную же сферу действия.

8. Армянские диалекты содержат достаточно фактических данных для наблюдения за формированием основ неправильных глаголов армянского языка и путях их нивелирования.

Ключевые слова: *неправильные формы глаголов, գալ (прийти), երթալ (уйти), ուրիւմ (есть), յարկալ (поднимать)...*, *грабар, диалекты, тенденции стандартизации, основа совершенного вида, повелительное, аналогия.*

Gaghtuhi Hananyan - Verbal Irregularities in Armenian. Deviations from regular systems are typical of all layers of linguistic structures and are conditioned by different factors. Those factors may be both linguistic and extra-linguistic.

Further expression of the verbal irregular forms in the Middle and New Literary Armenian and its dialects are mainly analyzed in this report.

Irregularities in the system of the verb in Armenian are expressed in the verb-forms-mainly in the perfect, partly in the present verb-stems.

The conjugation of some verbs in all the variants of the literary Armenian as well as in the dialects is carried out in two (unu- unni, [ni-]ju), sometimes even in more (երդն-, երդու-, երդնն-) basic variants which are either the continuation of the old forms or neologisms.

Verbal irregularities are also non-regular distributions of relatively standardized conjugated types and of morphemes showing person and number categories.

The contradiction between the operating regularities inside the language and the standardized forms in the given system gives rise to parallelism, the stabilization of either of which is conditioned by the frequency of use or by the inner tendency of development in the given system.

Verbal different-rooted irregularities are considered by some linguists as an expression of preference of synonymous forms “to give this or that shade of meaning”²⁷. We think that this kind of irregularities are also the result of the penetration of the regional dialects or their interaction, as well as that of the old realities and the acting regulations.

During the development of its all expressions the language strives for the leveling of irregularities but during this very process new deviations may come into being and give rise to new irregularities.

With deviations from regular systems are characterized especially those words which are connected with everyday activities-most frequently used and most widespread, and the verbs which have similar functional spheres.

Armenian dialects represent enough factual data for observing the bases of development of verbal irregularities in Armenian and the ways of leveling them

Keywords: *Irregular verbs, quլ (to come), երբսլ (to go), ուղեղ (to eat), յուննեղ (to rise)...*, *grabar (Old Armenia), dialects, tendencies of standardization, the stem of the past indefinite, imperative, analogy.*

²⁷ **Hr. Acharyan**, “Complete Grammar of the Armenian Language”, Yerevan, 1959, p. 367.

չէ նկատել, թե երկրորդ դեպքում ինչքան է թուլացած **լեռ** գոյականի առարկայական իմաստը՝ մոտենալով **լեռնային** հարաբերական ածականին:

Չնայած սեռական հոլովով լրացում ունեցող համասեռ գոյականական բառակապակցությունները որոշակի առնչություններ ունեն բայական և ածական լրացում ունեցող գոյականական բառակապակցություններին, այնուամենայնիվ դրանք ինքնուրույն ուսումնասիրության առարկա են՝ առանց առնչակից բայական և այլ բառակապակցությունները նկատի ունենալու:

Անդրադառնանք բառակապակցությունների տեսակների անվանման խնդրին: Մեր լեզվաբանության մեջ երկու միտում է նկատվում բառակապակցությունների անվանման հարցում: Մի դեպքում կողմնորոշվում են լրացական բառով, մյուս դեպքում՝ ամբողջ բառակապակցությամբ: Այսպես՝ ասենք **ցերեկվա շոգ**, **գիշերվա քամի** և նման կապակցությունները անվանվում են «ժամանակի սեռականով կապակցություններ» կամ «ժամանակի հարաբերություն արտահայտող կապակցություններ»:

Առաջին մոտեցումը հետևողականորեն դրսևորվում է Վ. Քոսյանի աշխատություններում. նա ընդունում է նյութի սեռականով, բաղկացություն սեռականով, վերաբերության և այլ սեռականներով գոյականական բառակապակցությունների գոյությունը: Երկրորդ մոտեցման բնորոշ արտահայտություն ենք տեսնում «ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ՝ նյութի, բաղկացության, վերաբերության, խնդրային և այլ հարաբերություն արտահայտող բառակապակցություններ²:

Սկզբունքորեն ավելի ճիշտ է թվում երկրորդ մոտեցումը, երբ անվանումը տալիս նկատի է առնվում ամբողջ բառակապակցությունը: Ճիշտ է, **ցերեկվա շոգ** կապակցությունը ժամանակային հարաբերություն է արտահայտում, սակայն համապատասխան գիտաբառեր չունենք բոլոր տեսակի հարաբերություններն անվանելու համար: Այսպես՝ **մեկ ժամվա գործ** կապակցությունը չափի և ցույց տալիս, բայց այսպիսիները չափի հարաբերությամբ կապակցություններ անվանելը փոքր-ինչ խորթ է

² Ս. Աբրահամյան, Ն. Պառնապյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976, էջ 25-38:

թվում: Կամ **զնացքի ժամանում, ամպրոպի որոտ** և նման ենթակայական հարաբերությամբ կապակցությունները ներկայացվել են «գործողության և գործողություն կատարողի հարաբերությամբ բառակապակցություններ»³ անվանումով, որ մեզ մի փոքր անհաջող է թվում. «գործողության և գործողություն կատարողի» հասկացությունը շատ ընդհանուր բովանդակություն ունի. մասնավորման կարիք ունի, թեև ընդգծված է գործողության գաղափարը, և խոսքը վերաբերում է բայական կապակցության:

Հետագա շարադրանքում, նախապատվությունը տալով բառակապակցության ենթատեսակը լրացումով ներկայացնելու սկզբունքին (ենթակայական սեռականով կապակցություններ, ժամանակի սեռականով կապակցություններ և այլն), ըստ անհրաժեշտության՝ գործածելու ենք նաև «ժամանակի հարաբերությամբ բառակապակցություն», «մասի և ամբողջի հարաբերությամբ բառակապակցություն» անվանումները: Ինչ վերաբերում է համապատասխան հարաբերությունը գոյականի սեռական հոլովածնով (տեղի սեռական, ժամանակի սեռականով լրացում ունեցող բառակապակցություններ և այլն) կամ հարաբերական ածականով (տեղային հարաբերությամբ, ժամանակային հարաբերությամբ բառակապակցություններ) անվանելուն, ապա պետք է ասել, որ հավանաբար այդպիսի գուգահեռ գործածություններն առայժմ ընդունելի պետք է համարել, մինչ դրանցից մեկը հաղթող հանդիսանա:

Ծագման ստացական սեռականով կապակցություններ

Մ. Աբեղյանը ստացական սեռականի բավական լայն ըմբռնում ունի՝ որպես այդպիսին դիտելով նաև ոչ միայն նրանք, որոնք ցույց են տալիս առարկա, անձ, որն ունի մի բան, որին պատկանում է մի բան որպես «իրական սեփականություն, ստացվածք, ունեցվածք» (*Տիրանի գիրքը, այս որսորդի շունը*), այլև այնպիսիները, որոնք ցույց են տալիս անձ կամ առարկա, որն ունի մի բան, տեր է մի բանի, իբրև «իր հատկությունը և ունակությունը» (*այս առյուծի ուժը, բնության գեղեցկությունը, Ասործու քարությունը*), իբրև մի ազգի, ցեղի ամբողջության անդամ (*Թորոսենց Վարդանը, խնամունց Սյրեփանը*), իբրև «իր ունեցվածքը որևէ,

³ Մ. Աբրահամյան, Ն. Պառնսայան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, նշվ. աշխ. էջ 31:

հաճախ փոխադարձ հարաբերությամբ» (*այս երեխաների հայրը, հորս բարեկամը, այս կնոջ մարդը, այս ծառայի տերը, այդ ճիտ բանքը*)⁴:

Ստացական սեռականով կապակցությունները, ինչպես նկատել է Վ. Քոսյանը, «խիստ տարածված են արդի գրական և խոսակցական լեզվում»⁵: Դրանք բավական գործածական են Պ. Սևակի ստեղծագործություններում և վկայում են՝ բանաստեղծի միտքը ինչպիսի լարումով համապատասխան հարաբերության մեջ է դիտել բազմազան ու բազմաթիվ առարկաներ ու երևույթներ: Խոսքը չի վերաբերում այնպիսի կապակցությունների, որոնց բաղադրիչները գերազանցապես ուղղակի նշանակություն ունեն, օրինակ՝ *կնոջ տեսք, մոր տեսք* (I, 141), *տղի մայրը* (I, 159), *գարնան իրիկուն* (I, 160), *սրբի սրբությունը* (I, 162), *մանկության օրեր* (I, 130) և այլն⁶:

Բանաստեղծի խոսքարվեստում հաճախված են այնպիսի բառակապակցությունների կիրառություններ, որոնք էապես նպաստում են խոսքի ոճական բովանդակության հարստացմանը: Այդպիսի բառակապակցություններն էլ երկու հիմնական դրսևորումով ու դերով են հանդես գալիս: Մի դեպքում սեռականով լրացումը այնպիսի առարկայի հետ է հարաբերություն արտահայտում, ինչպիսին իրականության սովորական ընկալման դեպքում մնան բառերով սեռական լրացում չալիտի կարողանար ընդունել, ինչպես՝ *հաջողության քամի* (I, 141), *ժպիտ ջերմություն* (I, 147), *հարցերի ճանկիս* (I, 130), *արբունքի գարուն* (I, 126), *հավապո թրակ* (IV, 268), *հակառակության ոգի* (IV, 85), *երանգների ծով* (I, 44), *խաղաղության հուր* (I, 15) և այլն):

Դյուրին չէ մնանօրինակ կապակցությունների ստեղծումը առանց իրականության համապատասխան բանաստեղծական ընկալման: Պետք է նկատել նաև, որ այսպիսի կապակցությունների մեծ մասը հանդես է գալիս արտահայտչական տարողությամբ:

⁴ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե. 1965, էջ 120:

⁵ Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, էջ 57:

⁶ Տե՛ս Պ. Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, Եր., 1972-1976, հետագա շարադրանքում մեջբերված օրինակներից հետո նշվում են համապատասխան հատորն ու էջը:

Ծագման, սերման սեռականով բառակապակցություններ են դիտվում բառերի այն կապակցությունները, որոնց լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից ծագել, առաջացել է լրացյալով արտահայտված առարկան: Ինչպես օրինակ՝ *հայի որդին* (I, 38), *չայնի արչագանք* (I, 42), *գոյեմարտի աղմուկներ* (I, 35), *լարման ուժ* (I, 461), *վառողի ծուխ* (I, 17) *մոր որդի* (I, 87), *գարնան սելավ* (I, 11), *մարտի բոհ ու բոհ* (I, 14), *բոցերի լեզուն* (I, 15), *սուրճի հոտ* (II, 128), *հողի, վարունգի, խտրի, մարտի բուրմունք* (II, 134) և այլն, *լամայի լույս* (I, 236), *զեպակի ջուրը* (I, 343), *խաղողի վազը* (I, 325), *երկնի կապույտը* (I, 325), *սխառրի հոտը* (I, 305): Որոշ լեզվաբաններ ծագման, սերման սեռականով կապակցություններ են համարում նաև այսպիսիները՝ Մուրացանի վեպերը, Տերյանի բանաստեղծությունները, Ս. Սարյանի նկարները և այլն:⁷

Պ. Սևակի ստեղծագործություններում գործածական են ինչպես ուղղակի, այնպես էլ փոխաբերական նշանակությամբ կիրառված ծագման (սերման) սեռականով լրացում ունեցող կապակցությունները. ինչպես օրինակ՝

Կռվվներում ընկան նրանք.

Ամեն մեկը՝ մի *դասն ճրագ*,

Ամեն մեկը՝ մի *մոր որդի*... (I, 87)

Նա էլ, մարդու պես,

Ունի *ամոթի գագառունը* նույն... (I, 334)

Ականջս *անդառի խոսք ու զրույցին*

Ես քարանում եմ,

Օ, ո՛չ... կոճղանո՞ւմ: (I, 341)

Ես *բոցերի լեզուն* չե՛մ մոռանա բնավ,

Հրթիռային խաղի թովիչ լեզուն... (I, 15)

⁷ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 421, Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 557, Ս. Աբրահամյան, Ն Պառնապյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 28, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե. 1988, էջ 83):

Ծագման սեռականով կապակցություններն ունեն իրենց ենթատեսակները: Գոյականական բառակապակցություններում ենթակայական սեռականը ցույց է տալիս այն առարկան, անձը, որը մտածվում է որպես լրացյալով արտահայտված առարկայացված գործողության կատարող, դրության, վիճակի մեջ գտնվող: Ընդ որում՝ գործողության առարկայացումը տարբեր աստիճանի դրսևորում կարող է ունենալ համապատասխան լրացյալների մեջ: Մի խումբ գոյականների մեջ գործողության իմաստը բավական ուժեղ է, օրինակ՝ «Հայտարարում եմ՝ Չեմ պրծնի երբեք *կնոջ նազանքից...*» (I, 378), «Ո՛չ թե *դեմքի ծամածրանք*, Այլ օգնություն աղերսելու ճիշ եմ տալիս՝ ցավածներին...» (I, 397), «Ու խշրտուքը մրսող ծառերի Հրդեհում է ինձ, կրակի մատնում Չինգիզ խանի՛ պես» (II, 30), «Մեր *գլխի* թեթև *քափահարումով, ճպոցով աչքի, Խեղձամբ հայացքի, Հոնքերի խաղով, ուսի բորափմամբ* Աջի կամ ձախի այն շարժումներով... (II, 66) և այլն):

Պատճառի, սկզբնապատճառի սեռականով բառակապակցություններում սեռականը ցույց է տալիս այն առարկան, որի պատճառով ստեղծվել է հատկացյալով արտահայտվող առարկան, ինչպես օրինակ՝

- Եվ մինչ *ուրախության* գուլալ իր *արցունքով*
Սփռվելում էր մայրը, որ ապրում է որդին... (I, 13)
- Երկյուղում եմ տվայտանքից չվտարվող,
Կարոտի սև արյունումից եմ սարսավում... (II, 151)
- Քո թանկ անվան համար դեռ շրթներս եմ դողում
Ու *շրշունը շորիդ* հետևում է դեռ ինձ... (I, 220)
- Սփռվելում էր մայրը, որ ապրում է որդին...
...Վշտի արգաստուքը քթարմատին... (I, 13)
- Կգամ, բայց ոչ իբրև լոկ *բնության զարթոնք*,
Ինչպես որ եկել են ձիգ դարերից (I, 21)
- Անվտանգ՝ ինչպես *հրդեհն արևի*
Անվնաս՝ ինչպես օգտակար լորտուն (I, 322)

Մ. Աբեղյանի և Վ. Առաքելյանի աշխատություններում սեռականի նշված իմաստը տարբերակված չէ: Մ. Աբեղյանն այս իմաստն ունեցող կապակցությունները դիտարկում է ծագման սեռականով կապակցությունների մեջ: Ի տարբերություն ծագման սեռականի՝ այս դեպքում սե-

ռականը ցույց է տալիս ոչ թե հարաբերություն, այլ այն առարկան, որը պատճառ է դարձել հատկացյալով արտահայտված առարկայի հանդես գալուն:

Առարկայական սեռականով կապակցությունների լրացում հանդիսացող բաղադրիչը կոչվում է նաև խնդիր (խնդրի սեռական), իսկ ամբողջ կապակցությունը՝ խնդրային սեռականով կապակցություն⁸: «Խնդիր» բառ-հասկացությունը բավական ընդհանուր ձևով է արտահայտում, մինչդեռ այս դեպքում գործ ունենք միայն ուղիղ խնդրին հարաբերակցող սեռական հոլովածների հետ: Եվ ապա այդ բառն ակնարկում է որոշակի շարահյուսական պաշտոն, որը նույն սեռականի համար անվերապահորեն ընդունելի չէ: Նշված կապակցությունների լրացում հանդիսացող բաղադրիչը կրող առարկա է ցույց տալիս և գործածվում է այնպիսի բայանունների հետ, որոնք հարաբերակցում են ներգործական սեռի բայերին: Ուրեմն քննարկման առարկա հանդիսացող կապակցությունները կրող առարկայի և գործողության գոյականական արտահայտություն ունեցող առարկայի հարաբերություն են արտահայտում և սևակյան տողերում օժտված են ոճական ու արտահայտչական կարևոր դերով:

Եվ ի՞նչ կատարվեց, արդյոք հասկացա՞ր

Հարազատության ա՛յն **զգացումին**,

Որ կյանքն էր ջոկ-ջոկ երկուսիս տվել... (II, 179)

Ինչպես կարելի է նկատել, օրինակներում կապակցության լրացումը ուղիղ խնդրի նշանակությամբ է մտածվում (հարազատության զգացում-զգալ հարազատություն և այլն):

- Այս արմատնե՞րն են

Խոտր ու ծառերի անդրադարձումը,

Թե՞ արմատների անդրադարձումն են

Խոտ ու ծառերը... (VI, 78)

Ծափ տալու պես,

Եվ՛ հնազանդ իմ **ափերի** այդ **շարժումին**

Քարափները գալի՛ս իրար,

Միանում են իրար անձայն... (II, 211)

⁸ Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, էջ 64:

Եվ փափք աստըծու,

Որ **աղմուկների հասունացումից**

Թագադրվում է ո՛չ թե գիշերը,

Այլ օ՛րն է ծնվում: (II, 25)

Մինչևիսկ չունեն **պարտքի զգացում**:

Եվ ոտից-գլուխ քո պարտքն են որ կամ: (I, 504)

Խոսելով նյութի սեռականով կապակցությունների մասին՝ նշենք, որ այս սեռականն էլ ունի ծագման իմաստ, որը մասնավորված է նյութի նշանակությամբ, նրանով, որ ցույց է տալիս այն նյութը, որից պատրաստված է մեկ այլ առարկա: Նշված հանգամանքով տարբերվում են նյութի և ծագման սեռականները:

Նյութի սեռականով կապակցությունները մեծ մասամբ փոխաբերական կիրառությամբ են օժտված Սևակի ստեղծագործություններում, ինչպես օրինակ՝ «Հարկավոր է լինել գոնե մամոնտ կամ խոտ, Որ իր տիպն է թողել **քարածրխի շերտում** (I, 293), «Մեկի արմատները փխրում **բրշով փայրի**, Իսկ այն մեկի մասին-հասունության առփիվ-Շոյիչ մի խոսք ասում...» (I, 217), «Չուզված **ախազի դեղին** կապրոնով Եվ անձեռագործ նեյլոնով կանաչ՝ Հնչեցնում է նա իր ջինզ սոպրանոն (I, 335), «Շքահանդես է սարքել արբունքը – Պատանիների շուրթերի վրա՝ **Բեղերի շարքով**...» (I, 296), «Կախված է հիմա մի ամբողջ աշխարհ՝ Մի գունդուկծիկ, **Բառերի մի պարս**...» (I, 289), «Սպառվել էին նրանց **արցունքի պաշարները** ողջ...» (IV, 271), «Դու մի՛ անցիր **ասֆալտ ճամփով**, գերադասիր ճամփա՛ շինել...» (I, 172), «Պտղավորումն այգու, արտի փոշոտումը փառաբանեն կրքով, Ազնիվ թթխմորով հունցված **ցորեն հացը** մեր սեղանի վրա...» (I, 355), «Տուն երագող գույզի համար Դառնում **սիրո** համեստ **փանիք**...» (I, 361): «Արշալույսն է շարունակում ածել փողը իր ծիրանի» (II, 11):

Ծառի ճյուղը, ճանապարհի սկիզբը, օրվա կեսը, շենքի փանիքը և մման կապակցություններում սեռական հոլովի մասի^օ, թե^օ ամբողջի գաղափար է արտահայտվում: Ավանդաբար այս կապակցությունների սեռականը կոչվել է մասնական, այսինքն՝ սեռականը ճանաչվել է ոչ թե իր, այլ իր լրացյալի նշանակությամբ: Լրացյալն է արտահայտում մասի

գաղափարը: Հավանաբար իմաստային այդ անհամապատասխանությունը նկատի ունենալով՝ որոշ լեզվաբաններ **ծառի ճյուղ, գրքի էջեր, սարի գագաթ** և նման կապակցությունները դիտել են որպես մասի և ամբողջի հարաբերություն արտահայտող և ոչ թե մասնական սեռականով կապակցություն:⁹ Այդ կապակցությամբ ուշագրավ դիտողություններ ունի Վ. Քոսյանը: «Պետք է նկատի ունենալ, որ մասնական սեռական տերմինը գործածում են՝ քերականագիտության ավանդներին հավատարիմ մնալով: Իրականում այս իմաստը պետք է կոչվի ամբողջի սեռական, ինչպես այդ ընդունված է մասնագիտական գրականության մեջ: Մասնական սեռականը բայի լրացման դերում հանդես եկողն է, որը համարժեք է հայերենի մասնական բացառականին¹⁰: Պահանջը միանգամայն հասկանալի է և ընդունելի, սակայն Քոսյանը ամենուր գործածում է «մասնական սեռական» տերմինը: Տեղին կլիներ գործածության մեջ դնել «ամբողջի սեռականով բառակապակցություններ» անվանումը, քանի որ այս դեպքում սեռականով լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի բաղկացուցիչ մասն է լրացյալով արտահայտված առարկան: Այդպիսի կապակցություններում մասը վերագրվում, հատկացվում է ամբողջովին, ինչպես օրինակ՝

Արկի բեկորը սրի պես հատու

Կտրեց ու տարավ ոտքերը նրա... (I, 81)

Աշուն է գարուն...

Իսկ ո՞ր է **տարվա** մեր **եղանակը** (I, 312)

Չարմանում են դեռ

Ամեն **կշեռքի թաթին** դրվելուց... (I, 431)

Ես իմ տառապանքից տոկոնություն հյուսում

Եվ ձգտում են կախվել կանանց թարթիչներից. (III, 186)

Եվ իմ **գրչի ծայրից**, օր-ցերեկով,

Մի պուտ մթին գիշեր հենց նոր կաթեց... (III, 161)

Ուզում եմ, որ ինձ «հայրիկ ջա՛ն» կանչեն

Աշխարհի բոլոր-բոլոր **ծայրերից**: (I, 473)

⁹ Մ. Ասատրյան, Ժամ. Հայոց լեզու, Ե., 1988, էջ 83: Ս. Գյուլբողաղյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1988, էջ 34:

¹⁰ Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցություններ, էջ 67:

Փակ է մեր առջև
Ո՛չ միայն **դուռն ու գավիթը վանքի**,
Այլ գավառն ամբողջ
Եվ ողջ մի երկրի.. (I, 513)
...Ագահ կներծրծի **անչրեի ջուրն** այնպես,
Ասես **վալերյանի կաթիլներ** է ըմպում...(III, 170)
Ու ես բաց եմ անում լուսամուտիս փեղկը... (III, 165)

Վ. Քոսյանը ամբողջի (մասնական) սեռականով կապակցություններ է համարում նաև այսպիսի կապակցությունները՝ աղբյուրի ափ, ծովի եզր, ջրի ափ, գետի եզերք, շենքի բակ:¹¹ Բայց կարծում ենք՝ նման դեպքերում առկա չէ մասի ու ամբողջի հարաբերություն, և սեռականով արտահայտվում է իսկապես «այն տարածությունը, որին կից, սահմանակից է հատկացյալով արտահայտված առարկան»:¹² Իսկ դա արդեն բուն իմաստով մասի և ամբողջի հարաբերություն չէ, ավիլ աղբյուրի համար մաս չէ: Այդպես էլ մյուս դեպքերում:

Մ. Աբեղյանի ըմբռնմամբ՝ պարունակության սեռականը «ցույց է տալիս ինչ-որ տեղում կամ ժամանակում կա կամ կատարվում է»:¹³ Խճողառու գոյականը տեղ կամ ժամանակ է նշանակում իբրև պարունակող, իսկ սեռական լրացումով արտահայտվում է պարունակյալը: Պարունակյալը, ըստ Մ. Աբեղյանի, կարող է դրսևորվել և՛ տեղի, և՛ ժամանակի հարաբերությամբ: Պ. Սևակի ստեղծագործություններում պարունակության սեռականը հիմնականում հանդես է գալիս տեղի նշանակությամբ, ինչպես օրինակ՝ «...Բոլոր փողոցներում՝ **քամիների ժողով...**» (III, 182), «...որ ինձ համար դարձան **արվեստանոց սիրո...**» (III, 162), «...Բայց ինձ չեն կաչում, Ինչպես ձկանը՝ **ջուր օվկիանի...**» (I, 497), «Իրենց **ներսի փառությունից**, Երբ որ... սաստիկ ցուրտ է դրստում» (II, 198):

Ինչպես նկատում ենք, պարունակության սեռականով կապակցությունները հիմնականում փոխաբերական կիրառություններով են հանդես գալիս:

¹¹ Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցություններ, էջ 68

¹² Նույն տեղում:

¹³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 424:

Ժամանակի սեռականով կապակցություններում լրացումը ցույց է տալիս այն ժամանակը կամ իբրև այդպիսին մտածվող մի հասկացություն, որի հարաբերությամբ դրսևորվում, ներկայացվում է լրացյալով արտահայտված առարկան, իրողությունը, օրինակ՝ «**Երեկվա** խոր **վերքն** է սպիացել արդեն» (I, 327), «Իմ քաղաքում հիմա **գարնան իրիկունն** է իջնում շքեղ...» (I, 160), «Ասես **երեկվա ասկյարը** այսօր դարձել է սպա...» (IV, 80), «...Բայց երբ անցել են **ցրտերը չմռան**...» (I, 103), «... Որ հայրենի իմ քաղաքի **վաղվա օրն** է քո դեմ փռում» (I, 112), «Հանուն **վաղվա ճմարություն** թող որ այսօր լինեն սխալ» (I, 174), «Ուզո՞ւմ եք՝ հիշեմ Ծիծեռնակներին ու կոչեմ նրանց **Գարնան** հին **գուշակ**» (VI, 69), «Արդեն **լուսաբացի կիսաքնում** «Բարի լույս» է հնչում բոլոր կանանց համար» (II, 145):

Չի կարելի կասկածի տակ դնել այն իրողությունը, որ այսպիսի կապակցություններում սեռականով լրացումը կարող է հոմանշային հարաբերության մեջ գտնվել համապատասխան հարաբերական անականների հետ: Այլ բան է, որ դա բացարձակ արտահայտություն չունի, և ոճական-կիրառական առումով այդ հոմանիշ դրսևորումները կարող են ունենալ էական տարբերություններ: Այսպես՝ **գարնան իրիկուն-գարնանային իրիկուն, չմռան ցրտեր-չմռնային ցրտեր** և նման կապակցությունների սեռականով լրացումը կամ չունի հարաբերական անականով հոմանիշ, կամ եղածը իմաստով այնքան տարբեր է, որ դա և սեռականի ձևը նույնիսկ հոմանշային առնչության մեջ չեն կարող մտածվել: Նշված հանգամանքը նկատել և արժևորել է Վ. Առաքելյանը: Ըստ լեզվաբանի՝ «մի տարեկան երեխաներ են» և «մի տարվա երեխաներ են» կապակցություններն ամենևին էլ նույն իմաստը չունեն:¹⁴ «**Օրվա այս պահին**» (II, 146), **այսօրվա անուժությունը** (II, 24), **երեկվա երդիկներ, այսօրվա ծիսնկույզներ** (I, 505) և այլ կապակցություններում արտահայտված լրացման դեպքում ոչ մի նշանակություն չունի լրացյալի բայական ծագում ունենալը կամ չունենալը: Այդ առումով մեզ հիմնավոր չի թվում հարցի այսպիսի մեկնաբանությունը. «**Ամառվա արչակուրդ** կապակցության մեջ,- գրում է Վ. Քոսյանը,- առկա է ժամանակային հարաբե-

¹⁴ Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Ե., 1957, էջ 82):

րություն՝ շնորհիվ այն բանի, որ **արչակառոդ** գոյականն ունի բայական ծագում:¹⁵ Կարծում ենք՝ ժամանակային հարաբերության առկայությունն այդ և նման կապակցություններում պայմանավորված է ոչ թե լրացյալով, տվյալ դեպքում՝ **արձակառոդ** բառով, այլ հենց լրացումով, որը ժամանակ ցույց տվող բառ է: Այդ բառը ժամանակային հարաբերությամբ է կապվում իր լրացյալների հետ:

Մ. Աբեղյանը որպես ժամանակի նշանակությամբ սեռականով լրացման դերով հանդես եկող բառերի առանձին խումբ է ներկայացնում տոների անունները՝ **Վարդավառ, Նոր տարի, Չատիկ** և այլն¹⁶:

Պ. Սևակի բանաստեղծական լեզվի յուրահատկությունների տեսակետից սեռական հոլովի իմաստային առումներից ոչ մեկն այնքան ուշագրավ չէ, որքան առարկայի որակական հատկությունը ցույց տվողները: Որակական սեռականով կապակցությունները արտահայտչական հարուստ հնարավորություններով են օժտված՝ մասնավորապես հանդես գալով որպես մակդիր: Եվ դա պայմանավորված է որակական սեռականի իմաստային յուրահատկությամբ: Մ. Աբեղյանը, «որակական սեռական» ասելով, հասկանում է առհասարակ այն սեռականը, որը «նախադասության մեջ կարող է որոշիչ լինել»¹⁷: Ինչպես գոյականի հոլովական իմաստների, այնպես էլ դրա շարահյուսական կիրառության խնդիրների քննության ժամանակ Մ. Աբեղյանի հիմնական ելակետն այն է եղել, որ գոյականը՝ որպես խոսքի մաս, առարկա ցույց տալով հանդերձ, խոսքում կարող է այնպիսի գործողություններով հանդես գալ, որ առարկայական իմաստը գրեթե բոլորովին չեզոքանում է, և իշխող է դառնում հատկանշային, պարագայական իմաստը: Այդպես է լինում ինչպես բայական, այնպես էլ գոյականական անդամի լրացման դերով հանդես գալու դեպքում: Գոյականի շարահյուսական գործածության քննության հարցում դա մեծ գիտնականին մասնավորապես հանգեցրեց պարագայական խնդիրների ընդունման գաղափարին, իսկ սեռական հոլովի իմաստները ներկայացնելիս արտահայտվեց առարկայականից դեպի հատկանշային իմաստները դնելու սկզբունքի կիրառումով:

¹⁵ Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցություններ, էջ 55:

¹⁶ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 425:

¹⁷ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 426:

Մ. Աբեղյանը մասնավորում է որակական սեռականի ընդհանուր բնութագրումը՝ համապատասխան օրինակներով ցույց տալով, որ առարկայի հատկություն ասվածը կարող է նշանակել՝

1. ինչի որ ընդունակ, կարող է մի առարկա (*գործի մարդ, կովի մարդ, որսի շուն*),

2. ինչի համար, որ սահմանված, հատկացված կամ պիտանի, արժանի է մի առարկա (*ընթերցանության գիրք, ծախսի փող, կաթի աման, թեյի գդալ*),

3. ինչ-որ մի բանով լինում է, կատարվում է (*տանջանքի գործիք, փրկության միջոց*),

4. ինչ-որ մի բան լինում է (*չեռքի աշխատանք, քանու ջաղաց*),

5. վիճակ, աստիճան, տարիք և այլն, որ ունի, կամ որի մեջ գտնվում է մի բան (*միջին կարգի դպրոց, նոր ձեռի հագուստ, մի հասակի երեխաներ և այլն*):

Որակական սեռականի այս ենթախմբավորումը հետագա ուսումնասիրողների կողմից լուրջ առարկության չի արժանացել:

Ընդունելի է խնդրի այսպիսի լուծումը, երբ որակական սեռականի մեջ դասվում են նաև գոյականացած ածականի սեռականով լրացում ունեցող կապակցությունները¹⁸: Այսպիսի կապակցությունների լրացումը ոչ թե գոյականաբար գործածված ածականն է, այլ ածականի փոխարեն գործածված վերացական գոյականը, ինչպես օրինակ՝

Հարգած չունենամ այն ծերությունն էլ,

Որ **խնասպության** նույնիսկ **քո՛ւյր** չունի... (I, 382)

Դու մեր մեծ երթի գավազանակիր

Եվ մեր **պատմության** մեծագո՛ւյն **դիվան**,

Մեր **ազնվության գովասանագիր**,

Մեր մտքի պահեստ, հոգու օթևան: (I, 508)

Ես՝ այդ ստի սխալների սրբագիր

Եվ ուշացող **արդարության խմբագիր**... (II, 74)

Էլ հարկ չի՛ լինի, որ ասենք նաև

Ծանրության չափը հավատազրկման... (II, 86)

¹⁸ Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, էջ 87, Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցություններ, էջ 83-84:

Որակական սեռականով մեջբերված բոլոր կապակցություններն էլ գերազանցապես ոճական բովանդակությամբ են օժտված: Դրանք հանդես են գալիս այնպիսի բաղադրիչներով, որոնք լավագույն ձևով նպաստում են սևակյան խոսքի ինքնատիպությանն ու պատկերավորությանը: Դիտարկենք այլ օրինակներ՝ «Ասում են, թե մի բան կա լոկ, Որ անձնապես ու մեն–մենակ են սովորում՝ գիտությունը տառապանքի» (II, 151), «Թե՞ ակամայից ուզում ես նաև Կարդալ **ծերության այբուբենը** պարզ՝ Արդեն ճերմակող մագերեն իմ գլխի» (II, 162), «Եվ **ժամանակի ծովը** քմահաճ Շիշն այդ երբևէ ծովափ կհանի՞» (II, 197), «**Քախալի ճանփերը** տարբեր են լինում: Նա ամեն մեկին տարբեր է սիրում...» (II, 200), «Նոր ես բերում անդարձ կորած մանկությունը, Փոխարկում ես **էժանության քանկությունը**» (VI, 41) և այլն:

Այսպիսով՝ սեռական հոլովով լրացում ունեցող կապակցությունների ուսումնասիրությունն այն համոզմանն է բերում, որ դրանք ոճական առումով ամենևին էլ միատեսակ չեն: Կան սեռականով բառակապակցությունների տեսակներ, որոնք ինքնին օժտված են ոճական արտահայտչականությամբ, և գրողին, բանաստեղծին մնում է ըստ անհրաժեշտության դիմել դրանց գործածությանը՝ ապահովելու համար խոսքի համապատասխան արտահայտչականությունը:

Քանալի բառեր - *Պարույր Սևակ, բառակապակցություն, գոյական, որակական, հոլով, լրացում, սեռական, ծագման սեռական, սերման սեռական, ամբաղջի սեռական:*

L. Hovhannisyan - Genitive noun phrases in Paruyr Sevak's poetry. The corresponding factual material of Paruyr Sevak's works shows that in noun word combinations with homogeneous components the connections that have genitive complement are absolute majority in comparison with all the other word combinations that have complement with oblique cases.

The noun phrases with genitive complement are featured by their internal diversity. In stylistic terms they absolutely aren't the same. There are types of genitive phrases which are endowed with stylistic expressiveness, and the writer,

the poet can only use them as needed to ensure the appropriate expressiveness of speech.

Keywords: *Paruyr Sevak, phrase, noun, qualitative, case, complement, genitive, subjective genitive, genus genitive, genitive of abundance.*

Л. Оганесян - Существительные словосочетания в родительном падеже в поэзии П. Севака. Соответствующий фактический материал в произведениях П. Севака свидетельствует, что в составе существительных словосочетаниях с однородными компонентами связности, которые имеют дополнения в родительном падеже, составляют абсолютное большинство в сравнении со всеми другими словосочетаниями имеющие дополнения в косвенных падежах.

Существительные словосочетания, имеющие дополнения в родительном падеже, выделяются внутренним разнообразием. В стилистическом аспекте они далеко не одинаковы. Есть виды словосочетаний в родительном падеже, которые наделены стилистической выразительностью, и писателю, поэту остается использовать их по мере необходимости, чтобы обеспечить надлежащую выразительность речи.

Ключевые слова: *Паруйр Севак, словосочетание, существительное, качественный, падеж, дополнение, родительный, родительный субъекта, родительный рода, родительный избытка.*

**«ՃՅՈՒՂՆ ՉԻԹԵՆՈՒ»-Ց ՄԻՆՉԵՎ «ԽՆԿԻ ԾԱՌԵՐ»
(ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԻՄ ՓՈՐՉԻՑ)**

*Մեսրոպյան Անուշավան
(Ոկրահնայի գրողների միության անդամ)*

ա/ «Ճյուղն ճիթենու»

Լվովում իմ ուսումնառության սկզբնական տարիներին թեև չէի մտածում թարգմանչի աշխատանքի մասին, սակայն լեզուն ուսումնասիրելիս միշտ առաջանում էր այդ ցանկությունը: Երբ արդեն բավական տիրապետում էի ուկրաիներենին, ուզում էի հայերեն թարգմանել ուկրաինացի դասական գրողների՝ ժամանակին արգելված գործերից մի քանի մտուշ, սակայն իմ համակուրսեցիները ցանկանում էին կարդալ ժամանակակից հայ արձակագիրներին, նրանց, ում գործերը թարգմանված չէին ուրիշ լեզուներով (օրինակ՝ ռուսերեն):

1993-95 թվականներն ինձ համար ճակատագրական էին: Երեք տարի Լվովում էի, երեք տարի նյութական ծանր վիճակիս պատճառով չէի կարողանում ամառային արձակուրդներին գալ Հայրենիք: Երբ իմ այնտեղ ապրելը դարձավ անհնարին, 1995-ին կտրուկ որոշեցի թողնել ամեն ինչ ու վերադառնալ տուն: Եվ երբ եկավ ժամանակը, ու սկսեցի հավաքել իմ իրերը մի ճամպուկում, հերթը հասավ գրքերիս: Չգիտեի՝ որը վերցնեմ, որը թողնեմ: «Խնկի ծառեր»... 1991 թվականին Ուկրաինա մեկնելիս (պատրաստվում էի սովորել Լվովի Ի. Ֆրանկոյի անվան պետական համալսարանի ուկրաինական բանասիրական ֆակուլտետում), Երևանում իմ մտերիմ ընկերներից մեկը ճանապարհելիս ինձ նվիրեց փոքրիկ և տեսքով անշուք մի գիրք. Լևոն Խեչոյան, «Խնկի ծառեր», Երևան, «Նաիրի», 1991:

-Թեև այնքան էլ հայտնի անուն չէ, սակայն այսօրվա մեր լավագույն գրողներից է, այնտեղ կկարդաս, համոզված եմ՝ պետք եղած դեպքում ուժ կտա քեզ,– ասաց ընկերս:

Ժամանակ առ ժամանակ թերթում էի գիրքը, երբեմն չէի կարողանում ըմբռնել ոճը, ասեմ ավելին, կարծես ինչ-որ անտեսանելի և վանող ուժ կար մեր միջև, որի պատճառով էլ չէր ստացվում շփումն ու ծանոթություն-

նը. այդ գիրքը, ասես միայնակ և խռոված, համեստ ու մոռացված իմ գրապահարանում էր՝ ուկրաիներեն բոլոր ձեռնարկներիս կողքին:

Ամառ էր, շոգ ու տոթ օր... Հենց «Տոթ օր» պատմվածքից այս էլ որե-
րորդ անգամ սկսեցի դարձյալ թերթել գիրքի էջերը: Եվ ինձնից անկախ
խորասուզվեցի ընթերցանության մեջ: Կլանեց միանգամից: Կարծես
կրակ էր՝ նման հրավառ գնդի, որ միայն աճպարարը կարող է շատվար-
պետորեն պտտել ու վայր չգցել, և եթե նա ընտելանա ու գտնի բռնելու
հնարքը, ուրեմն արդեն «թամբին է»... Որքան դժվար էր Խեչոյանի հե-
րոսների աշխարհի մտնելը, կրկնակի դժվար էր այդ աշխարհից դուրս
գալը, իրականություն վերադառնալն ու ւնրա հերոսներին մոռանալը:
Նրա բոլոր հերոսները հենց մենք էինք: Նա գրում էր մեր մասին, ամեն
ինչ պատմում էր բոլորիս անունից: Խնդիրն այն էր, թե մեզնից յուրա-
քանչյուրը երբ էր հասնում դրա հստակ գիտակցմանը: Երբ ավարտեցի
գիրքը, հասկացա՝ ինչքան էլ դժվար լինի մեն-մենակ ապրելը օտար
երկրում՝ առանց որևէ տեղից ստացվող ֆինանսական օգնության և ու-
սանողի խղճուկ թոշակով, ինքս պետք է լուծեմ իմ հարցերը: Եթե արդեն
նախապես որոշել էի տունվերադառնալ, նրա հերոսի՝ Խելառ Օնանի
պես պետք է ձեռքս վերից վար թափ տայի ու ասեի.

-Է՛հ...

Այդպես Խեչոյանի գիրքն ինձ համար խարխալ դարձավ Լվովում և
թույլ չտվեց վերադառնալ Հայաստան: Այդ գիրքն ինձ սովորեցնում էր,
դաստիարակում: Ուսանողական դժվար, երբեմն հուսահատ օրերիս մեջ
ուժ էր տալիս ինձ: Աշխատում էի ինքնամոռացության աստիճան: Այն
ինձ թարգմանիչ դարձրեց:

Դրանից հետո իմ կյանքում ամեն ինչ ուրիշ ընթացք ստացավ: Ողջ
ամառն անցավ «Խնկի ծառեր»-ի հետ: Որոշ պատմվածքներ արդեն
հասցրել է թարգմանել, իսկ իմ համակուրսեցի ընկեր-«խմբագիրները»
հնարավորին սուգում էին խմբագրել աշխատանքս. Խեչոյանի ոճն ան-
սովոր էր նրանց. «...Այդպես չեն գրում, այդպես չի հնչում, չակերտները
չափազանց շատ են, ուրիշի ուղղակի խոսքն ավելի կգեղեցկացնի գոր-
ծը: Սա ի՞նչ բան է, ինչպե՞ս թե՛ Մարգարը կերավ Աստվածաշունչը...» և
այլն, և այլն: Ոմանք ծիծաղում էին իմ արածի վրա, ոմանց էլ, ընդհակա-
ռակը, պատմվածքները դուր էին գալիս: Տարիներ անց, երբ «Հողի դողը»
թարգմանված էր, և ուզում էի տպագրել, շատ խմբագիրներ հետ էին վե-

րադարձում՝ ասելով, որ այդպես հնարավոր չէ, որ «հողի դող» չի կարող լինել: «Դողի» փոխարեն պետք է գրել «թրթռալ»: Իսկ ես նրանց ասում էի՝ դու կանգնած ես մայթին, և տանկը գալիս է դեպի քեզ. այդ ձայնային տատանումը հնարավոր չէ ցնցում բառով արտահայտել:

Ես չէի կարող փոխել գրողի ոճը, ինչքան էլ ընկերներս այն տարօրինակ համարեին, չէի կարող փոխել Խեչոյանի կետադրությունը, ինչքան էլ ընկերներս ոչ ճիշտ գտնեին իմ կետադրածը: Ամիսներով ցերեկներն ընկած այս ու այն գրադարանները՝ կարդում էի ուկրաինացի արձակագիրների գործերը, համեմատում Խեչոյանի ոճը ուկրաինացի արձակագիրների ոճի հետ, մինչև որ ծանոթացա ուկրաինացի դասականներ Եվգենի Պաշկովսկու, Եվգենի Հուցալոյի, Վասիլի Պորտյակի, Վասիլի Ստեֆանիկի ստեղծագործություններին (նրանք իրենց ոճով, բառի նկատմամբ ունեցած վերաբերմունքով և որ ամենակարևորն է՝ թեմայով (թե՛ Ստեֆանիկը, թե՛ Պորտյակը գրում են հայրենի եզերքի՝ կարպատյան գյուղերի մասին) հարազատ էին Խեչոյանին), մինչև որ գտա նաև Խեչոյանի ոճին հավատարիմ ու հարազատ խմբագրին (այժմ Ուկրաինայում ճանաչված բանաստեղծ)՝ իմ համակուրսեցի Իրինա Ստառավոյտին: Ես թարգմանում էի, նա խմբագրում էր այդ «անսովոր արձակը», զարմանում, և դա ինձ ոգևորում, ուժ էր տալիս: Հայ գրողի ստեղծագործություններն այնքան մեծ ազդեցություն թողեցին նրա վրա, որ հետագայում, երբ տպագրության էր պատրաստվում Խեչոյանի առաջին գիրքը, նա գրողի հանդեպ իր հիացմունքն արտահայտեց բաց նամակով, որը տպագրվեց «Գրական թերթ»-ում (1999 թ. 1-15 հուլիսի). «...Բռնանալով ինքը քեզ վրա, դաժանորեն լեզուդ սեղմելով ատամներիդ տակ՝ Դու, այնուամենայնիվ, կարող ես խոսել ամենից կարևորի մասին: Դու ճիշտ ես, և ոճը Քո ճիշտ է: Քո հերոսները լռակյաց են, ինքնամփոփ և չափազանց դժվար է հարկադրել նրանց խոսել-բացատրվել իրենց համար օտար լեզվով: Բայց մենք (թարգմանիչը, խմբագիրը) ազատակամություն չենք արել: Մենք համբերատար կերպով սովորեցրել ենք նրանց և, ազնվորեն ասած, ինքներս էլ սովորել ենք նրանցից: Քո ձիրքի երեք սահմանները՝ զգացումը, պատումը, դասը, միաձուլվել են սարսուռի և թրթռումի միասնական զգացումի մեջ...»: Այն տարիներին Իրինա Ստառավոյտը հեռուստատեսությամբ վարում էր «Հատորներ» գրական հեղինակային հաղորդումը: Եվ քանի որ թե՛ համալսարանում, թե՛ գրա-

կան շրջանակներում հետաքրքրությունը Խեչոյանի ստեղծագործությունների հանդեպ շատ մեծ էր, մենք գրական հաղորդում պատրաստեցինք նրա մասին:

Ուկրաինայի գրողների միության պաշտոնաթերթում՝ «Լիտերատուրնայա Ուկրաինա»-ում, առաջինը տպագրվեց «Նամակ» պատմվածքը, որը հայ ժամանակակից գրականության հանդեպ իմ դասախոսների հետաքրքրությունը շարժեց. «Վաղուց այդքան հաճելի արձակչեինք կարդացել...»: Այնուհետև Լվովի ԳՄ «Լիտերատուրնի Լվիվ» շաբաթաթերթում լույս տեսավ «Խոզը» պատմվածքը. այս պատմվածքը վերնագրի առումով աշխուժություն առաջացրեց ընթերցողների մեջ: Իսկ վերջում՝ հուսահատություն ու վախ. «... այս մի մատ երեխան հետո ինչպե՞ս է կյանքի հետ լուծելու իր խնդիրները...»: Այնուհետև «Ջեռնա» ուկրաինալեզու հանդեսում, որ լույս էր տեսնում Գերմանիայում, հրատարակվեցին Խեչոյանից մի շարք պատմվածքներ («Նամակ», «Խոզը», «Ջանգը», «Սպասում», «Տոթ օր», «Թիթեղյա տուփով կոնֆետներ»):

1998թ աշնանը Խեչոյանն այցելեց Լվով: Մի խումբ երիտասարդ գրողներ, որ նրա ստեղծագործության ջերմ երկրպագուներ էին, հանդիպում կազմակերպեցին նրա հետ Լվովի Հայկական փողոցում գտնվող «Վիրմենկա» («Հայուհի») սրճարանում: Այդ հանդիպումը տեսագրելու էր եկել Լվովի հեռուստատեսության «Հատորներ» գրական հաղորդաշարի խմբագրակազմը: Հաղորդումը եթեր հեռարձակվելուց հետո նրանք Խեչոյանի՝ Լվովում գտնված օրերի մասին պատրաստեցին մեծ հաղորդում (որից որոշ հատվածներ հետագայում օգտագործել է Ջուլիետ Կաժոյանը Լևոն Խեչոյանին նվիրված գրական հաղորդման մեջ):

Այս բոլոր նախապայմաններն անհրաժեշտ դարձրին, որ Լվովում հրատարակվի գրողի պատմվածքների ժողովածուն: Ես որոշեցի Երևանում տպագրված «Խնկի ծառեր»-ժողովածուի բոլոր պատմվածքները հրատարակել առանձին գրքով, առանց համանուն վիպակի: Եվ միայն շատ մեծ ջանքերի շնորհիվ կարողացա Լվովի «Ֆենիքս» հրատարակչությունում 2000 թվականին 100 օրինակով տպագրել «Ճյուղն ձիթենու» վերնագրով: Ուկրաինացի ընթերցողին հայ անձանոթ հեղինակին ներկայացնելու համար անհրաժեշտ էր առաջաբան, ինչի համար դիմեցի Հրանտ Մաթևոսյանին: Նա սիրով ուղարկեց իր խոսքը. «Հայ ընթերցո-

դի համար Լևոն Խեչոյանի հայրնությունը իրական պարզև է: Կարողում եմ նրա գործն ու հաճախ երանի եմ տալիս նրան. բաներ, որ ես էի կռահում, միայն կռահում էի, իր համար այբուբեն են. բաներ, որ ես հրրճվանքով որպես գյուր էի անելու, իր համար սովորական իրողություն են: Կյանքը գիրի և գիրի՝ գրականությունը ինչ է: Մեր դժվար, ինչ-որ տեղ նույնիսկ հակադրական պայմաններում իր ճշմարիտ էջերը շարադրել է: Լավ արչակագիր է գալիս, աշխատում է, իր հացը գրականությամբ է վաստակում, քաջ տղա է, մարմինը նույնպես պինդ, և ես վարահ եմ, որ այսօր և վաղը մեր գրականությունը նրանով է շարունակվելու: Նշանակում է՝ մեր մշակույթի վերջը չի և հակառակը՝ գրականությունը մի լավ ժամանակի առաջին օրերն էսպրում»: Իսկ գրքի խմբագիր Իրինա Ստառավոյտը գրքի ծանոթագրության մեջ գրեց. «Ժամանակակից հայ գրող Լևոն Խեչոյանի այս ընտրանին ամենևին էլ պատահական չէ, որ ուկրաիններեն թարգմանությամբ լույս է տեսնում հայրկապես Լվով քաղաքում: Այս քաղաքը երկու մշակույթների կամուրջ է՝ ամուր հիմնաքարով և հենասայնով, որ սկիզբ է առնում միջնադարից, ջրից ու քարից: Խեչոյանի պատմվածքները գրքայնություն չունեն, ասես ինչ-որ ուրիշ մի բան է հիմք տալիս նրանց՝ ի հեռուկա գոթական պճնանքի: Նա բացում է մարդկային և մարդեղացման ներքնաշերտերը»: Գիրքը ձևավորեց հայտնի նկարիչ Օլես Նոհան:

Գրքի տպագրությունից հետո Լվովի հեռուստատեսության տարբեր գրական հաղորդաշարներ անդրադարձան գրքին՝ հաճախ հրավիրելով նաև ինձ: «Կամենյար» թերթում տպագրվեց երիտասարդ գրականագետ Յուրի Հորբլյանսկու «Հայ գրականության էկզոտիկ բույրը» գրախոսականը, որ տպագրվեց նաև «Նորք» ամսագրում (2003, թիվ2). «Նախ պետք է խոստովանեն, որ, չեռքս առնելով հայ անծանոթ գրողի պատմվածքների թարգմանական ժողովածուն, ընթերցումից անսպասելի որևէ բան չէի սպասում և ինչպես սովորաբար վարվում եմ, սկսեցի «շոշափել» տեքստերը՝ հենց սկզբից համոզված, որ գուր ժամանակ եմ վատնում: Չէ՞ որ ժամանակակից արչակի խառնիճաղանջ հոսքում՝ գերգիրականացված, գերհագեցած փիլիսոփայությամբ, առասպելաբանությամբ, հիվանդագին երևույթներով, չափազանցված հոգեվերլուծությամբ ու խոստովանանքով և գրականության մեջ խաղի բազավորության դարաշրջանում պարծենալ նորարարությամբ՝ հանուն նորա-

րարության, գերիրապաշտության՝ հանուն գերիրապաշտության, բնօրինակի չարաշահումով. արդեն հայրնիի հայրնագործումով, գեղարվեստական հնարքներն ու արտահայտչամիջոցներն ի ցույց դնելով, գրահրապարակման անկման ժամանակներում, երբ «բուլվարի» պարտադրանքով լույս են տեսնում մեկօրյա ընթերցման գրքեր, դժվար էր հավատալ գրքի, որը ներծծված էր անկեղծությանը և անսահման ցավով: Սակայն աստիճանաբար «շոշափումից», ինչ համար անսպասելի, թաղվեցի ընթերցանության մեջ: Աչքերով ու լսողությամբ լսիելով տառերի ու բառերի շրշուն-փսփսոցները՝ ինչ էին հասնում մարդկանց չայներ, ամանեղենի զրնգոց, սակայն նրանք ի գորու չէին ինչ կրթելու ընթերցումից և սրեղծում էին գրքում նկարագրվող դեպքերի մի յուրօրինակ ֆոն: Եթե այդ պահին ծանոթներիցս մեկը հայացք գցեր իմ սենյակին, կհամոզվեր, որ ես լսում եմ կյանքի ռիթմը:

Բացելով գիրքը՝ ընթերցողը (հիմնականում՝ լավատեղյակ) չի կարող իր տեսադաշտից դուրս թողնել ծանոթագրությունը, որտեղ նշվում է, թե ինչու Լ. Խեչոյանի այս ընկրանին լույս տեսավ հարկապես Լվովում, քաղաք, որը «երկու մշակույթների կամուրջ է՝ ամուր հիմնաքարով և հենասյունով, որ սկիզբ է առնում միջնադարից, ջրից ու քարից: Իր պատմվածքներում Լ. Խեչոյանը բացում է մարդկային և մարդեղացման ներքնաշերտերը»: Այսպիսի յուրօրինակ գովազդը չի կարող չհեղափոխել ընթերցողին, թեև գրողը մարդկայինն ու մարդեղացումը փնտրում է ոչ թե մեծ քաղաքների բնակիչների նկարագրերի և արարքների մեջ՝ իրենց քաղքենիական մտքերով և կռվազան դեմքերով, այլ գավառաբնակների և անհասկերական մտածողության մեջ: Բազմանշանակ է հայ գրականության իմաստուն, կենդանի դասական Հրանտ Մաթևոսյանի խոսքը. նա նկատելի գարնանքով և հիացմունքով է գրում իր կրտսեր գործընկերոջ մասին (նրա ոչ մեծ խոսքն ասես մի յուրօրինակ առաջաբան է «Ճյուղն շիթենու» գրքին):

...Ընդհանրապես Խեչոյանի պատմվածքները չեն ճնշում ոչ իրենց թախծոր փրամադրությամբ, ոչ հեզնական տոնայնությամբ: Կյանքից վերցված այս փոքրիկ կրավներում կարելի է ուսանելի շատ բան գրնել և միաժամանակ, ինչպես արդեն ասվել է, հոգեկան վայելք սրանալ մարդկային բնավորությունների արտասովորությունից, այուժեպային անսպասելիությունից և թախծոր մեղեդային բառերի հեղեղից, հեղի-

նակի գեղարվեստական մրաժողության անսպասելիությունից: Ահա այսպես, կարդալով գիրքը, մենք կարծես լսում ենք միաժամանակ մի քանի նվագախմբերի երաժշտություն, որ հնչում է մերք փխուր, մերք անսպասելիորեն ուրախ՝ ասես լեռնային առվակների կարկաչուն, պարայինի վերածվող երաժշտություն»:

«Արքայական անտառ»

Իհարկե, «Ճյուղն ձիթենու» գիրքը Ուկրաինայում մեծ հետաքրքրություն ու աշխուժություն առաջացրեց ոչ միայն Խեչոյանի ստեղծագործությունների, այլև ժամանակակից հայ գրականության համդեպ: Այդ պատճառով «Արքայական անտառ» պլանախին տրամադրեցի Ադասի Այվազյանի «Թիֆլիսի ցուցանակները», Վանո Սիրադեղյանի «Հոգեհանը» և Լևոն Խեչոյանի «Կորեացին»: Ալմանախում տպագրվելու էին ուկրաինացի, սերբ, ֆրանսիացի, լիտվացի, ավստրիացի, գերմանացի, ռուս, լեհ գրողների արձակ և չափածո ստեղծագործություններ: Եվ ժողովածուի տպագրությունից հետո ուկրաինական մամուլում («Ուկրաինա մոլոդա» 7 դեկտեմբերի, 2002) լույս տեսավ բանաստեղծ ու գրաքննադատ Օլեքսանդր Իրվանցի գրախոսությունը. «... Չեմ կարող չանդրադառնալ նաև ժամանակակից հայ գրականության համեստ Եռյակին՝ ի թիվս մնացած հեղինակների: Այո՛, պարունա՛յք, մենք մեր հայացքն ուղղել ենք դեպի արևմուտք՝ մոռացության մարտնչով արևելքի գրականությունը: Այս երեք գրողների անունները հարկ եմ համարում ևս մեկ անգամ հիշարակել՝ Ադասի Այվազյան, Վանո Սիրադեղյան, Լևոն Խեչոյան... Ընթերցելով այդ սրեղծագործությունները՝ մեկ անգամ ևս համոզվում եմ, որ մեծ գրականություն գոյություն ունի ոչ միայն Ուկրաինայից արևմուտք: Արևելքում սրեղծվող այս գրականությունը, վարահ կարող եմ ասել, Ադն է մեր այսօրվա գրականության... և ամենակարևորն այս դեպքում այն է, որ բոլոր գործերը բարգամնված են բնագրից, այլ ոչ թե միջանկյալ ու փոփոխվար լեզվից... Այս գրողներից ամեն մեկն իր սրեղծագործություններով կարողարի համաշխարհային գրականության ցանկացած էջ»:

Թեև «Ճյուղն ձիթենու» գրքի տպագրությունից երկու տարի անց արդեն պատրաստ էր «Խնկի ծառեր»-ը, սակայն երկար տարիներ մնաց անտիպ: Գրքի խմբագիր Իրինա Ստառավոյտի հետ որոշեցինք վեպն ուղարկել Դնիպրոպետրովսկում հրատարակվող մեծ ճանաչում և հեղի-

նակություն վայելող «Կուրյեր Կրիվբասու» գրական ամսագրին: Ինձ համար անսպասելիորեն շուտ՝ երեք ամիս անց, երկու համարում տպագրվեց «Խնկի ծառեր»-ը. վեպի ծավալը ամսագրի համար մեծ էր:

«Խնկի ծառեր»

2013 թվականի դեկտեմբերի 7-ին Լվովի «Սրիբնե սլովո» («Արծաթե խոսք») հրատարակչությունը լույս ընծայեց «Խնկի ծառեր» գիրքն այնպես, ինչպես 1991 թվականին տպագրել էր «Նաիրին»: Ծանոթագրության հեղինակը դարձյալ գրքի խմբագիր Իրինա Ստառավոյտն էր. *«Այս արչակը «երեխաների համար չէ, այս գիրը շանթահարում է մարդկային պարադոքսի ողջ խորությունը խրատված է ժայռ, ճիշդ ընդրված բառերի մեջ՝ ցույց տալու, թե ինչպես պետք է «անցնել երկրային դժոխքի ոլորաններով ու անեղծ մնալ»: Խեչոյանի հերոսները կյանքի սահմանաբաժանին հայրնված մարդիկ են՝ հիշողության ճնշումից վիրավոր, ներված պարմության մութ սրվերների մեջ: Մարդիկ, որոնք ողբերգական 20-րդ դարի երջանիկ ու դժբախտ ճակատագրի որոգայթներում են՝ հանուն սիրո, հանուն կորուսյալ երազանքների: Այս գրքում փշուր առ փշուր վերակենդանացող հիշողություններով լի պարմություններ են»:*

Շնորհահանդեսներ տեղի ունեցան Լվովի (հունվարի 24-ին) և Կիևի (մարտի 14-ին) «Ե» գրախանութներում:

Փաստը, որ միայն կես տարվա ընթացքում գրքի մասին գրվեցին մեկը մյուսից հետաքրքիր մի շարք գրախոսություններ (Ն.Յացենկո, «Չմոռանալ, այլ հնարավորություն տալ, որ կյանքը խոսի ստեղծագործությունների լեզվով»; Յ. Կովալ, «Խեչոյանական արձակի հզոր ուժը»; Ի. Ռյաբչիյ, «Տոտեմի փորձությունը. Լ. Խեչոյանի «Խնկի ծառեր ժողովածուն»»; Ա. Դրոգոլա, «Անցում անդունդի վրայով»; Ժ. Կոյալա, «Ցավի մասին, որ հատիկի նման ծլել է մաշկի տակ», Բ. Պաստուխ, «Տաք լույսը և «խելացի տառապանքը», Ի. Կոտիկ, «Ի դեպ, երբ բացերը փակվում են, փակերը՝ բացվում» և այլն), որոնք տպագրվեցին ուկրաինական մամուլում, համացանցային կայքէջերում և գրական հեղինակավոր պարբերականներում (թարգմանաբար նաև հայկական մամուլում («Ազգ», «Առավոտ», «Գրական թերթ», «Հետք», «Գրանիշ» և մի շարք այլ կայքէջեր), ինչպես նաև գրող, լրագրող Ժաննա Կոյալայի հետաքրքիր հարցազրույցը Լևոն Խեչոյանի հետ (ցավոք գրողի վերջին

հարցազրույցը), վկայում են, որ հայ տաղանդավոր գրողի ստեղծագործությունները շատ մեծ հետաքրքրություն են առաջացրել ուկրաինական գրական և ընթերցողական շրջանակներում: Այսօր Լևոն Խեչոյանը սիրված, սպասված և փնտրված անուն է ուկրաինական գրականության մեջ: Ուկրաինացի գրականագետները միմյանցից անկախ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոստովանում են, որ նա այն գրողներից է, որի ստեղծագործությունները համաշխարհային գրականության մակարդակ ունեն. «...գիրքն իրականում (և դա առանց պաթոսի) Նոբելյանի մրցանակի մակարդակ ունի: Ով այն կարդա, այս մտքի հետ չի վիճի»: **(Քոզրան Պաստուխ, [http:// litakcent.com](http://litakcent.com) 02.22.2013):**

Չմանրամասնելով նրանց գնահատականները՝ ընթերցողի ուշադրությանն են ներկայացնում որոշ հատվածներ ուկրաինական արձագանքներից:

1. Ուկրաինական «Քուկվոյիդ» կայքէջի՝ «Ի՞նչ եք կարդացել վերջին ժամանակներս, Չեր տպավորությունները» հարցին բանաստեղծուհի ՕԼԵՆԱ ՀԱԼԵՏԱՆ (Լվով) պատասխանել է.

«Ամենաթարմ ու ամենահուզիչ տպավորությունները սրացել են ժամանակակից հայ արձակագիր Լևոն Խեչոյանի «Խնկի ծառեր» գրքից: Դա վիպակի ու պատմվածքների ժողովածու է, որ պարունակ է վերջին տասնամյակներում Հայաստանում տեղի ունեցած որոշ իրադարձությունների մասին: Ոչ թե պարմական, այլ մարդկային տեսանկյունով, առանց խանդավառ ու հերոսական զգացումների, առանց որևէ մեկին մեղադրելու, առանց հաշվեհարդարի... Լեզուն շար պարզ է, մինչև իսկ ինչ-որ տեղ անկանոն. ճեղքվում է, ինչպես հողը երկրաշարժի ժամանակ: Դա, իսկապես, հենց գիրք է հողի սասանման (ուղիղ և փոխաբերական իմաստներով)՝ երկրակեղևի ցնցումների, ինչպես նաև էքսիկազան, կրոնական և աշխարհայացքային բախումների մասին: Ես անգամ ռեալիզմ չէի անվանի այդ գիրքը, այն ավելի ճիշտ գերռեալիզմ է: Սակայն երազ չէ դա, այլ հայացք է մարդու, որը քնել չի կարողանում, որովհետև բանականությունն ու զգացմունքները, երբ այլևս չեն ընդունում իրադարձությունների ավելցուկը, չեն թողնում փակել աչքերը, որոնց առջև հառնում են այդ արտասովոր, ցավագին ու անտանելի պատկերները:

Եվ, վերջապես, անչափ դժվար է կարդալ այս շար պարզ արձակը, նույնքան բանձր ու չպարմվող, որքան Փարաջանովի կոլաժները, որոնք, թվում է, մի ընդհանուր շրջանակում միավորում են առօրյա իրերի բեկորները: Կամ էլ հայկական խաչքարերը, որոնց պարզ ու անկրկնելի նախշերից անգամ դարեր հետո կարելի է ճանաչել վարպետի շեռքը: **(Bukvoid, 04.02.2013, «Առավոտ»):**

2.«Կարողանալ թափանցել մարդկային էության խորքն ու որսալ նրա հոգու փարուքերունները, նշմարել անրեսանելիև և դարձնել րեսանելի, կարողանալ հերոսների հետ վերապրել նրանց փոքր ու մեծ ուրախությունները և ողբերգությունները՝ միաժամանակ ամենաչնչին դեպքերի մեջ անգամ գրնելով կարևորը. ահա այս ամենը Լևոն Խեչոյանի արձակը դարձնում են անհավարարիորեն չգող, իսկ բառին րիրապետելու վարպետությունն ու ասես թելի վրա շարված կերպարները առանձնահատուկ, ինչպես նաև բավական ինքնատիպ՝ արագ տրեղծվող ժամանակակից (հաճախ ոչ այնքան բովանդակալից) ծով գրականության մեջ:

Լևոն Խեչոյանի «Խնկի ծառեր»-ն այն գրքերից է, որը, խորը թափանցելով մարդկային հոգու մեջ, այնպեղ մնում է ոչ միայն մեկ ամիս ու մեկ րարի: Դա երջանիկ հանդիպում է, որին իսկապես սպասում ես **(Յարինա Կովայ, «Լվիվսկայա զազերա», հունվար, «Առավոտ»):**

3.«Լևոն Խեչոյանի «Խնկի ծառեր» գրքից մեկ պարմվածք անգամ կարդալուց հետո հասկանում ես, որ հանդիպել ես առանձնահատուկ գրողի: Իսկ հաջորդող գործերը միայն ուժգնացնում են այդ րպավորությունը. պարումի իսիր ոճը, միաժամանակ պահպանելով յուրահատուկ բանաստրեղծականը, առեղծվածայինը, թափանցում է առաջին հայացքից առօրեական թվացող դեպքերի մեջ՝ հաջորդ պահին ունակ սովորական կերպարները վերածելու անրիկ աշխարհի միֆական հերոսների: Լևոն Խեչոյանի համար գրելն ամենևին էլ հրապուրանք չէ. նա գիրակցում է իր առաքելության ողջ ծանրությունը. պարմել այն աշխարհի մասին, որրեղից սերվել և որին պարկանում է ինքը: Լեռների մեջ թաքնված այդ աշխարհը զգուշորեն է ընդունում ոչ միայ օրարներին, այլև յուրայիններին...

...Խեչոյանը փոքր արձակի վարպետ է: Ուկրահնական գրականության մեջ համարժեք փնրրություն այս դեպում այնքան էլ հեշտ և շնորհակալ գործ չէ:

...Հեղինակը «Խնկի ծառեր» վիպակի վրա իր աշխատանքը համեմատում է «անդունդի վրա բացված մազե կամրջով» անցնելուն, և այդ կերպարը հավանաբար լավագույնս է բնորոշում Լևոն Խեչոյանի ողջ սրեղծագործությունը. նա ամեն մի բառն ընկրում է այնպես, ասես անում է քայլ, որից կախված է իր սեփական կյանքը ...» (**Անդրեյ Գրոզդա «Անցում անդունդի վրայով» ZAXID.NET 04.02. 2013թ., «Գրական քերթ»**):

«Դա հորդուն, սիմվոլներով հարուստ, խոր ու ինքնատիպ արձակ է, որը համոզիչ է իր մայրական զգացողության և հայրական խոսքի մեծ ուժով, փղամարդկային կայունությանը, կանացի հմայքով, որոնք սրիպում են հիանալ ու անընդհար ասել.«Միս թե ինչպե՛ս պեղք է գրել գյուղի մասին: Նրա անհավարտի դժվար պարզության ու նաև արտաքուստ հասարակ, սակայն միևնչև այժմ անհասանելի՝ իր մարդկանց բացառիկությամբ»: Իսկպպես, կան գրքեր, որոնք կարդալուց հետո մոռանում ու այլևս չես հիշում: Բայց կան այնպիսիները, որոնք մնում են քո մեջ ինչպես սրկումից հետո պատվաստանյութը, որ գերծ է պահում քեզ հիվանդագին անտարբերությունից, կուրությունից ու չիմացությունից: Այդպիսի գրքեր կարդալուց հետո հասկանիր, որ ծել է գրողի մաշկի տակ, մնում է քեզ հետ և բարսխում է արդեն սրտիդ զարկերին ներդաշնակ՝ սրիպելով մրսածել ամենակարևորի մասին: Մի՞թե դա չէ լավ գրքի լավագույն արդյունքը»: **Ժաննա Կոյալա,«Ցավի մասի, որ հստիկի նման ծլել է մաշկի տակ», bukvoid.com.ua,4 մարտի 2013, «Ազգ» 20 սպրիլի 2013:**

Այսօր արդեն փոքր-ինչ ձևափոխելով Հրանտ Մաթևոսյանի խոսքը՝ կարող եմ ասել՝ ուկրաինացի ընթերցողի համար նույնպես «Լևոն Խեչոյանի հայտնությունը իրական պարզ և...»: Ես հայ դասականներից չեմ թարգմանում, որովհետև նրանցից շատերը թարգմանված են, սակայն կարծում եմ՝ իմ թարգմանություններով ուկրաինական գրականություն եմ ներմուծում մեկ այլ հայ դասականի՝ Լևոն Խեչոյանի գրականությունը:

«Ճյուղն ձիթենու»-ց միևնչև այսօր մի ակնթարթ է անցել, բայց այդ ակնթարթում գրականությունը մեր կյանքը Երանգավորող մի Գույն գտավ, հարստացավ արժանապատիվ ապրել թելադրող տեսակով:

Anoushavan Mesropyan – On my experience of translation of Levon Khechoyan's writings. The name of the Armenian writer Levon Khechoyan has a unique meaning in itself in Ukraine. His first book, the short story entitled "Letters," was published in Kiev in the "Literaturnaya Ukraine" official newspaper of UWU. The second one was published in the "Literaturni Lviv" newspaper of the WU of Lviv. Afterwards a series of short stories were published in the Ukrainian magazine "Zerna" (2001), which was published in Germany.

The publishing house "Phoenix" of Lviv published 100 copies of Khechoyan's collection of short stories entitled "Olive branch" in 2000. Critic Yuri Horblyansky wrote, referring to the book: *"If at that time any one of my friends threw a glance at my room where I was reading the book, he would realise that I was listening to the rhythm of life."* Khechoyan enjoyed a great interest among the literary circles of Lviv. In the autumn of 1998 he visited Lviv. A group of young writers organized a meeting with him, which was recorded by the "Volumes" literary talk show of the Lviv television.

Although two years after the publication of the collection of short stories "Olive branch" the book "Incense trees" was ready to print, but remained unpublished for many years. It was published in the most recognized and respected "Courier Krivbass" literary magazine (2004) of Dnipropetrovsk.

On December 7, 2013 the publishing house "Sribne slovo" ("Silver Word") published the "Incense tree" book of 14 stories and a novel entitled the same way in Lviv. Presentations took place in Lviv (January 24) and Kiev (March 14) in the bookstores "E". The annotation was written by the editor of the book Irina Staravoyt. *"This prose "is not for kids, this writing strikes like a lightning. The whole depth of the human paradox is concentrated in the stinging, carefully chosen words to show how to "pass the earthly hell bends and stay intact". Khechoyan's heroes are people who appeared on the dividing border of life wounded by the pressure of memory, in the dark shadows of the history. These people are in the pitfalls of the happy and the unhappy fate of the 20th century, for the sake of love and their lost dreams. This book is full of stories that resurrect memories piece by piece."*

**ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԲԱՌԱՅԻՆ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԵՎ
ԱՐՏԱՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ**

*Միքայելյան Կարինե
(ԵՊՀ)*

Լեզուն մի շարք դարաշրջանների արդյունք է: Այդ թվում նաև ժամանակակից հայերենի տարրերը սաղմնավորվել են շատ հին շրջանում և անընդհատ կատարելագործվել են: Եղել է այն ենթադրությունը, թե մարդկությունն իր առաջացման ու զարգացման որոշ շրջանում չի ունեցել հնչյունական լեզու, և հասարակության անդամները հաղորդակցվել են շարժումների լեզվով, որի ժամանակ գլխավոր դեր խաղացել է ձեռքը, սակայն ներկայումս ապացուցված է համարվում, որ մարդկային հասարակությունն առանց հնչյունական լեզվի գոյություն չի ունեցել: Ցանկացած լեզվի հետագա փոփոխությունները պայմանավորված են ներքին և արտաքին գործոններով: Ներքին գործոնները լեզվական համակարգի ներքին հակասություններն են, նրա անմիօրինականությունը, որոնց հաղթահարմամբ էլ զարգանում է լեզուն: Արտաքին գործոնների թվում են հասարակական փոփոխությունների հետևանքով առաջացած լեզվական փոփոխությունները, երբ ստեղծվում են արտահայտության նոր միջոցներ ու եղանակներ: Բացի այդ, ժողովուրդների շփումն ու փոխազդեցությունը հանգեցնում են լեզվական փոխազդեցության, լեզվական համապատասխան փոփոխությունների: Այդպես է նաև հայերենի դեպքում:

Մոտավորապես մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին հայերենն առանձնացել է հնդեվրոպական ընդհանրությունից և սկսել իր գոյությունը որպես անկախ լեզու: Հայոց լեզվի կազմավորումը բուն իմաստով սկսվում է հենց այս շրջանից և ընդգրկում շուրջ հինգ հազարամյակ: Իսկ մինչ այդ կարելի է հայերենի մասին խոսել որպես հնդեվրոպական ընդհանրության, այսինքն՝ հնդեվրոպական մախալեզվի բարբառներից մեկի մասին: Հնդեվրոպական լեզվի տարբեր բարբառներով խոսողները անհրաժեշտության դեպքում կարող էին հաղորդակցվել, իրար հետ խո-

սել և իրար հասկանալ: Սակայն այն հարցը, թե հնդեվրոպացիներն ունեցե՞լ են արդյոք բարբառային որոշակի հիմքի վրա բարձրացած մեկ միասնական միօրինականացված լեզու, թե՞ խոսել են իրարից անկախ բարբառներով, վերջնականապես լուծված չէ: Հայտնի է միայն, որ գոյություն են ունեցել բանաստեղծական որոշակի ավանդույթներ, հատուկ բառեր ու դարձվածքներ, ժողովրդական բանահյուսության ընդհանուր մտւշներ, հատկապես յուրահատուկ առածներ ու ասացվածքներ, դիցական ընդհանուր գրույցներ, անեծքներ, օրհնանքներ, աղոթքներ և այլն: Հնդեվրոպական մեկ ընդհանուր միասնական լեզվի վերականգնման փորձը որոշ պայմանականություն ունի: Ըստ էության կարելի է խոսել միայն հնդեվրոպական բարբառների համար ընդհանուր գծերի առկայության մասին՝ առանց շեշտելու դրանց՝ մեկ միասնական լեզվի պատկանելու վարկածը: Քանի որ հնդեվրոպական լեզու գլխ և գրականություն չի ունեցել, ուստի այն բնութագրվում է միայն համեմատական լեզվաբանության տվյալներով:

Հնագույն հայերենն ընդգրկում է մ.թ.ա. 12-րդից - մ.թ. 4-րդ դարը: Հնագույն հայերենի մասին էական գաղափար է տալիս վիպասանական հատվածների բառապաշարի քննությունը: Այս շրջանում հայերենի բառապաշարը հարատանում է անձնանուններով (Չարմայր, Տիրայր, Առնակ, Արմենակ, Գառնիկ, Գեղամ, Գյուտ, Եզնիկ, Լուսիկ, Խաչիկ, Կորյուն, Հրաչյա, Մխիթար, Նորայր, Յոլակ և այլն), տեղանուններով (Հայք, Գողթն, Ջերմուկ և այլն): Ըստ Հ. Աճառյանի, Գ. Ղափացյանի, Գ. Ջահուկյանի և այլ որոշ հայրենագետների տվյալների՝ հնագույն բառապաշարի զգալի մասը փոխառություններ են խոռոերենից (խաղող, խնձոր, նուռն), ուրարտերենից (ծով, ուղտ, բուրգն), ակկադերենից (կղզի, կմախք, ոլոռն, կոթող, գագաթ(ն), տարի, կնիք), արամեաստրերենից (տղա, պախրա, խլուրդ, մանանա, շամփուր, կաթսա, խմոր, մանգաղ, շոբա, կացին, մտրակ, լումա, խանութ, գույգ, դար, շաբաթ, ուրբաթ, սրիկա, փիլիսոփա, թարգման, մագաղաթ, հրեա, քահանա, արեղա, քարոզ, ծոմ, սատանա): Իրանական փոխառությունների թվում են ազահ, ազատ, ազգ, ազդ, ախտ, հունականի՝ ադամանդ, ափսե, եկեղեցի, լիտր, նոտար, սպունգ, ստամոքս, տոկոս, տոմար, քարտ, քրիստոն(յա), արաբականի՝ կավատ, մահիճ, շալակ, քարթվելականի՝ ոչխար, լակոտ,

ճանճ, ճկույթ, բակ, խճուճ, չանչ, ծանր, զզվել, գրույց և այլն:¹ Նկատելի է, որ սրանք յուրացված փոխառություններ են, և լեզվակիրները դրանք կիրառում են իբրև հայերեն բառեր: Ի դեպ, դեռևս վաղնջահայերենում արձանագրված որոշ բառեր հետագայում դուրս են եկել գործածությունից՝ տեղը զիջելով փոխառյալ համարժեքին. այսպես՝ քանչ-դիզենտերիա: Ներքին փոխառության դիմելու փոխարեն երբեմն լեզուն դիմում է արտաքին փոխառության, ինչը պայմանավորված է լեզվամտածողությանը, լեզվաքաղաքականությանը կամ հայերեն համարժեքի և փոխառյալ տարբերակի լեզվապայքարում փոխառյալ բառի հաղթանակով, անգամ եթե հայերեն համարժեքը առավել բարեհունչ է, հասկանալի, ընկալելի, ինչը եզրույթի համար պակաս կարևոր պայման չէ:

Լեզուների շփումն ամենից առաջ հանգեցնում է բառային փոխառությունների. այն բառապաշարի հարստացման միջոցներից մեկն է: Բոլոր լեզուներն էլ այս կամ այն չափով բառեր են վերցնում շփվող լեզուներից: Օտար բառերի ներմուծումն անխուսափելի երևույթ է լեզուների համար, և թերևս հնարավոր չէ մատնանշել որևէ լեզու, որի բառապաշարում օտար բառեր չլինեն: Դա անխուսափելի է, քանի որ տվյալ ժողովրդի նվաճումները անմիջապես կամ միջնորդավորված անցնում են մյուս ժողովուրդներին, որոնք նոր հասկացությունների ու երևույթների հետ հաճախ փոխառում են նաև դրանց անվանումները՝ փոխառյալ բառերով անշուշտ հարստացնելով իրենց լեզվի բառային կազմը: Սակայն «Փոխառությունը կարող է խոչընդոտել նրա հետևողությամբ ստեղծված նորակերտ մայրենի բառի կամ ավանդականի գործածությանը: Այս հիմքի վրա գոյանում է այսպես կոչված «միջազգային» կամ «ինտերնացիոնալ» բառի և մայրենի բառի մրցություն...հատթում է մայրենին, եթե այն արտասանական ու իմաստային «արժանիքներով» համարժեք դիրքում է կամ առավելություններ ունի փոխառյալի նկատմամբ, ընդլայնում է գործածության ոլորտը և մեծացնում գործածության հաճախականությունը»²:

¹ Ավելի հանգամանորեն Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, հ. 1-2, Եր., 1940, 1951: **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:

² **Հ. Զ. Պետրոսյան**, Հայրենագիտական բառարան, Եր., 1987, էջ 614:

Կան լեզուներ, որոնց բառապաշարի զգալի մասը փոխառություն է, իսկ որոշ լեզուներում փոխառյալ բառերը համեմատաբար քիչ են: Այս հարցում որոշակի դեր են խաղում մի շարք գործոններ ու հանգամանքներ: Դրանք են՝ տվյալ լեզվի զարգացման աստիճանը, բառակազմական ավանդույթներն ու հնարավորությունները, այն կրող ժողովրդի քաղաքական, տնտեսական դիրքը և վիճակը, երբեմն նաև միջազգային կյանքում խաղացած դերը և այլն: Ահա թե ինչու մի լեզվի բառապաշարի համակարգում փոխառություններն ավելի մեծ չափերի կարող են հասնել, քան մյուսներում: Նշենք նաև, որ փոխառությունները տարբեր ընդգրկում ու դրսևորում կարող են ունենալ նաև միևնույն լեզվի տարբեր փուլերում՝ պայմանավորված մի շարք այլ կարգի հանգամանքներով: Փոխառությունները կատարվել են դեռևս հին շրջանում, երբ ժողովուրդների միջև եղած կապերն ու շփումները այնքան էլ սերտ և հաստատուն, մշտական ու երկարտև չէին: Ներկայումս էլ չկան մեկուսի ապրող ժողովուրդներ, ուստի չկան նաև մեկուսացած լեզուներ: Ժողովուրդները գտնվում են տնտեսական, մշակութային, քաղաքական կապերի և փոխհարաբերությունների մեջ, հետևաբար շփվում են նաև նրանց լեզուները: Յուրաքանչյուր լեզու իր պատմության ընթացքում շփման մեջ է եղել ուրիշ լեզուների հետ: Լեզվական շփումը սովորաբար հանգեցնում է փոխազդեցության, որը, ըստ ազդեցության աստիճանի, կարող է տարբեր արդյունքների հանգեցնել: Լեզվական փոխազդեցությունն առկա է, երբ լեզուներն ազդում են միմյանց վրա և կրում այս կամ այն փոփոխությունը: Փոխազդեցությունը կարող է հանգեցնել փոխազդեցական ընդհանրությունների, փոխառությունների գոյացմանը: Եթե փոխառություններն արտահայտվում են բառային կազմի մեջ, ապա փոխազդեցությունները համեմատաբար ավելի լայն շրջանակներ ունեն: Դրանք կարող են արտահայտվել ոչ միայն բառերի, այլև արտահայտությունների, ոճերի, մասնիկների փոխադարձ յուրացմամբ և նույնիսկ շարահյուսության մեջ: Փոխառությունը լեզվական այս կամ այն տարրի, հիմնականում բառի անցումն է մի լեզվից մյուսին այդ լեզուների շփման, փոխազդեցության հետևանքով: Այն կատարվում է նոր հասկացություններ, իմաստներ կամ եղածների սահմանազատում արտահայտելու նպատակով³:

³ Ավելի հանգամանորեն Տե՛ս **Կ. Միքայելյան**, Լեզուների փոխազդեցության տեսության

Փոխառություն կարող են լինել բառերը, ածանցները, բառակազմական կաղապարները և այլն: Ըստ փոխառությունների կատարման ձևի՝ տարբերակում են արտաքին և ներքին փոխառություններ: Վերջինս կատարվում է տվյալ լեզվի վիճակների կամ փուլերի միջև: Արտաքին փոխառությունը միջլեզվական ոլորտ ունի. անցումը կատարվում է մի լեզվից մեկ այլ լեզվի: Այն լեզուն, որը փոխառության աղբյուրն է, կոչվում է փոխաստու, իսկ այն լեզուն, որը փոխառողն է, կոչվում է փոխառող (տվյալ դեպքում՝ հայոց լեզուն): Ըստ անցման եղանակի՝ տարբերակում են անմիջական (ողղակի) և միջնորդական (անուղղակի փոխառություններ), ինչը նախևառաջ պայմանավորված է լեզուների անմիջական և միջնորդավորված հարաբերությունների առկայությամբ: Անմիջական հարաբերությունը լեզուների շփումն է, որի հետևանքը երկլեզվությունը կամ բազմալեզվությունն է: Հայերենի դեպքում ձևավորվել է բազմալեզվություն: Փոքր ժողովուրդները դատապարտված են բացի ազգային լեզվից տիրապետելու նաև խոշար պետությունների լեզուներին՝ աշխարհաքաղաքական մարտահրավերներին դիմակայելու, նաև ազգային նվաճումները համաշխարհային գանձարանի մաս դարձնելու հեռանկարով: Թերևս այս է պատճառը, որ հայ-ռուսերեն երկլեզվությանը գուցահեռ վերջին քսանամյակում ձևավորվում է նաև հայ-անգլերեն-ռուսերեն բազմալեզվության փաստը, որն իր լեզվական արտահայտությունն է գտնում նաև բառապաշարային փոխառությունների ոլորտում: Փոխառությունների բնութագրման, գնահատման հարցում էական են լեզվական շփումների, փոխազդեցությունների բնույթը և արժեքը:

Հայոց լեզվի համար փոխառությունները (հատկապես ռուսերենից) եղել և մնում են նրա բառագանձի հարստացման աղբյուրներից մեկը: Փոխառությունների ակտիվությունը պայմանավորված է եղել գիտության և տեխնիկայի, մշակույթի և արվեստի, արտադրության և հասարակական կյանքի բնագավառներում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններով ու տեղաշարժերով, դրանց զարգացմամբ ու վերելքով:

Արևմտահայ գրական լեզվում չափազանց սահմանափակ են փոխառությունները, իսկ գրական արևելահայերենում օտար բառերը շատ-շատ են: Պատճառն այն է, որ եթե գրական արևելահայերենը միշտ դի-

մել է և դիմում է փոխառությունների, ապա գրական արևմտահայերենը ավելի պահպանողական է, խուսափում է օտար բառերի ներմուծումից և թարգմանում է նույնիսկ եվրոպական մի շարք լեզուներում միջազգային ճանաչում ու գործածություն գտած շատ ու շատ բառեր, տերմիններ՝ ստեղծելով հայերեն համարժեքներ: Հավանաբար պատճառն այն է, որ քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայմանները, այլ ժողովուրդների հետ ձուլվելու վտանգի առկայությունը, ինքնուրույն պետականության բացակայությունը, պատմական անմխիթար վիճակն ու դրա գիտակցումը ստիպում են արևմտահայությանը խուսափել ամեն տեսակ փոխառություններից, լեզուն անջրպետել նրա անաղարտությանը վնասող բառերից: Բացի այդ, փաստ է, որ անհարկի փոխառությունները չեն նպաստում լեզվի բառապաշարի հարստացմանը: Ընդհակառակը, դրանք խաթարում են լեզվի մաքրությունն ու անաղարտությունը: Փոխառության ամեն մի առանձին դեպքում պետք է կոնկրետ մոտեցում ցուցաբերել, կշռադատել տարբեր հանգամանքներ, նոր միայն որոշել փոխառյալ կամ ազգային ձևի քաղաքացիության իրավունքը, ըստ որի էլ դրանք կարող են կա՛ն մերժվել, կա՛ն ընդունվել, կա՛ն աստիճանաբար ճշգրտվել:

Կարծում ենք՝ անհարկի փոխառությունները մերժելի են, դրանց պետք է դիմել միայն անհրաժեշտության դեպքում, երբ լեզվի ներքին միջոցներով հնարավոր չէ արտահայտել փոխառյալ բառի իմաստն ու նշանակությունը: Անշուշտ, պետք է հաշվի առնել հայերենի ավանդույթներն ու բառակազմական առանձնահատկությունները: Արհեստական, շինծու, ոչ ճիշտ և անհարկի, ոչ տեղին և ոչ անհրաժեշտաբար կատարված բազմաթիվ փոխառություններ ժամանակի ընթացքում արտամղվում են լեզվից:

Այսպես, հին շրջանում հայերեն են ներմուծվել բազմաթիվ բառեր՝ գանազան լեզուներից, որոնց մի պատկանելի քանակությունը վաղուց կայունացել և դարձել է նրա բառապաշարի անբաժանելի մասը, իսկ մի մասն էլ ժամանակի ընթացքում իր տեղը գիջել է հայերեն համարժեքներին:

Հայ և ռուս ժողովուրդների քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և այլ կարգի առնչությունների ընդլայնմամբ, ամրապնդմամբ պայմանավորված՝ փոխառյալ բառերը հայոց լեզու են

ներթափանցել հիմնականում ռուսերենի միջոցով, երբեմն էլ հենց ռուսերենից, ուստի վերջինս հանդես է գալիս որպես փոխատու կամ միջնորդ լեզու: Ռուսերենն օտարլեզվյան բառերը ենթարկում է իր հնչյունական, ձևաբանական, բառակազմական օրենքներին: Հայերենը դրանք ընդունում է ռուսերենից արդեն որպես պատրաստի ձևեր՝ երբեմն ենթարկելով իր հնչյունական, ձևաբանական, բառակազմական օրենքներին: Փոխառյալ բառերը մուտք են գործում լեզվի կիրառման գրեթե բոլոր ոլորտները:

Առանձին խումբ են կազմում ռուսերենից կամ ռուսաց լեզվի միջնորդությամբ այլ լեզուներից կատարված փոխառությունները, որոնք ունեն հայերեն համարժեքներ, սակայն լեզվի գործառական ոլորտներում հիմնականում չենք հանդիպում դրանց: Հասկանալի է, որ հայերեն համարժեքներից շատերն ամրագրվել են մեր լեզվում, և դրանք չիմանալն ու չկիրառելը անփութության, լեզվին բավարար չափով չտիրապետելու արդյունք է: Օրինակ՝ սպատիա-անտարբերություն, ռեֆորմ-բարենորոգություն, բարենորոգում, ստրես-գերիույզ, ստատուս-կարգավիճակ, կանոնավիճակ, ստատուսփոփոխություն, առաջնավիճակ, օպերատոր-1. գործադեղավար, 2. (բժշկ.) վիրահատ, 3. (կինո.) նկարահանիչ, նկարահանող, ֆորմատ-ձևաչափ, չափս, ֆիզկուլտուրա-մարմնամարզություն և այլն:

Կան նաև փոխառյալ բառեր, որոնց հայերեն համարժեքն առկա են, և դրանք կիրառվում են զուգահեռաբար: Օրինակ՝ ակտուալ-արդիական, այժմեական, արքես-թարախակույտ, անտիգեն-հակածին, արթրիտ-հողաբորբ, անալիտիկ-վերլուծական, անալիտիկա-վերլուծություն, անալոգիականություն-համանմանություն, նմանօրինականություն, ամպուլա-սրվակ, անոմալիա-շեղում, անկանոնություն, ֆիքսել-արձանագրել, հաստատագրել, ամրապնդել, ամրակայել, ֆիստուլա-խուղակ, ֆարմակոլոգ-դեղագետ, ֆարմակոլոգիա-դեղագիտություն, ֆարմացևտ-դեղագործ, ֆարմացևտիկա-դեղագործություն, ֆարմացևտիկ-դեղագործական և այլն:

Մի շարք հայերեն համարժեքներ արդեն ամրագրվել են, և դրանց միջազգային եզրը գրեթե չի հանդիպում կամ խիստ հազվադեպ է կիրառվում՝ համարելով օտարաբանությունների շարքը: Օրինակ՝ դիսպուտ-բանավեճ, դիսպուտանտ-բանավիճող, էնցիկլոպեդիա- հանրագիտա-

րան, էքսպեդիտոր-առաքիչ, էքսպորտ-արտահանում, արտահանություն, էքսպերտ- 1. փորձագետ, 2. (հնցծ.) որակագետ, էքսպերտիզ(ա)-փորձաքննություն, էքսպերիմենտատոր-փորձարար, էքսպերտային-փորձաքննական, փորձագիտական, էքսպերիմենտ-փորձ, ինֆորմատոր-իրազեկիչ, տեղեկատու, ինֆորմացիոն-տեղեկատու, տեղեկատվական, ինտերվյու-հարցազրույց, ինցիդենտ-միջադեպ, ինյեկցիա-ներարկում, ներարկություն, ինսպեկտոր-տեսուչ, ինստրուկտոր-հրահանգիչ, ինստրուկցիա-հրահանգ, լեկսիստ-դասախոս, ֆիկտիվ-շինծու, կեղծ, սարքովի, ֆիկտիվություն-շինծուություն, կեղծություն, ֆիկցիա-կեղծիք, պատրանք, հնարանք և այլն:

Ռուսերենի բառապաշարի մեջ մտած տարբեր ծագում ունեցող բառեր, ածանցվելով կամ թեքվելով ռուսերենի օրինաչափություններով, ձեռք են բերել նոր իմաստներ, այդ նոր իմաստով էլ անցել են հայերենին՝ իբրև ռուսերենից կատարված փոխառություններ: Օրինակ՝ հումանիզմ, ագիտացիա, պրոպագանդա, էմոցիա, ռեալիզմ, իդեալիզմ, ինտելեկտ, ինտելիգենցիա, հումոր և այլն: Սրանց մի մասը հայոց լեզուն պահպանում է անփոփոխ, իսկ մյուս մասը լեզվի ներքին հնարավորությունների գործադրումով դարձնում է հայեցի՝ հիմնական բառաֆոնդը չձանրաբեռնելով օտար բառերով:

Հայերենի բառապաշարի հարստացումը հետևյալ կարգի փոխառված բառերից բացի տեղի է ունենում նաև ռուսերենի մնանողությամբ կազմված իմաստափոխված և ածանցված բառերով ու բառակապակցություններով: Օրինակ՝ խաղաղասիրություն (*миролюбие*), աշխարհաշք (*мировоззреное*), հարվածային (*ударник*), զրոյւմ (*чистка*), հեռահար (*дальнобойный*), շինարար (*строитель*), զգոնություն (*бдительность*), ընդհանուր լեզու զրնել (*найти общий язык*), տեխնիկական բազա (*техническая база*) և այլն: Փոխառությունների տեսակներին, դրանց կառուցվածքային-իմաստաբանական դասակարգմանն անդրադարձել է նաև Հ. Չաքարյանը⁴: Լեզվի բառային կազմը թեև սահմանա-

⁴ Հ. Չաքարյան, Փոխառությունների կառուցվածքային-իմաստաբանական դասակարգումը, «Գլոբալացվող աշխարհը և հումանիտար կիթության ու գիտության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Եր., 2007, էջ 449-456, Լեզվական փոխառությունն իբրև պատմաագագրական ուսումնասիրության աղբյուր, «Լեզու և կրթություն», հ. 5, Եր., 2013, էջ 42-51:

փակ է, սակայն զարգացող, կենդանի լեզվի մեջ բառերի թիվն անընդ-
հատ մեծանում է, ավելի շատ նոր բառեր են ստեղծվում, քան լեզուն
դրանք կորցնում է:

Ժամանակակից արևելահայ գրական լեզվի բառապաշարը սերում է
տարբեր ակունքներից. ըստ այդմ էլ պատմականորեն նրա մեջ զանա-
զանում են ընդհանուրհայերենյան, գրաբարյան, միջինհայերենյան,
բարբառային, արևմտահայերենյան, ժողովրդախոսակցական, փոխառ-
յալ և այլ շերտեր: Փոխառյալ բառաշերտի մեջ մտնում են այն բառերը,
որոնք վերցված են այլ լեզուներից, և խոսողները դեռևս գիտակցում են
դրանց ակունքը կամ փոխառյալ լինելը:

Օտարազգի բառերը տարբերակվում են նաև ըստ այն հատկանիշի,
թե մարդկային գործունեության, բնության և հասարակական կյանքի որ
բնագավառին են վերաբերում: Այսպես, մասնավորապես անգլերենից
փոխառյալ բառերը վերաբերում են կենդանական և բուսական աշխար-
հին, ծովային և սպորտային, տնտեսագիտական ու իրավաբանական,
քաղաքական, տեխնիկայի ու սարքերի, մեքենաների, խոհարարական,
երաժշտական, խաղերի, հագուստների, պատմական, բժշկական բնա-
գավառներին, ազգակցական կապերին ու հարաբերություններին, ինչ-
պես նաև չափի միավորներին ու դրամի անվանումներին: Դրանց մի
մասն անմիջական են, մյուսները՝ միջնորդավորված:

Լեզվի բառապաշարը գտնվում է անընդհատ փոփոխությունների
մեջ. այն ավելի հեշտ է ենթարկվում արտաքին գործոնների ազդեցու-
թյանը, զգայուն է բնության մեջ ու հասարակական կյանքում կատար-
վող տեղաշարժերի նկատմամբ, դրանց ուղեկցում է՝ բառեր կորցնելով,
դուրս մղելով և նորերը ստեղծելով: Փոխառությունը նաև լեզվի բառա-
պաշարի հարստացման հիմնական աղբյուրներից է:

Հասարակական կյանքի զարգացմամբ, մշակութային ու քաղաքա-
կան շփումներով պայմանավորված՝ անգլերենի բառաշերտի զգալի մա-
սը թափանցում է հայոց լեզու՝ անշուշտ հարստացնելով մեր լեզուն,
բայց մինևույն ժամանակ հայերենն այդ բառերից շատերի համար լեզ-
վի ներքին միջոցներով ստեղծում և կիրառում է հայեցի համարժեքներ,
որոշ մասն էլ ոչ գործուն (պասիվ) բառաշերտին է պատկանում՝ չունե-
նալով մեր կյանքի տվյալ ոլորտի ընդգծված զարգացում:

Ծովային տերմինաբանության մի որոշակի շերտ իր արտահայտությունն է գտել մեր լեզվում՝ կատեր [cutter], լայներ [liner < line (գիծ)], պորտ [port (hole)] (1. նավակայան, նավահանգիստ, 2. նավակողանցք, նավակողի անցք), այսերգ [iceberg] (սառցալեռ) և այլն:

Քանի որ Հայաստանը ծովային երկիր չէ, այս բառաշերտի մի զգալի մասը ոչ գործուն է, սակայն հայերենի բառապաշարի մաս են կազմում և իրենց բառարանային արտահայտությունն են գտել:

Սպորտային տերմինաբանությունն ավելի ակտիվորեն է թափանցում հայոց լեզու: Այսպես՝ ապերկոտ [upper-cut], աուտ [out], աերոբիկա [aerobics]<ֆր., բասկետբոլ [basket-ball], բատերֆլայ [butter fly], բեյսբոլ [base-ball], բոքս [box] (բռնցքամարտ, կռիվամարտ), բոքսյոր [boxer] (բռնցքամարտիկ), բոուինգ [bowing], վոլեյբոլ [volley-ball] (ձեռնագրնդախաղ), հանդբոլ [hand-ball], կյուրլինգ [curling], կրոլ [crawl], նոկաուտ [knock-out], նոկդաուն [knock-down] (դիտապաստ, գետնատապալ), օֆ-սայդ [off side], պաս [pass], պենալ [penalty] (տույժ), պինգ-պոնգ [ping-pong] (սեղանի թենիս), ռաունդ [round] (հերթամարտ), ռեգբի [rugby], ռինգ [ring], սուրֆինգ [surfing], սետ [set], սպորտ [sport] (մարզանք), սպորտսմեն [sportsman] (մարզիկ, մարզամրցորդ), ֆուտբոլ [foot ball], հոկեյ [hockey], չեմպիոն [champion] (մրցահաղթորդ), գոլ [goal], կորտ [court] և այլն: Ակներև է, որ սպորտային տերմինաբանության մի զգալի շերտն ունի հայերեն համարժեքները, սակայն վոխառության սկզբնական շրջանում օտարազգի շատ կիրառություններ տարածում են գտել և դեռևս չունեն համարժեքներ, ինչը պայմանավորված է նաև դրանց տարաշխարհիկ (էկզոտիկ) լինելով:

Կենդանական աշխարհի տերմինաբանության թվին են պատկանում՝ ալիգատոր [alligator], բուլդոգ [bulldog], գորիլա [gorilla], կենգուրու [kangaroo], մուստանգ [mustang <իսպ. mestengo], պոնի [pony], սպրուտ [sprut] (ծովահրեշ) և այլն:

Բուսական աշխարհի տերմինաբանությանն են պատկանում՝ վեգետարյան (կա) [vegetarian] (բուսակեր), գրեյֆրուտ [grape-fruit] և այլն:

Կենսաբանական, բժշկական որոշ տերմիններ ևս անգլերենից են անցել հայերենին՝ գենոմ [genome], կրուպ [croup] (խոչ, խոնակ, խռուկ, աքլորախեղ), ստրես [stress] (զերհույզ) և այլն:

Տեխնիկայի զարգացմամբ պայմանավորված՝ մեր կյանքում մուտք գործեցին ամերիկյան սարքերն ու սարքավորումները, բնականաբար մաս դրանց անվանումներն ու տեխնիկական բազմաթիվ տերմիններ: Այսպես՝ անտիֆրիզ [antifreeze] (հակասառուցիչ), բուլլոզեր [bulldozer], բունկեր [bunker], գլեյզեր [glazer], գրեյդեր [grader] (ուղեհարթիչ), ջիպ [jeep], կաուչուկ [caoutchouc], կոմբայն [combine], կոնտեյներ [container < contain] (բեռնամփոփ, բեռնարկղ), լազեր [laser < light amplification by stimulated emission of radiation], օֆսետ [offset printing] (ռետինատպոթյուն), սլայդ [slide], սպիդոմետր [speed +մետր] (արագաչափ), ստարտեր [starter] (ընթացաշարժիչ), ստենդ [stand] (1. ցուցադրավիտել, վահանակ, 2. մեքենաները փորձելու հարմարանք, փորձատեղ), տրակտոր [tractor], տրամվայ [tramway], տրոլեյբուս [trolleybus], թունել [tunnel], ֆեն [fan], էքսկավատոր [excavator <լատ. excavare] (1. հողափոր, գետնավորիչ (մեքենա), 2. (բժշկ.) արտաքերիչ (գործիք)), էքսպրես [express < լատ. expressus] (ճեպընթաց (գնացք և այլն), արագացված), էսկալատոր [escalator < լատ. scala սանդուղք] (շարժասանդուղք) և այլն:

Ակնհայտ է, որ իմաստային այս խմբի որոշ տերմինների համար հայերենը ստեղծել է համարժեքներ և դուրս մղել օտարազգի բառը, սակայն շատերի համար էլ դեռ գտնված չեն համարժեքներ, և դեռևս կիրառվում է օտար, փոխառյալ բառը:

Մշակութային շփման հետևանքով անգլերենից փոխառնվել են երաժշտական, պարարվեստի բազմաթիվ տերմիններ: Այսպես՝ բլյուզ [blues], վիդեոկլիպ [videoclip] (տեսահոլովակ), ջազ [jazz], ջազ-բանդ [jazz-band], մյուզիկոլ [musical < musical comedy] (երաժշտական կոմեդիա), մյուզիկհոլ [music -hall], օպ-արտ [op-art < optical art], պոպ-արտ [pop(ular)art], սկետչ [sketch], սլայդ [slide], ֆիլմ [film] (1. կինոնկար, 2. կինոժապավեն, չարլստոն [charleston], շոու [show], ռոկնռոլ [rock-and-roll] (պարաձև) և այլն:

Ամերիկյան, անգլիական կենցաղի որոշ տարրեր ևս թափանցել են մեր իրականություն՝ ժողովուրդների շփումով պայմանավորված: Հայերենը վերցրել է խոհարարական և հագուստին վերաբերող զգալի թվով տերմիններ: Ըստ այսմ՝ մասնավորապես անգլերենից են փոխառված՝ բեկոն [bacon], բար [bar] (խորտկարան), բարմեն [barman], բրոյլեր

[broiler] (տապակած ճուտ), վիսկի [whisky], ջին [gin], կեկա [cake], կոկտեյլ [cocktail], կրեկեր [cracker] (չոր բլիթ), պիկնիկ [picnic] (զբոսախնջույք), պուդինգ [pudding] (քաղցր թխվածք՝ քաղցրակուտապ), ռոմ [rum], սանդվիչ [sandwich], չիպս [chips] (տապակած կարտոֆիլ) և այլն: Ի դեպ, կարծում ենք, հաճախ ներքին փոխառությունները ևս կարող են նպաստել լեզվի մաքրությանն ու անաղարտությանը: Ասենք՝ արևելահայ պաղպաղակի դիմաց արևմտահայերենում ունենք սառնանուշ բարեհունչ և գեղեցիկ համարժեքը, ինչը կարող է կիրառվել պաղպաղակի և զանազան անուշեղենների համադրությամբ մատուցվող ուտեստի դիմաց: Հայտնի է, որ լեզվում հայերեն համարժեքի ամրագրման ճանապարհներից մեկն էլ նաև ճաշացուցակներում դրանց ամրագրելն ու տարածելն է: Ուստի կարևորում ենք գրավոր և բանավոր խոսքի հանրային լայն վերահսկողությունը, մասնավորապես՝ մամուլի, գովազդի, ռադիոհեռուստատեսության:

Հագուստ և սրան առնչվող անգլերենից փոխառված բառերի թվին են պատկանում՝ բրիջի [breeches], բուտս [boots], վիլվետ [velvet], գոլֆ [golf], ջենպեր [jumper], պիջակ [pea-jacket], պիժամա [pyjamas < ուրդու լեզու] (ննջազգեստ, տնազգեստ), սվիտեր [sweater], սմոկինգ [smoking], ֆրենչ [french], շորտ [shorts] և այլն:

Խաղերի որոշ անվանումներ ևս անգլերենից փոխառվել են մեր լեզվում՝ բրիջ [bridge], ջոկեր [joker], կյորլինգ [curling], պոկեր [poker] և այլն:

Ռազմական որոշ տերմիններ նույնպես անգլերենից են փոխառված՝ կոմանդոս [commandos] (հատուկ նշանակության ջոկատ Մեծ Բրիտանիայում), ռեյդ [raid] (1. թիկունքային մարտարշավ, ասպատակություն՝ գործերի վիճակը ստուգելու նպատակով), սնայպեր [sniper] (դիպուկահար), բոմերանգ [boomerang] և այլն: Հասկանալի է, որ փոխառությունների մի մասն էլ իմաստափոխության, մասնավորապես բառիմաստի ընդլայնման, նեղացման կամ շրջման արդյունքում են ամրագրվում լեզվում:

Անգլիական և ամերիկյան դրամների անվանումները ևս փոխառված են հայերենում՝ պենս [pence], ստերլինգ [sterling], ցենտ [cent < լատ. centum (100)], շիլլինգ [shilling] և այլն:

Պատմական շատ անվանումներ նույնպես փոխառված են և հիմնականում չեն ունենում հայերեն համարժեքներ, որովհետև ներկայացնում են պատմական այս կամ այն իրողությունը, երևույթը և այլն: Կապիտալիստական երկրներին հատուկ բազմաթիվ անվանումներ, ինչպես նաև քաղաքական տերմիններ ևս փոխառված են՝ բոյկոտ [boycott], բոյսկաուտ [boy-scout] (հետախույզ-սկաուտական), բոս [boss] (տեր, գործազուխ, պարագուխ), բիհեյվորիզմ [behavio(u)rism], բլեֆ [bluff] (հերյուրանք, փշոց), բոմ [boom] (եռուզեռ, իրարանցում, խառնաշփոթ), իմպիչմենտ [impeachment], կովբոյ [cowboy], կոնգրեսմեն [congressman], լեյբորիստ [labourite < Labour Party], լոբբի, լոբբիզմ [lobby], լորդ [lord], ռեկետ [racket], ռեկետիթ [racketeer] (դրամաշոթթ), սկաուտիզմ [scoutism], սպիկեր [speaker], հիպի [hippie], շերիֆ [sheriff] և այլն:

Վերջին տարիներին հայ իրականություն են թափանցել տնտեսագիտական նոր երևույթներ, հարաբերություններ, հետևաբար այս բնագավառի նոր տերմիններ՝ բանկնոտ [bank-note], մարկետինգ [marketing], մենեջեր [manager] (կառավարիչ), մենեջմենտ [management] (կառավարում, կազմակերպում), բիզնես [business], բիզնես պլան [business plan], բիզնեսմեն [businessman], բրոկեր [broker] (միջնորդ), կոնցեռն [concern], չեկ [cheque, check] (կտրոն), էքսպորտ [export < լատ. exportare] (1. արտահանում, արտահանություն, 2. արտահանված քանակություն) և այլն:

Որոշ օտարազգի բառեր էլ հայերենի բառապաշարին են անցել անգլերենից՝ մատնանշելով ազգակցական կապ, հարաբերություն, մասնագիտացում, զբաղմունք և այլն: Օրինակ՝ բուկմեյկեր [book-maker], դետեկտիվ [detective], ջենտլմեն [gentleman], դիզայներ [designer] (ձևավորող), դիսպետչեր [dispatcher] (երթակարգավար, գործակարգավար), լեդի [lady] (1. լորդուհի, 2. տիկին), լիդեր [leader] (առաջնորդ), մեթոդիստ [methodist < հուն.], միլեդի [ֆր. milady < անգլ. my lady] (տիկին), միսս [miss] (օրիորդ), միստեր [mister] (պարոն, պարմանի), ռեկորդսմեն [recordsman], սնոբ [snob] (պճնամոլ), սպոնսոր [sponsor] (հովանավոր), ֆերմեր [farmer] և այլն:

Համակարգչային տեխնիկայի զարգացմամբ պայմանավորված՝ որոշ տերմիններ ևս հայերենին են անցել անգլերենից: Օրինակ՝ ալգոլ

[algarithmic + language], բայտ [byte], բիտ [bit < binary + digit], կոմպյուտեր [computer < լատ. computare](համակարգիչ), ֆորմուլան [Formula Ttranslator]:

Չանագան այլ ոլորտների մի շարք բառեր ևս հայերենը փոխառել է անգլերենից՝ բրիֆինգ [brifing] (թռուցկածողով), գանգստեր [gangster] (ավազակ), ջունգլի [jungle], դոպինգ [doping], ինտերվյու [interview] (հարցազրույց), կլուբ [club] (ակումբ), քոլեջ [college], կոմիկս [comics], կոմֆորտ [comfort] (հարմարավետություն, բարեհարմարություն, լիահարմարություն, դյուրահարմարություն), կրոսվորդ [cross+word] (խաչբառ, բառահանելուկ), կրուիզ [cruise], լանչ [lunch] (երկրորդ նախաճաշ), լոյալ [loyal < ֆր.], միտինգ [meeting] (ցույց), մոտել [motel < motoristsֆ hotel] (հյուրանոց), նոնսենս [nonsense <լատ. non+sensus] (անմտություն, անիմաստություն, անհեթեթություն), պարկ [park] (զբոսայգի, պարտեզ, հանգստապուրակ), պեմզա [pumice < լատ. pumax] (չեչաքար, սնկաքար), պրես-կոնֆերանս [press-conference], սեյֆ [safe] (անկիզելի զանձապահարան, պահարան), սերվիս [service] (սպասարկում), ստանդարտ [standart] (1. տիպօրինակ, չափանշվածք, 2. կայունաձևություն, մշտակադապար, մշտաձևություն, միօրինակություն), ուիկենդ [wek-end] (հանգստյան օր), ֆլիրտ [flirt] (սիրախաղ), ֆլոմաստեր [flowmaster], ֆոլկլոր [folk-lore] (1. ժողովրդական բանահյուսություն, 2. ժողովրդական ծեսերի, սովորությունների, հավատալիքների և ստեղծագործությունների ամբողջություն), հոլլ [hall] (սրահ, դահլիճ), շամպուն [shampoo] (օճառահեղուկ), ստրիպտիզ [striptease] և այլն: Ուրեմն՝ լեզուների շփումն ամենից առաջ հանգեցնում է բառային փոխառությունների. այն բառապաշարի հարստացման միջոցներից մեկն է: Օտար բառերի ներմուծումն անխուսափելի է լեզուների համար, և թերևս հնարավոր չէ մատնանշել որևէ լեզու, որի բառապաշարում օտար բառեր չլինեն:

Հայերենի հնագույն բառապաշարի զգալի մասը փոխառություններ են խոռեբենից, ակկադերենից, արամեաստրերենից, պարսկերենից, հունարենից, արաբերենից, քարթվերենից, որոնց մի պատկառելի քանակությունը վաղուց կայունացել և դարձել է նրա ենթաշերտային բառապաշարի անքակտելի մասը, հարազատ ու մայրենի, ուստի չի գիտակցվում դրանց փոխառյալ լինելը:

Ռուսերենն ու անգլերենն արդի հայերենի բառապաշարի հարստացման աղբյուրներից են, և այդ լեզուներից կատարված փոխառությունների մի մասը մեր լեզվում ունեն համարժեքներ, որոնց չիմանալն ու չկիրառելը անփութության, լեզվին բավարար չափով չտիրապետելու արդյունք է: Փոխառյալ բառերի մյուս մասն էլ հայերեն համարժեքների հետ զուգահեռաբար կիրառվում է, և լեզվի զարգացման հետագա գործընթացը և լեզվաքաղաքականությունը կողոշեն դրանց առաջնության հարցը: Մի շարք հայերեն համարժեքներ էլ արդեն յուրացված են, ամբողջով էն, և դրանց միջազգային եզրը ներկայումս գրեթե չի հանդիպում կամ խիստ հազվադեպ է կիրառվում, այն մեր բառապաշարի պասիվ, ոչ գործուն շերտն է կազմում կամ համալրում է օտարաբանությունների շարքը:

Անգլերենից փոխառյալ բառապաշարի մի մասը «միջնորդ» լեզվի՝ ռուսերենի միջոցով է կատարվել, որոշները պատմաբառեր են կամ դիպվածային, մյուս մասն էլ վերաբերում են նեոլոգիա շերտին, մասնավորապես կենդանական և բուսական աշխարհին, ծովային և սպորտային, տնտեսագիտական ու իրավաբանական, քաղաքական, տեխնիկայի ու սարքերի, մեքենաների, խոհարարական, երաժշտական, խաղերի, հագուստների, պատմական, բժշկական բնագավառներին, ազգակցական կապերին ու հարաբերություններին, ինչպես նաև չափի միավորներին ու դրամի անվանումներին: Դրանց մի մասը մերվում է հայերեն բառապաշարին, դառնում հարազատ, զուգահեռներ ունենալը՝ աննպատակահարմար, մյուս մասը դառնում է օտարաբանություն, քանի որ դրանց դիմաց ստեղծվում են գործուն համարժեքներ: Այսպիսով՝ 1. հնագույն հայերենից փոխառությունները հիմնականում ազգակից և դրացի ժողովուրդների լեզուներից են, թեմատիկ սահմանափակված են ու վերաբերում են հավատալիքներին, բուսական և կենդանական աշխարհին, աշխատանքային գործիքներին, իսկ վաղնջահայերենից մասնավորապես վերցված են անձնանուններ, մարմնի մասեր, բուսական ու կենդանական աշխարհ, ինչպես նաև աշխատանքային գործիքներ մատնանշող բառաշերտ:

2. Դրանց մի մասը պահպանվում է արդի հայերենում, մյուս մասը աստիճանաբար դուրս է մղվում և անհետանում:

3. Արդի հայերենում նորագույն փոխառությունների մեծագույն մասը, պարզվում է, վերաբերում են գիտական, մասնավորապես տնտեսագիտության, իրավագիտության, բժշկության, մշակութաբանության բնագավառներին:

4. Դրանց մի մասը կրկին մերվում է հայերենի բառապաշարին, մյուսները դառնում են օտարաբանություններ, քանի որ մայրենիում ստեղծվում են նրանց գործուն համարժեքները:

5. Ուստի, լեզվի մաքրությանը կարող է մեծապես նպաստել ճիշտ լեզվաքաղաքականությունը, այն է՝ վերադառնալ դասական շրջանին, հնարավորինս վերականգնել բարբերն ու արմատներն արտացոլող բառապաշարը, բայց առավել հղկված, կրթված լեզվակիրների կողմից ընդունելի տարբերակով:

6. Դա կենսունակության և հոգևոր մաքրության հրամայականն է:

Քանակի բառեր - *բառապաշար, բառաշերտ, հնագույն և նորագույն փոխառություններ, լեզվաքաղաքականություն:*

Карине Микаелян- Внутренние хронологические лексические передвижения и внешние заимствования в армянском. Как древнейшие заимствования и внутренние передвижения в лексическом составе так и самые современные имеют определенные тематические границы.

К древнейшим заимствованиям культовых слов относятся обозначения из сферы фауны и флоры, земледельческих и строительных инструментов, которые называются персональными. В современном армянском языке заимствованными оказывается лексика из более виртуальных сфер европейских языков - чаще всего экономические, юридические, медицинские искусствоведческие термины. Одна часть остается в армянском словарном запасе, другая часть переходит в категорию иноязычных слов, так как в армянском создаются их заменители. Таким образом чистота языка может быть полезным для языковой политики, то есть это возвращение к классической эпохе, восстановление лексического состава, отражающие устои и процессы и жизнь современного социального общества в целом.

Это императив жизнеспособности и духовного катарсиса.

Ключевые слова: *словарный запас, древнейшие и новейшие заимствования, языковая политика, словарный слой*

Karine Mikayelyan - The movement of the words within the language and borrowings in the Armenian language in accordance with the chronology. The oldest borrowings in the Armenian language are mainly from the kin languages or from the languages of the neighboring nations; they are thematically constrained and regard to the beliefs, plants and animals, tools and most of the words taken from the proto-Armenian are personal names, parts of the body, plants and animals as well as layer which indicates tools.

Some of them still preserve in the modern Armenian, meanwhile the others are gradually being displaced.

Most of the modern Armenian borrowings are related to the scientific areas, particularly economics, law, medicine, cultural studies.

Some of them stay in the Armenian vocabulary; meanwhile the others become loan words as their equivalents which become widespread in the Armenian are being used.

So the proper language policy can greatly contribute to the purity of the Armenian language, i.e. going back to the classical era, restoring to the greatest possible extent the vocabulary which reflects the recent principles and processes and the modern life in general but mainly in the smartened variant which would be acceptable for the educated language bearers.

This is the imperative of the vitality and spiritual purity.

Keywords and phrases: *vocabulary, oldest and newest borrowings, language policy, lexical level.*

**ԳԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ
ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ
(ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ)**

Յուզրաշյան Անահիտ
(ԵՊՀ)

Ձևաբանական նորմը ըստ էության ձևաբանական օրինաչափությունն է, լեզվական իրողության կանոնիկ սահմանումը ձևաբանական մակարդակում: Ձևաբանական նորմերի տարածամանակյա քննությունը կարևորվում է հետևյալ խնդիրների քննարկման, վերլուծության և տարամետ կարծիքներից գիտականը ձևակերպելու առումով:

1. Տվյալ խոսքի մասին բնորոշ ձևաբանական հատկանիշները հիմք են դառնում նրանց շարահյուսական և ոճական առանձնահատկությունների համար լեզվի զարգացման տվյալ շրջանում:

2. Նրանք փոխվում են լեզվի զարգացման ընթացքում. ուստի և ձևաբանական օրինաչափության և բացառության սահմանագիծը ենթակա է փոփոխության լեզվի զարգացմանը զուգահեռ: Լեզվի զարգացման մի շրջանի համար բացառությունը կարող է դառնալ օրինաչափություն լեզվի զարգացման հաջորդ շրջաններում:

3. Այս տեսանկյունից էական է դառնում միջին հայերենի շրջանում գրաբարի օրինաչափությունների և բացառությունների դրսևորումները:

4. Հայերենի՝ քերականագիտությունը ձևաբանական որոշ օրինաչափությունների և բացառությունների հարցում մեկնաբանություններ և տարբեր մոտեցումներ է տալիս՝ դրանց համար ստեղծելով վիճահարույց դաշտ: Դրանց պատմական քննությունը կօգնի գտնել եղած մոտեցումներից ճշգրիտը և գիտականորեն հիմնավորել դրանք:

Ուսումնասիրությունը կատարվելու է երեք բաժիններով.

ա) դասական գրաբարի հոլովման համակարգի ձևաբանական նորմերը և նրանց հետագա փոփոխությունները

բ) դասական գրաբարի բայական համակարգի ձևաբանական նորմերը և նրանց հետագա փոփոխությունները

զ) դասական գրաբարի չթեքվող խոսքի մասերի քերականական հատկանիշները և նրանց փոփոխությունները լեզվի զարգացման հետագա շրջաններում:

Հոլովական համակարգին բնորոշ են հետևյալ եզրերը հոլով, հոլովիչ, հոլովակազմիչ: Հոլովումը բառի թեքման հատկանիշն է, որը կատարվում է հոլովական հիմքի միջոցով: Հոլովումը կատարվում է որոշակի կանոններով, ըստ որոնց էլ ձևավորվում է հոլովը ներկայացնող յուրաքանչյուր առանձին միավոր՝ հոլով:

Գրաբարում հոլովման կարգը բնորոշ է գոյականին, ածականին, թվականին, անորոշ և անցյալ դերբայներին և դերանվանը: Դերանվանական և անվանական հոլովումների միջև կա էական մի տարբերություն. անուն խոսքի մասը հոլովվելիս պահպանում է հոլովական հիմքը, իսկ դերանունը փոխում է այն, ինչը վերաբերում է այն դերանուններին, որոնք անվանական հոլովմամբ չեն հոլովվում:

Փոքրաթիվ դերանուններ են միայն, որոնք դասական գրաբարում հոլովվում են անվանական հոլովման հատկանիշներով. դրանք են ստացական դերանունները(իմ-իմոյ), այլ(այլոց) անորոշ դերանունը, ամենայն (ամենայնի) որոշյալ դերանունը, որոնց հոլովման հատկանիշները կոլիտարկենք տեղում: Հոլովիչ է կոչվում այն ձևույթը, որի միջոցով կատարվում է հոլովումը, որը երևում է սեռական հոլովում, որով և տվյալ հոլովումը ստանում է իր անվանումը: Դասական գրաբարում հոլովիչ ձևույթներն են ի(սիրտ-սրտի), ո (աթոռ-աթոռոյ), ու (զգեստ-զգեստու), ա (տիտան-տիտանայ), ան, ա (տուն-տան) (աշուն-աշնան), և (կայսր-կայսեր): Գրաբարում, ի հակադրություն միջին և նոր գրական հայերենների, հարացույցում հոլովիչը կարող է փոփոխվել եզակի գործիականում և պահպանվել հոգնակի թվում, որի պատճառով էլ գրաբարագետները տարանջատում են պարզ և խառը հոլովումներ. պարզ է այն հոլովական հարացույցը, որը կազմվում է մեկ հոլովիչով և խառը՝ այն հարացույցը, որը կազմվում է երկու հոլովիչով:

Հոլովիչը կարող է լինել ներդրական, որի դեպքում հոլովումը կոչվում է ներքին և վերջադրական, որի դեպքում հոլովումը կոչվում է արտաքին. այս տարբերակումը բնորոշ է հայերենին ընդհանրապես: Հոլովակազմիչ է կոչվում այն ձևույթը, որը կազմում է հոլովական հարացույցի

առանձին միավորներից յուրաքանչյուրը, այն է՝ այս կամ այն հոլովը: Օրինակ՝ բացառական հոլովը գրաբարում հիմնականում ձևավորվում է է հոլովակազմիչով (ի սրտէ), գործիականը՝ ւ, վ, բ հոլովակազմիչներով (աթոռով, սրտիւ, տամբ), հոգնակի թվում հայցական հոլովի ս և թեք հոլովներից ց ձևույթները և՛ հոլովակազմիչներ են, և՛ հոգնակերտներ: Հոգնակի ուղղականում և գործիականում գործառվող ք ձևույթը հոգնակերտ է (աթոռ-աթոռք, աթոռով-աթոռովք):

Գասական գրաբարում ներքին և արտաքին հոլովումներն ունեն հետևյալ դրսևորումները. ա արտաքին-տիտան-տիտանայ, Մծբին-Մծբնայ, Քուշանք-Քուշանաց, ի արտաքին- սիրտ-սրտի, արեւելք- արեւելից, Մովսէս-Մովսիսի, ու արտաքին- աղոէս-աղոեսու, պարտք-պարտուց, Յովհան- Յովհանու, ո արտաքին- մարմին-մարմնոյ, Հայք- Հայոց, ձի-ձիոյ (ձի, դի, թի), ոսկի-ոսկոյ (հոգի, ոգի, որդի, Կողբացի-Կողբացոյ), ան արտաքին- աշուն-աշնան, մանուկ-մանկան, հանգիստ- հանգստեան (գալուստ- գալստեան, ժողովուրդ- ժողովրդեան, ծնունդ- ծննդեան, շաբաթ- շաբաթեան և այլն), պաշտան- պաշտանան, մահ-մահոան, ի-ա խառն արտաքին- քաղաք-քաղաքի-քաղաքաւ-քաղաքաց, ո-ա խառն արտաքին- այգի-այգոյ-այգեաւ-այգեաց, ա ներքին- ձուկն- ձկան, շարժումն-շարժան, ե ներքին- կայսր-կայսեր, արկղ-արկել, աղբիւր-աղբեր, ի-ա խառն ներքին- հարսն- հարսին- հարսամբ- հարսանց:

Գրաբարագիտությունը անվանական հոլովման համակարգը ընդհանուր գծերով ներկայացնում է արտաքին և ներքին, պարզ ու խառն հոլովումների վերոհիշյալ հատկանիշներով, որի շուրջը ներկայացնենք հետևյալ դիտարկումները: 1. Հոլովումները տարբերակվում են նաև ըստ այն հանգամանքի, թե ուղղական հոլովում, երբ բառը հանդես է գալիս իր ուղիղ ձևով, կարող ենք որոշել նրա հոլովումը՝ պայմանավորված բառի ձևային և իմաստային հատկանիշներով: Գրաբարի դասագրքերում ընդհանուր բնորոշումն այն է, որ գրաբարում չենք կարող տարբերել իմաստային, ձևային կամ ձևաիմաստային հոլովումներ, ինչը բնորոշ է արդի գրական հայերենին, բայց որոշակի հատկանիշներ յուրաքանչյուր հոլովման համար առանձնացվում են՝ դյուրին դարձնելու համար բառի հոլովական պատկանելիության որոշման խնդիրը: Այնինչ մեր կարծիքով հոլովման համար տարբերակված ձևային, իմաստային և ձևաիմաստային տեսակները կարող ենք բնորոշ համարել նաև գրաբարին:

Կատարենք համեմատական վերլուծություն.

1. Ի արտաքին հոլովում- արևելահայերենում այն բնորոշվում է իբրև ընդհանրական հոլովում՝ պայմանավորված երկու հանգամանքով. հոգնակի թվի բոլոր գոյականները, բացի մարդիկ, կանայք(տիկնայք) գոյականներից, որոնք պահպանել են գրաբարատիպ հարացույցները,(մարդկանց, տիկնանց, կանանց) ենթարկվում են ի արտաքին հոլովման, օր.՝ աշակերտների, աթոռների և այլն: Երկրորդ հանգամանքն այն է, որ այս հոլովման բառերը, չունենալով ձևափոխության տարբերակով հատկանիշներ, լայն ընդգրկում ունեն: Այս երկու հանգամանքներն էլ ունեն իրենց պատմական հիմքերը:

Այսպես՝ գրաբարում ի արտաքին հոլովումը չուներ ձևափոխության հատկանիշներ, չնայած այս հոլովման բառերի ընդհանուր խումբը դիտելով նշվում է, որ այ (արքայ-արքայի), եայ(պաշտաւնեայ-պաշտաւնէի), եան (վայրկեան-վայրկենի), է (բազէ-բազէի), ոյ (երեկոյ-երեկոյի), ոյթ(սովորոյթ-սովորութի) վերջացող բառերը քիչ բացառություններով այս հոլովման են պատկանում: Մնացած բառերը, այդ թվում նաև հատուկ անունները (Մովսէս-Մովսիսի) և անհոլովական գոյականները զանազանելի հատկանի շներ չեն դրսևորում՝ գնացք-գնացից, Աղոանք-Աղոանից: Միջին հայերենում ի արտաքին հոլովման են անցնում գրաբարի հետևյալ հոլովումների գոյականները

ա) գրաբարի ի-ա խառն արտաքին հոլովման բառերը: Գրաբարում այս հոլովման պատկանող բառերը ևս չունեն զանազանելի հատկանիշներ: Մրանց շարքում կարելի է առանձնացնել նաև ակ (ագարակ-ագարակի, ագարակաւ),անակ (աշտանակ-աշտանակի-աշտանակաւ), արան (պահարան-պահարանի-պահարանաւ), եակ (դղեակ-դղեկի-դղեկաւ), իկ (կօշիկ-կօշկի-կօշկաւ),իչ (գործիչ-գործչի-գործչաւ), ու (եղջերու-եղջերուի-եղջերուաւ), ուկ (ստրուկ-ստրկի-ստրկաւ), արան (պահարան-պահարանի-պահարանաւ), որդ(որսորդ-որսորդի-որսորդաւ), ստան(բուրաստան-բուրաստանի-բուրաստանաւ): Անեզական գոյականներ՝ տառապանք-տառապանաց, հանգամանք- հանգամանաց: Այս հոլովման հատուկ գոյականներ չեն առանձնացվում:

Նշենք այն հանգամանքը, որ եթե այս կամ այն հոլովման պատկանող բառերի շարքում առանձնացվում են որոշակի վերջավորություններով բառեր, ապա դա՝ այդ հոլովման ձևային լինելու համար հիմք չի կա-

րող հանդիսանալ, քանի որ այդ հոլովման պատկանող մեծագույն թվով գոյականներ չունեն ձևային և իմաստային առանձնահատկություններ և այդ վերջավորությունների թվարկումն էլ պայմանական է, քանի որ ուկ-ով վերջացող բառերը ունեն նաև ան-ով սեռականի ձևը ևս՝ ստրուկ-ստրկան, մանուկ-մանկան:

Այսինքն՝ օրինաչափությունը սահմանվում է հետևյալ կերպ ի-ա խառն հոլովման բառերի մեջ կարելի է առանձնացնել որդ, իչ, ուկ, ան ձևույթներով վերջացող բառերը և ոչ թե ի-ա խառն հոլովման բառերը պիտի ունենան նշված վերջավորությունները ուղղական հոլովում, ինչը նշանակում է, որ բառերի մի մեծ խումբ որևէ հատկանիշով չի զանազանվում ուղղական հոլովում: Ի-Ա խառն արտաքին հոլովումը միջին հայերենում մեխանիկորեն անցնում է ի արտաքին հոլովման՝ պայմանավորված երկու հանգամանքով.

1. Միջին հայերենում եզակի գործիականի համար ընդհանրանում է ով հոլովակերտը, իսկ հոգնակի թիվը, եթե հոգնակին կազմվում է եր և ներ վերջավորություններով, ապա հոլովվում է ո արտաքին հոլովմամբ, հետևաբար մեխանիկորեն վերանում է ա հոլովիչը և բառը հոլովվում է ի հոլովիչով:

Դիտենք ի և ի-ա խառն հոլովումների հարացույցները գրաբարում և միջին հայերենում. գրաբար-որդ.-սիրտ, սիրտք, հայց.- (զ) սիրտ, (զ) սիրտս, սեռ.-տր.- սրտի, սրտից, բաց.- ի սրտէ, ի սրտից, գործ.- սրտիւ, սրտիք, ներգ.- ի սրտի, ի սիրտս, միջին հայերեն- ուղղ.- սիրտ, սրտեր, հայց.- (զ) սիրտ, սրտեր, սեռ.-տր.-սրտի, սրտերոյ, բաց.- ի սրտէ(սրտից), ի սրտերոյ, գործ.- սրտով, սրտերով, ներգ.---:

Գրաբար- ուղղ.- հրապարակ, հրապարակք, հայց.- (զ) հրապարակ, (զ) հրապարակս, սեռ.-տր.- հրապարակի, հրապարակաց, բաց.- ի հրապարակէ, ի հրապարակաց, գործ.- հրապարակաւ, հրապարակաք, ներգ.- ի հրապարակի, ի հրապարակս, միջին հայերեն- ուղղ.- հրապարակ, հրապարակներ, հայց.- (զ) հրապարակ, հրապարակներ, սեռ.-տր.- հրապարակի, հրապարակներոյ, բաց.- (ի) հրապարակէ (հրապարակից), (ի) հրապարակներոյ, գործ.- հրապարակով, հրապարակներով, ներգ.---:

Միջին հայերենում մեխանիկորեն ի արտաքին հոլովման են անցնում գրաբարի ի-ա խառն ներքին հոլովման պատկանող բառերը: Նշենք, որ

գրաբարում ներքին հոլովման պատկանող բառերն ունեն ձևային տարբերակում: Ուստի գրաբարում ե ներքին, ա ներքին և ի-ա խառն ներքին հոլովումները կարող են լիովին բնորոշվել իբրև ձևային հոլովումներ, չնայած որ գրաբարի հին և արդի քերականները խուսափում են այսպիսի բնորոշումից: Բայց նրանք լիովին կարող ենք անվանել ձևային հոլովումներ՝ սահմանելով դասական գրաբարի համար նրանց հետևյալ հատկանիշները.

ա) Ա ներքին հոլովման են ենթարկվում

1. ուն, իւն, ութիւն-ով վերջացող գոյականները՝ տուն-տան, սիւն-սեան, ուրախութիւն-ուրախութեան

2. ումն-ով վերջացող բայանուն-գոյականները՝ շարժումն-շարժման, խոտորումն-խոտորման

3. ըն-ով վերջացող բառերը ձուկն-ձկան, այծեանն-այծեման, ձմեռն-ձմեռան, ամառն-ամարան:

Այս շարքից պիտի հանել և իբրև առանձին ան արտաքին հոլովում արժևորել հետևյալ ձևային տարբերակմամբ գոյականները, որոնք առ այսօր դիտարկվում են ա ներքին հոլովման տակ, կամ պարզապես խույս է տրվում նրանց արտաքին կամ ներքին բնորոշումներից: Այնինչ դասական գրաբարն ուներ ան արտաքին ձևային հոլովում, որին ենթարկվում են

ա) իկ, ուկ-ով վերջացող գոյականները՝ մարդիկ-մարդկան, աղջիկ-աղջկան, մանուկ-մանկան

բ) իստ, ուստ, ուրդ, ունդ-ով վերջացող գոյականները՝ հանգիստ-հանգստեան, ծնունդ-ծննդեան, գալուստ-գալստեան, ժողովուրդ-ժողովրդեան

գ) աշուն, գարուն բառերը-աշնան, գարնան

դ) պաշտան բառը՝ պաշտաման սեռականի ձևով նաև մահ-մահոան

ե) ժամանակ ցույց տվող որոշ բառեր, որոնք զուգահեռ կարող են հոլովվել նաև այլ հոլովումներով՝ ամիս-ամսեան(ամսոյ), շաբաթ-շաբաթեան (շաբաթո):

Միջին հայերենում ան արտաքին հոլովման են պատկանում գրաբարի ըն-ով և ումն-ով վերջացող բառերը, որոնցում ն-ն բառի ուղիղ ձևում ընկնում է, քանի որ այն դիտվում է իբրև որոշիչ հող ը-ին զուգահեռ(

միջին հայերենում որոշյալ առման համար գործառվող Գ-ին զուգահեռ ը-ն դիտվում է իբրև որոշյալ առման ձևույթ), հետևաբար ունենում ենք օրինակ՝ ձուկ, շարժում բառերը անորոշ առման ուղիղ ձևեր, որոնց սեռականը դառնում է ձուկ+ան-ձկան, շարժում+ան-շարժման:

Գրաբարի ան հոլովման պատկանող բառերի այն խումբը, որը սեռականում ունեւ եան-ով վերջավորություն, զուգահեռ ենթարկվում է ի արտաքին հոլովման, օր.՝ ժողովրդի, ծնունդի, գալուստի, հանգստի, որոնց հաճախակի գործածությունը հիմք է դառնում, որ այս բառերի եան ձևույթը հոլովիչից դառնա ածանց, և արևելահայերենը ժառանգում է այդ ձևույթը իբրև ածանց, հետևաբար գրաբարյան այդ կառույցները, միջին հայերենից սկսած, ածանցավոր բառեր են դառնում, ածականի ձևախմբաստային հատկանիշներով:

Իկ, ուկ-ով վերջացող ան արտաքին հոլովման բառերի մի մասը պահպանում է ան հոլովիչը, մի մասն անցնում է ի արտաքին հոլովման, իսկ աղջիկ, բառը միջին հայերենում կորցնելով ան հոլովիչի Գ-ն, որը գիտակցվում է իբրև որոշիչ հոդ, անցնում է արևելահայերենին իբրև այլաձև հոլովում, քանի որ ա արտաքին հոլովում նոր գրական հայերենը չունեւ:

Մարդիկ բառը մարդկանց հոգնակի թվի հարացույցն է պահպանել, մանուկ բառը պահպանել է գրաբարի ան արտաքին հոլովման հատկանիշները՝ մանկան, բայց իբրև հատուկ անուն՝ Մանուկ, ենթարկվում է ի արտաքին հոլովման:

Խոսելով գրաբարի ա ներքին հոլովման մասին՝ իբրև ձևային հոլովման, պիտի նշենք, որ ուղղակաճում նրանք ի-ա խառը ներքին հոլովման բառերից չեն զանազանվում, երբ խոսքը վերաբերում է ըն-ով վերջացող բառերին, օրինակ՝ թռռն-թռռան, լեռռն-լերին-լերամբ-լերանց, ձուկն-ձկան-ձկամբ-ձկանց, բայց անձն-անձին-անձամբ-անձանց: Նրանց տարբերությունը երևում է միայն հարացույցում: Նրանց պատմական զարգացման ընթացքն էլ նույնը չէ: Միջին հայերենում Գ-ն՝ իբրև որոշիչ հոդ, ըն-ով վերջացող ա ներքին հոլովման գոյականները կորցնում են ուղղական հոլովում միայն(ձուկն-ձուկ-ձկան, մուկն-մուկ-մկան, թռռն-թռռ-թռռան, ծունկն-ծունկ-ծնկան), այդ թվում նաև ումն-ով վերջացող բայանունները ևս սեռական հոլովում Գ-ն պահպանում են և անցնում ան ար-

տաքին հոլովման, բայց ի-ա խառը ներքին հոլովման գոյականները ն-ն՝ իբրև որոշիչ հոդ, կորցնում են և՛ ուղղական հոլովում, և՛ սեռական հոլովում՝ մեխանիկորեն անցնելով ի արտաքին հոլովման, քանի որ գործիականում ստանում էին ով վերջավորություն, իսկ հոգնակի թվում գրաբարատիպ հարացույցին զուգահեռ ներ(եր) հոգնակերտի շնորհիվ հանդես էին գալիս միջին հայերենին բնորոշ ո հոլովումով: Դիտենք գրաբարի ա ներքին և ի-ա խառն ներքին համանուն գոյականների (այն է ըն-ով վերջացող գոյականների) հոլովման համեմատական զարգացումը ներկայացնող հարացույցային պատկերը միջին հայերենում և արևելահայերենում:

Ա ներքին հոլովում. գրաբար- ուղղ.-ձուկն, ձկունք, հայց.- (զ) ձուկն, (զ) ձկունս, սեռ.-տր.- ձկան, ձկանց, բաց.- ի ձկանէ, ի ձկանց, գործ.-ձկամբ, ձկամբք, ներգ.- ի ձկան, ի ձկունս, միջին հայերեն- ուղղ.- ձուկ, ձկներ, հայց.- ձուկ, ձկներ, սեռ.-տր.-ձկան, ձկներոյ, բաց.- ձկանէ(ձկանից), ձկներոյ, գործ.- ձկնով, ձկներով, ներգ.---: Արևելահայերեն- ուղղ.- ձուկ, ձկներ, հայց.- ձուկ, ձկներ, սեռ.-տր.- ձկան, ձկների, բաց.- ձկանից, ձկներից, գործ.- ձկով, ձկներով, ներգ.---:

Ի-ա խառը ներքին հոլովում. գրաբար- ուղղ.-անձն, անձինք, հայց.- (զ) անձն, (զ) անձինս, սեռ.-տր.- անձին, անձանց, բաց.- յանձնէ, յանձանց, գործ.-անձամբ, անձամբք, ներգ.- յանձին, յանձինս, միջին հայերեն- ուղղ.- անձ, անձեր, հայց.- անձ, անձեր, սեռ.-տր.-անձի, անձերոյ, բաց.- յանձնէ(ից), յանձերոյ, գործ.- անձով, անձերով, ներգ.---: Արևելահայերեն- ուղղ.- անձ(ը), անձեր(ը), հայց.- անձի(ն), անձերի(ն), սեռ.-տր.- անձի(ն), անձերի(ն), բաց.- անձից, անձերից, գործ.- անձով, անձերով, ներգ.---: Գրաբարի ըն-ով վերջացող բառերի մի մասը ան հոլովմանը զուգահեռ արևելահայերենում հոլովվում են նաև ի արտաքին հոլովմամբ, օրինակ՝ ծունկ-ծնկան-ծնկի կամ ի-ա խառը ներքին հոլովման որոշ բառեր էլ անցել են ան արտաքին հոլովման, օրինակ՝ լեռ-լեռան:

Գրաբարի Ա արտաքին պարզ հոլովման բառերը ևս միջին հայերենում անցնում են ի արտաքին հոլովման: Գրաբարի ա արտաքին հոլովումը ուներ մյուս հոլովումներից տարբերվող այն հատկանիշը, որ այս հոլովման պատկանող բառերը միայն հատուկ անուններ են՝ բացառությամբ տիտան բառի, որը նախապես եղել է հատուկ անուն, ուստի

նրանք ունեն միայն եզակի թվի հարացույց, իսկ անեզական գոյականները՝ միայն հոգնակի թվի հարացույց և միայն տիտան բառն է հանդես գալիս եզակի և հոգնակի թվի հարացույցներով: Սրանք ևս միջին հայերենում անցնում են ի արտաքին հոլովման: Գրաբարում հատուկ անունները հանդես են գալիս ի արտաքին (Վաչէ-Վաչեի, Պարսք-Պարսից), ու արտաքին (Խորենացի-Խորենացոյ, Հայք-Հայոց), ու արտաքին (Յորդանան-Յորդանանու), ու-ա խառն արտաքին (Ամատունի-Ամատունոյ-Ամատունեսա, Աղձնիք-Աղձնեաց), ա-արտաքին (Պապ-Պապայ, Քուշանք-Քուշանաց) հոլովումներով, որոնք միջին հայերենում անցնում են ի արտաքին հոլովման, ինչը և անցնում է արևելահայերենին: Դիտենք գրաբարի ա արտաքին հոլովման պատմական զարգացման հարացուցային պատկերը. գրաբար- ուղղ.- տիտան, տիտանք, հայց.- (զ) տիտան, (զ) տիտանս, սեռ.-տր.- տիտանայ, տիտանաց, բաց.- ի տիտանայ, ի տիտանաց, գործ.- տիտանաւ, տիտանաւք, ներգ.- ի տիտան, ի տիտանս, ուղղ.- Պապ, հայց.- (զ) Պապ, սեռ.-տր.- Պապայ, բաց.- ի Պապայ, գործ.- Պապաւ, ներգ.- ի Պապ, ուղղ.- Ալանք, հայց.- (զ) Ալանս, սեռ.-տր.- Ալանաց, բաց.- յԱլանայ, գործ.- Ալանաւք, ներգ.- յԱլանա: Միջին հայերեն- ուղղ.- տիտան, տիտաններ, հայց.- (զ) տիտան, (զ) տիտաններ, սեռ.-տր.- տիտանի, տիտաններոյ, բաց.- (ի) տիտանէ (ից), տիտաններից, գործ.- տիտանով, տիտաններով, ներգ.---, ուղղ.- Պապ, հայց.- Պապ, սեռ.-տր.- Պապի, բաց.- Պապէ (ից), գործ.- Պապով, ներգ.---, ուղղ.- Ալաններ, հայց.- Ալաններ, սեռ.-տր.- Ալաններոյ, բաց.- (յ) Ալաններոյ, գործ.- Ալաններով, ներգ.---: Արևելահայերեն- ուղղ.- տիտան(ը), տիտաններ(ը), հայց.- տիտանի(ն), տիտաններ(ին), սեռ.-տր.- տիտանի(ն), տիտաններ(ին), բաց.- տիտանից , տիտաններից, գործ.- տիտանով, տիտաններով, ներգ.---, ուղղ.- Պապ(ը), հայց.- Պապի(ն), սեռ.-տր.- Պապի(ն), բաց.- Պապից, գործ.- Պապով, ներգ.---, ուղղ.- Ալաններ(ը), հայց.- Ալանների(ն), սեռ.-տր.- Ալանների(ն), բաց.- Ալաններից, գործ.- Ալաններով, ներգ.---:

Ե ներքին հոլովումը գրաբարում կարող ենք դասել ձևային հոլովումների շարքը, քանի որ ե ներքին հոլովման պատկանող բառերը ուղղականում վերջանում են (ը) ր, (ը)ղ և իւր հնչյունակապակցություններով կայսր, արկղ, դուստր, աղբիւր, եղջիւր և այլն: Միջին հայերենում (ը) ր,

(ը)ղ- ով վերջացող գոյականները երկար պահպանում են գրաբարատիպ հոլովահարացույցները, բայց իւր-ով վերջացող գոյականները անցնում են ի արտաքին հոլովման (եղջիւր-եղջեր-եղջիւրի): Միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում արդեն հոլովման համակարգի զարգացման ընդհանուր հատկանիշների համաբանությամբ այս հոլովման գոյականները, պիտի անցնեն ի արտաքին հոլովման՝ կայսրի, աստղի, աղբյուրի և այլն: Աշխարհաբարը առ այսօր կայսեր, դատեր գրաբարատիպ ձևերը պահպանում է կայսրի, դատրի ձևերի կողքին: Դիտենք գրաբարի և ներքին հոլովման պատմական զարգացման հարացուցային պատկերնուղղ.-դուստր, դատերք, հայց.- (զ) դուստր, (զ) դատերս, սեռ.-տր.-դատեր, դատերց, բաց.- ի դատերէ, ի դատերց, գործ.- դատերք, դատերքք, ներգ.- ի դատեր, ի դատերս, ուղղ.-արկղ, արկեղք, հայց.- (զ) արկղ, (զ) արկեղս, սեռ.-տր.-արկեղ, արկեղց(աց), բաց.- յարկեղէ, յարկեղց(աց), գործ.- արկեղք, արկեղքք, ներգ.- յարկեղ, յարկեղս, ուղղ.-աղբիւր, աղբիւրք, հայց.- (զ) աղբիւր, (զ) աղբիւրս, սեռ.-տր.-աղբեր, աղբերց, բաց.- յաղբերէ, յաղբերց, գործ.- աղբերք, աղբերքք, ներգ.- յաղբեր, յաղբեղս, միջին հայերեն- ուղղ.-դուստր, դուստրեր, հայց.- դուստր, դուստրեր, սեռ.-տր.-դատեր(դուստրի), դատերց, դատերոյ բաց.- ի դատերէ, ի դատերց(դուստրերոյ), գործ.- դուստրով, դատերքք, դուստրերով ներգ.--- , ուղղ.-արկղ, արկեղք, արկղ(ն)եր, հայց.- արկղ, արկեղք, արկղ(ն)եր, սեռ.-տր.-արկեղ(արկղի), արկղերներոյ, բաց.- յարկեղէ(արկղից), յարկեղոյ, յաղկ(ն)երոյ գործ.- արկղով, արկղ(ն)երով, ներգ.---, ուղղ.-աղբիւր, աղբիւրներ, հայց.- աղբիւր, աղբիւրներ, սեռ.-տր.-աղբիւրի, աղբիւրներոյ, բաց.- յաղբերէ(աղբիւրից), յաղբիւրներոյ, գործ.- աղբիւրով, աղբիւրներով, ներգ.---: Արևելա հայերեն -ուղղ.-դուստր(ը), դուստրեր(ը), հայց.-դատեր(ը), դուստրի(ն), դուստրերի(ն), սեռ.-տր.-դատեր(ը), դուստրի(ն), դուստրերի(ն) բաց.- դուստրից, դուստրերից, գործ.-դուստրով, դուստրերով, ներգ.---, ուղղ.-արկղ(ը), արկղ(ն)եր(ը), հայց.- արկղ(ը), արկղ(ն)եր(ը), սեռ.-տր.-արկղի(ն), արկղ(ն)երի(ն), բաց.- արկղից, արկղ(ն)երից, գործ.- արկղով, արկղ(ն)երով, ներգ.---, ուղղ.- աղբյուր (ը), աղբյուրներ(ը), հայց.- աղբյուր(ը), աղբյուրներ(ը), սեռ.-տր.- աղբյուրի(ն), աղբյուրների(ն), բաց.- աղբյուրից, աղբյուրներից, գործ.-աղբյուրով, աղբյուրներով, ներգ.---:

Ո և ո-ա խառը արտաքին հոլովումներից երկրորդը ձևային հոլովման հատկանիշներ ունի, իսկ ո արտաքին հոլովման որոշ բառեր են միայն

առանձնանում ձևային տարբերակմամբ. ի-ով վերջացող բոլոր բառերը ենթարկվում են ո-ա խառը հոլովման (կղզի-կղզույ-կղզես), բացի ձի, դի, թի, հոգի, ոգի, որդի, ոսկի, և ցի-ով վերջացող (Կողբացի, Խորենացի և այլն) բառերից, որ հոլովվում են ո արտաքին հոլովմամբ (ձի-ձիոյ-ձիով, հոգի-հոգույ, հոգով, Կողբացի- Կողբացույ, Կողբացով): Միջին հայերենում գրաբարի ո հոլովման գրաբարում ձևային տարբերակում չունեցող բառերի մի մասն անցնում է ի արտաքին հոլովման (մարմին-մարմնոյ, մարմին-մարմնի), մի մասը՝ ու արտաքին հոլովման, որոնք ավելի փոքրաթիվ են (ամուսին-ամուսնոյ-ամուսնու, Աստուած-Աստուծոյ-Աստծու, խաղալ-խաղալոյ-խաղալու): Հոգնակի թվի եր, ներ-ով կառույցները միջին հայերենում ո արտաքին հոլովման հատկանիշներով էին հոլովվում, ավելի ուշ՝ ու, ինչը անցնում է արևմտահայերենին, իսկ արևելահայերենը հոգնակի թվի համար ամրակայում է ի արտաքին հոլովումը:

Գրաբարի ու արտաքին հոլովումը չունի ձևաիմաստային տարբերակում, և միջին հայերենում այս բառերը ևս անցնում են ի արտաքին հոլովման (զգեստ-զգեստու-զգեստի): Գրաբարի կանոնավոր հոլովման հետագա փոփոխությունները միջին և նոր գրական հայերեններում ունեն հետևյալ պատկերը. արտաքին հոլովումներ ի-գրաբար-սիրտ,սրտի, միջին հայերեն- սիրտ, սրտի, նոր գրական հայերեն- սիրտ, սրտի, ու-գրաբար- ծով, ծովու, միջին հայերեն- ծով, ծովի, աշխարհաբար-ծով,ծովի/, ու-ի, ա- գրաբար- Պապ, Պապայ, միջին հայերեն- Պապ, Պապի, աշխարհաբար- Պապ, Պապի, ա-ի, ո- գրաբար-մարմին, մարմնոյ, որդի, որդույ, միջին հայերեն-մարմին, մարմնի, որդի, որդոյ(ո), աշխարհաբար-մարմին, մարմնի, որդի, որդու/ո-ի, ո-ու ի-ա խառը-գրաբար-աշակերտ(ի-աւ), միջին հայերեն-աշակերտ(ի-ով), աշխարհաբար-աշակերտ(ի-ով)/ ի-ա ի,ո-ա խառն-գրաբար-այգի(ույ-եսու), միջին հայերեն-այգի(ոյ-ու), աշխարհաբար-այգի- այգու(ո-ա-ու), ան արտաքին-գրաբար-մանուկ-մանկան, միջին հայերեն-մանուկ-մանկան, աշխարհաբար-մանուկ-մանկան(ան-ան), ա ներքին – գրաբար-տուն-տան, միջին հայերեն տուն -տան, աշխարհաբար-տուն-տան, ա ներքին- ա ներքին, ի- ա խառը ներքին-գրաբար- հարսն-հարսին, հարսամբ(գրծ.), միջին

հայերեն-հարս-հարսի, հարսով(գրծ.), աշխարհաբար-հարս-հարսի(ն), հարսով(գրծ.). ի-ա խառն ներքին-ի արտաքին:

Գրաբարի անկանոն հոլովումների հենքի վրա ձևավորվում են աշխարհաբարի արտաքին թեքման ոջ (կին-կնոջ), վա (աւր-աւոր գրաբար, միջին հայերեն արւնէ- որի նախաձևը՝ արւանէ,-արւա-օրվա(աշխ.)), և ներքին թեքման ո հոլովումները (գրաբար հայր-հայր, միջին հայերեն հայր-հայր-հօր-հոր(աշխ.)):

Բանալի բառեր - *դասական գրաբար, շաբանական նորմ, չկային հոլովում, իմաստային հոլովում, չկաիմաստային հոլովում, միջին հայերեն, աշխարհաբար, հարսացույց, շաբանական փոփոխություններ, շաբանական շեղումներ:*

Анаит Юзбашян – Морфологические нормы классического древнеармянского языка (грабара) и их историческое развитие (падежная система). В работе мы сделали наши наблюдения об определениях морфологических закономерностях классического древнеармянского языка, существующие до сих пор в науке о грабаре, представляя закономерности и исключения в падежной системе классического древнеармянского языка, в рамках диахронического подхода мы показали их дальнейшие изменения в среднем и в новом литературном армянском языке.

Ключевые слова: *классический древнеармянский, морфологическая норма, семантическое склонение, формальное склонение, формально-семантическое склонение, среднеармянский, современный армянский, Парадигма, Морфологические изменения, Морфологические отклонения.*

Anahit Yuzbashyan - Morphological rules of the ancient classical Armenian language (Grabar) and their historical development (case system). In this paper we made our observations on the definitions of the classical morphological patterns of the ancient Armenian language, still existing in the science of Grabar, representing regularities and exceptions in the case system of the ancient classical Armenian language. Within a diachronic approach

we showed their further changes in the middle and in the new literary Armenian languages.

Keywords: *Classical old Armenian, Morphological norm, Formal declension, Semantic, declension, Formal-semantic declension, Middle Armenian, Modern Armenian, Paradigm, Morphological changes, Morphological diversions.*

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XV դԱՐԻ ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՍԱԳՐՔՈՒՄ

Պարոնյան Նաիրա
(ԵՊՀ)

Այս թվաբանության դասագիրքը ընդօրինակվել է XVIII դարում: Դասագրքի հեղինակը հայտնի չէ: Գարեգին Պետրոսյանը «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում» աշխատության մեջ փորձում է որոշել դասագիրքը գրելու մերձավոր ժամանակը: Հաշվի առնելով դասագրքում գործածված թվանշանների ձևը, մաթեմատիկական տերմինաբանությունը, ինչպես նաև հայերենի ուղղագրական կանոնները՝ Գարեգին Պետրոսյանը կարծում է, որ դասագիրքը կազմվել է XV դարի երկրորդ կեսին կամ XVI դարի սկզբներին: Մաթեմատիկոս Ֆլորիան Կեջորին գրում է. «Թվաբանության հին և միջնադարյան մեթոդների մեջ մտցված առաջին կատարելագործումը XIV դարում իտալացիների կողմից հորինված **millione** բառն է՝ **մեծ հազար** կամ **1000²** նշանակելու համար: Հետագա երկու դարերի ընթացքում **millione** բառի գործածությունը տարածվեց եվրոպական մյուս երկրներում ևս¹»:

Եթե «միլիոն» բառն առաջին անգամ XIV դարում է գործածվել, նշանակում է՝ անանում հեղինակի դասագիրքը կազմված պետք է լինի XIV դարից հետո²:

Այս թվաբանության դասագիրքը բաղկացած է 2 մասից: Առաջին մասում հեղինակը բացատրում է թվարկության տասնորդական կարգային (կամ այսպես կոչված պոզիցիոն) համակարգը, ինչպես նաև թվաբանական չորս գործողությունները, իսկ երկրորդ մասում անցնում է տարատեսակ խնդիրների լուծմանը և թվաբանական որոշ կանոնների բացատրությանը: Դասագրքի առաջաբանում հեղինակը նշում է. «...Արուեստս ի Դ տարերացն է. այսինքն՝ նախ դնելով գտարերքն և ապա

¹ **Флорин Кэджори**, История элементарной математики, Одесса, 1917, ст. 154-155: **Գ. Պետրոսյան**, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959, էջ 216:

² Տե՛ս **Գ. Պետրոսյան**, նշվ. աշխատ., էջ 221:

զգիրն: Բայց իմայ ով ընթերճողք ի սայ. Թ գիր է և չկայ այլ աւելի, քան զայս Թ թիւն...: Եւ Թ գիրս այտօքիկ են.

ա.- ա բ գ դ ե զ է ը թ—հուր

ժ.- ա բ գ դ ե զ է ը թ—քամի

ճ.- ա բ գ դ ե զ է ը թ—ջուր

ն.- ա բ գ դ ե զ է ը թ—հող »³:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը չորս տարրերը համադրում է միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների հետ: Թվարկության նոր համակարգը, ինչպես փաստում է հեղինակը, միայն ինը տառի (ավելի ճիշտ՝ թվանշանի) հետ գործ ունի և ոչ թե երեսունվեց (ինչպես որ այբբենական համակարգում էր): Հեղինակը թվարկության նոր համակարգն անվանում է լուսավոր, իսկ նախկին՝ այբբենական համակարգը՝ խավար: Նա գրում է. « Բայց իմացիր, որ այս արուեստս ի յայնմանէ ի բաց իմն է յոյժ, զի սայ միայն զթիւս համարէ. և անհնարին հաշուցն գիտակ առնէ և յականքըթելն մի տեղեկացուցանէ ամենայն անհասանելի թուոցս, որ ի տաճիկ լեզու ըռադամ կոչի: Որ է .Թ. գիր միայն և է կերպ գրոցս այդ, գոր գրեալ կայ ի կարգ տողիս կարգաւ վերուստ ի վայր հայերէն և ֆրանկերէն և տաճկերէն⁴. ու կերպ գրոցս յատուկ յատուկ .Թ. .Թ. գիր»⁵: Եվ թեև տարբեր ժողովուրդներ թվարկության նոր համակարգը գրում ու կարդում են տարբեր տառերով, սակայն «արվեստը մեկն է», այսինքն՝ նրանք օգտվում են թվարկության նույն համակարգից: Հեղինակը դասագրքի առաջին գլխում ներկայացնում է թվերի չորս կարգը՝ միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ, հազարավորներ, ապա նշում, որ յուրաքանչյուր հաջորդ կարգը նախորդի տասնապատիկն է: Այնուհետև բացատրում է, թե ինչպես պետք է տասնորդական կարգային (պոզիցիոն) համակարգում թվերի ցածր կարգից անցնել դեպի բարձր կարգի թվերը և այդ նույն համակարգի միջոցով կարդալ ու գրել բարձր կարգի թվեր՝ ԳԺ=L, ԲՃ=Մ, ԲՈ=Մ և այլն: Անանուն հեղինակի դասագրքում կան մաթեմատիկական եզրեր, չափի ու կշռի միավորներ, որոնք փոխառություններ են: Այս գր-

³ Տե՛ս նույն տեղում, էջ 323:

⁴ Տաճկերէն կամ տաճիկ լեզու ասելով՝ հեղինակը նկատի ունի արաբերէնը:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 324:

քում կա մոտ քառասուն փոխառյալ բառ արաբերենից, պարսկերենից, թուրքերենից, լատիներենից:

Ինչպես գիտենք, միջինհայերենյան բառապաշարը, հին փոխառություններին զուգահեռ, համալրվել է փոխառյալ նոր բառերով, ինչպես նաև տերմիններով, որոնց հիմնական աղբյուրներն են՝ արաբերենը, պարսկերենը, հունարենը, թուրքերենը, ֆրանսերենը, լատիներենը, վրացերենը, ասորերենը⁶: Բնականաբար միջինհայերենյան փոխառությունների մեջ գերակշռում են արաբերեն բառերը: Արաբերենից կատարված փոխառությունները միջին հայերենի բառապաշարին ե ն անցել թե՛ բանավոր և թե՛ գրավոր ուղիներով: Միջնադարում մեծ նվաճումների հասած արաբական գիտությունը կարևոր դեր է խաղացել ժամանակի հայագիտական մտքի զարգացման գործում: Մաթեմատիկայի, աստղաբաշխության, արվեստի, բժշկության բնագավառներում ստեղծված արաբերեն երկերը հայ գիտնականները ոչ միայն ուսումնասիրում էին, այլև թարգմանում էին հայերեն: Այս թարգմանությունների արդյունքում էլ մեծ թվով արաբերեն անվանումներ են կիրառվում⁷: Երբեմն էլ դժվար է որոշել մի շարք բառերի փոխառության անմիջական աղբյուրը, քանի որ բազմաթիվ արաբերեն բառեր պարսկերենում ունեն համարժեքներ, որոնք միջին հայերենում տառադարձության տարբեր արտահայտություններով չեն դրսևորվում: Այս պարագայում դժվար է ճշգրիտ որոշել տվյալ բառը ուղղակիորեն արաբերենի⁸ց է փոխառված, թե՞ պարսկերենի միջնորդությամբ է հայերենին անցել: Նման դեպքերում մենք կնշենք երկու լեզուն էլ՝ առաջնությունը տալով փոխատու լեզվին:

Առաջին փոխառյալ եզրը, որ գործածել է հեղինակը, արաբերեն **ըռադամ**(<**ռադամ**) բառն է, որ նշանակում է **թվանշան**⁸: Թվաբանական գործողություններից բաժանումը հեղինակը անվանում է **բաժինք տալ** կամ **թախսիմ** (//**թակսիմ**), որը թարգմանվում է **բաժանում**: Վերոնշյալ **բաժինք տալ** հարադրությունը դասագրքում գործածվում է նաև որպես այլ եզր՝ **դուրամա**, այսինքն՝ **համենատական բաշխում**. «Արուեստս, որ

⁶ Տե՛ս **Ռ. Ղազարյան**, Միջին գրական հայերենի բառապաշարը, Երևան, 2001, էջ 88:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 94:

⁸ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Մաթեմատիկական Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959, էջ 324:

տաճիկն դուրամայ կոչէ և հայք բաժինք տալ, այսպէս արա...»⁹: Այս բաժնում հեղինակը գրում է. «**Աստ ուսուցանէ ըռուպն և զկէսն**¹⁰: Կէս, որ երկուքէն մէկն և ըռուպ, որ է չորսէն .Ա.-ն և կամ չորսէն երեքն»¹¹: **Ըռուպ//ռուպ** (արաբ. *rub*, պրսկ. *rob*) նշանակում է մէկ քառորդ¹², իսկ **օշուր**¹³ մէկ տասներորդ: Այնուհետև հեղինակը բազմապատկումը բացատրելիս գործածում է **հոլքմ**¹⁴, որն ընդհանրապէս նշանակում է հրաման, վճիռ, իսկ տեքստում՝ **բազմապատկում**. «Այսպէս ասելով ամ կիսուն քովի կէտն և ասա հետ վերին կէտին .Ա. անգամ կետը կէտ և խագին ներքևն կէտ զարկ, որպէս կայ: Եւ տարայն կէտին հոլքմն մինչև ասարտի վերին տողն և ապայ ամ զկէսն...»¹⁵: Կես բառին զուգահեռ բնագրում առկա է արաբերեն **նսֆ**(=կէս) բառը. «Դուռն նսֆին է այսպէս, որ հայն կոչէ կիսատել. Եւ այսպէս ասէ .Գ.-ն .Ջ.-ին կէսն է, .Ա.-ն .Բ.-ին կէսն է, .Գ.-ին կէսն .Ա. ու կէսն ու այլն այսպէս»¹⁶: Այսպէս էլ գումարման օրենքը բացատրելիս հեղինակը գրում է, որ արաբներն այն անվանում են **շարա ճումլայ**¹⁷ (արաբերեն բառացի նշանակում է միավորման բացատրություն): Հաջորդ եզրը **նողտա** բառն է, որը նշանակում է կէտ, սակայն արաբական թվանշանների մեջ կետը փոխարինում է զրոյին¹⁸: Խնդիրների բաժնում դասագրքի հեղինակը գործածում է **հալապի** բառը («...43 հալապի և կէս չուխա...»): Նախապէս այսպէս է անվանվել Հալեպ քաղաքում գործածվող երկարության չափի միավորը, որը հաշվվում է միջնամատից մինչև ուսագլուխը: Հետագայում Հալապի է կոչվել ընդհանրապէս երկարության չափի միավորը, որը յուրաքանչյուր քաղաքում ու շրջանում ունեցել է տարբեր չափ, սակայն այն հաճախ նույնացվել է արշինի հետ¹⁹: Արաբական մյուս փոխառություննե-

⁹ Տե՛ս նոյն տեղում, էջ 350:

¹⁰ Ըդգծումը հեղինակինն է:

¹¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 338:

¹² Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան (այսուհետ՝ ՄՀԲ), Երևան, 2009, էջ 677:

¹³ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 337:

¹⁴ Հոլքմ-արաբ. *hukm*, պրսկ. *hokm*, թուրք. *hükme*, *hüküm*, ՄՀԲ, էջ 438:

¹⁵ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 349:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 348:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 346:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 329, ոօջթա(արաբ.), ոօջթե(պրսկ.)- կէտ→ՄՀԲ, էջ 576:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 341:

ըը մաթեմատիկական եզրեր չեն, այլ խնդիրների մեջ գործածվող բառեր.**խարճ**(<արաբ.xārij=հաշիվ)²⁰,**հիսապ**(<արաբ.hisab //պրսկ. hesab //բրբ.hesap=հաշիվ)²¹,**խալսեկ**(=ազատել)²²:

Թվաբանության դասագրքում պարսկական փոխառություններն ավելի սակավ են՝ ընդամենը յոթ բառ, որոնցից երկուսը մաթեմատիկական եզրեր են, երկուսը՝ չափի միավոր, մնացածները՝ առտնին բառեր.

1. **դանկ** // **դանկ**(*dang*) –ամբողջի մեկ վեցերորդ մասը (ՄՀԲ, 158).

2. **դրամ** (պիլ.dram, պրսկ.diram) – ծանրության չափ (= 3,4գրամ).²³

3. **չարեք** // **չարեկ**(čaryek, čarāk) –ամբողջի մեկ քառորդը (ՄՀԲ, 626).

4. **քիլակ** // **քիլա**(պրսկ., արաբ.keyl, keyla, բուրբ. kile) – ընդելեմի չափ (ՄՀԲ, 811).

5. **զեն** // **զեն** (*zian*) – վնաս (ՄՀԲ, 203).

6. **սարմայե** // **սարմիայ**(sār- maye) – դրամագույն (ՄՀԲ, 691).

7. **քամ**(kām) –քիչ, նվազ, պակաս (ՄՀԲ, 797):

Վերջին բառը որպես բայ է գործածում հեղինակը. « ...Այսպես **քամելով** բերես վերուստ մինչև ի վայր, աստիճան աստիճան թողուս, զի նա գտանէ գթիւդ»²⁴:Այստեղ պարսկերեն **քամ**բառին ավելացվել է **երդերբայական** մասնիկը և ստացվել է օտար հիմքով, բայց հայերենի ձևակազմությամբ նոր բառ՝ **քամեյ**, պակասեցնել իմաստով: Այս գրքում թուրքական փոխառությունները հիմնականում հանդիպում ենք խնդիրների մեջ: Ներկայացնենք դրանք այբբենական.

1. **զարպ** (*zarp*)–1.հարված,2.մաթ. բազմապատկիչ²⁵.

2. **կոմրուկ**// **կումրուկ**(gümürük) – մաքս, մաքսային հարկ(ՄՀԲ, 386).

3. **կօրե**(göre) – համաձայն, համեմատ,մայելով (ԹՀԲ, 185).

4. **դուրուշ**// **դուռուշ**(kuruş<պրսկ. ğoruş) – թուրքական դրամական միավոր (ՄՀԲ, 463).

5. **չուխա**(çuxa) – բրդե գործվածքից կարված տղամարդու երկար քղանցքով հագուստ (ՄՀԲ, 631).

²⁰ Տե՛ս ՄՀԲ ,էջ 313:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ439:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 300:

²³ Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան,Երևան, 1971, հ.1, էջ 692: Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. 1, էջ 542:

²⁴ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, էջ 349:

²⁵ **Ռ. Ղազարյան**, Թուրքերեն- հայերեն բառարան(այստեև՝ԹՀԲ), Երևան, 2003, էջ554:

6. **օրթախ**// **օրդախ**(ortak)-ընկեր, ընկերակից,փայաստեր(ՄՀԲ, 826).

7. **փուլ** // **փող** (թրք. pul< պրսկ. pūl) – մանր դրամ(Հ. Աճառյան, ՀԱԲ, հ.4, էջ 513):

Նշենք , որ **չուխա** բառը բնագրում կիրառված է որպես չափման միավոր, այսինքն՝բրոյա կտորի այնպիսի չափ, որը բավարարում էր մեկ չուխա կարելու համար. «Դարձյալ 43 հալապի և կես չուխա, 193 դուռուշ և կես իրենս, մեկ հալապին ինչ պիտի որ լինայ»²⁶: Բնագրում **գարպ** բառն է կիրառվել որպես մաթեմատիկական եզր. «Որ գնես բան մի, կամ ասեն այսչափ բանս այս դուռուշեն , կամ ըռուպէն, կամ ըստակէն ինչ ելանէ, որպէս վճարենք: Եւ սա կոչի գարպ, որ է խառնել կամ յիրար ձգել»²⁷:

Ընդամենը չորս բառ կա լատիներենից փոխառյալ՝ **ըռեկույ, միլան** // **միլոն, նուլայ, ֆլորի** // **ֆլորին** :**Միլոն**-ը և **նուլա**-ն թվերեն՝ միլիոն, գրո²⁸, իսկ **ֆլորի**-ն եվրոպական դրամ է²⁹. «Մէկ մի կտաւ ունէր—100 հատ էր, ծախեց 73 ոսկի **ֆլորի** և իւր ընկեր մի կայ՝ ունի 57 կտաւ: Ի յայտ հսապիղ վերայ 57-ին ինչ կու ընկնի, և թէ այլ քիչ և լինի ամէնն այտ ձևովդ արայ»³⁰:

Այսպիսով, կարող ենք ասել, որ XIV- XV դարերում հայ գիտնականները գործածել են փոխառյալ եզրեր, որոնց մեծ մասն ունեցել է իր հայերեն համարժեքը: Սրանց շնորհիվ էլ հետագայում դուրս են մղվել փոխառյալ եզրերը:

Բանալի բառեր - *այբբենական համակարգ, տասնորդական կարգային համակարգ, փոխառություն, արաբերեն, պարսկերեն, գումարման օրենք, համեմատական բաշխում, մեկ քառորդ, մեկ վեցերորդ:*

²⁶ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 341:

²⁷ Տե՛ս նույնտեղում, էջ 346:

²⁸ Million– միլիոն, sul – գրո, ոչինչ (տե՛ս Խ. Հեքիմյան, Ֆրանսերեն-հայերեն դպրոցական բառարան, էջք 138, 149):

²⁹ Ֆլորի // ֆլորին<միջ. լատ. florenus – եվրոպական արծաթ դրամ (ՄՀԲ, 832):

³⁰ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 336:

Паронян Наира-Займствования в учебнике XV века по математике неизвестного автора. Гарегин Петросян в дополнении к своей книги <<Математика в Армении в древние и средние века>> представил рукопись под номером 8716 (Учебник по математике), переписанную в 18 веке. Автор этого учебника неизвестен. Учитывая способ выражения цифр в учебнике, математическую терминологию, орфографические нормы армянского языка, Гарегин Петросян приходит к выводу, что учебник был написан во второй половине XV-го или в начале XVI века.

Вполне естественно, что в написанном в средние века учебнике есть математические термины, единицы измерений, которые являются заимствованиями в среднеармянском языке. Неизвестный автор в своем учебнике использовал более 40 заимствований из арабского, иранского, турецкого, латинского языков, к примеру: руп (четвертая часть), тахсим (деление), сармия (капитал), нула (нуль), чарек (четверть), зарп (здесь-умножение), шара чумла (правила умножения), наф (половина), хурама (пропорциональное деление) и т.д. Заметим, что некоторые из приведенных примеров имеют непосредственное отношение к математике, другие же употреблялись в быту.

Ключевые слова: алфавитная система, десятичная порядковая система, заимствование, арабский, персидский, закон сложения, сравнительное распределение, одна четверть, одна шестая.

Paronyan Naira. - Borrowings in 16th Century Anonymous Writer's Textbook of Arithmetics. In the appendix of his work "Mathematics in Armenian Old and Middle Ages", Garegin Petrosyan presents Manuscript N 8716 which was imitated in the in the 18th century. However, the author of the book of arithmetics is unknown. Taking into consideration the form of the numbers, the mathematical terms, the rules of spelling of Armenian used in the textbook, he thinks that the book was composed in the second half of the 15th century or at the beginning of the 16th century. Of course, being written in the Middle Ages, there are mathematical terms, units of measure and weight which are Middle Armenian borrowings in the textbook. There are about 40 borrowed words from Arabian, Persian, Turkish, Latin, for example, ռուպ (one-quarter), բախում (division), սարմիս (fund), նուլայ (zero), չարեկ (quarter), գարպ (in

this context-multiplication), շարահանումը (rule of adding), մաս (half), դրսևանում (comparative distribution), etc.. It should be mentioned that some borrowings mentioned above are terms connected with mathematics, while others are used daily. Naturally, arithmetical terms are prevailing.

Keywords; *alphabetical system, decimal ordinal system, borrowing, Arabic, Persian, addition rule, comparative distribution, one quarter, one sixth.*

ԱՍԵԼ ԲԱՅԻ ԵՆԹԱԿԱՆՈՒԱԿԱՆ
ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
«ԱՒԵՏԱՐԱՆ՝ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ» ԵՐԿՈՒՄ

Պեպրոսյան Լիլիթ
(ՎՊՀ)
Ավագիսյան Արինե
(ՎՊՀ)

«Աւետարան՝ ըստ Մատթեոսի»¹ երկում լեզվական գործունեությունը հիմնականում կատարվում է *ասեղ* բայի ստորոգմամբ, որը կիրառվում է որպես հերոսների գործունեության ամենաընդհանուր գործառական հատկորոշում՝ առավելապես բնորոշվելով իբրև ներկայացական գործունեություն²: Այն գործածվում է ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերում՝ իբրև հեղինակային խոսքի ստորոգում՝ կապակցվելով անձնանիշ ենթականների հետ, որոնք իրենց խոսքիմասային պատկանելությամբ և արտահայտության ձևերով բազմազան են և ներկայացնում են «Աւետարան»-ի գրական-կերպարային համակարգը:

Ասեղ բայով արտահայտված ստորոգումն ուղղված է դեպի նոր լեզվական իրողություն, նոր ստորոգում, որը մի դեպքում խորքային բովանդակության ներկայացումն է, մյուս դեպքում՝ արդյունքում ստացված ներսուրբյեկտային հարաբերության արտահայտությունը. հեղինակը ներկայացնում է ուրիշի խոսքը: *Ասեղ* բայով ձևավորվում է գործունեության միջանձնային հայեցակերպ՝ բուն իմաստով հաղորդակցում. հաղորդողի կողմից որևէ բովանդակություն է ներկայացվում ընդունողին:

«Աւետարան»-ում *ասեղ* բայը՝ իբրև գերադաս նախադասության ստորոգում, հիմնականում գործածվել է ներկա ժամանակով, որին հաջորդած խոսքով հերոսները ներկայացնում են սուրբյեկտիվ մտածողա-

¹ Նոր կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (Համենատեալ ընդ յոյն բնագրին), Աստուածաշնչի Լիբանանի ընկերութիւն, 1982: Աւետարան՝ ըստ Մատթեոսի, այսուհետ՝ «Աւետարան»:

² Տե՛ս Է. Ռ. Աքսյան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981, էջ 192:

կան-հաղորդակցական պրոցեսների օբյեկտիվ բովանդակություն, որն իր հերթին նոր ստորոգական իրողություն է՝ ասույթ³:

«Աւետարան»-ում *ասել* բային կապակցվել են անձնանիշ հատուկ և հասարակ գոյական-ենթականեր: Ներկա ժամանակով կիրառված *ասել* բային կապակցված հատուկ գոյական-ենթականերն անվանում են Բ. հ. առաջին դարում տարածված անձնանունները: Ներկա ժամանակով *ասել* բայը վերագրված է *Եսայի, Հերովդէս, Յովհաննէս, Պետրոս, Պիղատոս* գոյականներին, ինչպես՝ *Կեղծատրք, բարոք մարգարեացաւ ի վերայ չեր Եսայի, և ասէ, Ժողովորդս այս շրթամբք պատուէ զիս* (4): *Յայնժամ Հերովդէս զաղփր կոչեաց զնոզան, եւ սրուգեաց ի անցանէ զժամանակ ասրեղն երեւելոյ. Եւ արչակեալ զնոսա ի Բերդեհեւ, ասէ, Գնացէք, սրուգեցէք վասն մանկանն* (3): *Եւ Յովհաննէս արգելու զնա և ասէ, Ինչ պիտոյ է ի քէն մկրտել* (6): *Ասէ զնա Պետրոս, Թէ եւ մեռանէ հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց* (76): *Ասէ զնա Պիղատոս, Իսկ զի՞ արարից զՅիսուս զանուանեալն Բրիսարոս*⁴ (83):

Ասել բայը «Աւետարան»-ում կիրառվում է որոշակի դրական վերա-իմաստավորմամբ՝ իբրև մարդկային հատկանիշ, այդ պատճառով է էլ *Յուդա Իսկարիովրացի* հատուկ գոյականին այն վերագրված է անող-դակիորեն, ինչպես՝ *Յայնժամ զնաց մի յերկուրասանիցն անուանեալ Յուդա Իսկարիովրացի առ քահանայապետսն և ասէ, Չինչ կամիք րաւ ինչ* (76):

Անցյալ ժամանակով կիրառված *ասել* բային կապակցվել է «Հին կտակարան»-ի հերոսներից *Մովսէս* հատուկ գոյական-ենթական, ինչպես՝ *Մովսէս ասաց, Եթէ որ մեռցի անորդի, արասցէ զկին նորա եղբայր իւր* (63)....

Յովհաննէս գոյական-ենթական կապակցվել է *ասել* բայի և՛ անցյալ, և՛ ներկա ժամանակներով արտահայտված ձևերին, ինչպես՝ *Իսկ Յով-*

³ Տե՛ս Է. Ռ. Աբայան, նշվ. աշխ., էջ 84:

⁴ *Եւ րեսեալ Պիղատոսի թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջոր՝ լուաց զչեռս առաջի ժողովրդեանն և ասէ Բառեալ եւ եւ յարենէ արդարոյ աշորիկ. դոք գիրասջիք* (83): *Արդ անկեալ ծառայակցին առ ուրս նորս, աղաչէր զնա և ասէր Երկայնամիտ լիւր առ իս, և հալոտցից քեզ* (51) նախադասությունների մեջ ենթականերն արտահայտվել են սեռական հոլովի անորոշ և որոշյալ առումներով, քանի որ անմիջապես հաջորդել են անցյալ դերբայով արտահայտված գերադաս անդամներին:

հաննէս... առաքեաց ի շեռն աշակերտաց իւրոց, Եւ սսէ ցնա, Դու՞ ես որ գայոցն ես (27): Զի սսէր ցնա Յովհաննէս, Զէ արժան քեզ ունել գրա (38):

«Աւետարան»-ում *սսել* բայի ներկա ժամանակով ձևավորված ստորոգումը հիմնականում վերագրվում է *Յիսուս* գոյական-ենթակային: *Յիսուս սսէ* արտահայտությանը հաջորդող ուրիշի ուղղակի խոսքերում ստորոգյալը արտահայտվել է բոլոր դիմաթվային հարաբերություններով՝ բացառությամբ առաջին դեմքի հոգնակի թվի. հավանաբար Հիսուսն ու ժողովուրդը միանման չեն. տարբեր են իրենց էությամբ և նույն գործողությունը համատեղ չեն կարող կատարել:

Ըստ երկրորդական նախադասության ստորոգյալի դիմաթվային արտահայտության՝ Հիսուսի խոսքերը ենթադասակարգվում են հետևյալ կադապարներով.

1. առաջին դեմք, եզակի թիվ, ինչպես՝ *Սսէ ցնա Յիսուս, Ոչ սսելն քեզ թէ մինչեւ յեթն անգամ, այլ մինչեւ յեթանասնեկին եւթն (51): Սսէ ցնա Յիսուս, Ես եկից և բժշկեցից զնա (18):* Այս կառույցներում *Յիսուս* ենթական ուղղակի խոսքում փոխակերպվում է *ես* անձնական դերանվան, որից պարզ է դառնում *Յիսուս* գոյական-ենթակայի մյուս ստորոգառությունները նույնպես:

2. Երկրորդ դեմք, եզակի թիվ: Այս կարգի նախադասությունները ենթադասակարգվում են երկու խմբերի.

ա/ անհատական դիմումներ, *Յայնժամ սսէ ցնա Յիսուս, Երբ յեզուս իմ, Սարսնայ (46): Եւ սսէ Յիսուս ցհարհւրասկերն, Երբ, և որպէս հաւարացեորդ՝ եղիցի քեզ (19): Սսէ ցնա Յիսուս, Եկ զկնի իմ, և թոյլ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իրեանց (19): Սսէ ցնա Յիսուս, Եթէ կամիս կարարեալ լինել. երբ վաճառեա զինչս քո և տուր աղբարաց. և ունիցիս զանչս յերկինս, և եկ զկնի իմ (54):*

Այս կառույցներին, որպես կանոն, հաջորդում են հրամայական եղանակով արտահայտված բայաձևեր, որոնք Հիսուսի հորդորներն են՝ ուղղված *Սարսնայ, հարհւրասկեր, մի ոմն յաշակերտաց, պարսնի* ենթականերին: Այս շարքում բացառություն են *Յուդա, քահանայասկեր, քազաորն Հրէից* ենթականերին ուղղված միևնույն հաստատական խոսքը՝ *Յիսուս սսէ, Դու սսես (77, 80, 82)* և *որ մարնելոցն էր* ենթակա

երկրորդական նախադասությանն ուղղված հարցական արտահայտությունը՝ *Եւ Յիսուս սսւէ ցնա, Ընկեր, վասն որո՞յ եկիրոյ* (79), որի երկրորդ ստորոգումն արտահայտվել է «դիմավոր բայ+դիմորոշ հոդ» կաղապարով:

բ/ ընդհանրական դիմումներ, ինչպես՝ *Սսւէ ցնա Յիսուս, զՄի՞ սպանաներն և Մի՞ շնար, և Մի՞ գողանար, Եւ մի՞ սուր վկայեր, Պարուեստ գիայր քո և զմայր, և Սիրեսցես զընկեր քո իբրես զանձն քո (54): *Եւ Յիսուս սսւէ ցնա, Սիրեսցես զՏէր Սարուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մրաց քոց (64): *Յայնժամ սսւէ ցնա Յիսուս, Դարձն գտուր ի տեղի իւր, զի ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով անկանհիցին (79): Այս կառույցներում *ցնա* անձնական դերանունը կիրառվում է ընդհանրական իմաստով:***

3. Երկրորդ դեմք, հոգնակի թիվ, ինչպես՝ *Եւ իբրև եկն ի րուն, մատենաւ առ նա կոյրքն. և սսւէ ցնուս Յիսուս, Հաւարա՞յք եքէ կարող եմ առնել չեզ գայոյ (23): *Սսւէ Յիսուս, Տակաւին և դու՞ք անմիտք էք (42): *Սսւէ նուս Յիսուս, Չբաժակն իմ ընկիցէք, զմկրորութիւնն զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիցիք (56): *Սսւէ Յիսուս, Թոյլ րուք մանկրտոյդ և մի՞ արգելուք զդուս զայ առ իս, զի այդպիսեսցոյ է արքայութիւն երկնից (53):****

Երկրորդ դեմքի իմաստ է արտահայտում նաև սեռական հոլովածնով արտահայտված *չեր* ենթական, որը, սակայն, զուգահեռվում է երրորդ դեմքով արտահայտված բայ-ստորոգյալին, ինչպես՝ *Սսւէ ցնուս Յիսուս, Չիցէ՞ք երբեք ընթերցեսայ չեր ի գիրս, Չվէմն զոր անարգեցին շնոնք, նա եղև գրուի անկեան (61): *Սսւէ ցնուս Յիսուս, Այո, չիցէ՞ք ընթերցեսայ չեր թէ Ի բերանոյ րդայոց և սրբնդիեցաց կատարեցեր զօրհնութիւն (59):**

Երկրորդ դեմքով կառույցներում նույնանուն են հեղինակային խոսքի հաղորդման խնդիրներն ու երկրորդական նախադասությունների ենթակաները:

4. Երրորդ դեմք, եզակի թիվ, ինչպես՝ *Սսւէ ցնա Յիսուս, Աղուեսուց որջք զոն, և բռչնոց երկնից՝ բոյնք, այլ Որդոյ մարդոյ ոչ գոյ ուր դիցէ զգրուի իւր (19): *Սսւէ ցնուս Յիսուս Միթէ մարթ ի՞նչ իցէ մանկանց առազասարի սուգ առնուլ (22): *Եւ սսւէ Յիսուս, Ոչինչ պիտոյլ է դոցա երթալ, դուք րուք դոցա ուրեկ (39):***

5. Երրորդ դեմք, հոգնակի թիվ, ինչպես՝ *Յիսուս սսւէ ցնուս, Չիք մարգարէ անարգ եքէ ոչ յիրում զաւառի և յիրում րան (38): *Սսւէ ցնա Յիսուս, Ապա ուրեմն սզար եմ որդիքն (49):**

Այս շարքում առանձնանում են *Ասրուած, Թագաւոր, Վարդապետ* հատուկ անվան նշանակությամբ կիրառված գոյականները, որոնք խորհրդանշում են *Արարչին* և *Քրիստոսին*: Այս դեպքում նույնպես «Հին կտակարան»-ից մեջբերված ասույթները վկայված են անցյալ ժամանակով, ինչպես՝ *Չի Ասրուած ասաց, Պարոնես զհայր քո և զմայր* (41):

Ապագան բնութագրող նախադասությունների ստորոգյալները արտահայտված են ապառնի ժամանակով, ինչպես՝ *Յայնժամ ասացի Թագաւորն ցայնոսիկ որ ընդ աշմէն իցեն, եկայք, օրհնեալք Հօր իմոյ* (74) Հիսուսի խոսքը արտահայտված է ներկա ժամանակով, ինչպես՝ *Վարդապետ ասէ, Ժամանակ իմ մերձեալ է, առ քեզ առնեն զգարիկն աշակերտօքս հանդերձ* (76):

«Աւետարան»-ում իբրև հատուկ անուն է կիրառված նաև *Սալանայ* գոյականը: Դ գլխում ներկայացվում է Հիսուսի և Սատանայի երկխոսությունը, որտեղ Սատանայի խոսքը ներկայացվում է լեզվական համարժեք կադապարներով. *Սալանայ* գոյական-ենթական կապակցվել է ներկա ժամանակով արտահայտված *ասել* բային, ինչպես՝ *Յայնժամ առեալ ածէ զնա Սալանայ ի բաղաքն սուրբ, և կացուցանէ զնա ի վերայ աշտարակի փամարին, Եւ ասէ ցնա, Եթէ Որդի ես Ասրուծոյ... Դարձեալ առնու ածէ զնա Սալանայ ի լեռն մի բարձր յոյժ, և ցուցանէ զնա զամենայն թագաւորութիւնս աշխարհի և փառս նոցա, Եւ ասէ ցնա, Չայս ամենայն քեզ փաց, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ* (7):

Հասարակ գոյական-ենթականները, ըստ թվային արտահայտության, դասակարգվում են եզակի և հոգնակի թվերով: Եզակի թվով հասարակ գոյական-ենթականներ են դարձել *աղախին, այս, դաւաւոր, դպիր, թագաւոր, կին, հարիւրապետ, պարանի, փէր, քահանայապետ* գոյականները: Սրանք գործածվել են ներկա, անցյալ, ապառնի ժամանակներով կիրառված *ասել* բայ-ստորոգյալի հետ: ...*մարեաւ առ նա աղախին մի և ասէ, Եւ դու ընդ Յիսուսի Գալիլեացոյ էիր* (80): *Այլ յորժամ այսն պիղծ ելանէ ի մարդոյ, շրջի ընդ անշրդին փեղիս, իրնդրէ հանգիար եւ ոչ զրանէ. Յայնժամ ասէ, Դարձայց ի փուն իմ ուարի ելի. և եկեալ գրանէ զնա պարապորդ, մարբեալ և յարդարեալ* (33): *Եհարց ցնա դաւաւորն և ասէ, Դու՞ ես թագաւորն Հրէից* (82): *Եւ մարուցեալ դպիր մի ասէ ցնա, Վարդապետ եկից և ես զկնի քո* (19): *Յայնժամ ասէ թագա-*

*ւորն ցալասաւորսն, Կապեցէք զդորս զորս և զձեռս (62): Երես զնա այլ կին մի, և սաւ ցայնոսիկ որ անդն կային, Եւ սա ընդ Յիսուսի Նազովրեցոյ էր (80): Իսկ հարիւրապետն և որ ընդ նմա պահէին զՅիսուս՝ իբրև րեսին զշարժումնն և զեղեայնն, երկեան յոյժ և սսեւն⁵, Արդարեւ Ասորւծոյ Որդի էր սա (85): ...սհա հրեշտակ Տեսուն ի րեսիեան երեսեցաւ նմա և սաւ, Յովսէփ, որդի Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո (2): Սաւ ցնա պարանին, Չայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ (54): Եւ իբրև երեկոյ եղև, սաւ րէր⁶ այգոյն ցգաւառապետ իւր, Կոչեա զմշակսն (55): Սաւ ցնա րէրն իւր, Ազնի՛, ծառայ բարի և հաւարարիմ (73): Եւ յարուցեալ քահանայապետն սաւ ցնա. Չորս՝ս ինչ պարասիսանի (80) նախադասութիւններում գոյական-ենթակաները կապակցվել են ներկա ժամանակով արտահայտված *սսեւ* բային:*

Անցյալ ժամանակով արտահայտված *սսեւ* բայ-ստորոգյալին «Աւետարան»-ում կապակցվել է միայն *հրեշտակ* գոյական-ենթական, ինչպես՝ *Սհա հրեշտակ Տեսուն երեսէր ի րեսիեան Յովսէփու և սսեւր*, Արի, առ զմանուկդ և զմայր իւր, և փախիր յԵգիպտոս (4): *Սհա հրեշտակ Տեսուն ի րեսիեան երեսէր Յովսէփայ յԵգիպտոս, Եւ սսեւր*, Արի, առ զմանուկդ և զմայր իւր, և զնա յերկիրն Իսրայելի, զի մեռան որ իսնդրէին զանչն մանկանդ (5):

Ժամանակային հակաճշտութեամբ է Հիսուսը ներկայացրել տիրոջ և ծառայի առակը. *ծառայ* գոյական-ենթականային կապակցված բայ-ստորոգյալն արտահայտվել է անցյալ ժամանակով, *րէր* գոյական-ենթականային կապակցված բայ-ստորոգյալը՝ ներկա ժամանակով, ինչպես՝ *Եւ անկեալ ծառայն երկիր պազանէր նմա և սսեւր*, Երկայնամիւր լեր առ իս, և զամենայն հարուցից քեզ: Եւ ելեալ *ծառայն* այն եգիւր զմի ի ծառայակցաց իւրոց որ պարտէր նմա հարեւր դահեկան. և կալեալ զնա իսնդրէր և սսեւր, Հարո ինչ գոր պարտիսդ (51): *Յայնժամ կոչեաց զնա րէրն իւր և սսեւ*, Ծառայ չար, զամենայն զպարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս (52):

⁵ Այս կառույցում «ենթակա+ստորոգյալ» գույզը կապակցվել է բակառութեամբ:

⁶ «Աւետարան»-ում *րէր*, *քազար* գոյականները համանունություն են դրսևորում. մեծատառով գրվելու դեպքում նշանակում են Աստված, փոքրատառով գրվելու դեպքում՝ իշխան:

Ասեւ բային կապակցված գոյական-ենթակաները «Աւետարան»-ում՝ Գ գլխից սկսած, խորհրդանշում են այն անձանց, ովքեր խոսել են Հիսուսի հետ և օգնություն են ստացել Հիսուսից: *Դպիր, իշխան, հարհուրապետ* գոյականները, մոտենալով Հիսուսին, իրենց խնդրանքներն են ասել, որոնց նախորդող հեղինակի խոսքում նույնպես կիրառված է *ասեւ* բայի անցյալ ձևը, ինչպես՝ *Եւ մարտոցեալ դպիր մի սսէր ցնա, Վարդապետ, եկից և ես զկնի քո, յոր վայր և երթիցես* (19): *Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մարտոցեալ երկիր պագանէր նմա և սսէր, Դուարի իմ արդ եւս վախճանեցաւ այլ եկեալ դիցես զճեռն քո ի վերայ նորա, և կեցցէ* (22): *Եւ մտեալ ի Կափառնայում, մարեաւ առ նա հարհուրապետ մի, աղաչէր զնա, Եւ սսէր, Տէր, մանուկ իմ անկեալ կայ ի րան անդամաւոյժ՝ չարաչար րանջեալ* (18):

Ապա թէ սսիգէ ծառայն չար ի սրտի իւրում, Տէր իմ յամէ զգալ (71) նախադասության մեջ գոյական-ենթական կապակցվել է ապառնի ժամանակով կիրառված *ասեւ* բային:

«Աւետարան»-ում *ասեւ* բայի ներկա ժամանակի հոգնակի թվով ձևավորված ստորոգումը հիմնականում վերագրվում է *աշակերտրք* գոյական-ենթակային: *Աշակերտրք սսեն* արտահայտությանը հաջորդող ուրիշի ուղղակի խոսքերում ստորոգյալը արտահայտվել է բոլոր դիմաթվային հարաբերություններով՝ բացառությամբ առաջին դեմքի եզակի թվի և երկրորդ դեմքի հոգնակի թվի: Առաջին դեպքում տեսականորեն հոգնակի թվով արտահայտված *ասեւ* բայը անուղղակի խոսքում չի կարող ենթադրել եզակի թվով արտահայտված ստորոգյալ: Երկրորդ դեպքում՝ աշակերտները հիմնականում իրենց մտքերը հաղորդում են *Յիսուս* ենթակային, որը իր ուղղակի խոսքում չէր կիրառել առաջին դեմքի հոգնակի թվով արտահայտված ստորոգյալներ:

Ըստ երկրորդական նախադասության ստորոգյալի դիմաթվային արտահայտության՝ աշակերտների խոսքերը ենթադասակարգվում են հետևյալ կադապարներով.

1. երկրորդ դեմք, եզակի թիվ, ինչպես՝ *Մարեան առ նա աշակերտրքն նորա և սսեն, Մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի* (36): *Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն մարեան աշակերտրքն առ Յիսուս և սսեն, Ու՞ր կամիս զի պարրասարեցուք քեզ ուրեւ զգարիկն* (76): *Եւ*

մատուցեալ աշակերտքն սսեն ցնա, Ընդէ՞ր առախօք խօսիս ընդ նոսա (34):

Երբորդ դենք, եզակի թիվ: Այս կարգի նախադասութիւնները հիմնականում հավաստիական հարցական են, ինչպես՝ Սսեն ցնա աշակերտքն, Իսկ արդ մեզ յանապարի ասար ուարի՞ իցէ այնչափ հաց (44): *Յայնմ ատոր մարեան աշակերտքն առ Յիսուս* և սսեն, Ո՞վ իցէ ի մէնջ մեծ յարքայութեան երկնից (49): Իբրեւ լուսն աշակերտքն, զարմացան յոյժ և սսեն, Իսկ ո՞ կարիցէ սարել (54): Իբրեւ րեսին աշակերտքն, զարմացան և սսեն թէ, Չիա՞րդ վաղվադակի ցամաքեցաւ թզենին (59): Իբրեւ րեսին աշակերտքն, բարկացան և սսեն, Ընդէ՞ր է կորուարդ այդ իողոյդ (75): Կան նաև պատմողական կառույցներ, ինչպես՝ Իբրեւ րեսին զնա աշակերտքն զի զնայր ի վերայ ծովուն, խռովեցան, և սսեն թէ՛ Առ աջօք ինչ իցէ (40) Իբրեւ ընդ երեկոյ եղև մարեան առ նա աշակերտքն և սսեն, Տեղիս անապար է և օրս փարաժամեալ, արչակեա զժողովորդսդ (39)⁷:

Աշակերտք գոյական-ենթակայով կառույցներից առանձնացրել ենք *Յայնժամ մարեան առ նա աշակերտքդ Յովհաննու և սսեն*, Ընդէ՞ր մեք և փարիսեցիքն պահեմք յանախ, և քո աշակերտք ոչ պահեն (22) նախադասությունը, քանի որ այստեղ գործողություն կատարողները Հովհաննես Սկրտչի աշակերտներն են:

Առաջին դենք, հոգնակի թիվ, ինչպես՝ Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և սսեն, Տէր, փրկեա զմեզ զի կորնչիմք (20)⁸: *Յայնժամ մարեան աշակերտք* առանչինն և սսեն ցՅիսուս, Մեք ընդէ՞ր ոչ կարացար հանել զնա (48):

Երբորդ դենք, հոգնակի թիվ, ինչպես՝ Եւ մինչդեռ նարէր ի լերինն Չիթենեաց, մարեան առ նա աշակերտքն առանչինն և սսեն, Բայց սսէին⁹ թէ Մի՞ ի րօնի ասար, զի մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն

⁷ Եռաբաղադրիչ այս կառույցում միմյանց են հաջորդում պատմողական և հորդորական նախադասութիւնները:

⁸ *Յայնժամ մատուցեալ աշակերտքսզն նորա՝ սսեն* ցնա, Գիրե՞ս զի փարիսեցիքն լուսն գրանն զայրակեցին (42) նախադասության մեջ նույնպես, անցյալ դերբայով պայմանավորված, կիրառվել է սեռականով ենթակա:

⁹ Անցյալ ժամանակով արտահատված *սսէին* բայածևը աշակերտների մեջբերված խոսքի գերադաս անդամն է, որով ձևավորվել է ամբողջ-դիմավոր միակազմ նախադասություն:

(75): Հարցին ցնա աշակերտքն և ասեմ, Չիա՞րդ դպիրքն ասեմ եթէ Եղիայի նախ պարտ է գալ (47):

Հոգնակի թվով հասարակ գոյական-ենթականեր են դարձել նաև *ժողովուրդք*, *ծառայք*, *ծերք*, *կուսանք*, *մարդիկ*, *մշակք*, *մոզք*, *փարիսեցիք* գոյականները: Սրանք նույնպես կապակցվել են ներկա, անցյալ և ապառնի ժամանակներով կիրառված բայ-ստորոգյալներին: *Չարմացան ժողովուրդքն* և ասեմ թէ, Եւ ոչ երբեք երևեցաւ ախարիսի ինչ յԻսրայելի (23): *Յերոյ գան* և *այլ կուսանքն* և ասեմ, *Տէր*, *Տէր բաց մեզ* (72): *Մարուցեալ ծառայք* *լրանուրեառն* ասեմ ցնա, *Տէր*, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում (35): *Չո՞ք* ասեմ *զինէն մարդիկն* թէ իցէ Որդի մարդոյ (45): *Իսկ մշակքն* իբրես րեսին գորդին, ասեմ ընդ միրս, *Սա է ժառանգն* (61): *Ահա մոզք* յարևելից եկին յԵրուսաղէմ Եւ ասեմ, *Ու՞ր է որ ծնաւ արքայն Հրէից* (3): *Փարիսեցիքն* իբրես րեսին, ասեմ ցնա, *Ահաւանիկ աշակերտքն քո գործեն գոր ոչ է արժան գործել ի շարաքու* (29):

Այս շարքում *ասել* բային կապակցվել են նաև բազմակի ենթականեր՝ *քահանայապետքն* և *ծերք*, *փարիսեցիքն* և *դպիրք*, օրինակ՝ *Մարեան առ նա*, *մինչդեռ ուսուցանէր*, *քահանայապետքն* և *ծերք* *ժողովրդեանն* և ասեմ, *Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ* (59): *Յայնժամ մարեան առ Յիսուս որ յԵրուսաղէմէ փարիսեցիքն* և *դպիրք*, և ասեմ, *Ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն* (41):

Հոգնակի թվով արտահայտված գոյական-ենթակաների հետ *ասել* բայը գործածվել է նաև անցյալ ժամանակով, ինչպես՝ *Մարուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա* և ասեմ, *Արչակեա զնա զի աղաղակէ զհետ մեր* (43): *Եւ ղերքն աղաչէին զնա* և ասեմ, *Եթէ հանես զմեզ աստի, հրաման րուր մեզ երթալ յերամակ խոզիցն* (20): *Չարմացան ամենայն ժողովուրդքն* և ասեմ, *Միթէ սա՞ իցէ Քրիստոսն որդի Դաւթի* (31): *Եւ մարդիկն զարմացան*, և ասեմ, *Որպիսի՞ ոք իցէ սա* (20): *Իսկ փարիսեցիքն* ասեմ թէ, *Իշխանան ղիսաց հանէ դա զդես* (23):

Ասել բային կապակցված անձնանիշ գոյական-ենթակաները «Աւետարան»-ի փոխաբերական կառույցներում դասային փոփոխության են ենթարկվում՝ կապակցվելով *չայն*, *քաղաք* իրանիշ գոյական-ենթականերին: *Եւ մինչդեռ նա խօսէր*, *սհա ամպ լուսաւոր հովանի եղև ի վերայ*

նոցա. չայն եղև յամպոյն և սսւէ. Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք (47) նախադասությունը միակն է, որտեղ լսվում է Աստծո խոսքը հենց իրենից¹⁰: *Եւ ի մտանելն նորա յԵրուսաղէմ, դղրդեցաւ քաղաքն ամենայն, և սսւէ, Ո՞վ իցէ սա (58):*

«Աւետարան»-ում *սսւել* բային կապակցվել են մաս փոխանվանաբար գործածված բառեր: Ներկա ժամանակով *սսւել* բային են կապակցվել ածական, ենթակայական դերբայ-ենթականեր, ինչպես՝ Ասեն յինարքն ցինասարունսն, Տոք մեզ յիղոյդ չերմէ, զի սհա շջանին յապրերքս մեր (72): Եւ մարուցեալ փորշիչն սսւէ ցնա, Եթէ Որդի ես Ասրծոյ, սսս զի քարինքս այտքիկ հաց լինիցին (7)...

Անցյալ ժամանակով *սսւել* բային են կապակցվել *քորոյր, կէս* ածական-ենթակաները, ինչպես՝ *Եւ սհա մարուցեալ քորոյր մի երկիր պագանէր նմա և սսւէք, Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել (18): Եւ կէտքն սսւէին, Թող, տեսցուք եթէ զա՞յ Եղիս փրկել զնա (84):*

Ապառնի ժամանակով *սսւել* բային է կապակցվել *բագում* ածական-ենթական, ինչպես՝ Բագումք սսիցենն ցիս յաւուրն յայնմիկ, Տէր, Տէր, ո՞չ յանուն քո մարգարեացաք, և յանուն քո դես հաւաք (17): Զի քագումք զայցեն յանուն իմ և սսիցենն քէ Ես եմ Զրիսրոսն (68):

Ներկա և անցյալ ժամանակներով *սսւել* բային է կապակցվել *կոյր* ածական-ենթական, ինչպես՝ *Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին և սսւէին, Ողորմեսց մեզ, Որդի Դաւթի (23): Եւ սհա կոյրք երկու նարէին առ ճանապարհան. իբրև լուսն քէ Յիսուս անցանէ, աղաղակեցին և սսենն, Ողորմեսց մեզ, Յիսուս, Որդի Դաւթի (57):*

«Աւետարան»-ի խոսքի յուրաքանչյուր ուսումնասիրություն *Աւերարան ըստ Մարթեոսի* երկի վերջին նախադասություն-պատգամի իրականացումն է. *Ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պարոհրեցի չեզ և սհաւասիկ ես ընդ չեզ եմ՝ զամենայն աուրս, մինչև ի կարարած աշխարհի (87):*

Ուսումնասիրելով *սսւել* բայի ենթակաառությունը՝ պարզ դարձավ, որ այն տարբեր եղանակաժամանակային ձևերում տարբեր նրբերանգնե-

¹⁰ Մյուս կառույցներում Աստծո խոսքի հաղորդողներն են եղել հրեշտակները կամ մարգարեները:

րով էր կիրառվում՝ իբրև *Ասորուծաշունչ* երկի մարգարեությունների կրկնություններ, Հիսուսի պատգամներ, աշակերտների հարցեր և ժողովրդի դիմումներ: *Ասել* բայի արտահայտության պլանները այսպանով չեն ավարտվում. այն բազմաթիվ հարադիր կազմություններում նույնպես կիրառվել է՝ հարաբերվելով այլ իմաստային դաշտերի, որոնք առանձին ուսումնասիրության կարժանացնենք հետագայում՝ ցանկանալով շարունակել 5-րդ դարում զարգացած դավանաբանական լեզվաբանության դրույթները:

«Աւետարան»-ի հերոսների ներկայացրած ասույթները հաղորդակցական իրողություններ են, որոնք իրագործվում են խոսողի և խոսակիցների միջև, քանի որ ընդհանրական բնույթի խոսքերում խոսակից է դառնում ոչ միայն «Աւետարան»-ի հերոսը, այլ նաև յուրաքանչյուր ընթերցող¹¹:

Բանալի բառեր - *ասել, բայ, ենթակաառական կապակցելիություն, լեզվական գործընթաց, Աւերարան, հերոսների գործունեություն, սիրոզուս, լեզվական իրակություն, գրական-կերպարային համակարգ, դավանաբանական լեզվաբանություն, միջանչնային հայեցակերպ:*

Лилит Петросян, Аринэ Авагимян - Субъектно-предикативные сочетания глагола “сказать” и их выражения в Евангелии. Языковой процесс в *Евангелии* выражается предикацией глагола „сказать”, который применяется как самая общая функциональная маркированность деятельности героев. Он употребляется в составе чужой прямой и косвенной речи как предикация авторской речи в сочетании с подлежащими личной конструкции, которые своей частеречной принадлежностью и формами выражения многогранны и отображают литературно-образную систему *Евангелия*.

Предикация выраженная глаголом "сказать", направлена на новые языковые реалии, в которых формируется новая межличностная парадигма-

¹¹ Տե՛ս **А. А. Чернобров**, Специфика религиозного дискурса в лингвистике, Образование и культура России в изменяющемся мире, Новосибирск, 2007, էջեր 94-98:

тика деятельности-коммуникация в буквальном смысле: определенное содержание адресатом отправляется адресантам.

Субъектно-предикативные отношения глагола “сказать” в разных видо-временных формах применяются с разными оттенками в тексте *Библии* в повторах пророчеств, заповедях Иисуса, вопросах учеников и посланиях народу. Цель исследования-по-новому продолжить положения религиозного языкознания, развитого Месропом Маштоцем и Сааком Партевом в армянской лингвистике V века.

Ключевые слова: *глагол сказать, субъектно-предикативное сочетание, языковой процесс, Евангелия, деятельность героев, предикация, языковая реалья, литературно-образная система, религиозное языкознание, межличностная концепция.*

Lilit Petrosyan, Arine Avagimyan - Subjective Illustrative Connectivity And Expression Of “Asel (To Say)”. Verb In Gospel. Linguistic activity is mainly done with predication of *սուիլ* verb in Gospel, which is used to define pragmatically the most common as heroes’ activity. It is used within directly and indirectly words of others, as predication of speech of the copyright, connecting with personal subjects, which, with their part of speech affiliation and ways of expressiveness, are variable and represent literal-figural system of Gospel.

Predication expressed with *սուիլ* verb is directed to the new linguistic reality, where is forming interpersonal concept of activity: communicating in full sense, some content is represented to the acceptor by the reporter.

Subjective illustration of verb *սուիլ* is used in different complexion in different tense-mood ways, as if the copy of prophecy of Bible work, Jesus’ commandments, questions of pupils and people’s applications. The aim of the research is to continue in a new way of Mesrop Mashtots and Sahak Partev’s provisions of developed religious linguistics of 5th century.

Keywords: *Verb to say, subjective illustrative connectivity, linguistic activity, Gospel, heroes’ activity, predication, linguistic reality, literal-figural system, religious linguistics, interpersonal concept.*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ ՎԱԳԱՇԽԱՐՀԱԲԱՐՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Պողոսյան Նորայր
(ԵՊՀ)

Հայերենագիտության մեջ լիարժեք հստակեցված չէ փոխառության և օտարաբանության սահմանը, ո՞ր բառերը պետք է համարել օտարաբան, ո՞րը փոխառյալ՝ դրանք տարբերելու համար բնիկ հայերեն բառերից: Հ.Աճառյանը անձնանունների մասին խոսելիս հարցը պարզաբանելու մի բանաձև է առաջադրում. «Թե ինչպես կարելի է իմանալ, թե այսինչ անունը հայկական է, թե օրար, պերք է դիմել սրուգաբանության: Եթե մի որևէ անուն մեզ համար և մեր լեզվում որևէ իմաստ է տալիս, ուրեմն հայկական է, իսկ եթե ոչինչ չի նշանակում, ուրեմն օրար է»¹: Վերջին շրջանում տպագրված «Օտար բառերի բացատրական բառարանում» հարցն այսպիսի ձևակերպում է ստացել. «Օրար բառ ասելով նկատի են առնվել այն բառերը, որոնք այսօր հանրության կողմից գիտակցվում են որպես այդպիսին»²:

Հայերենի հին շրջանների համար հարցի պարզաբանումն առավել բարդ է, քանի որ մեր օրերի հայերեն լեզվամտածողությունն ունեցող մեկի համար խիստ դժվար է օտարվել ներկայիս իմաստային առումներից և ստույգ պատկերացնել մի քանի հարյուրամյա հնության լեզվավիճակը: Այս դեպքում գրեթե հրանավոր չէ սահման դնել տվյալ բառը փոխառյալ կամ օտար համարելու համար:

Վաղաշխարհաբարյան շրջանում առավել հաճախացան եվրոպական լեզուներից կատարված փոխառությունները հայերենում: Չանագան ճանապարհներով հայերենի տարբեր տարածքային տարբերակներին են անցել բառեր (հասկացություններ, տերմիններ) գերմաներենից, լեհերենից, ֆրանսերենից, հունգարերենից, իտալերենից, ռուսերենից և եվրոպական այլ լեզուներից:

¹ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Խո. Ե, Եր., 1962, էջ 341:

² Ալ. Մարգարյան, Աշ. Հայրապետյան, Օտար բառերի բացատրական բառարան, Եր., 2004, էջ 5:

Մեր կողմից դիտարկվել են 16-18-րդ դարերում ստեղծված հայերեն բազմաթիվ գրավոր աղբյուրներ բոլոր ժանրերից՝ պատմագրություն, ուղեգրություն, գեղարվեստական գրականություն և չափածո երկեր, վիճագրություն, ժամանակագրություն, դիվանական փաստաթղթեր և այլն (դրանք տե՛ս հրապարակման վերջում՝ «Աղբյուրներ» բաժնում): Դրանցից ի մի ենք հավաքել եվրոպական տասնյակ փոխառություններ, որոնք կփորձենք ներկայացնել ներկա հրապարակման մեջ:

Նախ պետք է ասել, որ հայերենագիտության մեջ եվրոպական փոխառյալ բառերը բավականչափ ներկայացվել են: Միջին հայերենում եվրոպական լեզուներից հայերենին անցած բազմաթիվ բառեր են ներկայացված Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի» բառարանում: Բառարանի առաջին տպագրությունից տարիներ անց Ռ. Ղազարյանը հրատարակեց իր «Միջին գրական հայերենի բառապաշարը» մենագրությունը՝ այստեղ նույնպես քննելով միջին հայերենի փոխառությունները, այդ թվում՝ լատիներենից, ֆրանսերենից, լեհերենից, հունարենից և այլ լեզուներից³: Որոշակի թվով փոխառություններ կան նաև Նորայր Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայոց» բառարանում⁴: Արժեքավոր այս բառարանը, որ բնույթով ամենամոտն է մեր ընտրանքին, ծանր ճանապարհ անցնելուց հետո ի վերջո արժանացել է տպագրության, սակայն ցավոք դեռևս արժանի մեկնաբանություն չի ստացել:

Հայերենագիտության մեջ եվրոպական բառերի ամբողջացման հիմնարար փորձը պատկանում է Հ. Աճառյանին: Դեռևս գիտական գործունեության վաղ տարիներից նման փոխառությունների մեծաքանակ փաստեր հավաքելով՝ մեծանուն լեզվաբանը դրանք ներառում է «Արմատականի» մեջ, ապա առանձին գրքույկով Վիեննայում հրատարակում է «Եւրոպական փոխառեալ բառեր հայերէնի մէջ» աշխատությունը⁵: Այստեղ Հ. Աճառյանն ի մի է հավաքել և քննել փոխառյալ բառեր, որոնց մի մասը հայերենին է անցել բարբառների (Կ.Պոլսի, Ակնի, Արաբկիրի, Վանի, Չմյուռնիայի և այլ) միջոցով: Լեզվաբանը մատնանշում է, որ

³ Ռ. Ղազարյան, Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009: Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001:

⁴ Նորայր Բիւզանդացի, Բառգիրք ստորին հայոց, ի մատնագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, հրատ. պատրաստեց Մ. Մինասեանը, Ժնև, 2000 (Պ-Ֆ տառերը՝ անմշակ) ԺՆ, 2001:

⁵ Հ. Աճառյան, Եւրոպական փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Վիեննա, 1951:

նման բազմաթիվ փոխառություններ շատ հաճախ թափանցել են նույնիսկ Եվրոպայից շատ հեռու Հայաստանի խորքերը, օրինակ՝ Ալնա բարբառի մեջ ունենք *էճինէ, ընկելա, իսրիքա, քէլիկոսի* (ոսկերչական զանազան գործիքների անուններ են), Վանի բարբառում՝ *բռօնպաթա* (զինվորական թմբուկ), *կոմանդար* (ղեկավարող), *կոմփանյա* (ընկերություն) և այլ առօրյա գործածական բառեր: Եվրոպական բազմաթիվ բառեր են անցել «մինչև անգամ Ղարաբաղի լեռներուն վրայ՝ *սրնդրըլա* (աթոռ), *բօլթա* (պտոյտ) բառերը»:

Եթե Եվրոպայից աշխարհագրորեն ու նաև տնտեսական-մշակութային տարածությամբ բավականին հեռու հայերին անցել ու գործածական էին դարձել նման փոխառություններ, ապա հասկանալի է, որ դրանց քանակն առավել մեծ պետք է լիներ եվրոպական երկրներում՝ տարբեր ազգերի մեջ ապրող հայերի խոսքում: Շատ հաճախ փոխառությունների մի մասն իր ժամանակին համագործածական է եղել, այնքան, որ շատերը «ներխուժել են» անգամ գրաբար բնագրերի մեջ:

Հայերն ու հայոց լեզուն ուշ միջնադարում տարածված էին հեռավոր Հնդկաստանից, Պարսկաստանից մինչև Լեհաստան, Հունգարիա, Հոլանդիա: Հայերի սփռված լինելու մասին բնորոշ մի համեմատություն է անում Սիմեոն Լեհացին իր ուղեգրության մեջ. «*Եւ ուր եւ ինչ տեղ գնայաք, նա հայ գրասնէաք, զի տարածեալ եւ սփռեալ էին ընդ երեսս երկրի որպէս գփոշի*»⁶: Այս շրջանում հայերն ու հայերենը շփումների մեջ էին Ասիայի (պարսկերեն, արաբերեն, թուրքերեն) ու Եվրոպայի (իտալերեն, լեհերեն, հունգարերեն, գերմաներեն, ռուսերեն, ռումիներեն, հունարեն և այլն) մի շարք լեզուների հետ: Իրենց բնակության երկրների հայերեն տարբերակներում, բնականաբար, գերակշռում են տիրապետող լեզվից կատարվող փոխառությունները, Հունգարիայում՝ հունգարերենից ու գերմաներենից, Կ.Պոլսում՝ թուրքերենից, Նոր Ջուղայում՝ պարսկերենից և այլն: Սակայն շատ հաճախ գրեթե անհնար է լինում հստակ որոշել, թե ո՞ր լեզվում է ծագել տվյալ բառը և որ լեզվից է անցել հայերենին: Այս դեպքում մեզ համար առաջնային չափանիշ է այն, թե որ երկրում ստեղծված բնագրի հետ գործ ունենք և ենթադրաբար՝ որ լեզվից կարող

⁶ Սիմեոն Դալի Լեհացոյ Ռեղեգրութիւն, Իրատ. Հ. Ներսէս Վ. Ալիմեան, Վիեննա, 1936, էջ 41:

էր տվյալ բառն անցած լինէր հայերենի այդ հատվածի մեջ: Այսպէս օրինակ՝ Սիմեոն Լեհացու, Ստեփանոս Ռոշքայի պարագայում փոխառնյալ բառերի մեծ մասի սկզբնաղբյուրը կարող է լինել լեհերենը, անկախ նրանից, թե լեհերենն իր հերթին որ լեզվից է փոխառել տվյալ բառը: Կրկին պետք է վկայակոչենք մեծանուն Հ.Աճառյանին, ըստ որի՝ Կ.Պոլսի բարբառում հանդիպող *հայրուսր* (վիթխարի), *հեօրիք* (քիրտ), *փալասկա* (փամփշտակալ) բառերն ունեն հունգարական ծագում, սակայն դրանք «*ամէն պարագայի մէջ մենք փոխ առած ենք թուրքերենէ և ուղղակի հունգարացոց հետ գործ չունինք*»⁷:

* * *

Աղբյուրներից մեր քաղված եվրոպական փոխառությունների մեջ առավել մեծ խումբ են կազմում լատիներեն, գերմաներեն, իտալերեն, հունգարերեն, լեհերեն, ռուսերեն բառերը, ոչ մեծ քանակով գործածվել են նաև ֆրանսերեն, ռումիներեն, անգլերեն բառեր:

ա) Լատիներեն. *բրիլիանտ, գարլիցիա, բանրէմ, իմփէրաթօր* (իփրաթօր, *եփրաթօլ* տարբերակներով), *լիկիոն, կոռփոռայ, նունցիոս, չիվէ, վեհալուստր, րուքա, ցէնցա* և այլն: Այս բառերի մի մասը հայերենի մեջ են մտել կաթոլիկ քարոզիչների երկերի, լատիներենից կատարված հայերեն թարգմանությունների, 18-րդ դարում նաև՝ Մխիթարյան միաբանության գրագրությունների միջոցով: Օրինակ Մխիթարյանների դիվանական փաստաթղթերից գրառել ենք նման տասնյակ բառեր, որոնք իր ժամանակին լայնորեն գործածվելիս են եղել իտալահայերի միջավայրում⁸:

բ) Իտալերեն. *գաբէլլան, գռանդոկ* (կրանրուքայ), *էսկալէ, քալայ, քրրմիթ* (թրէմպէթ), *իլլութրիճիա, լիւան, կրմնալ, դալէօն, փիսայցայ* և այլն:

գ) Գերմաներեն. *գաշդալան, գարնավալ, կանցլար, կափիւրան* (իաքիւրան), *կոյնանդանթ, ճէխ, շդրինֆ, շուխ, պուրկումէսրէր* և այլն:

⁷ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 11:

⁸ Մայր դիան Մխիթարեանց ի Ս. Ղազար (1707-1773), Վենետիկ, 1930:

դ) Լեհերեն. *բիվնիցա, պոլպոչոկ, գժենց (գժոնծ), գրիժագ, հեթման, շբիթալ, սբլեթ, ռաթուշ* և այլն:

ե) Ֆրանսերեն. *գրէթին, մալամայ, մարքիզ, միսիօնար, փիրինծ* և այլն:

զ) Հունարեն. *Էպիկոսամմայ, թեօլէդոս, հուրթունայ, սիճիլ, սինուռ, քրակիրիր* և այլն:

Նշված բառերի մեծ մասը հայերենին է անցել ուշ միջնադարյան շրջանում, չնայած որոշ դեպքերում հնչյունական այլ տարբերակով կիրառվել են հին հայերենում:

է) Ռուսերեն. *զնագ (զնեագ), դվոռէց, ըսլուկա, լօթկա, կազեկ, շար, ուքագ, պայար (պօհար), պօշկա, սօլլար, փրքագ, ֆամիլ* և այլն: 17-18-րդ դարերում հատկապես վաճառական հայերի կապերը խիստ ընդլայնվում են Ռուսաստանում, և նրանց միջոցով (նաև այլ ուղիներով) նորանոր ռուսերեն բառեր են անցնում հայերենի հատկապես արևելյան խոսվածքներին: Առանձին և տարողունակ թեմա է ռուսերենից կատարված փոխառությունների հարցը, բայց և ներկայացնում ենք այստեղ՝ պատկերն ամբողջացնելու համար:

Ընդհանուր առմամբ ուշմիջնադարյան հայերեն որևէ տեքստի բառային կազմի վրա հենվելով՝ կարելի է մոտավոր պատկերացում կազմել, թե որտեղ է ստեղծվել այդ բնագիրը՝ Եվրոպայում, Թուրքիայում, Իրանում, թե այլուր: Նման եզրահանգման կարելի է գալ նաև բառապաշարի վրա տվյալ տարածքի խոսվածքի հնչյունական հատկանիշների արտացոլումը հաշվի առնելով՝ ո>ր (*արնեկ*), ք>պ (*քողքար*), գ>կ (*կանկար*) և այլ կարգի փոփոխություններով:

Որպես օրինակ կարող ենք մատնանշել հունգարահայերի միջավայրում ստեղծված բնագրերը⁹: Հայերենի տարածքային այս տարբերակում զգալի է բաղաձայնների (նկատի ունենք հիմնականում պայթական և պայթաշփականների) ձայնեղացման երևույթը: Հունգարահայ փաստաթղթերի բոլոր էջերին սփռված են ձայնեղացման օրինակներ՝ *հասդարեկ, կորուսդ, դարասդան, ըսդակ, ոսգի, կիրջորաց (կիրիճներին), դպշեր (դիպշեր)* և այլն: Եվ ահա հնչյունական համակարգային այս փոփոխությունը հավասարապես տարածված ենք գտնում նաև այստեղ

⁹ **Գրիգոր Գովրիկեան**, Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիոտանիոյ, Վիեննա, 1893:

տարածված փոխառյալ բառերի վրա՝ *տէքուդադ, քոթոզօ, քրիսդալ, էզօնօմիա* և այլն¹⁰:

Եվրոպական միջավայրում հայերեն արտասանության և տառադարձման մի ուշագրավ իրողության հանդիպում ենք դեռևս 1645 թ. Հռոմում տպագրված՝ Կղեմես Գալանոսի «Քերական և տրամաբանական ներածութիւն» գրքում¹¹, ուր նկատելի են բաղաձայնական համակարգային տեղաշարժերն արտացոլող փաստեր: Հեղինակը բերում է հայերենի այբուբենը՝ տառերի անվանումներով, որոնց լատիներեն տառադարձման մեջ արտացոլված են հայերենի բաղաձայնական որոշ տեղաշարժեր. հայերեն բ-ի դիմաց գրված է լատ. ք, դ-ի դիմաց՝ տ, ք - tt, ծ - dz, կ - gh, ճ - g, պ - b, ջ - c, տ - d, փ - pp: Ուշագրավ է նաև հայերեն տառերի անվանումների լատիներեն տառադարձումը՝ բեն-pien, քո-ttuo, կեն-ghien, ո-vaoo, տիւն-diuտ և այլն: Թվում է՝ այս աղյուսակի հեղինակը հետևել է ընդհանուր առմամբ ձայնեղացում կամ տեղաշարժ-տեղափոխություն ապրած որևէ բարբառով խոսող հայի արտասանությանը, որոնցում ձայնեղները խլացել են, իսկ խուկերը՝ ձայնեղացել, նկատելի են նաև երկբարբառացման հետքեր՝ ե>իե, ո>ոո¹²:

Նման տեղաշարժերը բնականաբար արտացոլված են հայերենին անցած եվրոպական բառերի տառադարձման վրա, որոնց վերհանման միջոցով հնարավոր է դատողություններ անել հայերենի այդ ժամանակվա հնչյունական համակարգի մասին:

Նկատելի է, որ բերված փոխառությունների մեջ իմաստային տեսակետից ամենից տարածված են արհեստների, առևտրին, դատական-իրավական ոլորտին վերաբերող բառերն ու տերմինները: Դա բխում է եվրոպական հասարակություններում հայերի ունեցած դիրքից ու զբաղմունքից. օրինակ արհեստավորական բառեր՝ *բոլպոչոկ, գուրա, գրէքին, ձէխ, շորինֆ, շուրց, սրամբէլ* և այլն, իրավական տերմիններ՝ *բուրկրաթօռ, բրզալապ, բրիվիլեկ, լիսդրադոր, կրմնալ, փրաքրադ, փալթաթօր*

¹⁰ Առավել մանրամասն տե՛ս **Նորայր Պողոսյան**, 17-18-րդ դարերի հունգարահայ բարբառ. բառապաշարային և քերականական անդրադարձ, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2012, թիվ 2, էջ 113-125:

¹¹ **Կղեմես Գալանոս**, Քերական և տրամաբանական ներածութիւն, Հռոմ, 1645:

¹² **Նորայր Պողոսյան**, Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակագրություններ (1512-1712 թթ.), Եր., 2012, էջ 14:

և այլն: Լատիներենից և իտալերենից շատ են եկեղեցական տերմինները, ինչպես՝ *իլլուստրիհիս, լեկտրամուս, նունցիոս, սուսիլիքայ* և այլն:

* * *

Փոխառյալ բառերը լեզվի մեջ են մտնում նախ և առաջ բառակազմական հիմքերի վերածվելով: Այն պահից, երբ լեզվում օտար բառերը դառնում են նոր բառեր ստեղծելու հիմքեր, կարելի է այլևս յուրացված համարել տվյալ փոխառությունը: Ուշ միջնադարի աղբյուրներում այդպիսի մի շարք բաղադրյալ բառեր կան, որոնցում իբրև բառակազմական հիմք գործածվել են փոխառյալ բառերը, օրինակ՝

դիստրոփին (հունգ. *tiszt* «պաշտօնեայ, սպա» բառից) - պաշտոն, իրավասություն

դրկրլորոհ անել (հունգ. *tagadni* «մերժել» բառից) - ուրանալ, հերքել
ինփռադորություն (լատ. *imperator*, իտալ. *imperatore*) – ինքնակալություն

կազել (ռուս. *каз-ать*) - դատել, պատժել

սրամքել (իտալ. *stampare*) - տպագրել

վեհալուստր (հայ. վեհ+լատ. *illustro* «լոյս սփռել, լուսատրել») - վեհագոյն, լուսապայծառ

վիքարություն (լատ. *vicārius* «փոխարինող, տեղապահ») - վիքարի՝ տեղապահի պաշտօն

վոնէական (հուն. *boréas* «հիւսիս-արևելեան սառը քամի» բառից) - սաստիկ քամու նման և այլն:

Նշված և բազմաթիվ այլ բառեր հաստատում են, որ մեր արձանագրած փոխառությունների մեծ մասը բնագրերում գործածվել են ոչ թե դիպվածային կերպով, այլ հայերենի տվյալ տարբերակում լայն կիրառություն են ունեցել:

Ստորև բերում ենք 16-18-րդ դդ. ստեղծված հայերեն զանազան բնագրերից քաղված մի շարք փոխառությունների օրինակներ, որոնք գրաբարի կամ միջին հայերենի բառարաններում չեն արձանագրվել: Բառերը ներկայացնում ենք բառարանի սկզբունքով, ալբերենական կարգով: Փակագծում տալիս ենք տվյալ բառի ծագումը, սպա բերում

բնագրային մեկ-երկու մեջբերում, թեև մեր քարտարանում նման մեջբերումներն ավելի շատ են, և դա ցույց է տալիս, որ փոխառված տվյալ բառերը պատահական կերպով չեն անցել բնագրերին, այլ ընդհանուր ճանաչում և գործածություն են ունեցել, այնքան՝ որ դարձել են գրավոր խոսքի սեփականությունը: Փոխառությունները համեմատել և ճշգրտել ենք հայերեն և օտար հեղինակավոր բառարանների տվյալների հետ, որոնց հղումներն ավելորդ համարեցին բերել:

Բառացանկում ընդգրկված մի շարք բառերի դեպքում հնարավոր է ասել, որ նույն տառադարձումով կամ հնչյունական այլ կազմությամբ այսօր էլ գործածվում են հայերենի գրեթե բոլոր տարբերակներում, ինչպես՝ *գրափ, հարմարքի, լօթկա, պօշկա, կափիպրան, սէնէթօռ, մալրամայ, միսիօնար* և այլն: Սակայն, միևնույն է, տվյալ բառն ավելի վաղ աղբյուրներում չի արձանագրվել, դրանք մեր լեզվի մեջ են մտել 16-17-րդ դարերից: Եվրոպական լեզուներից հայերենի բարբառային, տարածքային այս կամ այն տարբերակին անցնելով՝ այդ բառերն աստիճանաբար լայնացրել են իրենց գործածության շրջանակը, հաճախ վերածվել են համագործածական բառերի և անցել գրական լեզվին: Գուցե այդ բառերի անմիջական աղբյուրները մեր քաղաք բնագրերը չեն, սակայն և ցույց են տալիս, որ այդ շրջանից արդեն մտած են եղել հայերենի մեջ:

Ալթոլ (հունգ. altal «շնորհիվ») - միջնորդությամբ: *Կու տեսունոնք, որ այս բանս կրօֆին ալթոլ պէտք է որ վերջանայ»* (Գովր., 155):

Բիվնիցա (լեհ. pivnica) - գարեջրատուն, զինետուն: *Եւ գեպնափոր մադարանի, բիվնիցանի քարէ, որ ամառն ըմպելին ցուրտ եւ պաղ լինի* (Սիմ. Լեհ., 337):

Բուրկրաթօռ (լատ. procurator, իտալ. procuratore «հսկող, վարող») - վերակացու, դատախազ: *Պարտին իմ գօմսարքն և բուրկրաթօռներն իմ ինթրաթի ըստրկէն շինել զպակասութիւն աւերման տրանն այն* (Հայ-Վեներ., 482):

Բրգալապ (ռումին. parcalab «դրեակի կառավարիչ») - բերդապահ: *Ի շարքս օրն եկն չափուշ մի, եւ ընդ նմա մեծաւոր Պողոսանցի մի, որ բրգալապ կոչիր* (Պարմ. Խոթ., 68):

Բրիվիլեկ (լատ. privilege) - արտոնություն: *Հայք Կամենիցացիք յայսմ ամի սկսան ի շեռն բրիվիլեկաց բազաւորացն Լեհաց* (Կամենից, 133):

Կարլոս կայսրն... շնորհեաց գրրիսիլիէկոս և զիշխանութիւն (Սյր. Ռօշքայ, 200):

Բոլպոչոկ (լեհ. bolpochek «տակառ») - չափի միավոր, կոտ: *Բազում գանձք իտարացաւ անցաւ... զոր ոմանք ասէին երկու բոլպոչօք կարմիր ֆլորի (Կամենից, 61):*

Գաբելլան (իտալ. cappelano) – հոգևորականի օգնական, զորքի հոգևորական: *Առնէ զնա պաղատան իւրոյ երէց, որ կոչի գաբելլան (Սյր. Ռօշքայ, 188):*

Գաշդալան (գերմ. kastellan) - բերդապահ: *Գաշդալանն Բոլոցքի հեղանդեալ բարկութեամբ մեծաւ և քաջապէս մարտուցեալ դարձուցանէր զձախ թե զնդին (Պարս. Խոր., 53):*

Գարնավալ (գերմ. Karneval, լեհ. karnawał) - տոնոմահանդես, դիմակահանդես: *Եւ ի Գարնավալն, որ է մեծ Բարեկենդանք, զայն երկու շաբաթ ամէն օր մէկ խաղ մի և շարլիս կառնեն (Սյր. Լեհ., 159):*

Գժենց, գժօնձ (լեհ. ksiądz) - հոգևորական, քահանա: *Ի Կամենից քաղաք նոր եպիսկոպոս մարաւ, անուն գժենց Մարցին (Կամենից, 50):*

Գնագ, գնեագ, քնագ (ռուս. князь) - իշխան: *Գնագ Կոստանդին կոտորեց զդադարն (Կամենից, 17): Գնաց փախարական առ Մոսկովի զնեագն (Կամենից, 30):*

Գուբա (հունգ. kupa «գավաթ») - չափման միավոր: *Ինքք ծախէ գուբով ալ և վարրայով ալ և ընդօր ուզենայ (Գովր., 100):*

Գրանտուգ, կրանտուբայ (իտալ. granduca) - ավագ դուքս, մեծ իշխան Տոսկանայի: *[Եկաք] յերկիրն Թոսկանաց (իմա՛ Տոսկանիա) գոսկոնիկի (Յ. Թութունջ., 306):*

Գրափ (ռուս. граф, գերմ. Graf) - ազնվականական տիտղոս, կոմս: *Աստուածատէր և բարեպաշտ իմաստրնախոհ և շքեղափառ գրափ Դէկո-վէնցլ մեծարգոյ դեսպան ի Պետրպօլք (Ղուկ. նամ., 124):*

Գրէբին (ֆրանս. crépine «ծոպ») - վերջավորություն, ծոպ: *Ոչ էրիկ մարդիգաց, ոչ կնկիրոց հազարի վրայ ոսգու կամ արծրթէ գրէբին չի գրվի (Գովր., 46):*

Գրիժազ (լեհ. krzyżak) - խաչակիր, ասպետ: *Յաղթութիւնս ընկալան ընդդէմ քազմագոյն ներհակաց օլտար և ընդրանի բջնամեաց՝ երբեմն ընդ գրիժազաց և երբեմն Շոնրաց (Պարս. Խոր., 43):*

Դապլա (հունգ. tábla «խորհուրդ») - բարձրագույն ատյան: *Գաուրգա չէրթա մեր դարաստանէն գրմարն, հապա երթա դապլան կամ կուպէր-նիումը (Գովր., 194):*

Դվոռէց (ռուս. дворец) - Պալատ: *Գոս մեծի ինփրայթոռին դվոռէցն և ըզբեզ եպվառնես ինարրանըց դեկ կալէզում (Եզով, 406):*

Եզվայիդ, եզվայիթ, ճեզդիթ (ֆրանս. jésuite «Յիսուսեան») - Հիսուսյան միաբանության անդամ, ճիզվիտ: *Այնուհետև զնաց առ եկեղեցականս Տոանկաց... մանասանդ առ այնուսիկ, որք ի կարգէն եզվայիրայ (գրչ. եզվայիթայ) են (Դարիթ, 301): Յորժամ որ կամէին ճեզդիթ պարիթն զնալ առ Կնեցիս Շերմանցոց առ ի հովելն նոցա (Ե. Մուշ, 126):*

Էսկալէ (իտալ. scala, թուրք. iskele) - Նավահանգիստ: *Ղինու Ը օր զնացար Ղուրսէր, որ է Հնդկաց ծովու Էսկալէն (Յ. Թութունջ, 307):*

Էփիկրամմայ (հուն. epigramma «մակագրություն») - ոտանավոր, արձանագրություն: *Չորանատուրս վերարտեսալ քաջաներբողս՝ կարդացեսալ ի հելլէն բարբառ էփիկրամմայ (Դիւան Միսիթ., 145):*

Ըսլուկա (ռուս. слуга) - ծառա, սպասավոր: *Աւան ուզպաշի, ըսլուկա Կարապետ Իւան (Եզով, 382):*

Թանտէմ (լատ. tandem) - ի վերջո, վերջապես: *Թանտէմ տաժանմանը մեծաւ հասինք ի դղեսկն Սթառօշէլի (Կամենից, 153):*

Թապայ (իտալ. tavola «սեղան») - սեղան, նաև՝ խնջույք: *Ի թագաւորի սէրայն Բ թաւայ կայ, որ սէրայի դիմացն է. թաւայ ստելն Կրիվան-իսանայ է (Շահն. յիշ., 317):*

Թրոմբիթ, թրեմպէթ (իտալ. trombette «փող») - երաժշտական փողային գործիք: *Յորժամ թագաւորն ի դուրս ելանէ, այս է զինաթն՝ ԻԴ շաբիր... արծաթէ թրոմբիթ (գրչ. թրեմպէթ) (Յ. Թութունջ, 303):*

Իլլութրիճիա (իտալ. la Liturgia) - պատարագամատույց, խորհրդատետար: *Բայց վասն իլլութրիճիայի խնդրեմ յղել զօրինակ նորին, քանզի իդնմարանք իմը նեղեն զիս (Ոսկ. նամ., 1966, 302):*

Իմփերաթօր, իփրատօր, ենփերատօր (լատ. imperator, իտալ. imperatore) - կայսր, միապետ: *Գլուխն Դոմպիոյ թագաւորն է իբրև իմփերաթօր (Յ. Թութունջ., 307): Զաջամարտ և հզօր իմփրատօր (Եզով, 421): Հոկտեմբերի 1 եկի ի Վեննա, որ է Պէջ եւ է թախտ ենփերատօրին (ՄԺ II, 404):*

Իմպերատրիցա (ռուս. императрица) - կայսրուհի, թագուհի: *Մեծ ինկուրսորիցես քօմսկ որ աղարկում ենք չեզ* (Եզով, 430):

Լեկտամոս (լատ. Laetamus «ուրախ լիցուք») - հոգևոր արարողություն: *Ի Կամենից քաղաքն մեծ ուրախութիւն կարարեցին, այսինքն է որ կոչի Լեկտամոս* (Կամենից, 51):

Լիման (իտալ. >թուրք. liman) - ծովածոց, նավահանգիստ: *Յունիսի Ժ գիշերն երկուշաբթիլուս ազգն յուռուս եկաւ մըրա ի լիման Կաֆային* (ՄԺԻ, 211):

Լիստրատոր (լեհ. lustrator) - քննիչ, տեսուչ: *Հրամանաւ թագաւորին երեք իշխանք եկին ի Կամենիցս, որք էին լիստրատորներ* (Կամենից, 39):

Լօթկա (ռուս. лодка) - նավակ: *Մեք մինչի լօթկի թէրարիք կանենք... զմեզ շուր չաշմիչ կանեն* (Եզով, 422):

Կազել (ռուս. каз-ать) - դատել, պատժել: *Դարասարան ունին եւ սուր, որ զհայ զոդս եւ զաւազակս կազեն եւ զիսարեն* (Միմ. Լեհ., 338):

Կանցլար (գերմ. Kanzler) - Գերմանիայում կառավարության վարչապետ: *Կանցլար գրաֆ Գալոնէլ Գլօլգին* (Եզով, 406):

Կոռպորալ (լատ. corporalis, իտալ. corporale) - պատարագի ժամանակ օգտագործովող ճերմակ կտավ: *Մէկ ջոխար լաւ արծաթէ քշոց, մէկ էլ զառ կոռփուռայ երուն Սք. Յակոբայ* (Ակոռ., 203):

Կրմնալ (իտալ. criminale «քրեական») - քրեական: *Այս օրէն դարասարանն վաղն չեն չգել՝ թէ չէրվիչ, թէ կրմնակ* (Յ. Թութունջ., 308):

Հեթման (լեհ. hetman, գերմ. Hauptman «պետ») - Կազակների հրամանատար: *Ի միս դրանէն մեծ հեթմանն Խորքեիչ տեսեալ զգալուսար անօրինացն՝ քարկանայ յոյժ* (Պարմ. Խոր., 52):

Հուրթունայ (յուն.>թուրք. fırtına) - փոթորիկ: *Գիրես թէ Ասրոսծ քարկացաւ քամի եղաւ, հորթունայ եղաւ ան գիշերն* (ՄԺԻ, 220):

Հրանիցա (լեհ. granica, ռուս. граница) - սահման: *Ուն իշխան Վոյնից-քիլ ընթացաւ յեր նորա եւ եհաս նմա ի հրանիցան* (Կամենից, 45):

Չար (ռուս. царь) - ցար, կայսր: *Ունէր և զայլ թուղթս առ կայսրն Լէօրդլոս, առ Բալադին Էլէքթօրն և առ չարն Մոսկովաց* (Սլր. Ռօշքայ, 190):

Չէխ (գերմ. zéche) - արհեստավորական ընկերություն: *Աուրը ամէն դի կամ ամէն շաղրա կու քալին չէխերը* (Գովր., 197):

Մատամայ (ֆրանս. madame) - տիկին: *Հանեսցի միփթարել զմանկուհին, զորս համընկերակցութեամբ րիկին մատամային Պակավուրք եր բերել (Դիան Միփթ., 65):*

Նեմիշ (հունգ. nemes) - ազնվական: Կան երնան շատ տուն նեմիշներ, որոնցմէ պետք է վրնտրելու, օր ցրցնուն (Գովր., 197):

Նունցիոս (լատին. nuncio, իտալ. nunzio «ղեսպան») - սուրհանդակ: *Զգանգատրանս զրեցին առ Բիկնադէլլի նունցիոսն փափին (Սյր. Ռօշքայ, 180):*

Շբիթալ (լեհ. szbital) - հիվանդանոց, բուժարան: *Ամէն ամի վճարք առնեն, նոյնպէս քային կայ շբիթալնուն եւ վանօրէիցն (Սիւմ. Լեհ., 78):*

Շոյրինֆ (գերմ. strümpfe «զանգապան») - գուլպա: *Ապրշումէ շոյրինֆներըն թէ րդայ կնկիրոց եւ թէ աղջիկնու եւ կամ հի որ մէկին արգիլված պիլայ (Գովր., 46):*

Շուրց (գերմ. schürze) - գոգնոց: *Ոչ այս երկրին մէջ եւ ոչ օգկայ երկիր չի գրվիլի... ոչ շուրց, ոչ գեթդ՝ թէ հայնակ եւ ոչ մանրրնակ եւ ոչ կրգալ (Գովր., 45):*

Ուրազ (ռուս. указ) - հրաման(ագիր): *Թագաւորն պիրի շուրօլ ուրազ ուղարկէ մին փօրիաշով (Եզով, 319): Հրամայական թուխր, որ է բոռուարէվար ուրազ կասեն (Եզով, 395):*

Չիվէլ (լատ. cīvileis, իտալ. civile) - քաղաքացիական: *Գրով դատարանական առնեն՝ թէ՛ չիվէլ, թէ՛ կրննալ (Յ. Թութունջ., 303):*

Պայար (ռուս. боярин) - բոյար: *Պարոայ եւ Դարպանդու ջնդրալների եւ պայարների դուրդին (Եզով, 419):*

Պուրկումետր (գերմ. Bürgermeister, ռուս. бургомистр «քաղաքապետ») - տեղական պաշտոնյա, քաղաքագլուխ: *Հաշարիսանէն ինչ չափար ուղարկեցին, թէ պուրկումետրերն եկին ասրանքն ամէն քաշեցին րարան (Եզով, 257):*

Պոպրթէքցի (ռուս. протекция «հովանավորություն» բառից՝ под протекцией) - հովանավորության ներքո լինել: *Մեծ ինփրայթօռին ողորմութեան հրամանին րակ գրգոն, որ է պոպրթէքցի (Եզով, 406):*

Պօշկա (ռուս. бочка) - տակառ: *Ամէնուց ինչ հեւր բերում եմ քազարական՝ թէ՛ շուշայով եւ թէ՛ պօշկով (Եզով, 259):*

Ջինթիլօմ (ֆրանս. gentilhomme) - պալատական ազնվական Ֆրանսիայում, ջենթլմեն: *Որչափ մեծամեծք կան՝ վէզիր, փիրիօյ, մարքիզ,*

ջինքիլով եւ այլ մեծամեծք, շուրջ գտեղանովն կու կանգնին (Շահմ. յիշ., 317):

Ռօյո (հունգ. rojt «ծոպ») - վերջավոր, ծոպավոր: Սրգըլամն պիլայ շինօրէ առանց վիղիզ գիւղիւ շիգտի բիգով մըն եւ չափատր ռոյոսվըն (Գովր., 46):

Սիճիլ, սիջիլ (լատ. sigillon, լատ. sigillum «կնիք»), գ. Հրամանագիր, հրովարտակ: *Մահնէրականքն հարկէին զդարատրն առնել սիջիլ մահոսն ի վերայ Նիկոդայոսի, զի սպանցեն զնա, եւ դարատրն արար սիջիլ (գրչ. սիճիլ) (Դարիժ., 402):*

Սլօպօթ (հունգ. szabad «ազատութիւն») - հրաման, իրավունք: Օգկանուն ամենեւին *սլօպօթ* շիլայ ծախելու, ոչ մէկ հայի մըն ալ (Գովր., 100):

Սնոռ (հուն. synoros) - սահման: *Ղուզանի զեղի և Եպիսկոպոսի զեղի սնոռն հասարարեցինք (Մանսահն., 146):*

Սուփլիքայ (լատ. supplica «աղօթել») - խնդրագիր: *Մեք ըսր հրամանի չերում րոսք զգիրն Մեծի Դքսին հանդերձ միով սուփլիքայի, որով խնդրէաք շնորհել մեզ զփալք քիտյն (Ոսկ. նամ., 1966, 302):*

Ստամբել (իտալ. stampare) - տպագրել: *Խոսրացաւ զմեր Տօնացոյց սրամբել իր խարձօլ ի Վենէրիկ (Դիան Միխթ., 26):*

Սքէմլիք (ռուս. скемка) - նստարան: *Կային արոռք, սքէմլիք եւ սեղանք րոսայիզաց ըսր իրեանց սահմանաց (Միմ. Լեհ., 152):*

Վատրա (հունգ. veder, լեհ. wiadro «ղոյլ») - Չափման միավոր՝ 10 լիտր: Ինքը ծախւ գոբով ալ եւ վատրայով ալ եւ ընդօր ուզենայ (Գովր., 100):

Վեհալուստր (հայ. վեհ+լատ. illustro «լոյս սփռել, լուսատրել», ՀԲԲ-ն *լուսրեր* համարում է անհայտ նշանակութեան բառ) - վեհագույն, լուսապայծառ: *Վեհալուստր - յոյժ պայծառափայլ, լուսատրագունեղ, վնդրագոյն, լսար. իլլուսթրիսիմոս (Վ. Յուն., 70):*

Վիքարութիւն (լատ. vicārius «փոխարինող, տեղապահ») - վիքարի՝ տեղապահի պաշտոն: *Մէկ լաւ վարդապետ արեւր, անուն Պօղոս և իր իշխանութիւն արեւր վիքարութեան վերայ մեր աշխարհին (Նշխարք, 23):*

Վլատիքա (ռուս. владыка) - տեր, տիրակալ: *Մեծամեծք ամենեքեան ժողովեցեալք էին, ընդ որս եւ վլատիքայ Ռուզաց Շումլայնաքի (Կամենից, 156):*

Տուրա, տուրս (լատ. dux, իտալ. doge, ֆրանս. duc) - անվականական տիտղոս՝ դուքս: *Եւ էր Նէնցայու սէրազգէրն Կրուքա Կր Լօրէնրն (ՄԺ II, 406): Եւ դուսրրն առեր է Կրուքս Կրու Պապերան (ՄԺ II, 404):*

Տրապ (հունգ. darab) - կտոր: Այսպէս եղաւ, որ տանք իրեն հրամանոցը աշխատանքին մէկ տրապ մը տեղ խտնոցէն (Գովր., 106):

Տրաքտադ (լատ. tractatus «քննարկում, քննում») - հաշտութեան փաստաթուղթ: *Չարն որ օսմայութիւն յեւրոյ Կրաքրադ, որ է հայեվար հաշտութեան դովլամայ (Եզով, 406):*

Բաթուշ (լեհ. ratusz) - դատաստանարան, նաև քաղաքապետարան: *Այրն կնոջն կալաւ ի միարեղ եւ բերեալ ի րաթուշն գերկուքն այլ՝ գկինն եւ գերիբասարդն գիսարեցին (Կամենից, 46):*

Բօսա (հունգ. rasra) - մանգալ: Ինչ բուրլու փէշայի ապրանք գա աս Երկրին մէջ, ինչպէս՝ կայդրնեղէն, գօտի, երկքթեղէն, բօսա և այլն (Գովր., 196):

Յէնցա (լատ. Ascension) - Համբարձում: *Հասար ի մեծն Վանարիք օրն Համբարձման, որ կոչեն գէնցա (Միմ. Լեհ., 177):*

Փալքաթօր (իտալ. appaltatore) - վարձակալ, կապալառու: *Եւ անքա յերես արարեալ գմեզ փալքաթօրին... զի բարց փալքի պարտին առնուլ և սքա գթութարն (Ոսկ. նամ., 1966, 302):*

Փիայացայ (իտալ. piazza > թուրք. piyasa «շուկա, գրօսավայր») - Ատլան, հրապարակ: *Այս օրէն դայրասարանն վաղն չեն չգե, և ինչ Կրեղ որ դիսան կանէ՝ մեծ փիայացայ է (Յ. Թութունջ., 308):*

Փիլինձ (ֆրանս. prince) - թագաժառանգ, արքայազն: *Թվոյն 1696 յուլիսի 15 փիլինձ Սաւօյն հաշրեցաւ հեր Տռանցա թագաւորին (ՄԺ II, 404):*

Փուրվօտչիք (ռուս. переводчик) - թարգմանիչ: *Վասիլի Տիմէֆիձ փուրվօտչիք թարգմանեալ թվ. ՌէճժԹ (1719) ապրիլի Ե Սմ. Պրարպորք (Եզով, 332):*

Փրքազ (ռուս. приказ) - Հիրաման, կարգադրություն: *Թագաւորին ոչ մին փրքազէն ինչ ապրանք չեն Կրեղ (Եզով, 259):*

Քառիթայ (ռուս. карета) - կառք: *Կապեալ եւ գերի վարեալ գկանայս իրեանց հեր բառիթայիք եւ վեց չիօք շրջեցուցեալ (Միմ. Լեհ., 171):*

Քուռաթ, քուրաթ (լատ. cūrātio) - Խխնամակալ, հոգաձու: *Ամէն ազգէ մէկ մէկ քուռաթ կարգեցին, հանդերձ քննութեանք առաջի կարտինալ*

Վիքարին (Դիան Միսիք., 109): Ոչ կամեցաւ յանձն առնուլ քուրաք լինին (Դիան Միսիք., 109):

Օպոզ (լեհ. obóz) - ճամբար, թափոք: *Նոյնպէս եւ զբերդն Խոթինու ի մէջ առեալ ընդ զլուիս բանակին, այսինքն՝ թապոբին կամ օպոզին (Պատմ. Խոթ., 45):*

Ֆարշանգ (գերմ. färsching) - բարեկենդան, տոնախմբություն: *Նայ ուրվեցայ պատրուկի աղաչանուն, որ տան տրիւսչիայ հասարակութեան դէր այս գալ ֆարշանգիս ալ (Գովր., 49):*

Ֆէսթ (գերմ. fest) - տոն, տոնակատարություն: *Նոցա տօն լինի, զոր ֆէսթ կոչեն (Միմ. Լեհ., 168):*

* * *

Իբրև ամփոփում պետք է ասել, որ հայերենի եվրոպական փոխառությունները միայն ներկայիս եվրոպական լեզուներին (անգլերեն, ֆրանսերեն և այլն) հանգեցնելով, ինչպես երբեմն նկատվում է արդի հայերենի ուսումնական ձեռնարկներում, սահմանափակած կլինենք հայերենի վաղ շրջանների բառապաշարի զարգացման ընթացքը, լեզվական շփումները: Վաղ աշխարհաբարում (նաև միջին հայերենում) կատարված եվրոպական փոխառությունները նախանշեցին հայերենի բառապաշարի զարգացման ուղին, ապահովեցին ասիական լեզուներից (արաբերեն, թուրքերեն, պարսկերեն) բացի հայերենի շփումները եվրոպական լեզուների և քաղաքակրթության համակարգի հետ: Այս բառերն ինչ-որ իմաստով եվրոպական մշակութային, կրոնական, տնտեսական, առևտրական համակարգերին հայերենի ու հայ ժողովրդի միտվածության ապացույցն են:

Բանալի բառեր - *վաղ աշխարհաբար, փոխառություն, բնիկ բառեր, բառակազմություն, տերմիններ, եվրոպական լեզուներ, ժանրեր:*

Աղբյուրներ

Ակոռ. - Հակոբ Փափազյան, Ակոռու Ս. Հակոբ վանքի քյոթուկը, «Բանբեր Մատենադարանի», ք. 12, Եր., 1977:

Գովր. - Գրիգոր Գովրիկեան, Հայք յԵղիսաբերուպոլիս Դրանսիլոանիոյ, Վիեննա, 1893:

Գարիժ. - Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատ. Լ. Ա. Խանրարյանի, Երևան, 1990:

Գիւան Մլիխք. - Մայր դիւան Մլիխարեանց ի Ս. Ղազար (1707-1773), Վենետիկ, 1930:

Եզով - Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом (документы), С. Петербург, 1898:

Ե. Մուշ. - Հ. Ոսկեան, Եղիա Մուշեղեան և իր գրական արտադրութիւնները, «Հանդէս ամսօրեայ», 1927:

Կամենից - Կամենից, Տարեգիր հայոց Լեհաստանի և Ռումենիոյ, աշխատ. Ղևոնդ Ալիշանի, Վենետիկ, 1896:

Հայ-Վենետ - Ղևոնդ Ալիշան, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք Հայոց և Վենետաց ի ԺԳ-ԺԴ և ի ԺԵ-ԺԶ դարս, Վենետիկ, 1896:

Ղուկ. նամ. - Ղուկաս կաթողիկոսի նամակը Ավստրիայի Յովսէփ Բ կայսերը և այդ երկրի դեսպանին Ս. Պետերբուրգում:- Լեւոն Բարսեան, Հայերը Մոլդաւիայում և Բուրովինայում, Թիֆլիս, 1911:

Յ. Թութունջ. - Յովհաննէս Թութունջի, Ուղեգրութիւն (1678-80թթ.): - Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961:

Նշխարք - Նշխարք մատենագրութեան Հայոց, հրատ. Զ. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1884:- Օգոստինոս Բաջենց, Ժամանակագրութիւն:

Շահմ. յիշ. - Մահտեսի Շահմուրատի յիշատակարանը: -Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961:

Ոսկ. նամ. - Ոսկան Վարդապետի (իմա՝ Երևանցոյ) նամականին, հրատարակեց Հ. Պօղոս Անանեան, «Բազմավէպ», 1966-67:

Պատմ. Խոթ. - Յովհաննէս Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինու, աշխատասիրութեանը Հ. Ս. Անասեանի, Երևան, 1964:

Սանահն. - Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քթօրուկը), աշխատ. Պարոյր Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007:

Սիմ. Լեհ. - Սիմէոն Դպրի Լեհացոյ Ռէղեգրութիւն, հրատ. Ներսէս Ակիմեան, Վիեննա, 1936:

Ստ. Ռօշքայ - Ստեփանոսի Ռօշքայ Ժամանակագրութիւն կամ տարեկանը եկեղեցականը, հրատ. Հ. Ոսկեան, Վիեննա, 1964:

Վ. Յուն. - Վարդան Յունանեան, Բառարան գրքոյս:- Յովհաննէս Պոնայի Չեռքածութիւն յերկինս, Հռոմ, 1674:

Норайр Погосян - Европейские заимствованные слова в источниках раннего периода новоармянского языка. - В конце средневековья число заимствований из европейских языков увеличился на армянском языке. Были заимствованы слова и вырожения из разных языков- из немецкого, польского, французского, венгерского, итальянского, русского и других языков.

В настоящей статье из разных источников раннего периода новоармянского языка (историография, литература, хронология, документы и т.д.) мы записали десятки европейских слов, заимствованных из в 16-18 вв.

Среди них наиболее распространенными являются слова выражающийсмысл ремёсла, торговли, юридические слова и термины. Например ремесленные такие слова, как болпочок, губе, стамбел, юридические термины - буркатор, гашдалан, палтатор, церковные слова- лектамус, нунциос, сублика и так далее.

Эти слова указывают на тенденцию интегрирования армян на европейских культурных, религиозных, экономических и коммерческих систем.

Ключевые слова: *Ранний современный армянский язык (аишарабар), заимствование, коренные слова, словообразование, Европейские языки, жанры, термины, жанры.*

Norayr Poghosyan - The European Loan Words in Early Ashkharabar sources. In the late Middle Ages the number of loan words from European languages increased in the Armenian language.

In different ways, words from German, Polish, French, Hungarian, Italian, Russian and other languages, have passed to Armenian language.

In present article we pick up and introduce dozens of such European loan words from Armenian writing (historiography, literature, chronology, documents, etc.) created in 16- 18th centuries.

Among them the most common are the crafts, trading, legal words and terms. For example handicraft words such as *bolpochok*, *guba*, *stambel*, legal terms - *burkator*, *gashdalan*, *paltator*, ecclesiastical terms- *lektamus*, *nuntisios*, *suplikay* and so on.

These words indicate the tendency of Armenians to European cultural, religious, economic and commercial systems.

Keywords: *early modern armenian (ashkharhabar), loan, native words, word-formation, terms, European languages, genres.*

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԸ ԵՎ ԼԵԶՎԻ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

*Սաքայեպոյան Ռուբեն
(ԵՊՀ)*

Լեզվական նորմը (կանոն, օրինաչափություն) արձանագրում է տվյալ լեզվով խոսող հանրության ընկալումը լեզվական այս կամ այն երևույթի «ճիշտ» կամ «սխալ» լինելու վերաբերյալ: Այն փոփոխական է ժամանակի մեջ, և բազմաթիվ են այն դեպքերը, երբ դրանք փոխատեղվում են, ինչպես խատոր և կապերա բառերի համար իբրև «ճիշտ» ձև հանդես են գալիս սխտորը և կարպետը: Լեզվում տեղաշարժերը պայմանավորված են նրա զարգացման ներքին օրինաչափություններով՝ իմաստափոխության, համաբանության և գուգաձևությունների այլևայլ դրսևորումներով, որոնք ընդգրկում են լեզվի բոլոր մակարդակները: Ըստ այդմ՝ ընդունված է տարբերակել արտասանական (ոլղախոսական), ուղղագրական, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական և այլ նորմեր: Նորմի փոփոխությունը իբրև կանոն հանգեցնում է գուգաձևությունների ու բացառությունների վերացմանը, որոնք վերջին հաշվով նպաստում են լեզվի գրականացմանը (մշակվածությանը): Այսօր հայերենում նկատվում է լեզվի ընդհանրական կանոնների գերադաս դերը մասնավոր, առանձին, ոչ ընդգրկուն կանոնների նկատմամբ:

Ուղղախոսությունը լեզվական այն ոլորտն է, որ հայերենում ամենից քիչ է մշակված և ուսումնասիրված: Դրա համար կան մի շարք պատճառներ, և դա ամենից առաջ դարեր շարունակ կենտրոնաձիգ պետականության բացակայությունն է, որի հետևանքով լայն տարածում են գտել և մինչ այսօր էլ գոյատևում են բարբառային տարաբնույթ արտասանական շեղումները: Որքան էլ տարօրինակ թվա, սակայն միևնույն լեզվական միավորը /արմատ, ածանց/ տարբեր կազմություններում ունենում է տարբեր արտասանություն: Այսպես, -բար մակբայակերտ ածանցը սովորաբար արտասանվում է -բար, ինչպես՝ հայրաբար, եղբայրաբար, հերոսաբար, որը և առիթ է տալիս որոշ լեզվաբանների գրաբար բառն արտասանել ոչ այնպես, ինչպես ընդունված է հանրության

մեծամասնության կողմից՝ գրավար: Դրա համար նրանք բերում են իրենց կարծիքով մի անառարկելի կովան՝ -բար ամանցի արտասանությունը համանման բառերում: Մեր կարծիքով, այս ամանցի -վար արտասանության պատճառն այն է, որ գրաբար բառը հանրության լայն շերտերի կողմից չի ընկալվում իբրև գր-ա-բար բազմաբաղադրիչ բառ, այլ դիտվում է իբրև արմատական բառ, ուր ձայնեղ հնչյունի շնչեղխլացումը ձայնավորից հետո սովորական է /հմմտ. Հակովի, Սերոփի, ուրաք, կարաք և այլն/:

Ինչ խոսք, ոչ բոլոր դեպքերում կարելի է բերել նույնանման բացատրություններ: Յուրաքանչյուր դեպքում արտասանական տարբերությունը ունենում է ուրույն բացատրություն: Հանրահայտ է, որ ր-ից հետո ձայնեղները շնչեղխլանում են, ինչպես՝ հարբել, երբ, կարգ, արդար և այլն: Այս օրինաչափությունը նկատելի է նաև երգ բառում. Համարյա բոլոր բաղադրություններում նրա վերջին հնչյունը արտասանվում է ք՝ երբիչ, երբել, երբչախումբ, երբային, երբեցիկ և այլն: Սակայն այս արմատով բաղադրված մի քանի բառերում իշխում է գրային արտասանությունը՝ համերգ, համերգավար, համերգասրահ, համերգել: Այս դեպքում բացատրությունը հետևյալն է. ք-ից հետո ձայնեղների շնչեղխլացումը հատուկ է ժողովրդական լեզվին, այն սերնդեսերունդ փոխանցվել է բանավոր ճանապարհով, մինչդեռ համերգ-ը /և դրանով կազմված բառերը/ գրային են և բնորոշ են գրավոր խոսքին, ուստի դրանց վրա չի տարածվում հիշյալ հնչյունափոխությունը: Նույնը վերաբերում է անդամ բառին /անթամատոմս, անթամակցել, բայց՝ հաշմանդամ/:

Վերոբերյալ փաստերը բերում են այն եզրահանգման, որ արդի հայերենում արտասանական նորմը դեռևս վերջնականապես կայունացած չէ, միևնույն լեզվական միավորը պարտադիր չէ, որ ունենա միանման արտասանություն:

Տեղաշարժեր գոյականի թվակազմության մեջ

Արդի հայերենում գոյականի թվի կարգը ունի մի գերակա կանոն՝ վանկաքանակով պայմանավորված թվակազմություն: Միավանկ բառերը ստանում են -եր, բազմավանկ բառերը՝ -ներ հոգնակերտ մասնիկներ: Մնացած դեպքերը համարվում են բացառություններ կամ մասնավոր երևույթներ, որոնք կարգավորվում են առանձին, նեղ ընդգրկում ու-

նեցող կանոններով: Ահա հենց այդ մասնավոր դեպքերի հետ են կապվում թվակազմության հետ կատարվող տեղաշարժերը: Հանրահայտ շփական-պայթական գույգ հնչյուններով սկսվող բառերում /սկսել, զգալ, զգուշանալ, սփռվել, սպասել և այլն/ ը գաղտնավանկը ավանդաբար հնչվում է ոչ թե բաղաձայնների միջև, այլ՝ սկզբում, ինչպես՝ ըսկըսել, ըզզալ և այլն: Այս երևույթը արևելահայերենում պակաս զգալի է, քան՝ արևմտահայերենում: Սա պետք է բացատրել ժուսերենի ազդեցությամբ, որին անձանոթ է ը հնչույթը և գաղտնավանկը առիասարակ: Մրա հետևանքով վերջին շրջանում արևելահայերենում նման բառերը սկսում են արտասանվել առանց այդ գաղտնավանկի, որի հետևանքով բազմավանկ բառը վերածվում է միավանկի՝ սրանից բխող հետևանքներով: Այսպես, շտաբ, սպա, սպի, սփյուռք, սպիրտ և նման մի շարք բառեր ձեռք են բերում առանց ը-ի արտասանություն, որով դառնում են միավանկ և, իբրև հետևանք, դրանց հոգնակին լինում է շտաբեր, սպաներ, սպիեր, սփյուռքեր, սպիրտեր և նման անհեթեթ կազմություններ: Ցավալիմ այն է, որ այս երևույթը սկսում է տարածվել նաև նախագաղտնավանկ ունեցող այնպիսի բառերի վրա, որտեղ ը-ն հանդես է գալիս ոչ թե բաղաձայնների սկզբում, այլ՝ դրանց միջև, մի բան, որ հայերենում սովորական է: Հանուն արդարության պետք է խոստովանել, որ դրանք հիմնականում օտար բառեր են, որոնց բնագրային արտասանության նմանակումն էլ առաջացնում է արտառոց հոգնակիները, ինչպես օրինակ՝ կլիպ, բրենդ և այլն, հոգնակիում՝ կլիպեր, բրենդեր:

Գոյականի թվակազմության մեջ նկատելի է մի տեղաշարժ ևս, որ կապվում է մի այլ մասնավոր կանոնի հետ. խոսքը վերջնամիավանկ բաղադրիչով բառերի մասին է: Այսօր նման բառերի հոգնակիակազմությունը դասագրքերը բացատրում են հետևյալ կերպ. Եթե բաղադրյալ բառի վերջին բաղադրիչը միավանկ է և ունի գոյականական իմաստ, ապա բառն ստանում է –եր հոգնակերտը /արևմտահայեր, կավահողեր, զարեհացեր/, իսկ եթե այդ վերջնաբաղադրիչը բայարմատ է կամ բայահիմք, կամ էլ առկա է թաքնված բայական իմաստ, ապա բառն ստանում է –ներ հոգնակերտը /հանրավորներ, ժամագույցներ, սրատեսներ, մեծատուններ/: Այսպես է սահմանում արդի հայերենի լեզվական նորմը: Սակայն վերջին տարիներին մի քանի կազմություններում նկատվում է գու-

գաձևություն: Մասնավորապես -նիշ և -պետ բաղադրիչներով կազմվող բարդություններում հոգնակին հնարավոր է կազմել և՛ -եր, և՛ -ներ մասնիկներով, ինչպես օրինակ՝ ձայնանիշեր-ձայնանիշներ, դրամանիշեր - դրամանիշներ, արժեքիշեր - արժեքիշեր, գյուղապետեր - գյուղապետներ, վարչապետեր - վարչապետներ, քաղաքապետեր - քաղաքապետներ, նահանգապետեր - նահանգապետներ և այլն:

Մեր կարծիքով, այս օրինակները ի հայտ են բերում մի կարևոր օրինաչափություն: Մասնավոր կանոնը իր տեղը սկսում է զիջել ընդհանրական կանոնին՝ հոգնակերտի ընտրությունը պայմանավորելով վանկաքանակով, քանի որ մեր խորին համոզմամբ զարգացման միտումը ցույց է տալիս, որ ապագան -ներ-ով ձևերինն է:

Տեղաշարժեր բայական համակարգում: Բայն իբրև խոսքի մաս կարևորագույնն է թե՛ իր ձևերի բազմազանությամբ և թե՛ խոսքի կառուցման մեջ ունեցած իր դերով: Եվ պատահական չէ, որ բայեր մեջ ևս կատարվում են էական տեղաշարժեր, որոնք հանգեցնում են գործող նորմի փոփոխության: Նախ դիտարկենք մի շատ խոստուն դեպք՝ կապված քանալ բայի մերօրյա փոփոխությունների հետ: Այս բայը գրաբարում կատարյալի հիմքի կազմությամբ նույնանում է խնուլ և լնուլ բայերի հետ. քանալ-բաց, խնուլ-խից, լնուլ-լից: Աշխարհաբարում այս բայի կատարյալի հիմքը մնում է նույնը՝ բաց, վաղակատարը լինում է քագել, իսկ հրամայական եզակին լինում է հայերենին ոչ բնորոշ միաբաղադրիչ ձևով՝ բա՛ց¹: Այսպիսով, քանալ բայը պատկանում էր դասական անկանոն բայերի թվին, որի անկանոնությունը ի հայտ էր գալիս կատարյալի հիմքի և հրամայականի կազմության ժամանակ: Անցյալ դար կեսերին այս բայի անորոշ դերբայը դադարեց ընկալվել իբրև աղյալիսին: Անորոշ դերբայը նույնացավ վաղակատար դերբայի հետ /ինչպես բոլոր աններածանց բայերի դեպքում/, իսկ բառացիորեն վերջին տասնամյակում այս բայի հրամայական եզակին սկսեց կազմվել կանոնական ձևով՝ հիմք+վերջավորություն /բացի՛ր/: Այսօր այս ձևը անվերապահորեն ամրագրում են բոլոր դասագրքերը, այն միանշանակ հանդիպում է մամուլում և

¹ Հայերենում բայերն ըստ կազմության նվազագույնը լինում են երկանդամ՝ գր-ել, կարդալ: Կան սակավաթիվ բայեր, որոնց հրամայական եզակին միաբաղադրիչ է՝ առ- տուր- եկ- տես- բեր- տար և այլն, այդ թվում նաև՝ բա՛ց:

ՁԼՄ-ների բանավոր ու գրավոր տարբերակներում: Դա հնարավորություն է տալիս արձանագրելու, որ այսօր հայերենում չկա քանալ կամ քացել անկանոն բայ, այլ ունենք քացել կանոնավոր աններածանց բայ: Համանման երևույթ նկատելի է նաև չ սոսկածանց ունեցող բայերի մեջ:

Այսպես, սառչել բայը այսօր կորցրել է իր ածանցը, և նրա ելակետային ձևը՝ անորոշ դերբայը նույնացել է վաղակատար դերբայի հետ, անցյալ կատարյալը կազմվում է խոնարհման ներգործածև վերջավորություններով՝ սառեցի, սառեցիր, սառեց... Սրանից հետևում է, որ այսօր սառչել բայը վերածվել է սառել աններածանց բայի, և այս օրինակը եզակի չէ²:

Վերջին մի քանի տասնամյակներում լեզվական նորմի ուշագրավ փոփոխություններ են կատարվել բայերի արգելական հրամայականի կազմության մեջ: Ավանդաբար, դեռ գրաբարից սկսած՝ արգելականը կազմվում էր անորոշի հիմքից, որը և պատճառ էր դառնում, որ կատարյալի հիմքից կազմվող բուն հրամայականի ձևերը ներկայացնեն տարբեր կաղապարներ: Այսպես, ան և են սոսկածանցավոր բայերի արգելական հրամայականի համար մինչև անցյալ դարի կեսերը նորմատիվ էին համարվում մի՛ հեռանա և մի՛ հեռանաք, մի՛ մոտենա և մի՛ մոտենաք ձևերը: Այսօր գործում է մի գերակա կանոն. ինչպես մյուս բայերի համար, այնպես էլ այս դեպքում արգելականը կազմվում է դրական ձևերին ավելացնելով մի՛ արգելականը, որով թե՛ պարզեցվում է կազմությունը և թե առաջանում է ձևերի միօրինակություն, որը, ինչպես նշեցինք այլ դեպքերի համար, լեզվի մշակվածության և գրականացման լավագույն ցուցիչն է:

Բանալի բառեր - լեզվական նորմ, ներքին տեղաշարժեր, համաբանություն, գուգաշնորհություններ, ընդհանրական և մասնավոր կանոններ, ուղղահայտություն, կենդրոնաձիգ պետականություն, գոյականի բովանակվածություն, անկանոն բայեր, կատարյալի հիմք:

² Այդ մասին առավել մանրամասն տես՝ **Սարգսեանյան Ռ. Կ.**, «Չ» սոսկացանցավոր բայերը հայերենի զարգացման արդի փուլում», ՊԲՀ, 1989, 2, 172-179:

Рубен Сакапетоян - Языковая норма и внутренние перестановки языка. Языковая норма (правило, закономерность) констатирует восприятие “правильности” или “неправильности” того или иного языкового явления общностью, которая говорит на данном языке. Она изменчива во времени, и многочисленны случаи, когда они меняются местами. Перестановки в языке обусловлены внутренними закономерностями его развития: семантическими изменениями, аналогией и разными параллельными формами, которые охватывают все уровни языка. Согласно этому, принято различать орфоэпические, орфографические, словообразовательные, морфологические, синтаксические и др. нормы.

Изменение нормы, как правило, приводит к исчезновению параллельных форм и исключений, что в конечном итоге способствует литературной обработке языка. Сегодня в армянском языке усматривается главенствующая роль универсальных правил над частными.

Ключевые слова: *языковая норма, внутренние перестановки, аналогия, параллельные формы, глобальные и частные правила, орфоэпия, централизованная государственность, категория числа существительного, аномальные глаголы, основа прошедшего совершенного*

Ruben Saqapetoyan - The Linguistic Norm and Inner Linguistic Transpositions. The linguistic norm (rule, regularity) states whether the society, speaking the given language, perceives this or that linguistic phenomenon to be either “right” or “wrong”. It's variable within time and there are numerous cases when they change their places. Linguistic transpositions are conditioned by the inner regulations of language development, i.e. change of meaning, analogy and different manifestations of two-form linguistic phenomena which comprise all the linguistic levels. Taking this into consideration, it is accepted to differentiate between the norms of articulation, spelling, word-building, morphology, syntax, etc.. The change of a norm leads to the elimination of two-form linguistic phenomena and exceptions which eventually contribute to the elaboration of language. Nowadays, we can easily notice that the general rules of language prevail above its private and separate rules.

Keywords: *language norm, inner changes, analogy, parallel forms, global and particular rules, orthoepy centralized statehood, the category of number of nouns, irregular verbs, the stem of past indefinite*

ՀԱՅԱՍՏԱՌԻ ԹՈՒՐԲԵՐԷՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Փրնար Բարաբրլյըր

(Փարիզ Սորբոն - Իսթանպուլ Համալսարան)

14-րդ դարեն ի վեր ձեռագիր եւ 18-րդ դարեն ի վեր տպագիր ըլլալով գոյութիւն ունեցող հայատառ թրքերեն (arméno-turque) գրականութեան վերջին նմոշը տպագրուեցաւ 1968-ին:

Ներկայիս, այսպիսի երկար պատմութիւն ունեցող գրականութեան մասին ուսումնասիրութիւնները կը բազմանան, յատկապէս Թուրքիոյ մէջ, ուր վերջերս ի յայտ եկաւ թէ թրքերէնի առաջին արդի վէպը եւ թատերգութիւնները գրած են հայերէ տառերով:

Այս ուսումնասիրութեան միջոցով պիտի փորձենք առաջին հերթին այս գրականութեան ընդհանուր ներածութիւն մը առաջարկել, կեդրոնանալով այն հարցումին վրայ, թէ Օսմանեան Կայսրութեան մէջ այս գրականութիւնը ո՞ր քաղաքներուն մէջ եւ ի՞նչ գրական սեռերով (ժանրերով) ստեղծուած է: Ապա պիտի շարունակենք փորձելով բացատրել, թէ ի՞նչ պէս եւ ի՞նչ նորութիւններ կրնայ մատուցանել այս գրականութիւնը թրքական ու հայկական լեզուաբանութեան ու բարբառագիտութեան ուսումնասիրութեան տիրոյթներուն համար:

Այսպիսով այս հարցումներուն եւ պատասխաններուն շրջագիծին մէջ պիտի փորձենք նաեւ հասկնալ Օսմանեան ժառանգութեան մշակութային եւ պատմական կարեւորութիւնը արդիական ժամանակներուն համար՝ Օսմանեան ժողովուրդներուն բազմամշակութային լեզվաբանական ինքնութեան եւ յարակցութեան ընդմէջէն:

Հայատառ թրքերէն: Թրքերէն լեզուն պատմութեան ընթացքին՝ կէօքփիլք, ույկուր (հին այբուբեն), պրահմի, յունական, հայկական, արաբական եւ լատինականին պէս տարբեր այբուբեններով գրուած է:



Թրքերէնի ամենէն երկար տեսած այբուբեններէն մէկը Օսմանեան թրքերէնին յարմարցուած Արաբական այբուբենն է: Իսկ կրնանք ըսել՝ քանի որ հայատառ թրքերէն գրականութիւնն ալ 14-րդ դարին սկսաւ (ձեռագիր երկերերով) որ կը հետեւի Կայսրութեան հիմնութեան դարուն (1299), հայկական այբուբենը թրքերէնին համար ամենէն երկար տեւողութեամբ գործածուած այբուբեններէն մէկն է:

Այս գրականությունը, որ ընդգրկած է նախ *աշուղակ* (աշսղ) գրականության երկերը, ապա վեպի եւ պատմածքի (հեքեաք) նման գրական սեռեր, արեւմտեան գրականություններն թարգմանություններ, լրագրեր եւ պարբերաբերքեր, տապանագիրքեր (Bérbérian, 1964), բազմալեզու բառարաններ եւ կրօնական երկեր (Koptaş, 2000) մինեւ իսկ Աւետարանը (Ինճիլ, évangile) բացառիկ է իր ընթարձակութեամբ եւ գանազան զանգանութեամբ:

Հայատառ թրքերէն **ձեռագիր** երկերը Պոլսոյ, Տիբրանակերտի, Էտիրնէի, Թօգաթի, կարինի (Էրզուրում), Սեպասթիոյ (Սիվաս), Վանի, Անգարայի, Չեյթունի (Մարաշ), Պուրսայի, Կիւմիշհանէի, Սդ. Բեթերգպուրկի, Էջմիածինի, Ատրախանի, Դրիմի կամ Քալքիթայի պէս (Koptaş, 2000) զանազան քաղաքներու մէջ տպագրուած են:

Այս ձեռագիրները կ'ընդգրկեն զանազան ոլորտներ, ինչպէս՝ կրօնական, գիտական, գրական, փիլիսոփայական, պատմագրական գրականություններն են (Koptaş, 2000): Իսկ ձեռագիր երկերուն մեծ մասը *աշուղակ* (աշսղ) եւ *գուսան* կան գրականութեանը կը պատկանի (Koptaş, 2000). Ուրեմն այս գրականութեան մէջ կան՝ ռամկօրէն բանաստեղծութիւններ բանահիւսական հանելուկներ, դիւցազներգութիւններ, ասացածքներ եւայլն:

Հայատառ թրքերէն **տպագիր** առաջին գիրքը Մխիթար Սեպաստացիի կողմէ գրուած է Վենետիկ Անտոնի Բորտոլիին տպարանին մէջ տպագրուած է՝ «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզոին Հայոց, շարադրեցեալ տանկականաւ լեզուաւ». Վենետիկ, 1727-ին (149 էջ) /91 - 149 էջերուն՝ «Բառագիրք, որ հետեւի Դրան քերականութեան»/: (Stepanyan, 29: 2005) ([Yeni Ermenicenin Dilbilgisine Giriş: Yalnızca Türkçe Bilen ve Yeni Ermenice Öğrenmek İsteyen Ermeniler İçin Türkçe Lisansıyla Yazılmıştır] (Koptaş, 2000)). Այսպիսի մասնաոր քերականութեան սր գոյութիւնը կը մատնանշէ որ կային արդէն մարդիկ որ կրնային կարդալ հայատառ թրքերէն, նաեւ այս գրական աւանդութիւնը բաւական զարգացած էր: Ուրմն Մխիթարեան Միաբանութիւնը երկար ժամանակ (Վենետիկ Սուրբ Բագար կղզիին, Տրիեստե եւ Վիեննայի տպարաններուն մէջ) շարունակեց հայատառ թրքերէն բազմաթիւ լեզուաբանական (Koptaş, 2000) երկեր հրատարակել:



Ըստ ուսումնասիրութիւններուն՝ առաջին ժամանակաշրջանին մէջ կան մանաւանդ կրօնական եւ փիլիսոփայական երկեր: Իսկ հայաստան քրքրէնով լրագրութիւնը սկսաւ 1840-ին (Stepanyan, 2005): Ապա, մասնատրապէս 1850-1870-ին գրականութեան, լեզուաբանութեան, պատմութեան, փիլիսոփայութեան, գիտութեան, մանկավարժութեան, իրաւաբանութեան վերաբերեալ (Koptaş, 2000) հայաստան քրքրէն գիրքեր տպագրուած են:

Մօտատրապէս 50 քաղաքներու եւ 200 տպարաններու մէջ տպագրուած երկերուն թիւը 2000-էն աւելի է (Stepanyan, 2005): Իսկ հայաստան քրքրէնով վերջին տպագրուած գիրքը՝ Տիգրան Քիրեճեան-ի «Տէսքան գիթապը» դիւցազներգութիւնն է. Բոննոս Այրես, 1968-ին (101 էջ) (Stepanyan, 385: 2005) տպագրուած է:

Հիմա նայինք թէ հայկական այբուբենը քրքրէնին, նաեւ արաբական տառերով գրուած Օսմանեան քրքրէնին ուղղագրութեան եւ ձայնաբանութեան համար գրեթէ անվրէպ է: Աստ պէտք է մատնանշենք թէ հայաստան քրքրէն երկերուն ուղղագրութիւնը շատ լաւ մշակուած եկած է՝ եւ լեզուաբանականօրէն բոլորովին գոհացուցիչ է:

Grammaire osmanli en arménien (microfilmed by Library of Toronto University)


Իսկ ուսումնասիրութիւններուն մէջ այս «լեզոյին» գոյութեան մասին կան կարգ մը զանազան տեսակետեր. Օսմանեան Կայսրութեան մէջ կային մօտաւորապէս կես միլիոն Հայեր որ թրքախօս էին (Stepanyan, 2005): Հայերէն չզիտցող կամ քիչ զիցող, Հայերը թրքերէն կը գրէին, սակայն հայկական սրբագան այբուբենով: Այս յատուկ վիճակը կարելի է մեկնաբանել նախ որպէս Հայ ժողովուրդի ինքնապահպանութեան գաղափարէն փխսած (Koptaş, 2000): Կարելի է նշել նաեւ ուրիշ ընկերաբանական ազդակներ ինչ պէս նահանգներուն մէջ մանկավարժական հարցումները եւայլն: Պէտք է աւելցնել որ աշխարհի այս շրջանին մէջ տարածուած էր իր կրօնքի հետ կապուած այբուբենը գործածել, ինչ որ պատճառը եղած է Թուրքերուն եւ Պարսիկներուն արաբական այբուբենը որդեգրելուն: Բնական էր որ Հայերը, նոյնիսկ թրքախօս ըլլալով, արաբատառ գրելու պարագային իրենց կրօնքը եւ ինքնութիւնը ուրացած պիտի ըլլային:

Հայ ժողովուրդը գործածած է նաեւ իր այբուբենը նաեւ արաբերէն ու քրտերէնն (հայատառ արաբերէն, հայատառ քրտերէն) գրելու համար (Koptaş, 2000), բայց հայատառ թրքերէնը երկար գրատր պատմութիւն մը ունենալու պատճառով կը տարբերի մնացած պարագաներէն:

Հայատառ թրքերէնը այս յատկանիշով կը տարբերի նաեւ աշխարհին մէջ գոյութիւն ունեցող խառնածին (créole, hybrid) լեզուներէն որ մեծ մասամբ անգիր են: Հաստատ գիտենք այսօր թէ առաջին թրքերէն արդի վէպը գրուած է ոչ թէ 1872-ին (Şemseddin Sami, Taaşşuk-ı Talat ve Fitnat) (Cankara, 2011) այլ 1851-ին՝ Վարդան Փաշային կողմէ եւ հայատառ թրքերէնով. Ազապի Հիզեայէսի: Նոյնպէս առաջին թրքերէն արդի թատերգութիւնը լոյս տեսած է ոչ թէ 1860-ին (Şinasi, Şair Evlenmesi) այլ 1790-ական դրականներուն՝ հայատառ թրքերէնով, Վենետիկ Սուրբ Ղազար կղզիին մէջ, Օսմանեան Կայսրութեան քաղաքացի Մխիթարեան վարդապետներուն կողմէ (Manok, 2013):

Ուրեմն այս « առաջին »ներուն կրնանք աւելցնել հայատառ թրքերէն բառարանները որոնց մէջ թրքերէնը հայատառ գրուած է: Նշուած բառարանները այս մասնայատկութեամբ կրնան համարուիլ թրքերէնի առա-

ջին հնչաբանական բառարանները: Հետաքրքրական է որ Թուրք եւ այլազգի թրքագետներ լատիներէնով գրած հին թրքերէն բառարաններուն եւ ուրիշ երկերուն մէջ ձայնաբանութեան մասին բազմաթիւ ուսումնասիրութիւններ կը կատարեն (Velkova, 1995) սակայն ոչ մէկը անդրադարձած է հայատառ թրքերէն բառարաններուն: Քանի որ այս բառարանները Կայարութեան մէջ գրուած են, անտարակոյս պիտի ներկայացնեն անտարակոյս աւելի «տեղական» եւ վստահելի լեզուաբանական տուեալներ, քան Եւրոպայի մէջ, անգլիերէնի կամ ֆրանսերէնի հնչաբանութեան վրայ հիմնուած բառարան մը:



Այսօր գիտենք թէ Թրքերէնի բարենորոգման վիճաբանութիւններուն մէջ գրագէտ եւ լրագրող *Միւսթաֆա Միսիրիսթ Էֆէնդի* առաջարկեց գործածել հայկական այբուբենը, թրքերէնը գրելու համար: Ու 1874-ին գաղափարը կ'արտայայտէ որ լեզու մը գրելու համար ամենէն նպատակայարմար հայկական այբուբենն է (Cankara, 2011: 77): Նաեւ *Նամըք Բէմալ* 1878-ին գրեց որ, եթէ թրքերէնին այբուբենը պիտի փոխուի ուրեմն պէտք է հայկական կամ յունական այբուբենով փոխարինուի (Cankara, 2011: 78).

Ուրեմն կրնանք ըսել, որ հայատառ թրքերէն գրականութիւնը կարդացողները ոչ թէ միայն Օսմանեան թրքախօս Հայ ժողովուրդն էր, այլ նաեւ Թուրք գիտնականներն էին, ինչպէս ունինք՝ 1890-ական թուականներէն *Hacı Bey Zade*-ի եւ *Ahmet Muhtar*-ի ընթերցումի ուղեցոյց մը:

«Չորս օրուան մէջ հայերէն կարդարու համար կանոններ, Օսմաներէն գիտցողներուն համար»:

Առաջին, հայատառ թրքերէն ձեռագիր բառարանները գրուած են ղփչաղներու (կոմաներէն) կողմէն (Stepanyan, 251: 2005; Pamukciyan, 132: 2002) 16-րդ դարուան Լեհաստանի եւ Հունգարիոյ (Pamukciyan, 132: 2002) մէջ: Ապա լոյս կը տեսնեն Օսմանեան Կայսրութեան եւ Երուպային մէջ տպագրուած հայերէն-թրքերէն, թրքերէն-հայերէն, նաեւ պարսկերէն, ֆրանսերէն, իտալերէն եւ այլն (Pamukciyan, 132-139: 2002) բազմալեզու բառարաններ: Յիշատակուած բառարաններուն մէջ թրքերէնը ընդհանրապէս հայ տառերով գրուած է: Կան նաեւ բառարաններ, որոնց մէջ թրքերէնը գրուած է արաբական եւ հայկական տառերով (Pamukciyan, 138: 2002):

Անցնինք հիմա գործինակ Պետրոս Չէքի Կարապետեանին հոյակապ բառարանին, որ երկու հատոր ու մօտաւորապէս 2000 էջ ունի: Առաջին հատորը 1907-ին տպագրուած կոչուած է «Մեծ Բառարան Հայերէնէ Օսմաներէն»: Իսկ երկրորդ հատորը 1912-ին տպագրուած կոչուած է «Մեծ Բառարան Օսմաներէնէ Հայերէն»:

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

ՄԵՐ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅՏԵՐԻՆԷ ՕՍՄԱՆԵՐԻՆ

ԳԻՏԱԿԱՆ, ՊԱՇՏՆԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԱՐԵՒՈՐ �ԱՆԵՐՈՒ
ՑՐԱՆՍԻՐԵՆՈՎ, ԻՆՁՊԵ ՆԱԻՒ
ՐԱԶՄՈՐԻ ՈՃԵՐՈՎ ԵՒ ՕՐԻՆԱԿԱՆԵՐՈՎ ՀՈՈՍԱՍՄ
ԽՐ 50,000 ՐԱԹ. ՈՋ ԵՒ ԱՊՈՒԹՐԻՆ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍ ԶԷՔԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՕՐԿԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐՈՅ. ԸՆԴՀԱՆՈՐ ՏՆՈՐԵՆ
ԳԵՐԷՐԱՆ ՎԵՐՅՈՐԱՆ ԵՒ ՈՐՈՒՈՐԱՅ ՕՍՄԱՆԵՐԵՆ,
ՊԱՐՏԱՐԵՆ ԵՒ ԱՐԱՆԵՐԵՆ ԵՅՈՒՈՅ



ՏՊԵՐՈՒԹԻՒՆ
Վ. Ե. Չ. ԱՐԵՎ. ՆԱՐԱՅԱՆՍԵԱՆ
Կ. ՊԵՏԵՐ
1907



ՀԵՂԵՆԱԿ

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

ՄԵՐ ԲԱՌԱՐԱՆ

ՕՍՄԱՆԵՐԻՆԷ ՀԱՅՏԵՐԻՆ

ԿԵ ՊԱՐՏԱՐԵՆ

ԽՈՍՏԱՆՊԱՆ, ՊԱՇՏՆԱԿԱՆ, ՍԵՄԻՐԱԿՐԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ, ՊԱՇՏՆԱԿԱՆ
ՐԱՆԵՐՈՒ ԱՅՆ ՄԱՐԲ. ՐԱԶՄՈՐԻ ՈՃԵՐ. ԱՊՈՒՈՒՆՆԵՐ. ՕՐԿԱԿԱՆ
ՀԱՄԱՆՎԵՐ ԵՒ ՀԱՄԱՆՎԵՐ. 50,000 ԱՆԵԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍ ԶԷՔԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՀՈՐՀՐՈՅ ԵՆՈՐԵՆ ՊԱՐՏԱՐԱՆ ԵՒ ՈՐՈՒՈՐ ԵՐԿՐԱՐՈՒՄԵՆ
ՎԵՐՅՈՐԱՆ (1907). ԱՐԵՎՆԱՆ ՎԵՐՅՈՐ ՎԵՐՅՈՐԱՆ
ԽՈՐՀՐՈՅ ՎԵՐՅՈՐԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՈՐՈՒՈՐԱՅ ՕՍՄ. ՄԱՆՏԱՐՈՒՈՒՄ
ՐԱՆ, ՊԱՐՏԱՐԵՆ ԵՒ ԱՐԱՆԵՐԵՆ ԵՅՈՒՈՅ

ՏՊԵՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՎԱ ՆԱՐԱՅԱՆ
Կ. ՊԵՏԵՐ
1912

Բառարանին խորագիրը գրուած է Օսմաներէնով «անվրէպ» բառա-
րան: Թրքերէնն ունի երկու ուղղագրութիւն՝ արաբական եւ հայատառ
քրքերէնով: Կարապետեանը այս երկու ուղղագրութիւնները կու տայ թր-
քախօս Հայերո՞ւն համար կամ այսպէս կը հետեւին ներկայ աւանդու-
թեա՞նը, կամ այս երկու գրական համակարգերուն տարբերութիւնը նկա-

ծած, մէկ կողմէ բանահիւսութիւն եւ միւս կողմէն ալ քաղաքային գրականութիւն ունեցող, այսպէս երկու աւանդութեամբ սնանած եւ ուռճացած գրականութիւն մը:

Երկերը վերլուծելով, անկասկած պիտի ունենանք այս յատուկ լեզուին եւ իր գրականութեան գոյութեան մասին նոր տեսակէտեր: Ուրեմն վերոյիշեալ մասնայատկութիւնները ի՞նչպէս կրնան նպաստել լեզուին էութիւնը հասկնալուն: Կրնանք մտածել թէ տարբեր քաղաքական եւ ընկերային դէպքերուն պատճառով եւ արդիւնքներով այս թրքական եւ հայկական «համադրութիւն» (Ter Minassian, 1998) եղող լեզուն՝ Կայսրութեանը բազմամշակոյթային, բազմալեզուական եւ բազմազգ միջավայրները միաւորող (fusionnant), եւ այս մասնայատկութիւնները ընդգրկող «Օսմանեան խօսուածք՝ *սոյյօլէքք* (sociolecte)» մը է:

Ուրեմն կրնանք փորձել այս *համադրական* լեզուն հասկնալ ոչ թէ անջատաբար թրքերէն եւ հայերէն լեզուներէն, այլ որպէս ինքնուրույն լեզուի մը նախասկիզբը: Փաստօրէն Հայ ժողովուրդը կրցած է, այս նոր լեզուն հնարելու գաղափարին շնորհիւ, միաժամանակ առանձնայատուկ մշակոյթ մը կազմել, եւ իրեն համար մատչելի դարձնել գրաւոր թրքերէնը, շրջանցելով արաբական տառերը տիրապետելու հարցը: Այսպէս պահպանած է իր հայ ինքնութիւնը, բազմամշակոյթային գրականութիւն մը յղացած են, հայկական եւ թրքական մշակոյթներուն համար գրաւոր եւ գրական ժառանգութիւն մը ձգած են:



Շնորհակալ եմ Փրոֆեսոր Ռ. Սաքապետոյանին եւ Ա. Տօնապետեանին իրենց օգնութեան համար:

Մատենագիտութիւն.

1. **Bérbérian, H.** 1964. “La littérature arméno-turque”, in *Philologiae Turcicae Fundamenta*, T II. curavit et auxit, indices adiecit Pertev Naili Boratav. Aquis Mattiacis: Steiner, 1964. pp. 809-819.
2. **Cankara, M.** 2011. *İmparatorluk ve Roman: Ermeni Harfli Türkçe Romanları Osmanlı/Türk Edebiyat Tarih yazımında Konumlandırma*. (Thèse de doctorat). Ankara: İhsan Doğramacı Bilkent Üniversitesi.
3. Կարապետեան, Պետրոս Զէքի. 1907. Մեծ Բառարան Հայերէնէ Օսմաներէն. Տպագրութիւն Վ. եւ Հ. Ներսէսեան: Կ. Պոլիս:
4. Կարապետեան, Պետրոս Զէքի. 1912. Մեծ Բառարան Օսմաներէնէ Հայերէն. Տպագրութիւն Արշակ Կարօեան: Կ. Պոլիս:

5. **Koptaş, R.** 2002. “Ermeni Harfleriyle Türkçe”. Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar –II: Ermeni Harfli Türkçe Metinler, sy. XI-XXIV. İstanbul: Aras Yayıncılık
6. **Manok, B. Y.** 2013. Doğu ile Batı Arasında San Lazzaro Sahnesi: Ermeni Mikhitarist Manastırı ve İlk Türkçe Tiyatro Oyunları. İstanbul: Bgst Yayınları.
7. **Pamukciyan, K.** 2002. Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar –II: Ermeni Harfli Türkçe Metinler. K. Pamukciyan. İstanbul: Aras Yayıncılık.
8. **Ստեփանյան, Հ. Ա.** 2005. Ermeni Harfli Türkçe Kitaplar ve Süreli Yayınları Bibliyografyası (1727-1968) (1. Basım). İstanbul: Turkuaz Yayınları.
9. **Ստեփանյան, Հ. Ա.** 2005. Հայաստան Թուրքերեն ձեռագիր բանաստեղծություններ. Պատմա-բանաստիճական Հանդես, No 2. pp. 250-254. ISSN 0135-0536 <http://hpj.asj-oa.am/3626/>
10. **Ter Minassian, A.** 1998. “Enjeux d’une politique de reconquête linguistique: les Arméniens dans l’Empire Ottoman (1853-1914)”. Langues et Pouvoir. Ed. par Chaker, S. Bicentenaire de l’INALCO (1795-1995). Paris.
11. **Velkona, S.** 1995. “L’écrit et l’oral dans la formation des bases de la norme littéraire de la langue turque au XIXe siècle”. Persée. http://www.persee.fr/web/revues/home/prescript/article/remmm_0997-1327_1995_num_75_1_2624 (25.03.2014-իմ)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ»

*Միջազգային գիրաժողովի զեկուցումների ժողովածու
Երևան, 13-14 մայիսի 2014 թ.*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. խմբագիր՝ Ա. Արաջյան

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ 14.5:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1